



THE NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE RA  
H.ACHARIAN INSTITUTE OF LANGUAGE

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА  
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА

# NEW WORDS

Volume 5

# НОВЫЕ СЛОВА

Выпуск 5

Yerevan – 2020 - Ереван

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա.Ս.ԳԱԼՍՏՅԱՆ, Ս.Ա.ԳԱԼՍՏՅԱՆ, Ֆ. Ա. ՀԱԿՈՒՄՅԱՆ,  
Գ.Կ. ՀՈՎՍԵՓՅԱՆ, Ա.Հ.ՄՈՒՇԵՂՅԱՆ, Ա.Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

# ՆՈՐ ԲԱՌԵՐ

Ե պրակ

ԵՐԵՎԱՆ  
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2020

ՀՏԴ 811.19  
ԳՄԴ 81.2Հ  
Ն 930

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի հիմնադրամի  
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ ր.գ.դ. Վ. Լ. Կատվալյան  
Գրախոս՝ ր.գ.թ., դոցենտ Լ.Գ.Թեյլան

Ն 930 Նոր բառեր / Կազմողներ՝ Ա. Ս. Գալստյան (ղեկավար),  
Ս.Ա. Գալստյան, Ֆ. Ա. Հակոբյան, Գ. Կ. Հովսեփյան, Ա. Հ. Սուշեղ-  
յան, Ա. Գ.Սահակյան.- Եր.: «Գիտություն» հրատ., 2020. Ե պրակ.-  
175 էջ:

Սույն գիրքը «Նոր բառեր» մատենաշարի հերթական պրակն է:  
Գրքում ներկայացված են մամուլում, գեղարվեստական և գիտական  
գրականության մեջ շրջանառվող բառեր, որոնք գրանցված չեն բա-  
ցատրական և նորաբանությունների բառարաններում: Աշխատանքը  
կարող է օգտակար լինել հայոց լեզվի բառապաշարով հետաքրքրվող  
մասնագետներին, ուսուցիչներին, բանասիրական ֆակուլտետների  
ուսանողներին, լրագրողներին, հրատարակիչներին, թարգմանիչներին:

ՀՏԴ 811.19  
ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-5-8080-1409-1  
© ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի հիմնադրամ, 2020

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Նոր բառեր. Ե պրակը» պարունակում է շուրջ 1520 բառա-  
միավոր, որոնք գրանցված չեն պրակի 172-173-րդ էջերում  
թվարկված բառարաններում: Գլխաբառից հետո նշվում են  
խոսքիմասային պատկանելությունը, բառի բացատրությունը,  
բնագրային օրինակը, աղբյուրը: Տրվում են բառագիտական և  
ոճական նշումներ: Բառի բացատրությունը տրվում է ըստ տվյալ  
տեքստում ունեցած նշանակության:

Բառարանը կազմել են՝ Ա.Ս.Գալստյան (280 բառահոդված),  
Ս.Ա. Գալստյան (500 բառահոդված), Ֆ.Ա.Հակոբյան (320 բառա-  
հոդված), Գ.Կ.Հովսեփյան (250 բառահոդված), Ա.Հ. Մուշեղյան (70  
բառահոդված), Ա.Գ.Սահակյան (90 բառահոդված):

## ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

աձ. - աձական  
բ. - բայ  
բժշկ. - բժշկական  
բնատ. - բանաստեղծական  
գ. - գոյական  
գղտնտ. - գյուղատնտեսական  
գրկն. - գրականագիտական  
դրձվ. - դարձվածք  
դիպվ. - դիպվածային  
երժշտ. - երաժշտական  
ժրգ. - ժարգոնային  
իմ. նորբ. - իմաստային նորաբանություն  
իրավ. - իրավաբանական  
լեզվբ. - լեզվաբանական  
կենս. - կենսաբանական  
կր. և չբ. - կրավորական և չեզոք բայ  
հեզն. - հեզնական  
հզվդ. - հազվադեպ  
հրկտր դ. - հարակատար դերբայ  
մկբ. - մակբայ  
մարզ. - մարզական  
մանգ. - մասնագիտական  
նբ. - ներգործական բայ  
շին. - շինարարական  
ռազմ. - ռազմական  
սնոտ. - սնոտիապաշտական  
տեխ. - տեխնիկական  
տնտգ. - տնտեսագիտական  
փխբ. - փոխաբերական  
քղք. - քաղաքական

## Ա

ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ, ան. **Գյուղատնտեսական-պարենային: Ագրոպարենային** ոլորտի սարքավորումները կարելի է ձեռք բերել վարկով (*ՀՆԳ, news.am*):

ԱԳՐՈՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ, գ. **Գյուղատնտեսական արտադրանքի վերամշակում:** Եռակողմ համագործակցություն՝ ագրովերամշակման ոլորտում (*ՀՆԳ, panorama.am*):

ԱՂԻՍԱԲԵԲԱՅԱԲՆԱԿ, ան. **Աղիս Արեքայում բնակվող:** Երեկոյան դասախոսությամբ հանդես եկավ Եթովպիայի հայկական համայնքի ղեկավար, **աղիսարեքայաբնակ** Վարդգես Նալբանդյանը, որը ներկայացրեց եթովպահայության անցյալի փառավոր պատկերը .... (*ՊԲՀ, 2, 2018, էջ313*):

ԱՂԲԵԶԱՆԱՀԱՅ, գ. **Աղբեջանում բնակվող, բնակված հայ: Աղբեջանահայ.** Աշխարհասփյուռ աղբեջանահայությունը պետք է միավորվի որպես մեկ ընդհանուր սուբյեկտ (*ՀՆԳ, news.am*):

ԱՂԲԵԶԱՆԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Աղբեջանում բնակվող, բնակված հայություն: Աղբեջանահայությունը** նամակ է հղել ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեային (*ՀՆԳ, news.am*):

ԱԶԳԱՇՈՒՔ, ան. (բնստ.): **Ազգին շքեղություն տվող:** ....Ես եմ **ազգաշուք** դարձրել տառը, // Որով դարախոս մեր մատյանները // Փառաբանել են հանճարությունը (*ԼԴ 1, էջ 6*):

ԱԶԴԱԿԻՐ, ան. **Ազդեցության ոլորտում գտնվող:** ԱՄՆ կամավորներին չեն ուղարկում ՀԱԷԿ-ի **ազդակիր** համայնքներ. դրանք համարվում են վտանգավոր գոտիներ (*ՀՆԳ, news.am*):

ԱԶԴԱԽԱՌԸ, գ. (դիպվ.): **Ազդրով հանդերձ, ազդրի հետ միասին:** Ուրեմն տեսեք, թե ինչ էր բերել Օտտոն. տժտժացող մեծ թավայի մեջ դրված սագի **ազդրախառը** հսկայական բուղ (*ՆՓ, էջ 105*):

ԱԶԴԱԾԱԼ, գ. **Ազդրի ծայրը:** Աղջիկները .... նեղ շրջա-

զգեստներ են հագնում՝ դեպի վեր, **ազդրածալը** գնացող խորը կտրվածքով(*ԼԽ, էջ 114*):

ԱԹՈՌԱԳԵՐԻ, ան. (փխբ.): **Պաշտոնի գերի, պաշտոնի համար մեռած մարդ**: Օրերս **աթոռագերի** ահաբեկիչները երկրի թափափորի դեմ մահափորձ են կատարելու(*Մ3, էջ 144*):

ԱԹՈՌԱԴԻՐՔ, ան.(փխբ.): **Պաշտոնի տեր, պաշտոն գրադեցնող**: Պաշտոնագրկվելու ես, բայց մի տխրիր, քանի որ դու արդեն **աթոռադիրք** պետի ցուցակում մշտական գրանցում ես ստացել (*Մ1, էջ 13*):

ԱԼԻՔԱՏԱՄՆԱԶԵՎ, ան.**Ալիքանման և աստամների ձև ունեցող**: **Ալիքատամնաձև**, .... ներքևի կողմից մոխրաթավոտ տերևներն, իրենց ծառի նման կենսունակությունը չկորցրած, սպասում էին ու սպասում (*Մ1, էջ 39*):

ԱԼԻՔՀԱՐԶԱԿ, ան. **Ալեծուփ, փոթորկուն**: Գետերը, ծովերը վարարեցին, **ալիքհարձակ** դարձան, զարուն է կարծես ձմեռվա թախձի պարաններին (*ԳՄ, Թ, էջ 46*):

ԱԼԲԱԶՈՒՐԿ, ան.**Առանց այլուրի, հացամթերքը պակաս**: Այլուրդ ջրի հետ հոսել է: **Ալրագուրկ** տարի է լինելու (*Մ1, էջ 15*):

ԱԼԲԱՀԱՏԻԿ, գ. **Այլուրի հատիկ**: Խոնչայից **ալրահատիկներ** էին պոկվում, գալիս արևի շողքի մեջ իջնում ու բարձրանում(*ԼԽ, էջ 110*):

ԱԼԲԱՆՄԱՆ, ան.**Այլուրի նման, այլուրի տեսք ունեցող**: **Ալրանման** փառով պատված(*Մ1, էջ 399*):

ԱԼԲԱՊԱՐԿ, գ. **Այլուրի՝ մեջը այլուր լցրած՝ լցնելու պարկ**: .... **Ալրապարկերի** արանքներից դուրս են պրծնում մոխրագույն ու սև առնետներ (*Մ1, էջ 55*):

ԱՕԽԵ, ան.Այստեղ՝ **ածխասև, ածուխի գույնի**: Նա .... պտտում էր իր **ածխե** աչքերը .... (*Գրաս, էջ 530*):

ԱԿՈՍԱԶՐԵԼ, նբ.**Ակոսաջուր կատարել**: .... Յորեն ես ցանել, հետո էլ այնպիսի խնամքով ես **ակոսաջրել**, որ յուրա-



քանչյուր ցորենահատիկ իրեն հարկավոր չափով ջուր է խմել ...  
(Մ1, էջ 21):

ԱՂԱՊԱՇԱՐ, գ. **Աղի պաշար:** .... Խեղճը քրտինք թափելով  
կորցնում է մարմնի ողջ **աղապաշարը**(Մ1, էջ 22):

ԱՂԲԱԴՈՒՅԼ, գ. **Աղբի դույլ:** Քաղաքապետարանը ապօրինի  
կերպով հեռացնում է **աղբադույլերը** (Հմց, news.am):

ԱՂԲԱԶԱՄԲՅՈՒՂ, գ. **Աղբը՝ ավելորդ բաները մեջը լցնելու  
զամբյուղ:** Այսօր էլ, ինչպես միշտ, **աղբազամբյուղը** լեփ-լեցուն էր  
ճմռթված թղթերով (Մ1, էջ 203):

ԱՂԲԱՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ, գ. **Աղբի վերամշակում:** Ո՞ւր  
մնացին նոր տրանսպորտային համակարգը, ժամանակակից  
աղբահանությունն ու **աղբավերամշակման** ֆաբրիկան (Հմց):

ԱՂԲԱՔԱՂԱՔ, գ. (դիպվ.): **Աղտոտված քաղաք:** Մենք չենք  
ուզում, որ Երևանը դառնա **աղբաքաղաք** (Հմց):

ԱՂԲՅՈՒՐԱՄԵՆ, ած. **Աղբյուրներից գոյացող:** **Աղբյուրածին**  
թարմ գետերի լուռ խոսքերի մեջ խրվելով (ԳԹ, 18.06.2019):

ԱՂԲՅՈՒՐԱՄԵՋ, ած. (դիպվ.): **Աղբյուրի ջրում ցուլացող:**  
**Աղբյուրամեջ** արևի պես// Դեմքս մեկից դարձավ վառ (ԼԴ 1, էջ  
33):

ԱՂԵՀԱՄԱԿԱՐԳ, գ. **Աղիքների համակարգ:** Գտնվել է կապ  
աուտիզմի և **աղեհամակարգի** միկրոֆլորայի միջև (Հմց,  
news.am):

ԱՂՅՈՒՍԱԾԵՓ, ած. **Աղյուսով՝** **աղյուսի նման ձեփված:**  
Գլուխդ **աղյուսածեփ** կարասը խոթած, ձայնդ գլուխդ զցած  
երգում ես ու երգում (Մ1, էջ 26):

ԱՂՅՈՒՍԱՇԵՐՏ, գ. **Շերտերով դրված աղյուս, աղյուսե  
շերտ:** Թոնրի բերանը թրծած **աղյուսաշերտով** կիսով չափ ծածկել  
ես և քուրսին դրել (Մ2, էջ 222):

ԱՂՅՈՒՍԱՍԱԼԻԿ, գ. **Աղյուսե՝** **աղյուսանման սալիկ:** Վեր-

լուծում եւ **աղյուսասալիկների** վրայի գրառումները (*Մ1, էջ 26*):

ԱՂՅՈՒՍԱՔԱՐ, գ. **Քարաձև աղյուս, որպես քար շարված աղյուս**: .... Ես նայում էի, թե ինչպես են գալիս ու գնում **աղյուսաքարերը** .... (*Գրաս, էջ 135*):

ԱՂՈԹԱԿԱՐՈՏ, ած. (փխբ.): **Աղոթքի՝ աղոթ անողների՝ հավատացյալների կարոտ, քիչ հավատացյալներ այցելող ունեցող**: Գյուղ եւ գնացել ու աղոթում եւ **աղոթակարոտ** եկեղեցում, խնկարկում եւ խնկակարոտ եկեղեցում, մոմ եւ վառում մոմակարոտ եկեղեցում (*Մ1, էջ 27*):

ԱՂՎԵՍԱԴԵՄ, ած. **Աղվեսի դեմքով**: (փխբ.): **Խարդախ, խորամանկ**: Նկատել եւ այն **աղվեսաղեմ** մարդուն, որ թավամազ պոչն է շարժում քեզ մոտ, մի քիչ տրորիք նրա պոչը, որ ամեն տեղ միսոյ չծամի (*Մ1, էջ 11*):

ԱՍԲԻՈՆԱՅԻՆ, ած., (փխբ.): Այստեղ՝ **որպես բոլորի կողմից պարտադիր ընդունելի, քարացած, անմեթելի**: .... Որոնք ուղղված էին ընդդեմ **ամբիոնային** համաչափության .... (*Գրաս, էջ 133*):

ԱՍՊԱՊԱՐՍ, գ. **Ամպերի կույտ**: Գուցե այս գիշեր հիշենք մենք ... ոսկեհրաժեռ քառսից ահեղ **ամպապարսերի** (*ԿԱ, էջ 73*):

ԱՍՊԱՎԱՐՍ, ած. (բնստ., փխբ.): **Ամպի նման վարսեր ունեցող**: .... Դուք **ամպավարս**, ուժեղ, // Մորուքներով ջրվեժ (*ԼԴ 1, էջ 12*):

ԱՍՊՐՈՊԱՊԱՅԾԱՌ, ած. **Ամպրոպի նման պայծառ: Ամպրոպապայծառ** են պատկերացումները պոետական (*ԿԱ, էջ 59*):

ԱՍՐԱԳԱՄ, գ. **Սևեռակ, կոճգամ**: Երբեմն ձեռները կարող էին յուղոտ էլ լինել, կարող էր տեսրերին **ամրագամեր** զարկող հաստոցներ էլ նորոգել (*ԼԽ, էջ 25*):

ԱՍՐԱՁՈՒԼՎԵԼ, բ. **Ամրանալ**: Աղերսաձայները և բալասանաբույրը **ամրաձուլված** են իմ մարմնին և հոգուն (*Հմգ*):

ԱՅԳԵՏՆԱԿ, գ. **Այգում կառուցված փոքրիկ տուն՝ տնակ**:

Հորդառատ անձրև է գալիս ու քո **այգետնակի** ծակ առաստաղից ներս է թափվում (*Մ1, էջ 48*):

ԱՅԼԱԼՈՒԾՎԵԼ, բ. (փխբ.): **Փոխակերպվել**: Եվ այլակերպվեցինք, և **այլալուծվեցինք**, խաբվեցինք օտարի գրկում (*ԱԱ, էջ 59*):

ԱՅԼԱԽՈՂՆՈՐԵՆ, մկբ. **Այլախոհաբար**: Մայրն **այլախոհորեն**, քաշվելով հարցրեց, թե ի՞նչ անեն (*ՁԽ, էջ 68*):

ԱՅՐԱՏԵՆՉ, ած. **Այր՝ տղամարդ տենչացող**: Տարփուհի՞ էր նա անսեր տրորված ... թե՞ դեռ ցանկասեր **այրատենչ** այրի (*ՄԳ, էջ 87*):

ԱՆԱԳԱԹԱՓ, ած. **Անագը թափված**: Ջրանցքներին, որոնք իրենց ննջող հոգին խոովահար ուռեցնում են մինչև ծորուն կամուրջները հայելու պես **անագաթափ**, նուրբ անձրևը անձրևում է.... (*ԻՄ, էջ 40*):

ԱՆԲԱՆԱԶԵՎԵԼԻ, ած. **Ինչը բանաձևման ենթակա չէ**: ...Նրան տեսնելիս սիրտդ չի սկսում արագ աշխատել, որովհետև նա չունի այն, ինչ անտեսանելի է, անչափելի, **անբանաձևելի** և ոչ մի հաշվարկի չի տրվում (*ՆՓ, էջ 347*):

ԱՆԴՆԴԱՀՈՒՆ, ած. **Շատ խորունկ հուն ունեցող**: Քիչ անց հասան **անդնդահուն** գետի եզերքը, որից սկսվում էր անհատակ մի վիհ (*Նարեկ, թ. 7, 2017*):

ԱՆԴԲԵԱԿ, գ. **Այնկողմնային, անդրաշխարհային էակ**: Մարդկային միտքը դոփում է, նոր բան ասել չի հաջողվում.... աստված, նեո, սատանա, հրեշտակներ, տարբեր անուններով **անդրէակներ** և այլն (*ՁԽ, էջ 274*):

ԱՆԴԻՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Իրականությունից այն կողմ՝ դուրս**: Մակայն ոգին նույն այն կողմից, **անդրիրականությունից** ոչինչ չի հաղորդում, բացի անստույգ միջերից.... (*ՁԽ, էջ 274*):

ԱՆԻՆՏԵԳՐԵԼԻ, ած. **Որ չի կարող ինտեգրվել**: Երկիրը կործանվում է հենց այն պատճառով, որ մեր տնտեսությունն

**անինտեգրելի** էր համաշխարհայինին (*ՁԽ, էջ 259*):

ԱՆԿԱՍԵՑՆԵԼԻ, ած. **Կասեցնելը անհնար**: .... Չնայած պարտքերի **անկասեցնելի** աճին .... (*Գրաս, էջ 116*):

ԱՆԿՈՂՄՆԱՏԱՐ, ած. **Ոչ մի տեղ չտանող**: Մարմրում է նման մրմունջի մարմանդ, անուրջե կամուրջ է **անկողմնատար** (*ԳԹ, 28.06.2019*):

ԱՆԿՎԱԾԱԶԱՐԴ, ած. **Անկվածով զարդարված: Անկվածազարդ** ամեն բարձի // Նրա կարոտն էի բարձել .... (*ԽՄ, 2, էջ 23*):

ԱՆՀԱՏՈՒՇԻ, գ. **Կին անհատ, հերոսուհի**: Գեղանի տիկին է նրա քնարական **անհատուհին** (*ՄՄ, էջ 193*):

ԱՆՁՐԵՎԱՏԱՐ, գ. **Անձրևաջրերը հեռացնելու խողովակ, առու: Անձրևատարից** ջրալցվել են հարակից տները (*Հնգ, news.am*):

ԱՆՇՐՁԵԼԻՈՐԵՆ, մկբ. **Անշրջելի՝ անկասելի կերպով, անկասելիորեն**: .... Քաղաքական վիճակի սրման հետ առավել **անշրջելիորեն** դադարեցրեց .... երբեմն նույնիսկ ընկերական հարաբերությունները .... (*Գրաս, էջ 232*):

ԱՆՎԵՐԱԲԵՐԵԼԻ, ած. **Չվերաբերող, չպատկանող**: ... Փաստորեն իջնում ես, մի բան, որ ժպտեցնում է քեզ մի տեսակ **անվերաբերելի**, շնորհակալության հաճույքից ապուշացած ժպիտով ... (*Գրեթերթ, 3, [53]*):

ԱՆՎՃՈՐՈՐՈՇՈՒԹՅՈՒՆ, գ. **Անվճորոշ վիճակ, վճիռ կայացնել չկարողանալը**: Սակայն նա **անվճորոշության** մեջ մեծ մասամբ մերժում էր ինձ .... (*Գրաս, էջ 235*):

ԱՆՏԱՌԱՎԱՃԱՌ, գ. **Անտառ՝ անտառային փայտանյութ վաճառող**: .... **Անտառավաճառներին** ներկայացնել .... փաստաթղթերը .... (*Գրաս, էջ 17*):

ԱՆՏԱՌԱՏՆԵՍԱԿԱՆ, ած. **Անտառային տնտեսությանը վերաբերող**: Քննարկվել է Եվրասիական տնտեսական միությունում գյուղատնտեսական և **անտառատնտեսական** տրակտոր-

ների տեխնիկական կանոնակարգի կիրառման հարցը (*Հւց, eurasiacommission.org*):

ԱՆՏԱՌԿԱՌԱՎԱՐՈՒՄ, գ. **Անտառային տնտեսության կառավարում:** Անտառկառավարման պլաններ (*Հւց, forest-committee.am*):

ԱՆՏԱՌՊԱՀՊԱՆԱԿԱՆ, ած. **Անտառը պահպանելուն ուղղված:** Կառավարության կողմից հաստատվեց **անտառպահպանական** ծառայությունների ծրագիրը (*Հւց, ecolur.org*):

ԱՆՑՈՒՄԱՇԵՐՏ, գ. (բնատ.): **Անէական, պատրանքային, տեսլացող զգացողություն:** ... Ամեն ինչ երևութական է, ամեն ինչ առնված է **անցումաշերտի** ու հպանցիկ թաղանթների մեջ .... (*ՀրչԹ, էջ 193*):

ԱՇԽԱՐՀԱՀԱՃՈ, ած. **Աշխարհին պատշաճող, վայել:** Նա [Ջամալգադեն], իր հուշերը եզրափակելով, գրում է «... Թուրքական կառավարությունը վարում է **աշխարհահաճո** քաղաքականություն» (*ԽԱ, էջ 139*):

ԱՉՔԱԳՐԱՎ, ած. **Ուշադրություն գրավող:** Նա հաղորդմանը ներկայացավ լայն ժպիտով ու **աչքագրավ** զգեստով (*Հւց*):

ԱՉՔԱՉԲԱՂ, ած. (բնատ., փխբ.): **Դիտող, դիտունակ:** Ես ունկնդիր, ես **աչքագրաղ**// Եղելության ամեն խորհուրդ// Իր հայացքն էր վրաս հառել... (*ԼԴ 1, էջ 37*):

ԱՉՔԱՎԱՌ, ած. (բնատ., փխբ.): **Աչքն այրող, պայծառ:** Երբ արևն է լուսաբացի թացությամբ շողում.- //Դեղձանիկն է տեսնում իրեն **աչքավառ** ցողում (*ԼԴ 1, էջ 20*):

ԱՊԱԱՐԳԵԼԱՓԱԿԵԼ, բ. **Արգելափակումը վերացնել:** Իրանի իշխանություններն **ապաարգելափակել** են Instagram-ը (*Հւց, news.am*):

ԱՊԱԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄ, գ. **Արգելափակման վերացում:** Apple-ը հաջողությամբ փակել է իր սմարթֆոնների **ապաարգելափակման** հնարավորությունը (*Հւց, news.am*):

ԱՊԱԲԱՐՈՅԱԿԱՆ, ան. **Ապարարո, բարոյագուրկ**: Բարուն ցինիկ և **ապարարոյական** կերպով փորձում է հասնել երկու հանցագործների վերադարձին (*Հւց, news.am*):

ԱՊԱԴՈՒԱՐԱՑՎԵԼ, Բ. **Դուարը փոխարինել այլ արժույթով**: Ավանդները **ապադուարացվում** են, վարկերը՝ դուարացվում (*Հւց, news.am*):

ԱՊԱԴՈՒԱՐԱՑՈՒՄ, գ. **Դուարի փոխարինում այլ արժույթով**: Ռուսաստանի տնտեսական անվտանգության ռազմավարությունը տնտեսության **ապադուարացման** խնդիր է դրել (*Հւց, news.am*):

ԱՊԱԶՎԹՈՒՄ, գ. **Ազատագրում**: Նախագահը խոստացել է Եվրախորհրդարանին ուժ չկիրառել Վրաստանի **ապագավթման** համար (*Հւց, news.am*):

ԱՊԱԺՈՂՈՎԴԱՎԱՐԱՑՈՒՄ, գ. **Ժողովրդավարացման նվազում, թուլացում, նահանջ**: Հայաստանում **ապաժողովրդավարացման** գործընթացը սկսվել է հենց 90-ականներին (*Հւց, news.am*):

ԱՊԱԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄ, գ. **Խորհրդային կարգերին հատուկ հարաբերությունների վերացում**: Ապակոմունիզացում, **ապախորհրդայնացում** և ապառուսականացում (*Հւց, news.am*):

ԱՊԱԿԵՇԱՐ, ան. **Ապակիներով շարված**: Նա շրջվեց՝ աչքերը հառած արվեստանոցի **ապակեշար** պատին (*ՄԿ, էջ 102*):

ԱՊԱԿԵՍՊԱՆ, ան.(փխբ.): **Ապակիները ջարդող**: Իմ **ապակեսպան** ձայնը ես, այսպես ասած, թողեցի տանը .... (*Գրաս, էջ 90*):

ԱՊԱԿՈՄՈՒՆԻՉԱՑՈՒՄ, գ. **Կոմունիստական գաղափարախոսության վերացում**: Տե՛ս ԱՊԱԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄ-ի օրինակը:

ԱՊԱՄԻՉՈՒԿԱՅՆԱՑՈՒՄ, գ. **Միջուկային զենքի վերացում կամ կրճատում**: Փենյանին անհրաժեշտ է ցուցադրել

**ապամիջուկայնացման** տեսանելի, կոնկրետ և էական միջոցառումներ (*Հւց, news.am*):

ԱՊԱՌՈՒՍԱԿԱՆԱՅՈՒՄ, գ. **Ռուսական ազդեցությունից դուրսբերում**: Տե՛ս ԱՊԱԽՈՐՀՐԴԱՅՆԱՅՈՒՄ-ի օրինակը:

ԱՌԱՆՑՔԱԿԵՏ, գ. **Առանցքային կետ**, (փխբ.): **Ուշադրության հիմնական առարկա**: Այնուհանդերձ մնում էին պատկերի կենտրոնն ու **առանցքակետը** (*Գրաս, էջ 361*):

ԱՌԱՋՆԱԿԱՆՉ, ած. **Առաջին կանչին հատուկ՝ բնորոշ**: **Առաջնական** ձայնն աբրորի ականջին, շրջահայող աչքերի մեջ բութ մի շեշտ (*ՄԳ, էջ 81*):

ԱՌԵՎՏՐԱԳՈՎԱԶԴԱՅԻՆ, ած. **Առևտուրը գովազդող**: **Առևտրագովազդային** անվանումները (*Գրաս, էջ 559*):

ԱՌՅՈՒԾԱՌՈՐՁ, գ. **Առյուծի որջ՝ բույն**: **Առյուծաորջ** ես մտել ու կորյուն բռնել (*Մ1, էջ 53*):

ԱՍԵՂՆԱՀԱՐԵԼ, բ. (փխբ.): **Ծակող հայացքով նայել**: ...Մանրիկ շարժուն աչքերը ուղղակի **ասեղնահարում** էին (*ՆՇ, էջ 167*):

ԱՍԵՂՆԱԾԱՎ, ած. (բնաս.): **Աստղալից և ծավի**: Ուրիշ երկինք էր **աստեղնածավ**,// Ուրիշ ձմեռ էր ու ուրիշ ձյուն (*ԽՄ1, էջ 83*):

ԱՍԵՂՆԱՀՈՒԲ, ած. (բնաս., փխբ.): **Աստղային հուր ունեցող**: Ես հիշեցի սերն իմ անմեղ, սերն իմ **աստեղնահուր**... (*ԼԴ 1, էջ 22*):

ԱՍՏՂԱԹԵՎ, ած. **Աստղի թևի նմանվող**: Դարպասի վրայից ջնջվել էին երկաթյա **աստղաթև** դրվագումները (*ՌԴ, էջ 173*):

ԱՍՏՂԱԿԵՆՍԱՐԱՆՈՒԹՅԱՆ. գ. **Աստղակենսաբանության մասնագետ**: Ըստ NASA-ի **աստղակենսաբանի** հնագույն երկնաքարերի վրա արտամոլորակային կյանքի հետքեր են հայտնաբերվել (*Հւց, news.am*):

ԱՍՏՎԱԾԱԱՐԵՎ, ան. (բնատ.): **Աստծուց ճառագած:** Ինչ-որ կրակ կար՝ համով, ինքնաբոբ՝ // **Աստվածաարև** ավանդին հլու (*ԽՄԼ, էջ 37*):

ԱՎԱԶԱԲԱՂՆԻՔԱՅԻՆ, ան. **Ավագաբաղնիքի միջոցով կատարվող:** Դիմիր բժշկի, նա **ավագաբաղնիքային** բուժումներ կնշանակի (*ՄԼ, էջ 59*):

ԱՎԱԶԱԹԵՐԱՊԻԱ, գ. **Բուժում ավագի միջոցով:** **Ավագաթերապիա.** ջերմ և յուրահատուկ միջավայր հիվանդ երեխաների համար (*Հսգ*):

ԱՎԱԶԱՓՈՍ, գ. **Ավագների մեջ եղած փոս, փոս ավագներում:** .... Ոտքիդ տակից փախչում են ավագները, և սահելով հայտնվում են **ավագափոսում** (*ՄԼ, էջ 163*):

ԱՎԱՆԱԿԱՎԱՐԻ, մկբ. **Ավանակի նման, ինչպես էջը՝ ավանակը:** - Է՛հ, ուրիշ բան է ազատ դաշտերում **ավանակավարի** արածելը ... (*ՄԼ, էջ 339*):

ԱՎԱՐՏԱՎԿԱՅԱԿԱՆ, գ. **Ավարտական վկայական:** .... Միջնակարգ դպրոցի լավ **ավարտավկայականը** ձեռքին .... (*Գրաս, էջ 34*):

ԱՎԻԱԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Օդային հաղորդակցություն կազմակերպող և իրականացնող ձեռնարկություն:** **Ավիաձեռնարկությունների** ղեկավարների միջազգային ասոցացիան նոր տնօրեն ունի (*Հսգ, news.am*):

ԱՏԱՄՆԱՀԵՏՔ, գ. **Ատամի հետք:** .... Իրենից հրաշալի թիրախ ներկայացնող մարմնի առաջնային մասում որևէ այլ **ատամնահետքեր** չկային (*Գրաս, էջ 195*):

ԱՐԱԳԱՑՈՒՑՉԱՅԻՆ, ան. **Արագացուցչին վերաբերող:** Մինչև տարեվերջ Հայաստանում կստեղծվի **արագացուցչային** ծրագրի գիտական խորհուրդ (*Հսգ, news.am*):



ԱՐԱՐՉԱՎԱՅԵԼ, ան. (բնատ.): **Արարչին վայել:** Իսկ արծիվն արդեն պանում է վեր, // **Արարչավայել** փառքի պես ձգվում (*ԼԴ 1, էջ 40*):

ԱՐԲՈՒՆՔՈՏ, ան. (փխբ., բնատ.): **Հասունացած, արբունքի հասած:** Ու կճկվի՝ **արբունքոտ** պտուղներից իր բերրի (*ԽՄԼ, էջ 72*):

ԱՐԳԵԼԱՓԱԿՈՑԱՅԻՆ, ան. **Արգելափակոց ստեղծած, արգելափակոցի նման շարված:** ... Կամրջի այն կողմում արդեն սկսվում էր «կապույտ համազգեստների» **արգելափակոցային** շղթան (*Գրաս, էջ 26*):

ԱՐԳԵԼՈՑԱՊԱՐԿԱՅԻՆ, ան. **Պարկ-արգելոցին հատուկ: Արգելոցապարկային** համալիրի տարածքում սոճիների ապօրինի հատման դեպք է գրանցվել (*ՀՄԳ, armenpress.am*):

ԱՐԵՎԱԲՈՒԻՍ, ան. (բնատ.): **Արևից բխած:** Դու պաշտամունք, վերապարզև աստվածամայր, // Դու երգեհոն, **արևարուխ** փառքի շեփոր... (*ԼԴ 1, էջ 39*):

ԱՐԵՎԱԶԱՆԳ, գ. (բնատ.): **Պայծառ և զնգացող:** Որ դարձավ իմ լեզուն ճախրանք, // Իմ երազը՝ պահպանող սուր, // Լույս տարածող **արևազանգ**, // Արդարություն ծնող ցասում (*ԼԴ 1, էջ 38*):

ԱՐԵՎԵԼԱԵՎՐՈՊԱԿԱՆ, ան. **Արևելյան Եվրոպային հատուկ:** ... Ես, սակայն, պահպանում եմ իմ **արևելաեվրոպական** չափերը ... (*Գրաս, էջ 41*):

ԱՐԵՎԵԼԱԵՎՐՈՊԱՅԻ, գ. **Արևելյան Եվրոպայի բնակիչ:** ... Պարտքով է տվել ինչ-որ մի **արևելաեվրոպացի** արհեստավարժ լուսանկարչի ... (*Գրաս, էջ 54*):

ԱՐԺԵՔԱՀԵՆ, ան. (ճիշտ է՝ արժեքահենք): **Արժեքների վրա հենված:** Նոր կրթությունը պետք է լինի ապակենտրոն, **արժեքահեն**, կիրառական և ստեղծարար (*ՀՄԳ*):

ԱՐԾԱԹԱԶԳԵՍ, ած.Արծաթագույն զգեստի գույնի: Քն տան ճանապարհին **արծաթազգեստ** փշատենին էր ծաղկել(*ՄՅ, էջ 417*):

ԱՐԾԱԹԱԾՈՐ, ած. **Արծաթահնչուն** (ձայնի մասին): Այգեստանների անխոնջ թևավորները **արծաթածոր** հնչունների տակ իրենց երգն էին հյուսում (*ՌՂ, էջ 153*):

ԱՐԾԱԹԱԿԱՆԱԶ, ած.Արծաթագույնին՝ սպիտակին տվող **կանաչ**: Բայց քարտեզդ մի փոքր մուգ կանաչավուն՝ **արծաթա-կանաչ** գեղեցիկ նախշազարդ տերևներով, բաց մանուշակագույն ծաղկած «Արշտակ»-ի վրա ....(*Մ1, էջ 71*):

ԱՐԾԱԹԱՂՈՂԱՆՋ, ած. (բնաս.): **Արծաթի ձայնով դողանջող**: .... Մեծարենցի, Դուրյանի **արծաթադողանջ** արևմտահայերենով ....(*Իր., 26.03.2019*):

ԱՐԿՂԱՎՈՐԵԼ, բ. **Արկղերի մեջ դնել**: Կորեացին **արկղավորած** ձուկը վրա-վրա շարտում է մեքենայի խցիկում....(*ԼԽ, էջ 38*):

ԱՐՀԵՍՏԱՎԱՐԺՈՐԵԼ, մկբ. Իր մասնագիտության **մեջ վարժ արհեստավորի նման**: .... **Արհեստավարժորեն** խուսափելով ավագոտ ծանծաղուտներից՝ «Ռադաունան» հաղթահարում էր պղտոր, կավոտ շիթը .... (*Գրաս, էջ 20*):

ԱՐԶԱՆԱԳՐԱԿՈԹՈՂ, գ. **Արձանագրություն պարունակող կոթող**: Քննարկվող տիպին է պատկանում նաև Կելիշինի **արձանագրակոթողը** (*ՊԲՀ, 3, 2017, էջ 164*):

ԱՐՄԱՏԱԽԼԻԿ, ած.Արմատախիլ **արված, արմատով պոկված՝ հանված**: Դուք միայն նայեք այս հազվագյուտ կարտոֆիլների, .... այդքան առաքինի **արմատախիլիկին**....(*Գրաս, էջ 327*):

ԱՐՄԱՏԱԿՈՃՂ, գ. **Հաստ արմատամաս**: Մարդիկ .... չեն օգտագործում նրա **արմատակոճղերում**, տերևների և ծաղիկների մեջ ամբարված դաբաղանյութերը .... (*Մ1, էջ 179*):

ԱՐՅՈՒՆԱԲՈՍՈՐ, ած.Արյան նման կարմիր: Կոճղար-

մատներով հանված, **արյունաքոսոր** ծաղիկներով ծաղկած արյունախամիկի փունջ ես նվեր ստացել (*Մ1, էջ 69*):

ԱՐՏԱԲՅՈՒՋԵ, գ. **Բյուջեից դուրս գտնվող, բյուջեի մեջ չընդգրկված միջոցներ**: Կառավարությունն ընդունեց **արտաբյուջեների** սահմանափակում սահմանող փաթեթը (Հմց, news.am):

ԱՐՑՈՒՆՔԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, գ. (փխբ.): **Հուզմունք**: Նրանց նույնպես հարկավոր են համոզմունքներ ու պարզունակ ճշմարտություն,.... որ հավաքական **արցունքարտադրություն** առաջ բերեն (*ՄԿ, էջ 309*):

ԱՓՆԱԲԵՐԴ, գ. (բնաս.): **Ծովի ափին գտնվող բերդ**: Ես՝ հայացքս լուռ հեռվին եմ գամում՝// Ուր բյուզանդական **ափնաբերդերի**// Խորհուրդը խրոխտ խրվել է եթեր (*ԼԴ 1, էջ 53*):

## Բ

ԲԱԴԱԳՈՂ, գ. **Բաղի գող, բաղ գողացող (անձ)**: Բաղագող ես դարձել ու հարևանի բաղը գողացել (*Մ1, էջ 77*):

ԲԱԶԱԼՏԱՄՇԱԿՈՒՄ, գ. **Բազալտ մշակելը, բազալտի մշակում**: Երագում 10 կգ քաշով **բազալտամշակման** .... հաստոց ես հնարել .... (*Մ1, էջ 78*):

ԲԱԶՄԱԲՈՎ, ած. (փխբ.): **Վառվռուն, բազում անգամ բովված**: Գիտեմ կծպտասս հետո քո ժպիտով **բազմաբով** (*ԳՄ, Թ, էջ 92*):

ԲԱԶՄԱԳՈՒՆԵՂ, ած. **Վառ գույներով**: Այդ վերքի արյան ծորումը նկատելի է Սեյրան Խաթլամաջյանի **բազմագունեղ** գեղանկարչության մեջ (*ՀՀ, 13.06.2019*):

ԲԱԶՄԱԴԻՄԱԿ, ած. **Բազում դիմակներ ունեցող**: Իր միօրյա սիրո մեջ՝ **բազմադիմակ** քողի տակ չի խարդախի սերը քո (*ՄԳ, էջ 74*):

ԲԱԶՄԱԶԱՐԿ, ած. (բնաս., փխբ.): **Բազում զարկեր**

**ունեցող:** Իմ **բազմազարկ** կայծակնությամբ իջա ցած, // Իջա որպես տառապածի բախտի տեր (*ԼԴ 1, էջ 62*):

ԲԱԶՄԱԹԵՐ, ան.**Բազմաշերտ, շատ շերտերից կազմված:** ...**Բազմաթեր** երշիկը դրեց սեղանի վրա .... (*Գրաս, էջ 325*):

ԲԱԶՄԱԽՐԱՏ, ան. **Շատ խրատներ տվող՝ պարունակող:** Բազմաշերտ ու **բազմախրատ** երազը հուշում է ....(*Մ2, էջ 430*):

ԲԱԶՄԱԾՈՒՆԿ, ան.**Շատ ծնկեր՝ ծնկաձև ծավաձքներ ունեցող՝ ծավաձքներով:** Նրա խցի մեջ մի պատուհանից դուրս էր գալիս վառարանի տանիքից վեր բարձրացող **բազմածունկ** ծխնելույզը (*Գրաս, էջ 501*):

ԲԱԶՄԱՀԱՃՈՒՅՔ, ան.**Բազում՝ շատ հաճույք պատճառող:** Անակնկալ, **բազմահաճույք** հանդիպումներ ես ունենալու (*Մ1, էջ 89*):

ԲԱԶՄԱՀԱՆԳՈՒՅՑ, ան.**Շատ հանգույցներ ունեցող՝ հանգույցներով:** Նա հանգույցներ է հյուսում սովորական առասանակից ...., դրանք վերածում **բազմահանգույց** հրեշների ....(*Գրաս, էջ 3*):

ԲԱԶՄԱՀՐՁԻԳ, ան.**Շատ հրդեհների հեղինակ:** Այսպիսով, Կոլյայչեկը հրձիգ էր, անգամ **բազմահրձիգ** .... (*Գրաս, էջ 17*):

ԲԱԶՄԱՄԱՆԼԱԹԵԼԱՅԻՆ, ան.**Շատ՝ բազմաթիվ մանրաթելերից գործված:** Օսկարն իր հերթին պառկեց .... իր նախկին մահճակալամերձ գորգի վրա ու սկսեց այդ **բազմամանրաթելային** հյուսվածքը ճոճել (*Գրաս, էջ 954*):

ԲԱԶՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ան.**Տարբեր մշակույթների հատկանիշներ կրող:** Իսկ եթե միտումնավոր չընտրեի այնպիսի եկեղեցի, որը **բազմամշակութային** է, որպեսզի մեր երեխաները նույնպես չմեծանային նույն հոմոգենացված աշխարհայացքով (*ՌՀ, էջ 273*):

ԲԱԶՄԱՄԴԳԱՅԻՆ, ան.**Բազմաթիվ՝ շատ մրգերից ստացված:** Բազմամրգային մարմելադ (*Գրաս, էջ 146*):

ԲԱԽՏԱՀԱՐՎԱԾ, գ. **Բախտի հարված: Բախտահարվածի** դժնդակ ժամին // Ձեր գոյությամբ եմ ցավերս հերքում (*ՌԳ, էջ 30*):

ԲԱՂԱԴՐԱԿԱԶՄ, գ. **Բաղադրության մեջ մտնող միավորների ամբողջությունը:** Ոչ ոք .... [չէր] գովաբանել իր եփած-թափածը՝ թվարկելով բոլոր համեմունքները և **բաղադրակազմի** իմաստությունները (*Գրաս, էջ 170*):

ԲԱՆԱՀՅՈՒՄԵԼ, բ. **Բանաստեղծորեն նկարագրել, պատմել:** Բանաստեղծը Աստծո որդու նոր գալստյան տեսիլքն է **բանահյուսում** (*ՄՄ, էջ 7*):

ԲԱՌԱԴՈՒԼ, գ. (դիպվ.): **Բառեր չգործածելու ցանկություն, բառերի չեղարկում:** Այդ խեղճ բառերը ևս ստիպված պետք է **բառադուլ** հայտարարեն (*Մ1, էջ 94*):

ԲԱՌԱԿԻՐԱՌՈՒՄ, գ. **Բառագործածություն:** Նարեկացու **բառակիրառման** որոշ դրսևորումներ...նա փորձել է կիրառել (*ՄՄ, էջ 177*):

ԲԱՌԱՀԵՆ, գ. (դիպվ., փխբ.): **Բառը՝ խոսքը յուրացնող, գողացող:** .... Դառնում է արկածախնդիր և **բառահեն** ակոսում է պատմամշակութային տարածքներն ու մայրցամաքները՝ խոսքի գանձերին տիրանալու համար (*ՀրչԹ, էջ 282*):

ԲԱՌԱՆԱԽՇ, գ. (փխբ.): **Բառերով ստեղծված պատկեր, նախշ, զարդ:** Մենք պետք է տեսնենք ու երիզենք **բառանախշերով** բանաստեղծի ներքին պատկերը, սահող ուրվագիծը իր իսկ պատկերած բնության խորքում .... (*ՀրչԹ, էջ 147*):

ԲԱՌԱՆԿԱՐ, գ. (բնատ., փխբ.): **Բառի պատկեր, տպավորություն:** Ու տարածական խոսքի մանվածքներ, // Ճշգրիտ՝ իբրև մի **բառանկար** (*ՀրչԹ, էջ 131*):

ԲԱՌԱՊԻՏԱԿ, գ. **Բառերի պիտակ, դրոշմ:** Սիրիի Վան Գոգ ու հազար ու մի իմ երակներով հոսող վազող գունապատկերիս հեղինակային անանուն նկարչիս **բառապիտակների** ասված-չասված զգացողություններս .... (*ԳՄ, Թ, էջ 46*):

ԲԱՐԻՏՈՆԱԶԱՅՆ, ած. **Բարիտոնի ձայնով հնչող**: Երազում **բարիտոնաձայն** երգ ես լսում *(Մ1, էջ 102)*:

ԲԱՐ-ԿԱՆԳՆԱԿ, գ. **Սրճարանի վաճառասեղան, կանգնակ**: ...Անվատահ քայլերով նա մոտեցավ **բար-կանգնակին** և գրապ-պա խնդրեց *(ՆՓ, էջ 51)*:

ԲԱՐՄԵՆՈՒՀԻ, գ. **Կին՝ աղջիկ բարմեն**: **Բարմենուհին** հա-մակրելի աղջիկ էր *(ԽՄ, էջ 182)*:

ԲԴԱՄԱՍ, գ. **Բդի մաս՝ հատված, բդի մարմնամաս**: Էջի թարմ ու յուղալի լիլիկան **բդամասերը** որ տեսա, այսորժակս գրգռվեց .... *(Մ1, էջ 151)*:

ԲԵՅՐՈՒԹԱՀԱՅ, գ. **Բեյրութում բնակվող հայ**: **Բեյրութահայ** լեռնագնացը հաղթահարել է արևմտյան կիսագնդի ամենաբարձր լեռնագագաթը (Հնգ, news.am):

ԲԵՌՆԱՏԵՍԱԿ, գ. **Բեռան տեսակ՝ կարգ, խումբ**: .... Անկախ **բեռնատեսակից** .... մեկ տոննա բեռը ուսերին դնելը միշտ էլ կործանարար է բեռնակրի համար *(Մ 3, էջ 323)*:

ԲԵՐԴԱՇԱՐ, ած. (բնատ.): **Բերդի պես ձգվող**: **Բերդաշար** ժայռեր՝ բուլորած վերձիգ, // Ոգեշունչ թրծված մասրաներկ հրով.... *(ԼԴ 1, էջ 40)*:

ԲԵՐՔԱԶՈՒԴԿ, ած. **Բերք չեղող, անբերք**: Չորային, **բեր-քազուրկ** տարի է լինելու *(Մ1, էջ 62)*:

ԲԵՐՔԱԾԻԼ, գ. **Բերքի ծիլ՝ բույսի՝ հողից նոր դուրս եկած նուրբ ցողուն**: .... Մարգից քաղել ես թարխունի առաջին **բեր-քածիլերից** .... *(Մ1, էջ 133)*:

ԲԶԱԳՈՐԾ, գ. **Բիզ պատրաստող արհեստավոր**: **Բզազործ** ես դարձել, բզեր ես պատրաստում ու վաճառում *(Մ1, էջ 117)*:

ԲԶԵԶԱՏԵՍԱԿ, գ. **Բզեզի տեսակ**: ... .Այդ **բզեզատեսակը** զիշատիչ է *(Մ1, էջ 115)*:

ԲԺՇԿԱՏՆԵՍԱԳԻՏԱԿԱՆ, ած. **Բժշկական և տնտեսագի-**

**տական:** Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների հաշվարկման նոր մեթոդաբանության հիմքում ընկած են **բժշկատնտեսագիտական** ստանդարտները (*ՀՄԳ, anti-corruption.gov.am*):

ԲԼՐԱՎԵՐԵՎ, գ. **Բլրի վերևի մաս:** Մի օր **բլրավերևում** էի, տեսա իմ դիմաց...մի հսկա կենդանի (*ԼԴ 2, էջ 4*):

ԲՅՈՒՐԱԽՈՑ, ած. (բնատ., փխբ.): **Շատ տառապած:** Ու Տերյանը մահամերձ:// Աղոթքը մեր **բյուրախոց**:// Դաժանության ի՛նչ ժամեր:// (*ԼԴ 1, էջ 52*):

ԲՅՈՒՐԱԿԱՆՉ, ած. **Բագում անգամ կանչող:** Գարնան **բյուրականչ** կանչերով գնա՛ ... ու մի ծանրացրու բեռը հուշերիս (*ԳՄ, Ա, էջ 10*):

ԲՅՈՒՐԱՔԱՆԱԿ, ած. **Բյուր՝ չափազանց շատ թվաքանակով:** .... Մի բուռ ժողովուրդ հաղթում է մինչև ատամները զինված **բյուրաքանակ** թշնամուն (*Մ2, էջ 394*):

ԲՅՈՒՐԵՂԱՄԱՇԿ, գ. (բնատ.): **Բյուրեղի նման մաշկ:** Ու կհառնի երգն ի վեր **բյուրեղամաշկն** անթերի (*ԽՄ1, էջ 72*):

ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ, ած. **Բնագիտական և մաթեմատիկական:** Ընդհանուր և **բնագիտամաթեմատիկական** հոսք (*ՀՄԳ, heratsischool.com*):

ԲՆԱՊՍԱԿ, գ. (փխբ.): **Բնական՝ բնությունից տրված տաղանդով:** Հրանտ Մաթևոսյան զավակը համաշխարհային հանրության զավակն է՝ իր ծննդավայր Ահնիձոր- Ծմակուտի **բնապսակով** (*ՆՇ, էջ 183*):

ԲՇՏԻԿԱՆՄԱՆ, ած. **Բշտիկի նման, արտաքին տեսքով բշտիկ հիշեցնող:** **Բշտիկանման** պտուղները (*Մ3, էջ 53*):

ԲՈԼՈՐԱԿԱԼ, գ. **Շրջանաձև՝ բոլոր կողմերը փակող եզրաշերտ:** .... Որոնք կախված էին առագաստի կաղնեփայտ **բոլորակալի** տակ .... (*Գրաս, էջ 212*):

ԲՈՂԵՄԱՇՈՒՆՉ, ած. **Բոհեմի շունչ ունեցող:** Հիմա այդ

օրերի **բռնեմաշունչ** պատմությունը ավելի հավաստի կլիներ ...  
(ՀՀ, 15.06.2019):

ԲՈՂԿԱՎԱՃԱՌ, գ. **Բողկ վաճառող**: ... Ջարմացած պատասխանում է **բողկավաճառը**(Մ1, էջ 127):

ԲՈՍՈՐԱՀՈՒՌ. ան. (բնատ.): **Բոսոր**: Մայրամուտը՝ ոսկի հալուն, **բոսորահուռ** (ԿՄ, էջ 24):

ԲՈՆՈՂԱԿԱՆ, ան. **Բոնելու**: .... Թոթոլիկ մատիկներ, որոնք ինքնամոռաց, **բոնողական** բնագոյին ենթարկվելով, խաղում են արջի մորթու բրդերի հետ .... (Գրաս, էջ 54-55):

ԲՈՌԻՆՑՔԱԿԻԹ, գ. **Կաթնասունի ստինքները բռունցքով սեղմելով կթելը**: .... Ի տարբերություն մատնակիթի .... **բռունցքակիթը** մաքուր է և հիգիենիկ (Մ2, էջ 152):

ԲՐԱԶԻԼԱՀԱՅ, գ. **Բրազիլիայում բնակվող հայ**: **Բրազիլահայ** գործարարը մտադիր է Հայաստանում ներդրում անել (Հնգ, news.am):

ԲՐԻՆՉԱԶՏԻՉ, գ. **Բրինձ գտող**: **Բրինձագտիչ** մեքենան տեղադրել և բրնձահատիկները գտում են թեփից (Մ1, էջ 134):

ԲՐԻՏԱՆԱՀԱՅ, գ. **Բրիտանիայում բնակվող հայ**: **Բրիտանահայ** բարերարը վաղը կժամանի Հայաստան (Հնգ, news.am):

ԲՐՆԱԶՈՒՐ, գ. **Եռացրած բրնձի ջուր**: ... Պողպատյա ժանգոտած սուրդ մաքրել [էիր], փայլեցրել **բրնձաջրով**(Մ3, էջ 201):

ԲՈՒԺԱՊԱՀՈՎՈՒՄ, գ. **Բուժական ապահովում**: Ձինված ուժերում կան այնքան բժիշկներ, որքան բանակին անհրաժեշտ է **բուժապահովումը** կազմակերպելու համար (Հնգ, azatutyun.am):

ԲՈՒԺԱՍԵՂ, գ. **Բուժական ասեղ**: ....Արմունկի ներսի ծալի թափանցիկ կապույտ երակի **բուժասեղից** առաջացած վերքը պարզեց մեզ....(ԼԽ, էջ 192):

ԲՈՒԺԱՐՏԱԴՐԱՆՔ, գ. **Բուժախոցներ, բժշկական սարքեր**,



**հարմարանքներ:** Ջուզահեռաբար կպահպանվեն **բուժարտադրանքի** գրանցման ազգային համակարգերը և գրանցման համակարգերը ԵԱՏՄ-ի ընդհանուր շուկայում (Հմց, news.am):

ԲՈՒԺՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ, գ. (հավ.): **Բուժհիմնարկ, բուժական հիմնարկություն:** ... Ես ձեզ պետք է խնդրեմ Դանցիզի քաղաքային հիվանդանոցների երկաթյա մահճակալը համեմատել տեղական **բուժհիմնարկության** նույնպես մետաղյա մահճակալի հետ(*Գրաս, էջ 276*):

ԲՈՒԽԱՐԵՍՏԱԲՆԱԿ, ած. **Բուխարեստում բնակվող: Բուխարեստաբնակ** Անդրեյ Պասարիուն ....գեկուցումը կարդաց հայերենով(*ՊԲՀ, 2, 2018, էջ 305*):

## Գ

ԳԱԶԱՐԱՎԱՃԱՌ, գ. **Գազար վաճառող: Գազարավաճառ** ես դարձել (*Մ1, էջ 142*):

ԳԱԹԱՅԱԳՈՐԾ, գ. **Գաթա թխելով զբաղվող, գաթա թխող (անձ):** .... Գաթայի ճակատագիրը պետք է տնօրինի **գաթայագործը**(*Մ1, էջ 143*):

ԳԱՀԱԽՈՐՀՈՒՐԴ, ած. (բնատ.): **Գահի՝ արքայական խորհուրդ պարունակող: Գահախորհուրդ** փառք փայլակեց ամեն սար, //Շանթ խուժեցին նծույզներս թխածին (*ԼԴ 1, էջ 62*):

ԳԱՂՏՆԱՎԱՅՐ, գ. **Գաղտնի վայր:** Տղաները ....սուզվում հայտնաբերում էին ....մարգահատիկների **գաղտնավայրերը** (*ԼԴ, էջ 105*):

ԳԱՅԼԱԲԱԺԻՆ, գ.1. **Գայլի բաժին: 2.** (փխբ.): **Պետական՝ ժողովրդական բարիքները խժոռո պաշտոնյայի թալանը:** Կառավարության կազմի մեջ գառան մորթով մի գայլ է խցկվելու և .... ժողովրդի բարիքներից իր **գայլաբաժինը** խժռելով արտասահման է ճողոպրելու(*Մ3, էջ 245*):

ԳԱՅԼԱՎԱՐԻ, մկբ.**Գայլի նման, ինչպես գայլը:** .... Ինչ

ձեռքդ ընկնի խժոեղու ու **գայլավարի** եւ ապրելու (Մ2, էջ 520):

ԳԱՆԶԱՀԱՎԱՔ, գ. **Գանձ հավաքող: Գանձահավաք** եւ դարձել (Մ1, էջ 155):

ԳԱՎԱԶԱՆԱԾԵԾ, գ. **Գավազանի հարվածներով կատարված ծեծ: Գավազանածեծ** ուտել (Մ1, էջ 156):

ԳԱՐԵՎԱՃԱՌ, գ. **Գարի վաճառող: Գարեվաճառ** եւ դարձել (Մ1, էջ 160):

ԳԱՐԵՏԵՍԱԿ, գ. **Գարու տեսակ («տրո»):** Ցանել եւ ն' զարնանացան, ն' աշնանացան ... **զարետեսակներ** .... (Մ1, էջ 160):

ԳԱՐՆԱՆԱԹԱՐՄ, ած. **Գարնան նման թարմ՝ չապականված, մաքուր:** .... Ցանկանանք, որ սիրո ճամփին ձեր փոխադարձ սերը միշտ **զարնանաթարմ** մնա (Մ1, էջ 161):

ԳԱՐՆԱՆԱԼՈՒՐ, ած. **Թարմ և ավետաբեր:** Եվ ինքս ինձ սփոփեմ **զարնանալուր** պտույտով (ԳԹ, 06.09.2019):

ԳԵՂԱԹԵՐԹԻԿ, գ. **Բացիկ:** .... Շրջանառության մեջ դրվեց մեկ նամականիշով **գեղաթերթիկ՝** նվիրված «ՏՏ համաշխարհային համաժողովը Երևանում» թեմային (ՀՀ, 08.10.2019):

ԳԵՂԱԾՓՈՒՆ, ած. (փխբ.): **Գեղեցիկ և ծփացող, գեղածուփ:** ....Երկու տտիպ պտղի նման ստինքների սուտակները ձգվում էին կարծր-կարծր՝ մարմնի, ծաղկի **գեղածփուն** բուրմունքի մեջ (ԻՄ, էջ 8):

ԳԵՂԱՐՎԵՍՍԱՓԱՍՍԱԳՐԱԿԱՆ, ած. **Գեղարվեստական և փաստագրական:** «Հայ իշխան Մանուկ Բեյը» **գեղարվեստափաստագրական** ռուսերեն պատումի հեղինակ, մոսկվայաբնակ գրող Գոհար Ռշտունին խոսեց տարիներ առաջ իր գրքի համար կատարած հետազոտությունների մասին (ՊԲՀ, 2, 2018, էջ 305):

ԳԵՂԶԻԿԱՎՈՐ, ած. **Գեղձիկներ ունեցող՝ գեղձիկներով:** .... Ընձյուղները և տերևները **գեղձիկավոր** խիտ մազմուկներով

ծածկված .... ծխածաղիկը (Մ2, էջ 126):

ԳԵՂՋԿԱՎԱՐԻ, մկբ. **Գեղջուկի՝ գյուղացու նման: Գեղջկավարի** պատմելը մեծ առավելություն ունի.... (ՁԽ, էջ 310):

ԳԵՏՆԱԿԱՊ, ած.**Գետնին կապված, գետնի վրա (ոչ բարձրադիր) կառուցված:** .... Նստել եք ձեր գյուղի գետնակապ պատշգամբի երկար սեղանի շուրջը .... (Մ1, էջ 173):

ԳԵՐԱԼԱՐԿՈՏ, ած. **Արտակարգ ծույլ:** .... Այսօր նրան անվանում եմ **գերալարկոտ**, սակայն, այդ ամենով հանդերձ, անշարժ չէր, քրտնող է.... (Գրաս, էջ 577):

ԳԵՐԱՂՔԱՏ, ած. **Շատ աղքատ:** Եվ նրանք իրենց խնդիրը լուծեցին. փայլուն պետությունը դարձավ գերպետություն, ժողովուրդը մնաց **գերաղքատ** (ՁԽ, էջ 285):

ԳԵՐԵԶՄԱՆԱՄԵՐԶ, ած. **Գերեզմանոցին մոտ գտնվող:** Հաջորդ պահին գլխապատառ փախա՝ շունչս **գերեզմանամերձ** տների մոտ տեղը բերելով (ՆՇ, էջ 93):

ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԱՅԻՆ, ած.**Գերեզմանատներում կատարվող, դրանց առնչվող:** «Գերեզմանատնային պարտիզպանություն» .... (Գրաս, էջ 511):

ԳԵՐԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆ, ած. **Չափից ավելի երևակայական:** Նոր կրոնը հավանաբար կլինի քրիստոնեության, բնապաշտության, աստղագուշակության, **գերերևակայական** միֆերի մի խառնուրդ.... (ՁԽ, էջ 229):

ԳԵՐԵՐԻՏԱՍԱՐԴ, ած. **Արտակարգ՝ շատ երիտասարդ:** .... Ինձ համար ամեննին էլ դժվար չէր այդ պառկած **գերերիտասարդ** մարդուն, ես նրան կտայի երեսուն, սակայն պարզվեց, որ նա նույնիսկ ավելի երիտասարդ է, առանց այլևայլության ուղղակի Կլեփ անվանելը (Գրաս, էջ 579):

ԳԵՐԼՈՒՄՆԱՅԻՆ, ած.**Խոշոր չափերով լուսնին՝ գերլուսնին վերաբերող:** Երկիր մոլորակի բնակիչները **գերլուսնային** խավարում կտեսնեն (Zlg, news.am):

ԳԵՐԽԱՂԱՐԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Չափազանց մեծ խաղարկություն:** Հայաստանի բնակիչները կարող են շահել 100 մլն եվրո ԵվրոՄիլիոնի **գերխաղարկությունում** (*ՀՆԳ, news.am*):

ԳԵՐԾԱՆԸԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Չափազանց մեծ ծանրաբեռնվածություն:** ....Աշխատանքի **գերծանրաբեռնվածությունը** վերցնելով ձեզ վրա՝ կփչացնեք ձեր առողջությունը (*TV ալիք, 03.12.2018*):

ԳԵՐԿԱՄԱՅԻՆ, ած. **Խիստ, չափից դուրս կամային:** .... Հավաքականը **գերկամային** հատկանիշներ դրսևորելով .... Կարողացել է փրկել .... անհուսալիորեն տանուլ տված մրցավեճը (*ՀՀ, 10.04.2019*):

ԳԵՐՀԱՆՃԱՐ, գ. **Գերագույն հանճար:** Միքելանջելո **գերհանճարի** մասին .... (*Նարեկ, թ. 12, 2017*):

ԳԵՐՆՊԱՏԱԿԱՍԼԱՑ, ած. **Չափազանց նպատակասլաց:** .... Իմ **գերնպատակասլաց** ուղեղի համար ասածս միանգամայն իմաստալից էր (*ՌՀ, էջ 54*):

ԳԵՐՇԱՀԱԳՈՐԾԵԼ, բ. **Չափից ավելի շահագործել:** Այսպիսով ջրային պաշարները չեն **գերշահագործվի** (*ՀՀ, 08.02.2019*):

ԳԵՐՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ, գ. **Չափից ավելի շահագործում:** Արարատյան դաշտի ջրերի **գերշահագործում** կա (*ՀՆԳ, news.am*):

ԳԵՐՈՒՇԱԴԻՐ, ած. **Չափազանց ուշադիր:** Մարդկանց մեջ գտնվելը ստիպում էր **գերուշադիր** լինել....(*ՌՀ, էջ 258*):

ԳԵՐՓԽՐՈՒՆ, ած. **Արտակարգ փխրուն:** .... Սկսեց կառուցել **գերփխրուն** խաղաթղթե տնակ (*Գրաս, էջ 269*):

ԳԵՐՔԱՂՑԸ, ած.1. **Արտակարգ՝ չափից դուրս քաղցր. 2.(փխբ.) Արտակարգ բարեհամբույր:** .... Շաբաթ օրերին մայրիկս, այդ նույն չափի **գերքաղցր** հոգով գնում էր ....եկեղեցին ....(*Գրաս, էջ 146*):

ԳԻՆԵԿԱՐՄՐԱԳՈՒՅՆ, ած. **Կարմիր գինու գույնի:** **Գինեկարմրագույն** թավիշ (*Գրաս, էջ 551*):

ԳԻՇԱՏՉԱՅԻՆ, ան. **Գիշատիչին հատուկ**: .... Նրա մեջ .... բնավորվել են բոլոր կենդանիների **գիշատչային** բնագոյները (*Մ1, էջ 121*):

ԳԻՇԵՐԱԳՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Գիշերային գողություն. Գողություն՝ կատարված գիշերը**: Գիշերաբաղձ ես դարձել և տառապում ես **գիշերագողություն** հիվանդությամբ (*Մ1, էջ 183*):

ԳԻՇԵՐԱՊԱՏՈՒՄ, գ. **Գիշերվա մեջ տեղի ունեցող պատմություն: Գիշերապատումի** հիմնապահը սերն է (*ՄՄ, էջ 157*):

ԳԻՇԵՐԱՑՈՒՅՑ, ան. **Գիշերային դիտման: Գիշերացույց** հեռադիտակով նշել է բվի տեղը, ու էլ այսօր նրան պրծում չկա (*ԼԽ, էջ 206*):

ԳԻՏԱԲԺՇԿԱԿԱՆ, ան. **Բժշկագիտական: Գիտաբժշկական** սեմինար՝ «Մրտի իշեմիկ հիվանդության բուժման ժամանակակից մոտեցումները» թեմայով (*Հւգ, news.am*):

ԳԻՏԱԽՈՂՀՐԴԱՏՎԱԿԱՆ, ան. **Գիտական և խորհրդատվական: Գիտախորհրդատվական** խորհուրդ (*ՀԲ, հունվար, 2019*):

ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ, ան. **Գիտական և մշակութային**: Հայաստանի գյուղական դպրոցները կվերածվեն **գիտամշակութային** կենտրոնների (*Հւգ, news.am*):

ԳԻՏԱՆԱԽԱԳԾԱՅԻՆ, ան. **Գիտական և նախագծային**: Վավերագրման և ուսումնասիրման աշխատանքներ, **գիտանախագծային** փաստաթղթերի կազմում և փորձաքննում (*Հւգ, arlis.am*):

ԳԼԵՆԴԵԼԱՀԱՅ, գ. **Գլենդելում բնակվող հայ: Գլենդելահայերը** ցուցարարների հետ համերաշխության ակցիա են անցկացրել (*Հւգ, news.am*):

ԳԼԽԻԿԵ, ան. **Փոքրիկ գլուխ՝ հաստ գլխամաս ունեցող**: .... Նստել էր ոսկե **գլխիկե** մեխերով իր կաշվե աթոռի վրա (*Գրաս, էջ 212*):

ԳԼՈՒԲՈՒՄՍՏԻՊ, ան. **Գլորուսի ձև ունեցող**: Խոստովանում եմ, որ վերոնկարագրյալ կոկոյի **գլորուսատիպ** կերպափոխությունը...վերագրվել էր...բացառիկ տղամարդու ընդվզումին (ՎՄ, էջ 106):

ԳԾԱՆՇՏԱՐԱՐԱԶԵՎ, ան.**Գծի պես ձգված, նեղ ու երկար նշտարի նման՝ նշտարաձև**: Հավաքում ես արմավաթփի .... **Գծանշտարաձև** տափակ կամ թեթևակի սրածայր տերևները .... (Մ1, էջ 68):

ԳՅՈՒՐՉԱՅԱՍԻՊ, ան.1.**Գյուրգայի նման**: 2.(փխր.): **Թունավոր օձի բնավորություն ունեցող**: Աշխատելու ես այնպիսի մի հիմնարկում, որը երկար տարիներ ղեկավարելու է **գյուրգայատիպ** մի թունավոր պաշտոնյա (Մ1, էջ 193):

ԳՆԱԶՍՓ, գ. **Ծառայության կամ ապրանքի համար վճարվող արժույթի քանակը**: .... Նրանք ինձ ծանոթացրին ակադեմիական բնորդի համար նախատեսված **գնաչափերի** հետ (Գրաս, էջ 529-530):

ԳՆԱՅՔԱՎԱՐ, գ. **Գնացքի մեքենավար**: Ռուսաստանում **գնացքավարը** կանգնեցրել է գնացքը և փրկել ռելսերին կապած շանը (Հնգ):

ԳՈՄԵՇԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. (դիպվ.): **Գոմեշներ պահելու, բուծելու արհեստ**: **Գոմեշագիտության** գիտահետազոտական ինստիտուտ ես հիմնել (Մ1, էջ 198):

ԳՈՅԱԴԱՇՏ, գ. **Գոյության ասպարեզ**: Դրսում՝ քո և իր **գոյադաշտից** հեռու, ասես շատ բան խախտված լինի՝ խոսողը չգիտի ինչ է ասում, լսողն էլ չգիտի՝ ինչ պիտի լսի (ՄՄ, էջ 152):

ԳՈՅԱԽԱՂ, գ. **Գոյության, գոյի խաղ**: Մենք համր ու խուլ ենք բնության այդ խորհրդավոր **գոյախաղերի** հանդեպ .... (ՀրչԹ, էջ 148):

ԳՈՅԱՀԱՆԴԵՍ, գ. (բնատ.): Այստեղ՝ **կյանքի՝ գոյության հորձանուտ**: Երբ **գոյահանդես** կրքերը մարած՝ շրջվում ենք դեպի անլույս իրիկուն (ԽՄ1, էջ 31):

ԳՈՅԱՇԵՐՏ, գ. **Գոյություն ունեցող, երող շերտ:** Հունական միջնադարյան միստիկ տեսություններում՝ երագի և իրականության, քնի ու արթնության **գոյաշերտ** (ֆանտաստիկոն) (*ՀրչԹ, էջ 109*):

ԳՈՅԱՇԽԱՐՀ, գ. **Գոյություն ունեցող աշխարհ: Գոյաշխարհը** հավետ բաց է, // Պատյանի մեջ նա չի փակվում (*ՀրչԹ, էջ 76*): Ու սողոսկում էս աննկատ // **Գոյաշխարհը** երագներիդ (*ՀրչԹ, էջ 119*):

ԳՈՅԻՄԱՍՍ, գ. **Գոյության իմաստ:** Ոճիրը նրա միակ **գոյիմաստն** է (*Բր., 17.05.2019*):

ԳՈՏԿԱՊԱՏՎԵԼ, չբ. **Գոտու նման փաթաթել:** Մի ոմն մեղսագործուհի **գոտկապատվել** էր թոկով .... (*Գրաս, էջ 299*):

ԳՈՐԾԱՌ, գ. **Գործառություն կատարող (անձ, պաշտոնյա):** Մենք հայտնվեցինք լեհական փաստաբան **գործառների** կիսամույթ, սառը դահլիճում (*Գրաս, էջ 241*):

ԳՈՐԾԱՐԿԻԶ, գ. **Շարժիչը գործի դնող սարք:** Մեքենայի դուռը բաց էր թողել. գողացել էին գազի բալոնը, շարժիչի **գործարկիչն** ու մարտկոցը (*Հնգ, news.am*):

ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ, գ. **Գործիքների՝ միջոցների ամբողջություն:** Հայաստանում կիրառվելու է անցումային արդարադատության ողջ **գործիքակազմը** (*Հնգ, news.am*):

ԳՈՐՇԱՄՈՒՐԱՎՈՒՆ, ած. **Գորշին տվող մոխրագույն: Գորշամոխրավուն** ճաքճքած կեղևով ... բարդին (*Մ1, էջ 98*):

ԳՈՐՇԱՊԱՐԱՐ, ած. **Գորշությամբ պարուրված:** Իր ջրածոր ողջ քարերով, ծաղկազարդված պարտեզներով, հարահոսուն, .... ջրի մեջ պտտվում է, խորասուզվում Վենետիկը **գորշապարար...** (*ԲՄ, էջ 40*):

ԳՈՐՇԱՍԵՎԱՎՈՒՆ, ած. **Գորշին՝ մոխրագույնին տվող սև երանգներով: Գորշասևավուն** կեղևիս .... (*Մ1, էջ 99*):

ԳՐԱՎԱՃԱՌՈՒՅԻ, գ. **Կին գրավաճառ:** Հանդիպելու էս

թթված դեմքով մի **գրավաճառուհու**, որը թաղման բյուրոյում աշխատելու փոխարեն **գրավաճառուհի** է աշխատում (*Մ1, էջ 204*):

ԳՐՉԱԳՐԵԼ, նբ. **Սկզբնաղբյուրից ընթրօրինակել ձեռագրով**: Մոմի լույսի տակ միջին դարերում **գրչագրված** մագաղաթ ես կարդացել (*Մ2, էջ 443*):

ԳՐՊԱՆԱՁԵՎ, ած. **Գրպանի ձև ունեցող, գրպանանման**: .... Վերին սիներակը երակների մեջ գտնվող **գրպանաձև** փականներով փակել .... (*Մ1, էջ 281*):

ԳՐՔԱԳՈՂ, ած. գ. **Գիրք գողացող**: .... Դու բարոյական իրավունք ունես քո **գրքագող** այդ մեկի ոչ միայն ականջները ոլորել, այլև աչքերը հանել (*Մ1, էջ 443*):

ԳՐՔԱՑԱՆԿ, գ. **Գրքերի ցուցակ**: Մենք փորձում ենք...ավելի մեծ **գրքացանկ** առաջարկել ընթերցողներին (*TV ալիք, 05.08. 2019*):

ԳՈՒՆԱԳՐՈՒՄ, գ. (փխբ.): **Ոճավորում**: Ոճի ներքին հետևողականությամբ, արդեն վարպետ **գունագրումներով**, գնում է իր ճամփան՝ դեպի երկիրը սիրո (*ՄՄ, էջ 31*):

## Դ

ԴԱԼԿԱՏԵՍԻԼ, ած. **Գունատ, դալուկ տեսք ունեցող**: Գորշ տնակի խորքում մի կին .... օրորում է կարծես զմուռս դիմակ հագած **դալկատեսիլ** իր մանկիկին... (*ԻՄ, էջ 55*):

ԴԱՆԴՈՒՌԱՍԵՐ, ած. **Դանդուռ ճաշակել սիրող**: Շուկայից դանդուռ ես գնել, խաշել ու **դանդուռասեր** հարևանիդ ձեր տուն հրավիրել (*Մ1, էջ 217*):

ԴԱՇՈՒՆԱՎԱՃԱՌ, գ. **Դաշույն վաճառող**: **Դաշունավաճառ** ես դարձել (*Մ1, էջ 219*):

ԴԱՍԱՎԱՐԺԱՆՔ, գ. **Վարժությունների դաս**: Նրանք....



ծանր ու դժվարին իրենց **դասավարժանքն** էին սերտում (*ՌՂ, էջ 107*):

ԴԱՍՏԱՊԱՆԱԾՈՊ, գ. **Դաստապանի ծոպ**: ... Ձիերը .... հոյակապ **դաստապանաձուպերի** տակ .... (*Գրաս, էջ 21*):

ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ, ած. **Դատական և իրավական: Դատաիրավական** բարեփոխումներին հայ փորձագետների մասնակցությունը նվազագույն է լինելու (*Հնգ, news.am*):

ԴԱՏԱՀՈԳԵԲՈՒՅԺ,գ. **Դատահոգեբուժության մասնագետ: ... Դատահոգեբույժի** մոտ ուղարկել (*Մ1, էջ 224*):

ԴԱՐԱԽՈՍ, ած. **Դարերից եկող, դարերի հետ խոսող**: Տե՛ս ԱԶԳԱՇՈՒՔ-ի օրինակը:

ԴԱՐԱՆԱՆՄԱՆ, ած. **Թաքստոցի նմանվող**: ....Նրանց **դարանանման** ընտրած դիրքը գիտեմ, գիտեմ՝ որտեղից է դուրս գալու (*ԼԽ, էջ 35*):

ԴԱՐԲՆԱՄՈՒԲՃ, գ. **Դարբնի մուրճ**: Մի խումբ դարբիններ .... **դարբնամուրճի** հուժկու հարվածներով գութանի խոփեր են կռում (*Մ1, էջ 227*):

ԴԱՐՉՆԱԿԱՐՄԻՐ, ած. **Դարչնագույնին տվող կարմիր**: .... Հնդկոտեմի ծաղիկները թավշանման են, **դարչնակարմիր**... (*Մ2, էջ 310*):

ԴԱՐՉՆԱՍԵՎ, ած. **Սևին տվող՝ նմանվող դարչնագույն**: Մեր բնակարանում այդ հրաշագեղ, **դարչնասև** ու արագաշարժ արարածներից չկան (*ՆՇ, էջ 165*):

ԴԱՐՊԱՍԱԴՈՒՌ, գ. **Դարպասի դուռ**: Բացել **դարպասադուռը** և ներս մտնել (*Մ1, էջ 228*):

ԴԴՄԱԾԱԴԻԿ, գ. **Դդումի ծաղիկ**: Վաղ առավոտյան մեղուն նստեց ոսկեգույն **դդմածաղկին** (*Մ1, էջ 230*):

ԴԴՄԱՀՅՈՒԹ, գ. **Դդումից քամված հյութ**: Ամեն առավոտ կես թեյի բաժակ **դդմահյութ** ես խմում (*Մ1, էջ 230*):

ԴԵՂԱԿԱՅՈՒՆ, ան. **Դեղի ազդեցությանը չենթարկվող:** Գիտնականները պարզել են՝ ինչպես են տարածվում **դեղակա- յուն** մանրէները (*ՆԱ, news.am*):

ԴԵՂԱՊԱՀՈՎՈՒՄ, գ. **Դեղորայքով ապահովելը:** ՀՀ առող- ջապահության նախարարության կողմից բնակչության **դեղա- պահովումը** իրականացվում է ՀՀ կառավարության որոշման հա- մապատասխան (*ՆԱ, yerkir.am*):

ԴԵՂԱԿՈՐԻՉ, գ. **Դեղձի կորիզ:** .... Ոչ թե դեղձից ծնվել է **դեղձակորիզը**, այլ **դեղձակորիզից** է ծնվել դեղձը (*Մ1, էջ 233*):

ԴԵՂԱԳՈՐՇԱԳՈՒՅՆ, ան. **1.Դեղնագորշ գույնի: 2. Դեղնին տվող գորշագույն: Դեղնագորշագույն** պտղով բույսը (*Մ3, էջ 444*):

ԴԵՂԱԵՐԿՆԱԳՈՒՅՆ, ան. **Դեղնին տվող երկնագույն:** .... Թուրակը, իր **դեղնաերկնագույն** փետուրները թողնելով, բարձր գոռաց .... (*Գրաս, էջ 463*):

ԴԵՂԱԹԱԹԱԽ, ան. **Դեղինի մեջ թաթախված:** ....Արևա- ծաղկի վրա **դեղնաթաթախ** մեղու կար (*ԼԽ, էջ 109*):

ԴԵՂԱՇԻԿԱԿԱՐՄԻՐ, ան. **Դեղնին տվող շիկակարմիր:** Դռան շեմին կանգնած էր կարճ ոտքերով, .... **դեղնաշիկակարմիր** գույնի ավստրալիական մի դինգո շուն (*Մ1, էջ 243*):

ԴԵՂԱՊՍԱԿ, ան. **Դեղին պսակ ունեցող՝ պսակով:** Դու երկար նայեցիր .... թավուտ **դեղնապսակ** .... գազի գեղեցիկ պտղին (*Մ1, էջ 141*):

ԴԺՆԱԽՈՍՔ, գ. **Դաժան՝ չար խոսք:** Մի դժնահոգի մարդ դժնաղեմ դժկամությամբ քեզ է նայում ու բերանից **դժնախոսքեր** թափում (*Մ1, էջ 236*):

ԴԻԱԾԱԾԿՈՑ, գ. **Հանգուցյալների դիակները ծածկելու ծածկոց:** Սողոմոնյանը մեկ առ մեկ բարձրացրեց **դիածածկոցները** .... (*Մ1, էջ 238*):

ԴԻՄԱԿԱՎԱՃԱՌ, գ. **Դիմակներ վաճառող (անձ):**  
**Դիմակավաճառ** եւ դարձել (*Մ1, էջ 240*):

ԴԻՄԱԿՈՐՈՒՅՍ, ած. **Դեմքը կորցրած:** Հետո թերևս օրերն՝  
իբրև // Նոր Հայսմավուրք ու Ժամագիրք // Ու վերձանես՝ իբրև մի  
դեմք // **Դիմակորույս** ժամանակի (*ՀրչԹ, էջ 80*):

ԴԻՄԱՊԻՏԱԿ, գ. Այստեղ՝ **զինու տեսակը նշող պիտակ:**  
Գինիները փաթեթավորված են հորեյանական հատուկ **դիմապի-**  
**տակներով** և թումանյանական քառյակներով (*ՀՀ, 17.05.2019*):

ԴԻՄԵՐԵՍ, գ. **Դիմացի երես:** Հաստատվել են շրջանառու  
հիշատակային մետաղադրամների **դիմերեսի** էսքիզները (*Հսգ,*  
*news.am*):

ԴԻՍՄԱՊԱԼԱՏ, գ. **Դրամական պետական քանկ,** նաև՝  
**գանձարան:** Շուտով անկախ Հայաստանը կունենա իր սեփական  
**դրամապալատը,** դրամահատարանն ու դրամը (*Մ1, էջ 253*):

## Ե

ԵԶԵՐԱԶԵՐԾ, ած. **Անեզր:** Օ՛, անձանոթ երիտասարդ, ....  
թարթիչներդ երբ խփում են նուրբ կոպերիդ **եզերազերծ** կապտե-  
րանզին,.... երանի թե կարենայի եւ քեզ ասել... (*ԲՄ, էջ 24*):

ԵԶՐԱՀԴԿՎԱԾ, ած. **Եզրերը հղկված:** Ասես փշրվում էր  
ինչ-որ մեկի՝ հայելիներից և **եզրահղկված** ապակուց հյուսված  
բյուրեղյա երազանքը (*ՌԲ, էջ 141*):

ԵԹԵՐԱԳՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Գողություն եթերում, (փխբ.)**  
**եթերում հանդես գալու (խոսելու, ելույթ ունենալու և այլն)**  
**իրավունքից զրկում:** Եթեր եւ դուրս եկել ...., հանկարծ անօրի-  
նական կարգով մեկը **եթերագողություն** է անում և քո փոխարեն  
ինքն է խոսում (*Մ1, էջ 265*):

ԵԹԵՐԱԹԻՌ, ած. (փխբ.): **Վերացական, եթերային, նրբին:**  
Ես սիրեցի նրա հոգին **եթերաթիռ** ... .զի՛ իրական մի կնոջ եմ  
հանդիպել (*ՄԳ, էջ 167*):

ԵԹԵՐԱՍԱՀ, ան. (բնաս.): **Եթերաճեմ, եթերահաճ, եթերընթաց, եթերում սահող:** Նա մի եթերասահ գիսավոր էր (*ԽՄԶ, էջ 4*):

ԵԹԵՐԱՑԱՆՑ, գ. **Հեռարձակվող հաղորդումների ծրագիր:** Այսօրվա մեր **եթերացանցում** տեղ են գտել այս ֆիլմերը (*Հեռ., Հ1, 12.06.2018*):

ԵԹՈՎՊԱՀԱՅ, գ. **Եթովպիայում բնակվող հայ:** Վերջինս [Պետրոս Սվաճյանը] **եթովպահայ** հայտնի ոսկերիչ էր (*ՊԲՀ, 2, 2018, էջ 313*):

ԵԹՈՎՊԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Եթովպիայում բնակվող հայություն:** (*ՊԲՀ, 2, 2018, էջ 313*):

ԵԼԱԿԱԲԵՐ, ան.Ելակ բերող, փխբ. ելակի հոտ արձակող: ... Շուտով սեփական շրթունքներիդ վրա զգալու ես այդ **ելակաբեր**, հյութեղ շրթունքների համն ու բուրմունքը (*Մ1, էջ 266*):

ԵՂՆՁԱԱՐՏ, գ. **Եղնջի արտ.արտ, որտեղ եղինջ է աճում:** Բորիկ ոտքերով պար ես բռնել **եղնջաարտում** (*Մ1, էջ 272*):

ԵՂՋԵՐԱՍՈՒՇՏԱԿ, գ. **Եղջերվի կաշվից կարված մուշտակ:** Դու, **եղջերամուշտակի** մեջ փաթաթվելով, կույ եկար հանգչող կրակի կողքին... (*Մ 3, էջ 332-333*):

ԵՂՋԵՐԱՑՈՒԼ, գ. **Արու եղջերու:** Հսկա **եղջերացուլը**, դունչը վեր ցցած, հոտոտեց օդն ու կարոտալի ձայնով իր էգին կանչեց (*Մ1, էջ 274*):

ԵՆԹԱԱՊՐԱՆՔԱՆԻՇ, գ. **Ապրանքանիշ կրող արտադրանքի տեսակ:** Hyundai-ի **ենթաապրանքանիշը** BMW M4-ի համար մրցակից կարտադրի (*ՀՆԳ, news.am*):

ԵՆԹԱՍՏՈՄԱՅԻՆ, ան. **Ներատոմային:** Գիտնականները հայտնաբերել են նեյտրինո կոչվող **ենթատոմային** մասնիկներից ամենաարագը (*ՀՆԳ, news.am*):

ԵՆԹԱԻՄԱՍՏ, գ. **Լրացուցիչ իմաստ:** Սարգիս Կիրակոսյանը կարողանում է հասանելի դարձնել...բանաստեղծության **ենթաիմաստը** (*ՆՇ, էջ 187*):

ԵՆԹԱԽՈՐՀՈՒՐԴ, գ. **Խորհրդի ստորաբաժանում**: Կայացել է ՓՄՁ զարգացման խորհրդի **ենթախորհրդի** հերթական նիստը (ՀՀ, 03.10.2019):

ԵՆԹԱԿԱՅՔ, գ. **Կայքի կառուցատարր**: Նախագծի նպատակն է ստեղծել **ենթակայք**, որտեղ կներկայացվեն կիրառական մաթեմատիկայի ինդիքները (*ՀՄԳ, slideshare.net*):

ԵՆԹԱՀԱՆՔ, գ. **Հանքի ենթամաս**: Հրագրանի **ենթահանքի** շահագործումը վտանգավոր է (*ՀՄԳ, news.am*):

ԵՆԹԱՀԱՎԱՔԱԾՈՒ, գ. **Հավաքածուի մաս**: Լազուրի երանգները՝ նոր **ենթահավաքածուներում** (*ՀՄԳ, news.am*):

ԵՆԹԱՀԱՅՆԱՅԻՆ, ած. **Ձայնի միջոցով արտահայտվող**: Կանանց **ենթաձայնային** դողերին, սենյակում կախված լռությանը զուգահեռ քրտինքը հեռուստապատերի վրա է՝ ավելի էր թանձրանում (*ՌԲ, էջ 121*):

ԵՆԹԱՇՏԱԲ, գ. **Շտաբի ստորաբաժանում**: ՀՀԿ **ենթաշտաբի** առկայությունը ծեծել է ոստիկանին (*ՀՄԳ, news.am*):

ԵՆԹԱՊԼԱՆ, գ. **Պլանի մաս**: Ըստ էության՝ մեզ ծրագրերով ճանաչելի դարձնելու մեր **ենթապլանը** ձախողվեց (*ՀՄԳ, news.am*):

ԵՎՐԱԱՐԺԵՔ, գ. **Եվրոպական արժեք**: Նոր ջրբաժան ազգային արժեքներ դավանողների և **եվրոարժեքների** նվիրյալների միջև (*ՀՄԳ, news.am*):

ԵՎՐԱԳԱՎԱԹԱՅԻՆ, ած. **Եվրագավաթը նվաճելու համար կազմակերպվող**: Առաջին անգամ **եվրագավաթային** մրցաշարերի եզրափակիչներում ներկայացված է միայն մեկ երկիր (*ՀՄԳ, news.am*):

ԵՎՐԱԵՌՅԱԿ, գ. **Եվրոպայի երեք պետություններ**: Իրանը զգուշացրել է **եվրաեռյակին**. Թեհրանի հաջորդ քայլերը վճռական կլինեն (*ՀՄԳ, news.am*):

ԵՎՐԱԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Եվրոպային բնորոշ, եվրոպական տիպի ժողովրդավարություն**: ԵՄ-ի նպատակը և

**Էվրածողովրդավարության** շարժառիթները տարբեր են (*Հւց, news.am*):

ԵՎՐԱԻՆՏԵԳՐԱՑԻԱ, գ. **Նույնն է՝ Էվրաինտեգրացում:** Երևանում ընթանում է միջազգային խորհրդածողով՝ նվիրված Հայաստանի **Էվրաինտեգրացիայի** հեռանկարներին (*Հւց, news.am*):

ԵՎՐԱԻՆՏԵԳՐԱՑՈՒՄ, գ. **Եվրոպային ինտեգրվելը, Էվրաինտեգրում: Եվրաինտեգրացումը** ծայրահեղ կբարդացնի Ուկրաինայի վիճակը (*Հւց, news.am*):

ԵՎՐԱԿՈՎԿԱՍՅԱՆ, ամ. **Եվրոպական և կովկասյան:** Երևանում մեկնարկել է սրտաբանների **Էվրակովկասյան 6-րդ** համաժողովը (*Հւց, news.am*):

ԵՎՐԱՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ, գ. **Եվրոպայի շահերը ներկայացնող պաշտոնյա:** Առևտրի հարցերով **Էվրահանձնակատարը** հույս ունի, որ Թրամփն ու Ցզինպինը կհանդիպեն (*Հւց, news.am*):

ԵՎՐԱՀԵՌԱՆԿԱՐ, գ. **Եվրոպական հեռանկար:** «Եվրատեսիլ»-ը Էվրաինտեգրատորներին ցույց տվեց իրենց **Էվրահեռանկարը**՝ մոբուքավոր աղջիկ (*Հւց, news.am*):

ԵՎՐԱԶՍՓԱՆԻՇ, գ. **Եվրոպական չափանիշ:** Տարածքային և միգրացիոն խնդիրները լուծվելու են **Էվրաչափանիշներով** (*Հւց, news.am*):

ԵՎՐԱՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Վերահսկողություն Էվրոպական կազմակերպությունների կողմից:** Եվրավերահսկողությունը արգելել է չվերթերը դեպի Ղրիմ (*Հւց, news.am*):

ԵՎՐԱՎԵՐԱՆՈՐՈԳԵԼ, բ. **Եվրոպական ոճով նորոգել:** Նախագահը **Էվրավերանորոգված** բանտախցում է (*Հւց, news.am*):

ԵՎՐՈԴԻՏՈՐԴ, գ. **Ընտրություններին հետևող դիտորդ՝ Եվրամիությունից:** ՀՀ նախագահն ընդունել է **Եվրոդիտորդներին** (*Հ1, Լուրեր, 10.12.2018*):

ԵՎՐՈՆԵՐԱԶԱՆՔ, գ.(ղիպվ.): Այստեղ՝ Եվրամիություն մտնելու ցանկություն: Հայոց ցեղասպանությունը՝ Թուրքիայի եվրոերազանքի հակոտնյա (*ՀՆԳ, news.am*):

ԵՎՐՈՆԻՍԱՂ, գ. Եվրոպական խաղ: Բաքվում արգելել են մահանալ եվրոխաղերի ժամանակ (*ՀՆԳ, news.am*):

ԵՎՐՈԿՈՄՄԻՍԱՐ, գ. Եվրոպայից ուղարկված կոմիսար: Նախկին եվրոկոմիսար. Ուկրաինան ճիշտ ուղով է զարգանում (*ՀՆԳ, news.am*):

ԵՎՐՈՀԱՄԱԿԱՐԳ, գ. Եվրոպական երկրների համակարգ: Բելգիացի մասնագետները ներկայացրել են Բելգիայի և եվրոհամակարգի երկրների փորձը (*ՀՆԳ, news.am*):

ԵՏԿԵՍՕՐՅԱ, ած. Կեսօրին հաջորդող: .... Ավելի բոսոր ճանազող ետկեսօրյա արևը .... (*Գրաս, էջ 107*):

ԵՐԱԺՇՏԱՑԱՆԿ, գ. Կատարվող երաժշտական ստեղծագործությունների ցուցակ՝ ցանկ: .... Շմունը մեզ առաջարկեց նվագել, ....կամեցավ մեր երաժշտացանկից ինչ-որ բան լսել (*Գրաս, էջ 599*):

ԵՐԱՆԳԱԽԻՏ, ած. Խիտ գույներով: ....Նրան թվաց, թե դա օպտիկական խաբկանք է, մանավանդ երանգախիտ էր ու վետվետուն (*ՎՄ, էջ 18*):

ԵՐԳԱՆԱԼ, բ. Երգի վերածվել, երգ դառնալ: Եվ ու՞մ բառերն են երգանալ ջանում (*ԽՄԼ, էջ 58*):

ԵՐԳԱՓՈՂ, գ. Երգելու գործընթացում օգտագործվող միկրոֆոն: .... Մոտենում է բեմի կենտրոնին և առանց երգափողի կատարում հայ ժողովրդի ծանր ողբերգական օրերի պանդխտության «Երգ-երգոցը» (*Մ2, էջ 242*):

ԵՐԵՆԱՅԱԿԵՆՏՐՈՆ, ած. Երեխայի շահերը պաշտպանելու միտված: Մեր պետությունը երեխայակենտրոն քաղաքականություն է վարում (*ՀՆԳ, shantnews.am*):

ԵՐԵՔԳԼԽԱՆՈՑ, ած. Երեքգլխանի, երեք գլուխ՝ այրիչ

**ունեցող:** ....Այլումինե կաթսան դրեցի **երեքգլխանոց** գազօջախի մեծ այրիչի վրա .... (Գրաս, էջ 575):

ԵՐԵՔՉՈԳԻԱՆՈՑ, ած.**Երեք մասնակից ունեցող, երեք հոգու կողմից անցկացվող:** Օսկարին ևս հոգնեցնում էր այդ **երեքհոգիանոց** խաղը .... (Գրաս, էջ 265):

ԵՐԵՔՇԱՐԺԻՉԱՆԻ, ած.**Երեք շարժիչ ունեցող՝ շարժիչներով:** .... Ահա շաչում են ցմփոր Յու-52-ները, ինչպես կարող են շաչել միայն **երեքշարժիչանի** ինքնաթիռները .... (Գրաս, էջ 298):

ԵՐԹԵՎԵԿԱՄԱՍ, գ. **Երթևեկելի մաս:** Կապալառու կազմակերպության ներկայացուցիչները վստահեցնում են, որ կանեն հնարավորը .... **երթևեկամասի** նոր հիմքի տեղադրումը .... արագ ավարտելու համար(ՀՀ, 10.04.2019):

ԵՐԻԿԱՄԱՆՄԱՆ, ած.**Երիկամի նման, երիկամաձև:** Նստել էս թեթևակի աղվամագոտ կարմրագորշավուն ընձյուղներով, **երիկամանման**, բույթ ատամներով .... տերևներով ծածկված .... հաղարջենու թփի տակ ....(Մ2, էջ 262):

ԵՐԿԱԹԱԳԼՈՒԽ, ած.**Երկաթե գլուխ՝ գնդաձև հաստ ծայր:** Երկաթակոթ,**երկաթագլուխ** մուրճով հարվածել էս մեկի մեջքին ... (Մ1, էջ 293-294):

ԵՐԿԱՅՆԱՇԵՐՏ, գ. **Երկար շարք, իրար հաջորդող մարդկանց ևն ամբողջությունը:** .... Իմ տնօրինությանն էր հանձնել մի ողջ նվազախումբ, այնքան լայնորեն և խորությամբ **երկայնաշերտ** կազմած .... (Գրաս, էջ 344):

ԵՐԿԱՐԱԿՈԹՈՒՆ, ած.**Երկար կոթուն ունեցող՝ կոթունավոր:** Տերևների արանքից իրենց կապույտ աչիկները բացեցին **երկարակոթուն** հնգաթերթ անուշաբույր ծաղիկները(Մ2, էջ 400):

ԵՐԿՆԱԲԵԿՈՐ, գ. (փխբ.): **Երկնքի բեկոր:**....Դուող կծեծի մի **երկնաբեկոր** և գիր կբերի հեռավոր աստղից (ՄՄ, էջ 168):



ԵՐԿՆԱԽՈՐՀՈՒՐԴ, ան. **Երկնային խորհուրդ ունեցող:** Ծաղիկներ **երկնախորհուրդ**, որքան ակնագույն կա ձեր մեջ (*ՄՂ, էջ 58*):

ԵՐԿՆԱԿԱՆԱԶԱՎՈՒՆ, ան. **Երկնագույնին տվող կանաչ:** **Երկնականաչավուն** թևեր (*Մ2, էջ 489*):

ԵՐԿՆԱՎԱՌ, ան. **Երկնային ու պայծառ:** Ես գիտեմ, այդ աշունը կրկին գալու է, իր **երկնավառ** գունապնակից իմ բաժին գույնն է տալու աշխարհին (*TV ալիք, 19.10.2018*):

ԵՐԿՇԱՀԱՎԵՏ, ան. **Երկու կողմին էլ շահ բերող՝ շահավետ:** Թշնամուղ հետ **երկշահավետ** կապեր ես ստեղծելու (*Մ1, էջ 366*):

ԵՐԿՍԵՆՅԱԿԱՆՈՑ, ան. **Երկու սենյակից բաղկացած, երկու սենյակ ունեցող:** .... Չափից դուրս նեղվածք էր **երկ-սենյականոց** բնակարանում (*Գրաս, էջ 190*):

ԵՐԿՎԱԳՈՆԱՆՈՑ, ան. **Երկու վագոն ունեցող:** **Երկվագոնանոց** տրամվայն անցնում էր, մայթը դղրդում էր ոսկորներիս մեջ (*ԼԽ, էջ 19*):

ԵՐԿՐԱԲԱՆԱՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ, ան. **Երկրաբանական հետախուզում կատարող:** Հայաստանում ակտիվացել են **երկրաբանահետախուզական** աշխատանքները (*ՀՄԳ, news.am*):

ԵՐԿՐԱՆՄԱՆ, ան. **Երկիր մոլորակին նման:** NASA-ի գիտնականներն առաջին անգամ ուսումնասիրել են **երկրանման** էկզոմոլորակները (*ՀՄԳ, news.am*):

ԵՐԿՖՈԿՈՒՍԱՆԻ, ան. **Երկու ֆոկուս՝ կիզակետ ունեցող:** **Երկֆոկուսանի** ակնոց ես կրում, որի վերևի մասով հեռուն, ներքևիսով մոտիկն ես տեսնում (*Մ1, էջ 20*):

## Զ

ԶԱԳԱՐԱԿԱԱՐՏ, գ. **Զագարակի արտ՝արտ, որտեղ զագարակ է ցանված:** Թաքուն հնձել ես հարևանի **զագարակաար-**

տը(*Մ1, էջ 304*):

ԶԱՆԳԱԿԱՆՄԱՆ, ած. **Զանգակի նման, զանգակի տեսք՝ ձև ունեցող, զանգակաձև**: Նրա ...կապույտ և մանուշակագույն **զանգականման** անուշաբույր ծաղիկները հավաքվել էին գլանաձև գեղեցիկ ծաղկաբույլերում (*Մ2, էջ 261*):

ԶԱՆԳԱՇԱՐ, գ. **Զանգերի շար, իրար հաջորդող զանգերի հնչում**: .... Յուրաքանչյուր հերթական արկերի պայթյունի ժամանակ փոխեփոխ **զանգաշար** էին ձեռնարկում (*Գրաս, էջ 251*):

ԶԱՏԻԿԱՏԵՄԻԼ, ած. **Զատիկի տեսք ունեցող**: Սալումեի գրկում հայտնվեց **զատիկատեսիլ** դարչնագույն խալով...մի թմբիկ տղա (*ՎՄ, էջ 183*):

ԶԱՏԿԱՏՈՆ, գ. **Զատիկի տոն՝ տոնակատարություն**: .... Նստել էր .... **զատկատոնի** առիթով դասասենյակի լավ լվացված պատուհանների դիմաց .... (*Գրաս, էջ 78*):

ԶԱՐԴԱՔԱՆԴԱԿԱՅԻՆ, ած. **Զարդաքանդակմանը առնչվող**: .... Ինձ վրա վերցրեցի քանդակագործական աշխատանքի **զարդաքանդակային** մասը .... (*Գրաս, էջ 507*):

ԶԱՐԴԵՂԵՆ, գ. **Բոլոր կարգի զարդերը միասին**: Ձեր տան **զարդեղենն** ու մթերքը փակի տակ էիր պահում (*Մ3, էջ 164*):

ԶԳԵՍՏԱԿԻՐ, ած. **Զգեստ կրող՝ հագնող**: ... Տեսնողն, իրոք, չթե **զգեստակիր** է (*Մ3, էջ 37*):

ԶԿԵՌԱԳԻՆԻ, գ. **Զկեռի հյութից պատրաստված գինի**: **Զկեռագինի** ես խմել (*Մ1, էջ 323*):

ԶՄՊԱՆԱԿԵՌԻԿ, գ. **Արգելակող կեռիկ**: .... Այդ անցքի միջով մտցնում էին պարաններ և **զսպանակեռիկներ** (*Հմց*):

ԶՐՈՅԱՅՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Սպառվելը, զրոյական մակարդակի հասնելը**: ԲՀԿ-ն վայելում էր իրական մեծ ժողովրդականություն, հատկապես ընդդիմադիր դաշտի գործնականում **զրոյացվածության** պայմաններում (*Հմց*):

ԶՈՒԳԱՇԽԱՐՀ, գ. **Զուգահեռ գոյություն ունեցող, զույգ աշխարհներ:**.... Մենք գործ ունենք **զուգաշխարհների** միատեղման զարմանալի փաստի հետ (*ՀրչԹ, էջ 302*):

ԶՈՒԳԱՐԱՆԱՇՈՒՐՁ, ած. **Զուգարանում դրվող:** Հիվանդ հարազատների անվտանգ տեղաշարժն ապահովելու համար կարող էք ձեռք բերել **զուգարանաշուրջ** հենակ (*ՀՄԳ*):

## Է

ԷԹՆՈՍՇԽԱՐՀԱԳԵՏ, գ. **Ազգագրագետ-աշխարհագետ: Էթնաաշխարհագետ.** Շիրակի մարզում մահացությունը գերակշռում է ծնելիությանը (ՀՄԳ, news.am):

ԷԹՆՈԳՅՈՒՂ, գ. **Ազգագրական գյուղ:** Ենթադանում ծրագրում են **Էթնոգյուղ** բացել (ՀՄԳ, news.am):

ԷԹՆՈԵՐԱԺՇՏԱԿԱՆ, ած. **Էթնոերաժշտությանը վերաբերող:** .... Նա [Կոմիտասը] սկզբնավորել է հայ **Էթնոերաժշտական** դաստիարակությունը (*ՊԲՀ, 1, 2019, էջ 97*):

ԷԹՆՈԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Ազգագրական երաժշտություն:** .... Նա [Կոմիտասը] **Էթնոերաժշտությունը** դիտում է որպես ժողովրդի կենսափիլիսոփայության աղբյուր (*ՊԲՀ, 1, 2019, էջ 94*):

ԷԹՆՈԶԲՈՍԱՇՐՁՈՒԹՅՈՒՆ, գ. **Ազգագրական զբոսաշրջություն:** Ղրիմի **Էթնոզբոսաշրջությամբ** ավելի շատ հետաքրքրվողներ կան (ՀՄԳ, news.am):

ԷԹՆՈԽՈՂԱՆՈՑ, գ. **Ազգագրական խոհանոց:** «Էթնոխոհանոց անիվների վրա». Բուլղարիայում ներկայացվեց հայկական ավանդական խոհանոցը (ՀՄԳ, news.am):

ԷԹՆՈՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ած. **Էթնոմանկավարժությանը վերաբերող:** .... [Կոմիտասը] հաջողությամբ շարունակել է զարգացնել Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարզևի երգուսուցման **Էթնոմանկավարժական** ավանդները (*ՊԲՀ, 1, 2019, էջ 97*):

ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ, ան. **Ազգագրական-մշակութաբանական:** Բազմաֆունկցիոնալ **Էթնոմշակութաբանական** կենտրոն կստեղծվի (*Հւգ, news.am*):

ԷԹՆՈԶԱԶ, գ. **Ազգագրական ջագ:** Կայանալու է հայտնի **Էթնոջագ** խմբի բացառիկ համերգը (*Հւգ, news.am*):

ԷԹՆՈԶԱԶՅԻՆ, ան. **Ազգագրական-ջագային: Էթնոջագային** խումբը բացառիկ համերգ կունենա Հայաստանում (*Հւգ, news.am*):

ԷԼԷՆԵՐԳԻՍ, գ. (հավ.): **Էլեկտրական Էներգիա: Էլէներգիայի** արտադրությունը վերսկսվել է (*Հւգ, news.am*):

ԷԿԶՈԼՈՒՍԻՆ, գ. **Արեգակնային համակարգի սահմաններից դուրս գտնվող լուսին:** Առաջին **Էկզոլուսնի** հնարավոր բացահայտման մասին աստղագետները նորություն են հայտնել (*Հւգ, news.am*):

ԷԿԶՈԿՄԱԽՔ, գ. **Որպես հագուստ կրելու համար հարմարեցված, վերջույթների շարժը ապահովող շարժական մեքենա, Էկզոկոստյում:** Պենտագոնը պատվիրել է **Էկզոկոստյում** մշակել «սուպերգինվորների» նոր սերնդի համար (*Հւգ, news.am*):

ԷԿԶՈԿՄԱԽՔՍՅԻՆ, ան. **Էկզոկոստյումի հատուկ՝ վերաբերող: Էկզոկոստյումի** կոստյումը մանկական ուղեղային կաթված ունեցող երեխաներին կօգնի քայլել (*Հւգ, news.am*):

ԷԿԶՈՄՈԼՈՐԱԿ, գ. **Արեգակնային համակարգից դուրս գտնվող մոլորակ:** Աստղաֆիզիկոսները գրանցել են **Էկզոմոլորակների՝** պատմության մեջ առաջին բախումը (*Հւգ, news.am*):

ԷԿՈՍՅԳԻ, գ. **Գոյապահպանության չափանիշներին համապատասխանող այգի:** Կոկորդիլոսաբուծարան «Ապշանք» **Էկոայգում** (*Հւգ, news.am*):

ԷԿՈԶԱՐԴ, գ. **Գոյապահպանական չափանիշներին համապատասխանող զարդ:** **Էկոզարդերի** նոր հավաքածու է ներկայացվում (*Հւգ, news.am*):

ԷԿՈՄԱՐՁ, գ. **Գոյապահպանական չափանիշներին համապատասխանող մարզ:** Գեղարքունիքի մարզը կարող է վերածվել Էկոմարզի (*Zlg, news.am*):

ԷԿՈՄԵՔԵՆԱ, գ. **Գոյապահպանական չափանիշներին համապատասխանող մեքենա:** Tesla էլեկտրոմոբիլների արտադրողները թողարկել են Էկոմեքենայի նոր մոդելը, որը նախատեսված է մասսայական օգտագործման համար (*Zlg, yerkir.am*):

ԷԿՈՄԹԵՐՔ, գ. **Գոյապահպանական չափանիշներին համապատասխանող մթերք:** Էկոմթերքներով սնվելու են միայն հարուստների երեխաները (*Zlg, news.am*):

ԷԿՈՄՈՏԵՅՈՒՄ, գ. **Գոյապահպանության շահերին նպաստող մոտեցում:** Փառատունը հիմնված է Էկոմոտեցման և Էկոմտածողության տարածման գաղափարի վրա (*ՀՀ, 30.07.2019*):

ԷԿՈՉՍՓԱՆԻՇ, գ. **Գոյապահպանության չափանիշ:** Ավտոարտադրողը դեռ պատրաստ չէ Էկոչափանիշներին չհամապատասխանող մոդելների մասին տվյալներ տրամադրել (*Zlg, news.am*):

ԷԿՈՌԵՍՏՈՐԱՆ, գ. **Գոյապահպանության չափանիշներին համապատասխանող ռեստորան:** Տաճար, բաղնիքներ, լավաշ, Էկոռեստորան (*Zlg, news.am*):

ԷԿՈՎԱՌԵԼԻՔ, գ. **Գոյապահպանական չափանիշներին համապատասխանող վառելիք:** Էկովառելիքին անցումը սպառնում է ուտելիքի անբավարարությամբ (*Zlg, news.am*):

ԷԿՈՏԱԿԴԻՐ, գ. **Գոյապահպանական չափանիշներին համապատասխանող տակդիր:** Ի՞նչ առավելություններ ունեն Էկոտակդիրները (*Zlg, news.am*):

ԷԿՈՏԱՂԱՎԱՐ, գ. **Գոյապահպանական չափանիշներին համապատասխանող տաղավար:** Հյուսիսային պողոտայում Էկոտաղավար է տեղադրվել (*Zlg, news.am*):

ԷԿՈՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ, ած. **Տարածաշրջանի գոյա-**

**պահպանությանը վերաբերող:** **Էկոտարածաշրջանային** ծրագրի շրջանակներում Հարավային Կովկասում կունենանք բնության հատուկ պահպանվող տարածքներ (*ՀՆԳ, ecolur.org*):

ԷԿՈՏՈՒՐԻՍՏ, գ. **Գոյապահպանական և բնապահպանական վայրեր այցելող զբոսաշրջիկ:** Հայաստանը մտադիր է **Էկոտուրիստների** թիվը մեծացնել (*ՀՆԳ, news.am*):

ԷՆԵՐԳԱՀԱՆԳՈՒՅՑ, գ. **Էներգետիկական հանգույց:** Զանգեզուրի **Էներգահանգույցի** հետ կստեղծվի կապի նոր ֆիզիկական օղակ (*ՀՀ, 20.09.2019*):

ԷՔՍԿՈՒՐՍԱԳԵՏ, գ. **Զբոսաշրջության մասնագետ:** Քրիստոսի ծննդյան տաճարի մասին համացանցի օգտատերերին պատմում է **Էքսկուրսագետը** (*ՀՆԳ, news.am*):

## Ը

ԸՆՏՐԱԴԱՐԱՆ, գ. **Ընտրությունների, ընտրակարգի մասին տեղեկատվություն:** (*Հեն., Արմնյուզ, հաղորդաշարի վերնագիր, 2018*):

## Թ

ԹԱԳԱՎՈՐԱՀՐԱԺԱՐԱԿԱՆ, գ. **Թագավորի հրաժարական:** .... Դատարկամիտ ու անարժան մարդիկ հավաքվելու են հրապարակում, սևացնելու են թագավորին և **թագավորահրաժարական** են պահանջելու (*Մ1, էջ 369*):

ԹԱԵՔՎՈՆԴՈՒՍՏ, գ. **Թաեքվոնդոյով զբաղվող մարզիկ:** Այդ արդյունքը .... օլիմպիական ուղեգրի համար պայքարում վարկանիշային 4 միավոր է ապահովել մեր **թաեքվոնդոյիստին** (*ՀՀ, 17.04.2019*):

ԹԱԼԻՇԱԳԵՏ, գ. **Թալիշագիտությամբ զբաղվող մասնագետ:** Երկու օր շարունակ երիտասարդ **թալիշագետները** միմյանց հերթագայող հետաքրքիր և բովանդակալից զեկույցներում վեր հանեցին ոլորտին առնչվող խնդիրներն ու իրողությունները (*ՀՀ,*

25.05.2019):

ԹԱԼԻՇՇԱԳԻՏԱԿԱՆ, ան. **Թալիշագիտությանը վերաբերող:** Մայիսի 24-ից 25-ը Երևանում անցկացվեց **թալիշագիտական 3-րդ միջազգային գիտաժողովը**, որի հիմնական նպատակը դրացի ժողովրդի լեզվին, մշակույթին և խնդիրներին առավել ծանոթանալը, ինչպես նաև Հայաստանում զարգացող թալիշագիտության ձեռքբերումները միջազգայնացնելն էր (*ՀՀ, 28.07.2019*):2

ԹԱԼԻՇՇԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Թալիշների լեզուն, մշակույթը, պատմությունը ուսումնասիրող գիտություն:** Տե՛ս ԹԱԼԻՇՇԱԳԻՏԱԿԱՆ-ի օրինակը:

ԹԱԽԾԱԿՈՏՈՐ, ան. **Թախծից տառապող:** Համոյի պետքն էլ չէր. **թախծակոտոր** ավագ քահանային քաղաքացիական հագուկապով զուգեց ու տարավ կարգեց իր ռեստորանի ավագ խոհարար (*ՎՄ, էջ 167*):

ԹԱԽԾԱՄՌԱՅԼ, մկբ. **Մռայլ և թախծոտ:** Երբ հորս չտարան, հայրս **թախծամռայլ** ասաց. ... (*ԼԴ 2, էջ 7*):

ԹԱՂԱՆԹԱԶԴԿԵԼ, նբ.**Թաղանթից զրկել, թաղանթը անջատել՝ հանել:** .... Լյարդը գնեցիր .... երկու բոպե տաք ջրի տակ պահելուց հետո՝ հեշտությամբ **թաղանթազրկեցիր** (*Մ1, էջ 499*):

ԹԱՂԻՔԱՄԱԶՍԶՈՒԿԱՊԱՏ, ան.**Թաղիքաձև խավով և մազմզուկներով պատված:** **Թաղիքամազմզուկապատ** գնդաձև սերկնիլներ (*Մ3, էջ 157*):

ԹԱՆԱՏՈՊՐԱԿ, գ.**Թանի՝ թանը քամելու տոպրակ:** Մարդիկ շրջապատել են ծառից կախված **թանատոպրակը** (*Մ1, էջ 361*):

ԹԱՆԶՐԱՍԵՎ, ան. (բնատ.): Թանձր՝ մուգ սև: Գիշեր էր, և տիկին Պուլիսը // Մազերին ծանր, **թանձրասև**, // Որպես սաղափե զարդասեղ // Խրել էր հազար մինարեթ... (*ԼԴ 1, էջ 56*):

ԹԱՇԿԻՆԱԿԱՎԱՃԱՌ, գ.**Թաշկինակ վաճառող:** **Թաշկինակավաճառ** էս դարձել (*Մ1, էջ 387*):

ԹԱՏԵՐԱԶԵՎ, գ. **Թատրոնի՝ թատերական արվեստի տեսակ, ձև:** Որքան էլ որ **թատերաձևերը** փոխակերպումների ենթարկվեն ....(Իր., 29.03.2019):

ԹԱՏԵՐԱՏԵՍԱԿ, գ. **Թատրոնի տեսակ:** Թատերական ժանրի առումով այս պահին կոժվարանամ մտաբերել, թե մենք հատկապես ո՞ր **թատերատեսակի** սուր անհրաժեշտությունն ունենք (Իր., 29.03.2019):

ԹԱՏՐՈՆԱՆՊԱՍ, ած. **Թատրոնի գործունեությանը նպաստող:** ՀՀ մշակույթի նախարարությունը **թատրոնանպաստ** որևէ գործողություն չի իրականացրել.... (Հւգ):

ԹԱՏՐՈՆԱՇԽԱՐՀ, գ. **Թատերաշխարհ:** Թատրոնների օպտիմալացման, այսպես կոչված, «սևագիր տարբերակը» լցրեց **թատրոնաշխարհի** համբերության բաժակը (Հւգ):

ԹԱՓԱՆՅԻԿԱԶԳԵՍ, ած.**Թափանցիկ զգեստով, հագին թափանցիկ զգեստ:** Սառնորակ աղբյուրից, ջրով լի կուժն առած, սպիտակ, **թափանցիկազգեստ** ջրահարս է դուրս գալիս (ՄԼ, էջ 28):

ԹԱՓՈՆԱՐՎԵՍ, գ. **Թափոնների օգտագործմամբ ստեղծվող արվեստ:** Աչքերը բաց պահեք, այլապես բաց կթողնեք **թափոնարվեստի** ցուցադրությունը (Հւգ):

ԹԱՓՈՐԱԳԼՈՒԽ, գ. Այստեղ՝ **թափորի առաջամաս՝ գլուխ:** ....Խաչը ձեռքին դուրս եկավ քահանան, անցավ **թափորագլուխ** .... ու սկսեց բամբ ձայնով հոգեհանգիստ երգել(ԼԽ, էջ 70):

ԹԵԼԱԿՈՒՅՏ, գ.**Թելերի կույտ:** Խճճված **թելակույտը** չես կարողանում կծկել(ՄԼ, էջ 396):

ԹԵՀՐԱՆԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Թեհրանում բնակվող հայություն:** **Թեհրանահայությունը** դիտել է «Վերջին բնակիչը» ֆիլմը (Հւգ, news.am):

ԹԵՎՔԱՄՈՒՏՔ, գ. **Թևքի՝ կողային մուտք:** .... Ոստիկանական բաժինը .... **թևքամուտքից** բաժանված էր ընդամենը խղճուկ



տախտակե ցանկապատով .... (Գրաս, էջ 245):

ԹԵՐԱԳՆԱՀԱՏԻՉ, ան. **Չվատահող, թերահավատ:** Նրա **թե-րագնահատիչ** վերաբերմունքը հանդեպ իմ տեսակի ինձ դարձ-րեք (ԳՆ, էջ 38):

ԹԵՐԲՈՒԺՈՒՄ, գ. **Թերի, ոչ լրիվ, պակասավոր բուժում:** .... **Թերբուժման** հետևանքով ... մի հեքիմի ես դիմելու ....(Մ1, էջ 406):

ԹԵՐԹԻԿԱՊԱՐ, գ. **Ծաղկաթերթերի շարժում:** Մանուկներ փոքրիկ, դուք թաթիկները թափահարում եք իմ սիրած ծաղիկ-ների **թերթիկապարի պես** (ՄՂ, էջ 57):

ԹԵՐԼԻՅՔԱՎՈՐՈՒՄ, գ. **Թերի լիցքավորում:** Գյումրիի օդանավակայանի **թերլիցքավորման** պատճառով ձմռան սեզոնից կդադարեցվեն չվերթները (Հւց):

ԹԹԱՍԵՐ, ան.**Թուր ուտել սիրող:** .... **Թթասեր** այս թռչնա-կին ժողովուրդը «թթի դուշ» է անվանել (Մ3, էջ 287):

ԹՎԱԾՆԱՎԱՃԱՌ, գ. **Թթվածին վաճառող (անձ):** **Թթվածնավաճառից** մի բարձ թթվածին ես գնել(Մ1, էջ 408):

ԹԹԵՆԱՈՐՄ, գ. **Թիթեռի որս.որս թիթեռ բռնելու՝ որսալու նպատակով:** **Թիթեռաորսի** ես դուրս եկել ....(Մ1, էջ 410):

ԹԻԿՆԱԽՈՒՄԲ, գ. **Թիկունքը պաշտպանող՝ պահող խումբ:** .... Նրանց սպասում էին մի խումբ բժիշկներ.... և **թիկնախմբերով** լրագրողներ (ՄԿ, էջ 316):

ԹԻՄԱԽԱՂ, գ. **Թիմային խաղ:** Նամակում Ս.Բաբայանը խոսում է «**թիմախաղերի**» մասին (Հւց):

ԹԻՐԱԽԱԿԵՏ, գ. **Թիրախ, նշանակետ:** Նրանք այդ կարուսեղային լաբիրինթոսում չեն գտնում պայքարի **թիրախակետերը** (Հւց):

ԹԽԱԾԻՆ, ան. (բնստ.): **Ծննդից թուխ գույն ունեցող:** Տե՛ս ԳԱՀԱԽՈՐՀՈՒԴԴ-ի օրինակը:

ԹԽՎԱԾՔԱԴՈՒԼ, գ. **Թխվածք անելու արգելք: Թխվածքադուլ** եւ հայտարարել(*Մ1, էջ 415*):

ԹՄԲԿԱԳԼԱՆ, գ. **Թմբուկի դեր կատարող՝ որպէս թմբուկ օգտագործվող գլան:** Մետաղամալուխէ **թմբկագլանը**, իհարկէ, ինձ համար չէր փոխարինում թիթեյային (*Գրաս, էջ 648*):

ԹՈՆՐԱԳՈՐԾ, գ. **Կավից թոնիր շինող վարպետ:** «Մեր ժամանակների հերոսը» հաղորդումը այսօր **թոնրագործ** Գեղամ Ղարիբյանի մասին է(*Հեռ., Հ1, 23.06.2019*):

ԹՈՆՐԱԿՈՂ, գ. (բնատ.): **Թոնրի եզր՝ կող: Թոնրակողի** գույնի ձեռքափերում նրա // Տարիներն են եփել հացաբուրող մի կյանք (*ԼԴ 1, էջ 18*):

ԹՈՆՐԱՊՌՈՒՆԿ, գ. **Թոնրի եզրը՝ շուրթը, թոնրաեզր, թոնրաշուրթ:** Գյուղ եւ գնացել, **թոնրապոնկից** վերցրել եւ տաք լավաշ .... (*Մ1, էջ 123*):

ԹՈՇԱԿԱՅԻՆ, ած.**Թոշակի, թոշակի անցնելու, թոշակ ստանալու, թոշակավորվելու:** Պաշտոն գրավել, .... մատոյ մատի չես տվել մինչև **թոշակային** տարիքի եւ հասել (*Մ1, էջ 203*):

ԹՈՒՆԱԿԱՐՈՏ, ած.**Կարոտ թոռան նկատմամբ, թոռան կարոտ զգացող:** Մի կամակոր կնոջ գերին դարձած որդին հեռանալու է քեզ **թոռնակարոտ** թողնելով (*Մ2, էջ 37*):

ԹՈՒԶՔԱՀԱՐԹԱԿ, գ. (փխբ.): **Գործունեության հաջողությանը խթանող սկզբնակետ:** Վարդուհի Վարդերեսյանի **թոխքահարթակը**....մայր թատրոնում էր (*ՆՇ, էջ 230*):

ԹՈՒԶՔԱՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ, ած. **Թոխքային և մարտական:** Ադրբեջանում սկսվել են Թուրքիայի հետ համատեղ **թոխքամարտավարական** զորավարությունները (*ՀՆԳ, news.am*):

ԹՈՉՆԱԳԼՈՒԽ, գ.,ած. **Թոչունի գլխի նման՝ տեսք ունեցող (անձ):** .... Նույնիսկ քիթը չբարձրացրեց, երբ **թոչնագլուխը** բաղձալի նպատակակետի առաջ կանգնածիս ետ շարտեց մի կողմ .... (*Գրաս, էջ 256*):

ԹՈՉՆԱՀՈՒՆՉ, ան. **Թռչունի դայլայլի նմանվող**: Այս ի՞նչ երգեցիկ թռչուն է երգում երգեր **թռչնահունչ** (ԿՄ, էջ 41):

ԹՎԱԴՈՒԼ, գ. **Թվերի գործածության արգելք՝ արգելում**: Քաղաքապետը քաղաքում **թվադուլ** էր հայտարարել (Մ1, էջ 412):

ԹՐԱԵՂՋԵՐԱՎՈՐ, ան. **Թրի նման եղջյուրներ ունեցող՝ եղջյուրներով**: Բարեկազմ ու թեթևասահ **թրաեղջերավոր** այծքաղը պոկվեց ու սլացավ լեռների կողմը ... (Մ1, էջ 39):

ԹՐԾԱՏՈՒՆ, գ. **Տուն՝ շենք՝ թրծելու, թրծվածք կատարելու համար, թրծարան**: **Թրծատուն** ես կառուցում (Մ1, էջ 427):

ԹՈՒՄԱՆՅԱՆԱՊԱՏՈՒՄ, գ. **Թումանյանի երկերը քննող ուսումնասիրությունների ամբողջությունը**: Երկար ու բեղմնավոր ուղի է անցել հայ երաժշտական **թումանյանապատումը** (ՊԲՀ, 1, 2019, էջ 51): Թումանյանի պոեզիայի հիման վրա ստեղծված ստեղծագործությունները վաղուց արդեն ձևավորել են երաժշտական **թումանյանապատումը** (ՊԲՀ, 1, 2019, էջ 52):

ԹՈՒՆԱՏԱՄ, ան. **Թույն պարունակող աստամ ունեցող**: Կենտրոնական Ամերիկայում ապրող **թունատամ** մողեսներից բացի մնացած մողեսները թունավոր չեն ... (Մ2, էջ 453):

ԹՈՒՐՔԱՄԵՏ, ան. **Թուրքական կողմնորոշում ունեցող**: Աֆրիկում **թուրքամետ** զինյալներն ավերել են քրդական հուշարձանը (Հսգ, news.am):

## Ժ

ԺԱՀՐԱՎԵՐՔ, գ. **Գարշելի հոտով թարախակալած վերք**: Եզան լեզվով բացեցիր հարևանիդ **ժահրավերքը** (Մ1, էջ 436):

ԺԱՄԱՎԱՐՉՈՒ, ան. **Աշխատած ժամերի քանակով վարձատրվող**: Ընդունվել ես **ժամավարձու** աշխատանքի (Մ1, էջ 440):

ԺԱՆԳԱԴԵՂԻՆ, ան. **Ժանգաղեղնագույն**: Ասես ջրի վետվետում է, որի միջից մանրիկները բարձրացնում են գլխիկները

**Ժանգաղեղին** ու թավշապատ վզիկները (*ԻՄ*, էջ 44):

ԺԱՆԳԱԿԱՐՄՐԱՎՈՒՆ, ած.**Ժանգագույնի և կարմրի երանգող**: .... Ամբոխի մեջ նկատեցի **Ժանգակարմրավուն** շորը .... (*Գրաս*, էջ 109):

ԺԱՊԱՎԵՆԱՊԱՏՎԵԼ, բ. (ղիպվ.): **Ժապավեններով անջատել, մեկուսացնել շրջապատից**: Ինչու է «**Ժապավենապատվել**» Սյասնիկյանի արձանը (*Հւգ*):

ԺՈՂՈՎՐԴԱԹԱՓ ԱՆԵԼ, բ. (ղիպվ.): **Բնակչությունից զրկել**: ....Հիվանդագին մտածողության դրսևորումներով ամայացրել, **ժողովրդաթափ էր արել** հողագունդը....(*ԼԽ*, էջ 228):

ԺՊՏԱՆՑԻԿ, ած.(ղիպվ.): **Ժպտաղեմ, ժպտալով անցնող**: ... Մտերմացել էինք լուսաբացին ... լճափով սուրացող հեծանվորդների **ժպտանցիկ** մտերմությամբ (*Գրեթեթ, 3, [53]*):

## Ի

ԻՄԱՍՏԱԲԵՌ, ած. **Մտքերով ծանրաբեռնված**: Մեր երկրում էլ չի լսվում նրանց ահեղ մոնչյունը, հանդարտ, **իմաստաբեռ** քայլերն էլ չկան մեր փղերի (*ԱՍ*, էջ 62):

ԻՄՈՒՆԱԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ, գ.**Իմունիտետի կարգավորման միջոցով հիվանդության կանխարգելում**: Իմունականխարգելում իրականացնող մասնագետները վերապատրաստում կանցնեն (*Հւգ, news.am*):

ԻՄՔԱՅԼԱԿԱՆ, գ., ած. (ղիպվ.): «**Իմ քայլը**» խմբակցության **անդամ**: Հիշեցնելով **իմքայլականների** հակադարձումները .... (*Իր.*, 31.05.2019):

ԻՆՔՆԱԱՐԵՎԱՅՐՈՒՔ, գ. **Քիմիական միջոցներով (քսուք և այլն) մաշկի գույնը մզացնելը**: Ի՞նչ է **ինքնաարևայրուքը**, և ինչպե՞ս կիրառել այն (*Հւգ, news.am*):

ԻՆՔՆԱԳՈԼ, գ. **Սեփական դարպասը խփած գուլ**: Գեղեցիկ **ինքնագուլ** խաղաղաշտի կենտրոնից (*Հւգ, news.am*):

ԻՆՔՆԱԳՈՅԱՆԱԼ, ք. **Ինքնիրեն գոյանալ**: Գիտնականները պարզել են, որ լույսը կարող է **ինքնագոյանալ** վակուումի դատարկության մեջ (*Zufg, news.am*):

ԻՆՔՆԱԳՈՒՆԱՎՈՐՈՒՄ, գ. **Ինքն իրեն գունավորելը**: Ես չէի գունավորի որևէ մեկի մոտեցումը, ամեն մեկը **ինքնագունավորմամբ** է զբաղվել (*Zufg, news.am*):

ԻՆՔՆԱԶԱՐԴԱՐՈՒՄ, գ. **Ինքն իրեն զարդարելը**: **Ինքնազարդարում**. – Հայելու մոտ կանգնած՝ ինքդ քեզ զարդարում ու հարդարում ես (*Մ1, էջ 461*):

ԻՆՔՆԱԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Ինքնուրույն զբաղմունք՝ գործունեություն ծավալելը**: Այս խմբում ընդգրկված են ինչպես ընտանեկան բիզնես ունեցողները, այնպես էլ **ինքնազբաղվածություն** ապահովողները՝ դերձակներ, կոշկակարներ, ժամագործներ և այլն (*ՀՀ, 08.02.2019*):

ԻՆՔՆԱԶՍՊՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Ինքնագսպում, ինքնագսպություն, ինքնագսպելը**: .... Ես պառկեցի պարկերի ետևում, որպեսզի դժբախտ մորեղբորս ու ենթադրյալ հորս փոխանցեմ իմ սովորական **ինքնագսպվածությունը** (*Գրաս, էջ 252*):

ԻՆՔՆԱԻՄԱՍՏԱԶՈՒՐԿ, ած. **Ինքնին իմաստ չունեցող, իմաստ չարտահայտող**: .... Կյանքը, ծնունդն ու մահը, ամեն ինչ թվում է արտուրդ՝ **ինքնաիմաստագուրկ** (*ԶԽ, էջ 280*):

ԻՆՔՆԱԻՄԱՍՏԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Ինքնին իմաստագուրկ լինելը**: Ահա ինչ **ինքնաիմաստագրկության** է հանգում արդարացված ոճիրը (*ԶԽ, էջ 162*):

ԻՆՔՆԱԽՏՈՐՈՇՈՒՄ, գ. **Ինքն իրեն ախտորոշելը**: Չինաստանի բնակիչը քիչ էր մնում՝ իրեն սպաներ սնվելու փայտիկով **ինքնախտորոշմամբ** (*Zufg, news.am*):

ԻՆՔՆԱԾԱԽՍԱԾԱԾԿԵԼ, ք. **Սեփական ծախսը հատուցել**: Բիոզուգարանները պետք է լինեն **ինքնածախսածակվող** (*Zufg, news.am*):

ԻՆՔՆԱԿԱՐԾԻՔ, գ. **Ինքն իր մասին ունեցած կարծիք:** Ֆաուստի, որպես մտածողի, ողբերգությունը սկսվում է նրա **ինքնակարծիքի** և սահմաններ չճանաչող հավակնությունների կրա-  
խից (*ՁԽ, էջ 278*):

ԻՆՔՆԱՀԱՃՈՅԱԽՈՍԵԼ, բ. **Ինքը իրեն հաճոյախոսել:** Ում մասին, ինչի մասին խոսելու լինի մարդ շարունակ **ինքնահա-  
ճոյախոսում** է՝ ինքն իրեն ներկայացնելով որպես անթերի ան-  
հատ, կատարյալ մարդ (*ՁԽ, էջ 347*):

ԻՆՔՆԱՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵԼ, բ. **Ինքնություն հայտարարա-  
գրել:** ՊԵԿ-ը շուրջիզնեաի ներկայացուցիչներին հորդորում է **ինքնահայտարարագրել** եկամուտները (Հմց, news.am):

ԻՆՔՆԱՀԵՂՈՒՄ, գ. **Ինքնիրեն տարածվելը:** Բայց երգերը վերադառնում են, .... Որ **ինքնահեղմամբ**, ինքնագոհությամբ լցնեն կյանքի այդ դատարկ տարածքները .... (*ՀրչԹ, էջ 152*):

ԻՆՔՆԱՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒՄ, գ. **Ինքը իրեն հուղարկավո-  
րելը: Ինքնահուղարկավորում.** – Քո թաղումն է: Ինքդ անձամբ ղեկավարում ես քո հուղարկավորության արարողությունը (*ՄԼ, էջ 464*):

ԻՆՔՆԱՀՈՒՄՈՐ, գ. **Սեփական անձին վերաբերող հումոր:** Հաղորդումը հիմնված էր այդ աղջկա **ինքնահումորի** վրա... (*Հմց*):

ԻՆՔՆԱԶԻԳԱՎՈՐ, ած.**Ինքնաձիգ ունեցող, ինքնաձիգ կրող (անձ):** Եվ երկու **ինքնաձիգավորների** ձայների միջով մեզ էր հասնում նրա գոռոցը (*Գրաս, էջ 467*):

ԻՆՔՆԱՆՈՐԱՑՈՒՄ, գ. **Ինքը իրեն նորանալը (նորացնելը):** Պատմության ընթացքում մենք ունեցել ենք **ինքնանորացման** մի շարք ծրագրեր ....(*ՀՀ, 23.05.2019*):Ռազմական **ինքնանորացման** լավագույն օրինակը Դավիթ-Բեկի գործունեությունն է.... (*ՀՀ, 23.05.2019*):Անդրադառնանք տնտեսական **ինքնանորացմանը**(*ՀՀ, 23.05.2019*):

ԻՆՔՆԱՊԱՀԱՆՁԿՈՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Ինքնապահանջկոտ**

**լինելը:** .... Նման **ինքնապահանջկոտությունն** այն միակն է, որ նրան հիմք է տալիս պահանջկոտ լինելու նաև ուրիշի հանդեպ (*ՀՀ, 12.06.2019*):

ԻՆՔՆԱՊԱՏՈՒՄԱՅԻՆ, ան. **Ինքնապատում ներկայացնող:** .... Նարինե Գրիգորյանի **ինքնապատումային** մոնոներկայացումն ասածիս հավաստիքն է(*Իր., 29.03.2019*):

ԻՆՔՆԱՍՏԻՊՈՂԱԿԱՆ, ան. **Ինքն իրեն ստիպող:** .... **Ինքնաստիպողական** ազդակներին ենթարկվելու վրա ....(*ՀՀ, 12.06.2019*):

ԻՇԽԱՆԱՍՏ, ան. **Իշխանություն ասող:** Բավական է, ինչքան զատվեցինք ու կիսվեցինք, երկու հավատք .... ամենաքիչը երկու կարծիք էլ ... իշխանամետ ու **իշխանատ** (*ԳԹ, 28.06.2019*):

ԻՍՊԱՆԱԽՈՍ, գ. **Իսպաներեն խոսող:** ....**Իսպանախոս** այս երկրում գտնվող ջրանցքի երկայնքով ամենուր հանդիպում էին ամերիկյան դրոշներ, զինվորականներ (*ՆՓ, էջ 335*):

ԻՍՐԱՅԵԼԱՀԱՅ, գ. **Իսրայելում բնակվող հայ:** Նախարարը ողջունեց **իսրայելահայ** գործարարին (*Հւլգ, news.am*):

ԻՏԱԼԱՀԱՅ, գ. **Իտալիայում բնակվող հայ:** **Իտալահայ** գործարարը Հայաստանում ներդրումներ է անելու (*Հւլգ, news.am*):

ԻՐԱՆԱՀԱՅ, գ. **Իրանում բնակվող հայ:** Վարչապետը հանդիպել է **իրանահայ** համայնքի ներկայացուցիչների հետ (*Հւլգ, news.am*):

ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Իրանում բնակվող հայություն:** **Իրանահայությունն** Իրանի խորհրդարանից ակնկալում է Հայոց ցեղասպանության ճանաչում (*Հւլգ, news.am*):

ԻՐԱՎՈՒՆՔԱՍՊԱՆ, ան.(դիպվ.): **Իրավունք ոտնահարող:** Դու միայն մարդասպան չես, դու **իրավունքասպան** ես (*Հւլգ*):

Լ

ԼԱՅՆԱԲԱՅՎԱԾՔ, ած.Լայն բացվածք ունեցող՝ բացվածքով: Հագել ես փայլուն կտորից լայնբացվածք զգեստ(Մ1, էջ 311):

ԼԱՍՏԱՅԻՆ, ած.Լաստի մասին, լաստի: Լաստային պատմության մի մասը ես բարձրաձայն կարդացի .... (Գրաս, էջ 30):

ԼԱՎԱՇԱԿՏՈՐ, գ.Լավաշի կտոր: Չոր լավաշակտորը թաթախել ես հալած յուղի մեջ ու կերել(Մ1, էջ 372):

ԼԱՑԱՍԱՆՁ, մկբ. Լացից տանջվելով: Ես հիշում եմ, թե ինչպես գյուղացիք լացատանջ քանդում էին իրենց դռակները և բուրդը հանձնում....միս առնում ու տալիս հարկ (ԼԴ 2, էջ 9):

ԼԵԶՎԱԴԴՎԱԾՔ, գ.Լեզվի դրվածք: «Երկրի հակառակ կողմն» աչքի է ընկնում նաև դասագրքային լեզվադրվածքին գրական- ստեղծագործական միջամտություններով....(ՆԱ, էջ 14):

ԼԵԶՎԱՃԱԿԱՍՄԱՐՏ, գ.Կատաղի լեզվակոխի: Ամբողջ կյանքում քո եսասիրական շահերից ելնելով լեզվաճակատամարտեր ես տալու ....(Մ1, էջ 355):

ԼԵԶՎԱՎԱՃԱՌ, գ. Լեզու վաճառող (առևտրական): Լեզվավաճառ ես դարձել(Մ1, էջ 483):

ԼԵԶՎԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, գ. Լեզվակոխի: Կնոջը հետ ամենօրյա լեզվավարժության դասեր եք անցնելու(Մ1, էջ 433):

ԼԵՂԱԿԱԽԱՌՆ, ած.Մեջը լեղակ լցրած, լեղակը հետը խառնած: .... Հայելին կարելի է լվանալ լեղակախառն ջրով, որը հայելուն ցինջ փայլ է տալիս(Մ2, էջ 268):

ԼԵՌՆԱՀԱՐՍՏԱՅՈՒՄ, գ. Լեռնային ապարների հանույթի հարստացում: «Ախթալայի լեռնահարստացման կոմբինատի» վերաշահագործումն անօրինական է (Zifg, news.am):

ԼԵՌՆԱՄԵՏԱՂԱԳՈՐԾԱԿԱՆ, ած. Լեռնային մետաղների



**արտադրությանը վերաբերող:** Շնորհավորական ուղերձ՝ ՀՀ լեռնամետաղագործական ոլորտի աշխատակիցներին (*Հնգ, news.am*):

ԼԻԱԿԱՍ, ած. **Հաստատակամ:** Ես լիահույս եմ և լիակամ.... (*Հնգ*):

ԼԻԿՅՈՐԱԳԱՎԱԹԱՅԻՆ, ած.(դիպվ.): **Լիկյորի գավաթների:** .... Անհետացավ իր սենյակում, ինչից հետո վերադարձավ իր լիկյորագավաթային պահուստից երեք գավաթների և կրկնակի գտված օդու շշի հետ (*Գրաս, էջ 589*):

ԼԻՏՎԱՀԱՅ, գ. **Լիտվայում բնակող հայ:** Լիտվահայերը հարգել են սումգայիթյան ջարդերի զոհերի հիշատակը (*Հնգ, news.am*):

ԼՅԱՐԴԱՅԱՎ, գ. **Լյարդի ցավ:** Լյարդացավ ես ունենալու (*Մ1, էջ 494*):

ԼՈՆԴՈՆԱՀԱՅ, գ. **Լոնդոնում բնակող հայ:** Ստեփանակերտում լոնդոնահայ դրամատուրգի պիես է բեմադրվել (*Հնգ, news.am*):

ԼՊՍՏՈՅ, գ. **Լպստելու՝ լիզելու ժամանակ հանվող ձայն:** .... Թմբուկի ձայնը կարծես թե որպես պաշտպանիչ ծածկույթ էր հանդես գալիս նրանց .... քչփչոցի ու լպստոցի նմանվող ձայների համար .... (*Գրաս, էջ 66*):

ԼՎԱՑՔԱԿՏՈՐ, գ. **Լվացքի ենթարկված՝ լվացած կտոր՝ գործվածք:** .... Նախ չորանում են մանր լվացքակտորները, հետո մեծերը (*Մ1, էջ 502*):

ԼՈՒՍԱԶԻԳ, ած. (բնատ.): 1. **Լույսի մեջ ձգվող, լույս ճառագող:** 2. **Լույսի միջոցող ձգող:** Դու կամեցար՝ քո լուսաձիգ գորույթյամբ // Վերադարձող իմ անցյալը ինձ նայի... (*ԼԴ 1, էջ 63*):

ԼՈՒՍԱՄԵԿՈՒՍԱՑՈՒՄ, գ. **Լույսի մեկուսացում, դրսից երևացող լույսերի ծածկում՝ անտեսանելի դարձնելը:** .... Պատերազմի ժամանակ ննջասենյակի ոչ բավարար լուսամեկու-

**սացման** պատճառով դիտողություն ստացան .... (Գրաս, էջ 132):

ԼՈՒՍԱՄԵԿՈՒՄԻՉ, ած. **Լույսը մեկուսացնող, դրսի համար անտեսանելի դարձնող**: .... Պատերի և պատուհանների լուսամեկուսիչ թղթի ետևում էլ ես նրան հենց բռնացրեցի .... (Գրաս, էջ 319-320):

ԼՈՒՍԱՄՓՈՓԵ, ած. **Լուսամփոփի նմանություն ունեցող**: **Լուսամփոփե** ակնոցներ ես կրում (Մ1, էջ 508):

ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒՀԻ, գ. **Կին լուսանկարիչ**: Երիտասարդ **լուսանկարչուհին** սիրում է, երբ իր շուրջը հարմարավետ է (TV ալիք, 11.02.2019):

ԼՈՒՍԱՍՏՂԱՅԻՆ, ած. (բնաս.): **Լուսաստղին վերաբերող**: .... Ես ուզեցի, որ նա իմ տառապած խղճից // Բովանդակի իր մեջ **լուսաստղային** մի երգ (ԼԴ 1, էջ 23):

ԼՈՒՍՆԱԹԱՓՈՒՐ, ած. **Անլուսին, լուսնագուրկ**: **Լուսնաթափուր** երկնքի տակ, որ երբեմն ակոսվում էր արագոտն կայծակներից.... (ԻՄ, էջ 43):

ԼՈՒՍՆԱՀՐԵՇ, գ. **«Լուսնային հրեշ»**: Չիտայում ցուցադրվելու է **«Լուսնահրեշը»** ներկայացումը Հայոց ցեղասպանության մասին (Zug, news.am):

ԼՈՒՍՆԱՃԵՐՄԱԿ, ած. **Լուսնի պես սպիտակ**: ....Քիչ անց [աղջիկը] կերևար վերնահարկի իր **լուսնաձերմակ** սենյակում (ՌԲ, էջ 178):

ԼՈՒՍՆԱՇՂԱՐՇ, ած. **Նուրբ շղարշով պարուրված**: Եվ **լուսնաշղարշ** պայծառ գիշերով իր գգվանքների հուրը շռայլեց (ՄԳ, էջ 160):

## Խ

ԽԱՂԱԳՆԴԻԿ, գ. **Խաղագնդակ**: **Խաղագնդիկները** միմյանց շրխկացնելով՝ բիլիարդ ես խաղում (Մ2, էջ 10):

ԽԱՂԱԳՈՐԳ, գ. **Խաղալու համար գորգ**: Գնի՛ր **խաղագորգ**,

հասակաչափ և այլ հետաքրքիր իրեր քո երեխայի համար (*Հւց*):

ԽԱՂԱԹՂԹԵ, ան.**Խաղաթղթերից պատրաստված՝ պատրաստվող՝ շինվող**: Տե՛ս ԳԵՐՓԽՐՈՒՆ-ի օրինակը:

ԽԱՆԴԱԿԱԶԵՐԾԵԼ, նր.**Խանդակից՝ խոր ակոսից՝ փոսից հանել**: Շաքարի ճակնդեղը **խանդակազերծել**, խնամքով լվացել, մանր-մանր շերտատել, սև քաղցր հյութ ես ստացել (*Մ2, էջ 514*):

ԽԱՎԱՐԱԾԵՓ, ան. (բնստ.): **Խավարով ծեփված՝ շղարշված**: Սա է մնում՝ այս երազը լուսավոր // **Խավարածեփ** գիշերվա լայն քղանցքին (*ԽՄ2, էջ 21*):

ԽԱՎԱՐԱԾՆՈՒՆԴ, ան.**Խավարածին, խավարի առաջացման պատճառ հանդիսացող, խավարը ծնող**: Երկնքից երկրի վրա կախված **խավարածնունդ** ամպերն ավելի խտացրին խավարը (*Մ2, էջ 26*):

ԽԱՎԻԱՐԱԿԵՐ, ան.**Խավիար ուտող**: .... Մեկը ձկան սև խավիար է ուտում, մյուսը՝ սև բադրիջանի խավիար. արդյունքում երկուսն էլ **խավիարակերներ** են (*Մ2, էջ 443*):

ԽԱՐԴԱԽԱԿԻՐ, ան. **Խարդախի կրած, խարդախությունը ծածկող**: Այն ընդամենը անհայտ, անհասկանալի, 2005 թվականի երիցս անիծյալ ժամանակաշրջանում ծնված **խարդախակիր** մի դիմակ է.... (*Հւց*):

ԽԱՐՍԽԵ, ան.**Խարսխաձև**: .... Միաձուլվեց իր **խարսխե** կոճակներով կոստյումին .... (*Գրաս, էջ 203*):

ԽԵԼՔԱԼԻ, ան.**Խելքով լի, խելոք**: Մեկի գեղեցիկ աչքերը,.... մեկ ուրիշի **խելքալի** գլուխը ... գումարելով՝ քեզ համար իդեալական կնոջ կերպար ես ստեղծել (*Մ1, էջ 451*):

ԽԵՆԹԱԳԻՆ, ան. **Ուժգին, խենթ, խիստ աշխույժ**: .... Ջուրը կհոսի **խենթագին** խայտանքով, հողը կքրտնի ու հողամերձ ամպաքուլաներով կդիմավորի Արեգակին (*Հւց*):

ԽԵՆԹԱԾՈՒՓ, ան. (բնստ.): **Խենթորեն ծփացող**: Փովել է տիկին Պոլիսը // Լույսերի **խենթածուփ** քողի տակ.... (*ԼԴ 1, էջ 57*):

ԽԵՑԳԵՏՆՈՐՄԻՉ, գ. **Խեցգետնորս սարք**: Հետո եկավ ծալովի չինական թակարդների ու զսպանակավոր **խեցգետնորսիչների** ժամանակը (ՀՀ, 23.07.2019):

ԽԻՆԴԱՇՂԱՐՇ. ան. **Խնդալից, խինդաշաղախ**: Հոգսերի մեջ՝ **խինդաշարջ**, ինքնամփոփված հանդիպեցի պատահարի ուղղորդումով (ՄԳ, էջ 167):

ԽՂՃԱԶԱՅՆ, մկբ. **Խղճացող ձայնով**: Ես **խղճաձայն** պատասխանեցի .... (ԼԴ 2, էջ 21):

ԽՂՃԱՍԻՐՏ, ան. **Գթասիրտ**: Տատս դա նկատում էր, բայց **խղճասիրտ**՝ ձայն չէր հանում (ԼԴ 2, էջ 10):

ԽՄԱՍԵՐ, ան . **Խմել սիրող**: Չարենցի երազած մի տղա ծխում էր շատ...**խմասեր** էր (ՄՄ, էջ 205):

ԽՄԻՉՔԱՏԵՍԱԿ, գ. **Խմիչքների տեսակ**: [Երազը].... Մեկնվում է ոչ միայն ըստ **խմիչքատեսակների** .... (Մ2, էջ 40):

ԽՄՈՐԱԶԱՆԳՎԱԾ, գ. **Խմորի շաղախ**: .... Քանի անգամ բրնձով փլավ ես եփել, միշտ էլ .... իրար կպած մի **խմորագանգված** է դարձել (Մ1, էջ 134):

ԽՆԴՐԱԳԻՆ, մկբ. (փխբ.): **Խնդիրք՝ աղաչանք արտահայտող**: Այդ ժամանակ ձին թույլ ու **խնդրագին** խրխնջում է (Մ1, էջ 83):

ԽՆԿԱԿԱՐՈՏ, ան. (փխբ.): **Խնկի կարոտ, խունկ վառողներ՝ ծխացնողներ քիչ ունեցող, հավատացյալների պակաս զգացող**: Տե՛ս ԱՂՈԹԱԿԱՐՈՏ-ի օրինակը:

ԽՆՁՈՐԱԶԵՎ, ան.**Խնձորի ձև՝ նմանություն ունեցող**: .... Նժդեհը քաղում էր մանր **խնձորաձև**.... հյութալի պտուղներն ու ճաշակում (Մ3, էջ 160):

ԽՆՁՈՐՈՐԴ, գ. **Խնձորի վնասատու որդ**: Կոցահարած տեղից իր կարմիր գլուխն էր բարձրացրել սպիտակ **խնձորորդը** (Մ2, էջ 47):

ԽՈԼԱՊՏՈՒՅՏ, գ. Մոլեգին, ամեհի ընթացք, շրջապտույտ: Այս ամենը վերածվում է հոգու խոլապտույտի, որի հուզախոռով հոսքերի մեջ հաճախ պատռվում են հոգու տաղանթները ... (ՀրչԹ, էջ 187): Մեր խոսքը հորձանք է տալիս, ու նրա խոլապտույտը մենք զգում ենք մեր մեջ ու մեզնից դուրս (ՀրչԹ, էջ 191):

ԽՈՃԿՈՐԱՅԻՆ, ան. Խոճկորի, ինչպես խոճկորինը, խոճկորին հասունկ: Խոճկորային մանր աչքերը քեզ հառած՝ մի հաստափոր մարդ քեզ խժռելու գաղափարն է որոճում (Մ3, էջ 24):

ԽՈՍԱԺԱՍ, գ. Խոսելու ժամանակը՝ տևողությունը: ... Հեռախոսավարձը մուծելու ես ըստ խոսածամերի (Մ1, էջ 483):

ԽՈՍՔԱՀԱՆԴԵՍ, գ. (բնատ.): Խոսքի հանդես: Հայրենիքներ են գնել-վաճառել // Ճարտասանները խոսքահանդեսում (ԽՄ1, էջ 35):

ԽՈՏԱՎԵՐԱՄՇԱԿՈՂ, ան. Խոտը վերամշակող: Խոտավերամշակող արտադրամասեր (Գրաս, էջ 99):

ԽՈՐԱՃԱՔ, ան. Խոր ճաքերով պատված՝ ունեցող: ... Վրանաձև խիտ սաղարթով, գրեթե խորաճաք կեղևով այս սևասիրտ ծառի անունը սրտատերև թխկի է (Մ1, էջ 414):

ԽՈՐԱՐՄԱՍՍՅՈՒՆ, ան. Բնահողի մեջ խոր գնացող արմատներ ունեցող: Հզոր և խորարմատային համակարգով, հարյուրամյա մշտադալար նոճու ծառը ձեր պարտեզում աճել և հասել է 30 մետրի (Մ2, էջ 496):

ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՐԳ, գ. Խորհրդանիշների համակարգ: ... Հեղինակը բացահայտել է նվիրագործման խորհրդանշակարգում խաղարկվող օրգանական ծագմամբ բնակազմական առարկաների ... տոմարական-աստղաբաշխական պատկերացումների ազգամշակութային հիմքերը ... (ՊԲՀ, 2, 2018, էջ 244):

ԽՈՐՀՐԴԱՇԵՐՏ, գ. Խորհուրդ պարունակող շերտ: Բայց կանան մի չերևացող, չառասպելականացված խորհրդաշերտ, մի կենդանի վիպաշար, որ իրար է հյուսում սերունդներին ... (ՀրչԹ, էջ 162):

ԽՈՐՈՎԱԾԱՏԵՐ, գ. **Խորովածի տեր:** .... Խորովածատերն ու խորոված անողը դու չես (*Մ2, էջ 397*):

ԽՈՑԱՍՈՒՍԵՐԱԿՐՈՒՂԻ, գ. **Կին խոցասուերորդ, կին խոցասուերամարտիկ:** Երիտասարդ խոցասուերակրուհիների մրցաշարում Սվետլանա Եսայանը 118 մասնակիցների հաշվարկում 109-րդն էր (*ՀՀ, 17.04.2019*):

ԽՈՐՈՎԱՐԱՐՈՐԵՆ, մ. **Խռովարարի նման, ինչպես խռովարար:** .... Ի նշան բողոքի խռովարարորեն թմբկահարում էր .... (*Գրաս, էջ 85*):

ԽՐԱԽՃԱՆԱՏԵՂԻ, գ. **Խրախճանքի վայր:** Զառիթափը կտրեցին- անցան...ու հայտնվեցին Փայլակի սիրած խրախճանատեղում (*ՎՄ, էջ 12*):

ԽՐԱՄԱՏԱԿԻՑ, գ. **Մարտընկեր:** Երեկվա խրամատակիցները դարձան միմյանց անհասկանալի, խորթ ու օտար (*ՄՄ, էջ 83*):

ԽՐՁԱԴԵԶ, գ. **Խրձերի դեզ:** Իմ ամենասիրելի տեղը Շահաբի կալն էր, որ ամռանը լցվում էր ցորենի խրձադեզերով (*ԼԴ2, էջ 3*):

## Ծ

ԾԱԼԱԾԱԾԿ, ած. **Ծալքերով ծածկված՝ պատած:** Իմ հայացքը Մացերատի ծոծրակի վրայից տեղափոխվեց այն մարդկանց **ծալածածկ** ծոծրակներին .... (*Գրաս, էջ 179*):

ԾԱԾԿՈՎԻ, ած. **Ծածկվող, ծածկոց ունեցող:** .... Ստիպված էր փակել իր **ծածկովի** կրպակը (*Գրաս, էջ 200*):

ԾԱԾԿՈՑԱՆՄԱՆ, ած. **Ծածկոցի նմանվող:** Այնուհանդերձ, որոշվեց գոնե **ծածկոցանման** մի բան հայթայթել՝ գետնին փռելու համար (*ՆՓ, էջ 295*):

ԾԱՂԿԱԶՕԾՈՒՆ, ած. (բնատ.): **Ծաղիկներով օծված՝ պատված:** Վերևից վար գյուղամիջին աշտարակը հագած նրբին բաղեղի ամպ, **ծաղկագօծուն** դիպակի պես ծածանվում էր ներքևից

վեր (*ԻՄ*, էջ 52):

ԾԱՂԿԱՄԵՋ, գ. **Ծաղկի մեջ գտնվող: Ծաղկամիջի** ոլորի մեծության հաստիկավոր պտուղները .... (*Մ2*, էջ 117):

ԾԱՆՐԱՍԱՂԱՐԹ, ած. **Ծանր սաղարթ ունեցող՝ սաղարթով:** ... Սլացիկ կեչիները շրջապատել էին .... Կախված **ծանրասաղարթով** մի ծառի (*Մ2*, էջ 206):

ԾԱՌԱԽՆՁՈՐ, բ. **Ծառի վրա աճող խնձոր:** «Ի՞նչ տարբերություն, **ծառախնձո՞ր** է, թե՞ **գետնախնձոր**» (*Մ1*, էջ 169):

ԾԱՌԱՋԵՎ, ած. **Ծառի ձևով, որպես ծառ աճող:** .... Գիհիները լինում են թփաձև կամ **ծառաձև** (*Մ1*, էջ 177):

ԾԱՎԱԼԱՅՆԵԼ, բ. **Ծավալվել, փովել:** Վանքից բացվող հորիզոնում Վանա ծովն է **ծավալայնում** (*ՌՂ*, էջ 178):

ԾԵՐՏԱԿՈԼՈԼ, ած. **Շերտոտ:** ... Սկսեցին իրենց նորածանոթ փոքրիկ աշխարհին ծանոթանալ **ծերտակոլոլ**, կծկված սիրամարգերը (*ՎՄ*, էջ 178)

ԾԻՍԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ, ած. **Ծիսական և առասպելաբանական:** Երկրորդ գլուխը՝ «**Ծիսաառասպելաբանական** մոտիվները հայկական հրաշապատում հեքիաթներում և ժողովրդական հնագույն վեպերում» ունի յոթ ենթաբաժին .... (*ՊԲՀ*, 2, 2018, էջ 242):

ԾԻՐԱՆԱՀՈՐԴ, ած. (բնատ.): **Ծիրանի գույներով հորդացող:** Եվ այդ հուրը՝ արդեն **ծիրանահորդ**՝ ծածկում է սարափեջ գյուղ ու այգի (*ԼԴ 1*, էջ 67):

ԾԻՐԱՆԱՎԱՐԴԱԳՈՒՅՆ, ած. **Ծիրանիին տվող վարդագույն:** Քո ճանապարհին աճել է .... **ծիրանավարդագույն** ծաղիկներով դափնյակը (*Մ1*, էջ 229):

ԾԽԱՍԵՂԱՆԻԿ, գ. **Փոքր սեղան, որի շուրջը ծխում են, ծխելու դեպքում օգտագործվող փոքր սեղան:** .... Կլոր **ծխասեղանիկը** ... պարբերաբար փոխում էր տեղը .... (*Գրաս*, էջ 38):

ԾՈԾՐԱԿԱՄԱՍ, գ. **Ծոծրակի մաս՝ հատված:** {Նա} ... կարգի բերեց **ծոծրակամասի** մագափունջը (*Գրաս, էջ 444*):

ԾՈՎԱԶՈՒՐԿ, ած.**Ծովից գուրկ, ծով չունեցող:** Անծանոթները ... զարմանալու են, թե այս **ծովագուրկ** ժողովուրդն ինչպես է աշխարհին աշխարհահոչակ ծովակալներ տալիս (*ՄՅ, էջ 466*):

ԾՈՎԱՀՈՏ, գ. **Ծովի հոտ՝ բույր:** Քանի որ «**Ծովահոտ** է տարածվում մեր հնչյուններից», ... հնչյունը խոսք պիտի դարձնել, հիշողությունը խոսքով պիտի պահել (*ՄՄ, էջ 18*):

ԾՈՎԱՍՏՂԱՀՈՒՌ, ած. (բնատ.): **Ծովաստղերից կազմված:** Ի՞նչ են երգում երանգները ծիածանի **ծովաստղահուռ** (*ԿԱ, էջ 61*):

ԾՎԱՐԱԲՈՒՅՆ, գ. **Ծվարատեղ: Ծվարաբույն** գտած հրե մի հավք, որ կճախրի, եթե թներ առնի (*ՄԳ, էջ 10*):

## Կ

ԿԱԴՐԱՍՊԱՆ, ած. (դիպվ.): **Կադրեր ոչնչացնող:** Չեմ ընդունում պաշտոնյաների արկածախնդրությունը և առհասարակ, դիլետանտ նախարարացուների **կադրասպան** քաղաքականությունը (*ՀՄԳ*):

ԿԱԶՄԱԿԵՐՊԱՄԵԹՈՂԱԿԱՆ, ած. **Կազմակերպական և մեթոդական:** Կազմակերպությունն առաջարկում է բժշկական օգնության մասնագիտական, խորհրդատվական և **կազմակերպամեթոդական** աջակցության ծառայություններ (*ՀՄԳ, tender-monitoring.am*):

ԿԱԶՄՄԵԹՈՂԱԿԱՆ, ած. (հպվ.): **Կազմակերպական և մեթոդական:** Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում դիսպանսերային բուժօգնության և **կազմամեթոդական** աշխատանքների կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին (*ՀՄԳ, moh015.cmslogic.nl*):



ԿԱԽԱՐԴԱԶԱՐԴ, գ. **Կախարդանքը** (չար աչքը նն) արգելակող՝ ի չիք դարձնող զարդ: Եթե նկատել ես, որ կնոջդ վրա էլ աչք կա, մի հատ էլ պայտի տեսքով **կախարդագարդ** նրան նվիրիր (*Մ3, էջ 54*):

ԿԱԽՕՂԱԿ, գ. **Կախելու օղակ**: .... Արտաշավանի դամբարաններում գտնվել են երկաթե դանակներ, նիզակ, դաշույնի գոտեկապ, **կախօղակով** սրոցաքար և բրոնզե մանյակ (*ՊԲՀ, 3, 2017, էջ 169*):

ԿԱԿՏՈՒՍԱԶԵՎ, ած. **Կակտուսի ձև ունեցող, կակտուսանման**: Քո այգում ծաղկել էին լիաթերթ քաջվարդաձև, գնդաձև, **կակտուսաձև** և քրիզանթեմաձև գեորգինաները (*Մ1, էջ 167*):

ԿԱՂԱՂԱԶԵՐԾԵԼ, նբ. **Կաղաղը՝ ընկույզի կանաչ կեղևը հանել, կաղաղահանել**: Այգում **կաղաղագերծել** ես ընկույզները (*Մ2, էջ 163*):

ԿԱՄՐՁԱՀԱՐԿ, գ. **Կամրջից անցնելու համար գանձվող հարկ, կամրջատուրք**: Կամրջի գլխին կանգնել՝ անցնող-դարձողից **կամրջահարկ** ես գանձել (*Մ2, էջ 168*):

ԿԱՆԱԴԱՀԱՅ, գ. **Կանաղայում բնակվող հայ**: Մահացել է Հայոց ցեղասպանությունը վերապրած **կանաղահայ** Սիրվարդ Քուրտյանը (*ՀԱԳ, news.am*):

ԿԱՆԱԶԱԱՐԾԱԹԱՎՈՒՆ, ած. **Կանաչին տվող արծաթագույն**: **Կանաչաարծաթավուն** երանգավորմամբ .... կոթունավոր կոշտ տերևներով երինջնակի ցողունը արմատավզիկից պոկվեց.... (*Մ1, էջ 291*):

ԿԱՆԱԶԱԳԱՐԵԶՐԱԳՈՒՅՆ, ած. **Կանաչին տվող զարեջրագույն**: **Կանաչազարեջրագույն** ուռուցիկ ապակիները ծածկում էին միակ պատուհանը (*Գրաս, էջ 600*):

ԿԱՆԱԶԱԿԱՊՏԱՎՈՒՆ, ած. **Կանաչին տվող կապույտ գույնին մոտ գույնի**: ... Քաջահավը **կանաչակապտավուն** չորս ձու է դնում (*Մ3, էջ 4*):

ԿԱՆԱԶԱՍՊԻՏԱԿԱԳՈՒՅՆ, ան.**Կանաչին տվող սպիտակ գույնի, սպիտակականաչ գույնի:** Թիկունքը պատել էին ... պեպենների սփռումները ... եղանակի փոփոխության ժամանակ մրմռացող, գույնզգույն՝ սկսած կապտասևերից մինչև **կանաչասպիտակագույն** սպիները (*Գրաս, էջ 194*):

ԿԱՆԱԶԱՍՊԻՏԱԿԱՎՈՒՆ, ան.**Կանաչին տվող սպիտակ:** Կոկոռնու **կանաչասպիտակավուն** ծաղիկը (*Մ2, էջ 229*):

ԿԱՆԳՆՈՎԻ, ան.**Ուղղաձիգ դիրքով կանգնեցվող:** .... Հատակի **կանգնովի** ժամացույցը .... (*Գրաս, էջ 58*):

ԿԱԶԱՂԱԿԱՎԱՐԻ, մկբ. **Ինչպես կաչաղակը:** ... Թավշափայլ պոչով հմայիչ կաչաղակը իր կչկչան լեզվով **կաչաղակավարի** խոսել և ինչ-որ բան է քեզ պատմել (*Մ2, էջ 175*):

ԿԱՊԱՎՈՐՈՒՇԻ, գ. **Կին կապավոր:** .... Մի սփրթնած և շփոթությունից հանդուգն դարձած **կապավորուհու** ասաց, որ վերջինս սիրային կապի մեջ է իր պետի հետ (*Գրաս, էջ 391*):

ԿԱՊՏԱԶՈՒԼԱԼ, ան. **Կապույտ և ջինջ, գուլալ:** Շահաբը հրապուրիչ էր...**կապտագուլալ** գետակով (*ԼԴ 2, էջ 3*):

ԿԱՊՏԱԼՈՒՅՍ, ան. (բնստ.): **Կապույտ լույսով ողողված:** Եվ **կապտալույս** քարանձավում// Իմ սուրբ լեռան, // Երբ անհանգիստ// Երկնավոր շունչն ինձ արարեց.... (*ԼԴ 1, էջ 37*):

ԿԱՊՏԱԽԻՏ, ան. (բնստ.): **Խիտ կապույտի երանգով:** Առավոտը աշնան // Պաղ է ու **կապտախիտ**.... (*ԼԴ 1, էջ 67*):

ԿԱՊՏԱԾՐԱՐ, ան. **Կապույտ մշուշով պատած:** Հին ոստանը երազների մեջ էր երևում **կապտածրար** լեռներով (*ԼԴ 1, էջ 90*):

ԿԱՊՏԱԿԱՐՄՐԱԳՈՒՅՆ, ան.**Կապտին տվող կարմիր գույնի, կապտակարմիր գույնի:** .... **Կապտակարմրագույն** հզոր ձեռքերով .... (*Գրաս, էջ 165*):

ԿԱՊՏԱՇՈՂՈՒՆ, ան. **Կապտաշող, կապտափայլ:** Նուրբ մարմիններ փոքրիկ, թրթռուն **կապտաշողուն** գլխիկներով (*ԲՄ, էջ 44*):

ԿԱՊՈՒՂԻ, գ. **Հեռահաղորդակցության՝ կապի ուղիներ՝ գծեր:** Եվ ինչու է անհրաժեշտ կրկնորոշված կապուղիների անցկացումը (ՀՀ, 20.09.2019):

ԿԱՎԱԹԵՐԱՊԻԱ, գ. **Կավարուծում:** Երեխաների աջակցության հիմնադրամի կենտրոնում կրացվի կավաթերապիայի բաժին (ՀՄԳ):

ԿԱՎԱԶԵՎ, գ. **Կավից շինված ձևավոր տարողություն, կաղապար:** Անգեղ կավաձևի մեջ էր դրված այդ անհանգիստ ոգին (ՄՄ, էջ 205):

ԿԱՎԱՔԱՐԵ, ած. **Կավաքարից շարված:** Ես ստիպված էի ... բարձրանալ կավաքարե պատի վրա (Գրաս, էջ 512):

ԿԱՎՃԱԳՈՒՆԴ, գ. **Կավձի կտոր:** Մանկուսույց Առաքելը կավձագունդը մեկնեց Վահրամին (ՌՂ, էջ 114):

ԿԱՏԱԼՈՆԱԽՈՍ, ած. **Կատալոներեն խոսող:** Սցենարիստ, ռեժիսոր և կինոպրոդուսեր Շավի Սալան կատալոնախոս Վալենտիայի Ալիկանտե քաղաքից է (ՀՀ, 13.07.2019):

ԿԱՐԱԹԵԼ, գ. **Կարի թել:** .... Զինվորը թրջվել էր մինչև վերջին կարաթելը (ՌՂ, էջ 96):

ԿԱՐԱՍԱԶԵՎ, ած. **Կարասի ձև՝ նմանություն ունեցող, կարասանման:** Կավե այս կարասաձև խնոցին պապիս պապն է սարքել (Մ2, էջ 49):

ԿԱՐԹԱՎԱՃԱՌ, գ. **Կարթ վաճառող: Կարթավաճառ** էս դարձել (Մ2, էջ 191):

ԿԱՐԻՃԱՅԻՆ, ած. **Կարիճին հատուկ:** Իր էլեկտրոնային կայքով այդ թույնը թափում է՝ փորձելով հաճույք ստանալ կարիճային իր պահվածքից (ՀՄԳ):

ԿԱՐԾՐԱՓՈՒՇ, ած. **Կարծր փշեր ունեցող:** Բացված, չփակված թոշնած վարդերի մի փունջ կարծրափուշ (ՄԳ, էջ 79):

ԿԱՐՃԱԲԵՂ, ած. **Կարճ բեղերով: Կարճաբեղ** ոսկե բգեզը

դուրս էր եկել ծառի կեղևի տակից(ՄՅ, էջ 14):

ԿԱՐՄՐԱԳՈՐՇԱԳՈՒՅՆ, ած.**Կարմրին տվող գորշ, կարմրագորշ գույնի**: .... Երկաթածառի տնկին աճել, կարմրագորշագույն կեղևով ... հսկա ծառ է դարձել(Մ1, էջ 294):

ԿԱՐՄՐԱԳՈՐՇԱՎՈՒՆ, ած.**Կարմրագորշ գույնի տվող**: Տե՛ս ԵՐԻԿԱՄԱՆՄԱՆ-ի օրինակը:

ԿԱՐՄՐԱԴԵՂՆՈՒՅ, ած.**Կարմիր գույնի դեղնուց ունեցող՝ դեղնուցով**: .... Զատիկի թաթախմանը կարագով կերել էս կարմիր ներկած,**կարմրադեղնուց** թերխաշ երկու ձու(Մ1, էջ 372):

ԿԱՐՄՐԱՇԱԿԱՐ, ած.**Շավար(ներ)ը կարմիր**: .... Մարիային մշտապես հոգնեցնում էին Կոնրադի գիմնագիայի **կարմրաշավար** դասարանցիների տափակ կատակները (Գրաս, էջ 302):

ԿԱՐՄՐԱՍԵՎ, ած.**Մուգ կարմիր, սևին տվող կարմիր**: .... Փողոցի վերջում .... բազմել էր **կարմրասև**, ուռած աշտարակի տակ կանաչագույն աշտարակներով Մուրբ Մարիամի եկեղեցին(Գրաս, էջ 212-213):

ԿԱՐՄՐԱՏԵՐԵՎ, ած.**Կարմիր տերևներ ունեցող՝ տերևներով, տերևները կարմիր**: Քո դռան շեմին .... վեր է խոյացել .... **կարմրատերև** աքլորակատար թավշենին(Մ1, էջ 392):

ԿԱՐՈՏԱԺԱՅԹՔ, մկբ., ած. (բնստ.): **Կարոտ ժայթքելով՝ սփռելով՝ տարածելով**: Ես հրճվանքից հրավառվում // Ու կանչում եմ **կարոտաժայթք**// .... (ԼԴ 1, էջ 41):

ԿԱՐՏՈՖԻԼԱԳՈՒՅՆ, ած.**Կարտոֆիլի գույն ունեցող՝ գույնի**: .... Այդ հինգերորդը որոշակիորեն ոչնչով չի տարբերվում մնացած չորս **կարտոֆիլագույներից** (Գրաս, էջ 7):

ԿԱՔԱՎԱԲՈՒՆ, գ. **Կաքավի բուն**: .... Մոխրագույն թունավոր գյուրգան մթնշաղին սողալով մոտեցավ **կաքավաբնին** .... և խժոեց կաքավաձագերին (Մ1, էջ 193):

ԿԱՔԱՎԱՁԱԳ, գ. **Կաքավի ձագ**: Տե՛ս ԿԱՔԱՎԱԲՈՒՆ-ի

օրինակը:

ԿԱՔԱՎԱՔԱՅԼԵԼ, չբ. **Կաքավի նման՝ նագանքով քայլել:** .... Ամուսինը իր անտաշ քայլերով առջևից է քայլում, կինը՝ ետևից կաքավաքայլում.... (Մ1, էջ 446):

ԿԵՆՍ(Ա)ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ, գ. **Ահաբեկչություն կենսաբանական միջոցներով:** Ամերիկյան կորպորացիան կօգնի Հայաստանին **կենսաահաբեկչության** դեմ պայքարում (Հւգ, news.am):

ԿԵՆՍԱԱՐՀԵՍԱԿԱՆ, ած. **Մարդու մաշկից, ճարպանյութից և այլ հյուսվածքներից վերցված բջիջներից ստեղծվող:** Չինացի գիտնականները **կենսաարհեստական** լյարդ են մշակել (Հւգ, news.am):

ԿԵՆՍԱԵՌԱՆԴ, գ. **Կյանքի՝ նրա գոյատևումը պահպանելու եռանդ:** Անսպառ են այս կաղնու **կենսաեռանդի** պաշարները .... (Մ2, էջ 165):

ԿԵՆՍԱԹԱՂԱՆԹ, գ. (փխբ.): **Կյանքը, զգացողությունները պարուրող թաղանթ, կենսըմբռնման ձև:** Նանիի դառնածին պատմությունները թոռան համար հյուսել էին մի **կենսաթաղանթ**, որը մինչ մահ իր մեջ պահեց գրողին (ՊԲՀ, 1, 2019, էջ 131):

ԿԵՆՍԱԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ, գ. **Կենսաբանական լաբորատորիա:** Ռուսաստանում սպառնալիք են տեսել Վրաստանում ԱՄՆ **կենսալաբորատորիայի** մեջ (Հւգ, news.am):

ԿԵՆՍԱԿՈԹՈՂ, գ. (բնատ.): **Կյանքը խորհրդանշող կոթող, հուշարձան:** Ընտանիք, **կենսակոթող** ազգի, որքան հին էս դու (Մ3, էջ 57):

ԿԵՆՍԱՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. Հայաստանում մեղավաբուծությանը խոչընդոտում են հիվանդությունները, քիմիկատները և **կենսահաճախականությունների** օգտագործումը (Հւգ, news.am):

ԿԵՆՍԱՀԱՎԵԼՈՒՄ, գ. **Կենսահավելուրդ, սննդին ավելացվող կենսական տարրեր:** Պարզվել է՝ հայտնի կենսահավելումը անօգուտ է սրտի համար (*ՀՄԳ, news.am*):

ԿԵՆՍԱՀՈՒՆՉ, ած. (բնստ.): **Կենսականորեն հնչող՝ կենսական լիցքեր հաղորդող:** Վերջին կենսահունչ ծիծաղն եմ ծախում (*ԽՄՄ, էջ 34*):

ԿԵՆՍԱՂՏՈՏՈՒՄ, գ. **Կենսական միջավայրի աղտոտում:** Սևանում իշխանի զանգվածային բուծումը կենսաաղտոտման վտանգ է պարունակում (*ՀՄԳ, news.am*):

ԿԵՆՍԱՄԹՆՈԼՈՐՏ, գ. **Կյանքի համար անհրաժեշտ մթնոլորտ:** Մինչև տարեվերջ կենսամթնոլորտի համալիրի խորհրդատու կընտրվի (*ՀՄԳ, news.am*):

ԿԵՆՍԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, գ. **Կյանքի անվտանգություն:** Ավելի բարձր աստիճանի կբարձրացվեն կենսապահովության և կենսանվտանգության չափանիշները (*ՀՄԳ, news.am*):

ԿԵՆՍԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ, գ. **Կենսապահովում:** Օգոնային շերտը մեր կենսապահովության երաշխիքն է (*ՀՄԳ, news.am*):

ԿԵՆՍԱՊԱՏՐԱՍՏՈՒԿ, գ. **Կենսաբանական պատրաստուկ:** Հանրապետությունը սկսվել է կենսապատրաստուկի բաշխման գործընթացը (*ՀՄԳ, news.am*):

ԿԵՆՍԱՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹ, գ. **Բնական (ոչ քիմիական) պարարտանյութ:** Կառավարությունը գյուղացիներին առաջարկում է սելիտրայի փոխարեն կենսապարարտանյութ օգտագործել (*ՀՄԳ, news.am*):

ԿԵՆՍԱՌԵՍՈՒՐՄ, գ. **Կենսական ռեսուրս:** Ներկայացվել է ՀՀ ԲՆ կենսառեսուրսների կառավարման գործակալության նոր պետը (*ՀՄԳ, news.am*):

ԿԵՆՍԱՎԱՌԵԼԻՔ, գ. **Կենսաբանական վառելիք:** Կենսաբանները բույս են աճեցրել կենսավառելիք ստանալու համար (*ՀՄԳ, news.am*):

ԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ, գ. **Կենսաբանական տեխնոլոգիա:** Թրամփի հաղթանակը փրկել է ԱՄՆ-ի կենսատեխնոլոգիաները (*Հւգ, news.am*):

ԿԵՆՍԱՏԻԵԶԵՐՔ, գ. **Կենսական տիեզերք:** .... Անգամ ամենաչնչին (հիմար, ստոր և այլն) մարդն ինքնին անհունորեն խոր ու գրավիչ **կենսատիեզերք** է (*ՀՀ, 12.06.2019*):

ԿԵՆՍԱՔԱՅՔԱՅՎՈՂ, ք. **Կենսական միջոցներից ստեղծված:** Իսպանացի գիտնականները կաթի համար **կենսաքայքայվող** ջերմակայուն փաթեթ են ստեղծել (*Հւգ, news.am*):

ԿԵՍՈՒՐԱԿԱՐՈՏ, ան. **Կեսուրին կարոտ, նրան կարոտելով:** **Կեսուրակարոտ** կյանք ես վարելու (*Մ2, էջ 208*):

ԿԵՐԱԿՐԱԿՆՈՒԹ, գ. **Կերակրի հյութ, ջրային մաս:** .... Ինչպես էր .... յուղերը դատարկում **կերակրահյութ** պատրաստելու փոքրիկ թավայի մեջ (*Գրաս, էջ 174*):

ԿԵՐԱԿՐԱՊԱՏՈՒՀԱՆ, գ. **Բանտախցի կերակրադուռ, դռան աչք՝ անցք:** .... Առանց խտրականության, առանց կոռուպցիայի որևէ դրսևորման, խուցերի **կերակրապատուհանները** բաց են լինելու .... Բաց են եղել որոշ խուցերի կերակրադուռները (*ՀՀ, 26.04.2019*):

ԿԻԲԵՌՄԱՐԶԻԿ, գ. **Կիբեռոլորտի մարզիկ:** Պրոֆեսիոնալ **կիբեռմարզիկները** կարող են հիվանդանալ «խաղային խանգարմամբ» (*Հւգ, news.am*):

ԿԻՆՈՊԱՏԿԵՐ, գ. **Կինոյի միջոցով ներկայացվող պատկեր:** Ձեր «Հայելու միջով» ֆիլմում զուգահեռ երկու պատում է հյուսվում. մեկն իրականության **կինոպատկերն** է, մյուսը՝ պատրանքի (*Իր., 22.03.2019*):

ԿԻՆՈՍԻՍԱԼ, գ. **Կինոնկարահանման ժամանակ թույլ տրված անճշտություն:** Երկրպագուները **կինոսխալ** են հայտնաբերել Տարանտինոյի ֆիլմում (*TVայլիք, 19.08.2019*):

ԿԻՆՈՏԻԵԶԵՐՔ, գ. (փխբ.): **Կինոյի անսահման աշխարհ:**

...Տարանտինոն ինքը յուրատեսակ **կինոտիեզերք** է *(TV ալիք, 19.08.2019)*:

ԿԻՆՈՏՈՆ, գ. **Կինոյի տոն**: .... Նորարարական մոտեցումներով կազմակերպված փառատոնն այս տարի բոլորովին այլ **կինոտոն** է խոստանում *(ՀՀ, 13.06.2019)*:

ԿԻՍԱԱՂՋԿԱԿԱՆ, ան. **Կիսով չափ աղջկական՝ այդ տարիքին հասուկ**: Որքան լավ կլիներ այստեղ մեջ բերել կիսամանկական-**կիսաաղջկական** այդ կոչերից մի քանիսը, որոնք գրված էին կիսաորբի կողմից *(Գրաս, էջ 30)*:

ԿԻՍԱԱՄՈՒՐ, ան. **Կիսով չափ ամուր, ոչ շատ ամուր, թեթևակի**: .... Կոկոսե ուղեգործը կարելի է ասել, **կիսաամուր** ձևով ամրացված էր հատակի տախտակներին.... *(Գրաս, էջ 589)*:

ԿԻՍԱԱՊԻՏԱԾ, ան. **Կիսով չափ ապխտած: Կիսաապրիտած** կոկորդիլուսը մեծ պահանջարկ ունի Հայաստանում (Հնգ, news.am):

ԿԻՍԱԱՎԵՐԱԿ, ան. **Կիսով չափ ավերակ**: Ղարաբաղի **կիսաավերակ** եկեղեցիներից մեկում հոգևոր ծես է մատուցվել (Հնգ, news.am):

ԿԻՍԱԱՎՏՈՐԻՏԱՐ, ան. **Կիսով չափ ավտորիտար**: Հայաստանը շարունակում է մնալ **կիսաավտորիտար** կառավարում ունեցող պետություն (Հնգ, news.am):

ԿԻՍԱԲԱՅԱԿԱ, ան. (փխբ.): **Կիսով չափ՝ մասամբ միայն որոշ բաներ տեսնող՝ նկատող**: Մայր արագիլը օրերով քաղցած նստում էր կիսաթափուր բնի մի անկյունում, **կիսաբացակա** հայացքով մի կետի նայում ու հիշում իրենց սիրո երանելի օրերը *(Մ1, էջ 62)*:

ԿԻՍԱԳԱՂՏՆԻ, ան. **Կիսով չափ գաղտնի: Կիսագաղտնի** ռուսական ակումբի մասին տեղեկությունները քիչ են (Հնգ, news.am):

ԿԻՍԱԳԱՆԳՈՒՐ, ան. **Կիսով չափ գանգուր**: Հորաքույրս



գեղեցիկ կին էր ....**կիսազանգուր** ու դարչնագույն մազերով (ԼԴ 2, էջ 10):

ԿԻՍԱԳԵՐՄԱՆԵՐԵՆ, ած.Կիսով չափ գերմաներեն: .... Կալանքի տակ է գտնվել .... **կիսագերմաներեն**, կիսալեհերեն որոտաձայն անարխիստական լոզունգներ գոռալու համար (Գրաս, էջ 24):

ԿԻՍԱԵՐԿԱՐԱՃԻՏՔ, ած.Մասամբ՝ կիսով չափ երկարաճիտք: .... Ոտքերիս մոտ՝ **կիսաերկարաճիտք** կոշիկները (Գրաս, էջ 169):

ԿԻՍԱԵՐԿԻՇԽԱՆԱԿԱՆ, ած. Ոչ ամբողջապես իշխանական: Կունենանք կիսաիշխանական, **կիսաերկիշխանական** Ազգային ժողով (ՀԱՂ, news.am):

ԿԻՍԱԸՆԴԴԻՍՈՒԹՅՈՒՆ, գ. Կիսով չափ ընդդիմություն: **Կիսաընդդիմություն**. որոշ ԲՀԿ-ականներ շարունակում են պաշտոնավարել (ՀԱՂ, news.am):

ԿԻՍԱԹԱՌԱՄԱԾ, ած.Կիսով չափ թառամած: Դիմացիդ ծաղկամանում դրված է **կիսաթառամած**, դեղին գույնի մի ծաղիկ (Մ1, էջ 232):

ԿԻՍԱԹԱՓՈՒՐ, ած.Կիսով չափ՝ մասամբ թափուր: Տե՛ս ԿԻՍԱԲԱՑԱԿԱ-ի օրինակը:

ԿԻՍԱԹԱՔՅՎԱԾ, ած. Կիսով չափ, մասամբ թաքցված: .... Դռան տակի **կիսաթաքցված** նամակի քառանկյունին դեռևս երևում էր միջանցքի հատակին.... (Գրաս, էջ 583):

ԿԻՍԱԹԵԹԵՎԱՆԱԼ, չբ. (փխբ.): Կիսով չափ՝ մասամբ լրջությունը կորցնել՝ անլուրջ, թեթևտլիկ դառնալ: Սակայն ինչու էր **կիսաթեթևացած** .... նրան դիմավորում, եթե նա երկրորդ անգամ էր հայտնվում իր հյուրերին (Գրաս, էջ 603):

ԿԻՍԱԹՈՒԽ, ած. Կիսով չափ թխված, կիսահում: .... Կիսաթուխ տորթ (Գրաս, էջ 567):

ԿԻՍԱԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ, գ. Կիսով չափ՝ մասամբ իմացու-

**թյուն, կիսով չափ իմանալը, ճանաչելը:** .... Օրինակելի ստեղծագործությունները ինձ օժտում էին աշխարհում ամեն ինչի մասին **կիսաիմացությամբ** .... (*Գրաս, էջ 184*):

ԿԻՍԱԻՇԽԱՆԱԿԱՆ, ան. **Ոչ ամբողջապես իշխանական:** Կունենանք **կիսաիշխանական**, կիսաերկիշխանական Ազգային ժողով (*Հւգ, news.am*):

ԿԻՍԱԻՍՊԱՆԱՑԻ, ան. **Կիսով չափ իսպանացի:** .... Մահվան մեջ ճամփան կորցրած **կիսաիսպանացի**, կիսալեռն ասպետը .... իջեցնում էպատվոդրոշով նիզակը .... (*Գրաս, էջ 278*):

ԿԻՍԱԼԵՅ, ան. **Կիսով չափ լեռ:** Տե՛ս ԿԻՍԱԻՍՊԱՆԱՑԻ-ի օրինակը:

ԿԻՍԱԼԵՅԵՐԵՆ, ան. **Կիսով չափ լեռերեն:** Տե՛ս ԿԻՍԱԳԵՐՄԱՆԵՐԵՆ-ի օրինակը:

ԿԻՍԱԼՅՈՒՔՍ, ան. **Հարմարավետությամբ լյուքս համարներին զիջող:** Հայաստանի հյուրանոցներից պակասել է **կիսալյուքս** համարների թիվը (*Հւգ, news.am*):

ԿԻՍԱԽԵՂԴՎԵԼ, չբ. **Կիսով չափ՝ մասամբ խեղդվել:** .... Ինչպես է **կիսախեղդված** կամ գրեթե ճզմված Դյուկերհոֆը .... (*Գրաս, էջ 22*):

ԿԻՍԱԽՄԱԾ, ան. **Կիսով չափ խմած, ոչ լրիվ հարբած, կիսահարբած:** **Կիսախմած** վիճակում շոյելու ես մեկի ներկած այտերը (*Մ1, էջ 320*):

ԿԻՍԱԽՄԵԼ, ան. **Կիսով չափ խմած, կեսը խմելով դատարկած:** .... Ոչ մեկը ոչ մի անգամ չի տեսել, որ նա գիհիի թրմօղու բաժակը **կիսախմել** թողներ (*Գրաս., էջ 33*):

ԿԻՍԱԽՈՂՈՎԱԿ, գ. **Կիսախողովակաձև:** Մեքենան ընկել է ջրահեռացման **կիսախողովակի** մեջ (*Հւգ, news.am*):

ԿԻՍԱԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ, 1.ան. **Ոչ լրիվ՝ մասամբ ծանրաբեռնված, մասամբ զբաղված:** 2. Հրկտ.դ. **կիսածանրաբեռնվել բայի:** Աշխատանքում և տանը **կիսածանրաբեռնված** մարդ ես ....

(Մ1, էջ 59):

ԿԻՍԱԿԱՊԱԿՑՎԱԾ, ած. **Թերի կապակցված**: Այդ ես եմ 82311 բառն իրար կապել, **կիսակապակցված** նախադասություններ ստացել (*ՌՀ, էջ 38*):

ԿԻՍԱԿԱՊՏԵԼ, ած. **Կիսով չափ՝ մասամբ կապտել**: Նրանք կրակի վրա պահեսին **կիսակապտած** ձեռքերը .... (*Գրաս, էջ 12*):

ԿԻՍԱՀԱՍՈՒՆԱՆԱԼ, չբ. **Կիսով չափ՝ ոչ լրիվ հասունանալ, կիսահասուն դառնալ**: .... Ծառի վրայից քեզ աչքով են անում **կիսահասունացած** պինդ .... պտուղները (*Մ1, էջ 81*):

ԿԻՍԱՀԻՄԱՐ, ած. **Կիսով չափ՝ մասամբ հիմար**: Մի կիսազարգացած, կիսազրագետ, **կիսահիմար** ավազակ իրեն հանրապետության նախագահի թեկնածու է առաջադրելու (*Մ1, էջ 463*):

ԿԻՍԱՀՈՐԻԶՈՆՆԱԿԱՆ, ած. **Կիսով չափ՝ մասամբ հորիզոնական**: .... Նման կուշտ ճաշելուց հետո կնոջը բերած օժիտի բազմոցին **կիսահորիզոնական** դիրք ես ընդունելու (*Մ1, էջ 21*):

ԿԻՍԱՄԱՆՐ, ած. **Կիսով չափ մանր**: .... Միանգամյա օգտագործման թաշկինակներ ես թողարկում և ամբողջ քաղաքի **կիսամանր**, մեծ ու կիսամեծ քթերը ծածկում քո արտադրած թաշկինակներով (*Մ1, էջ 205*):

ԿԻՍԱՄԵԾ, ած. **Կիսով չափ մեծ**: Տե՛ս ԿԻՍԱՄԱՆՐ-ի օրինակը:

ԿԻՍԱՇՐՋԱՓԱԿՎԵԼ, բ. **Կիսով չափ շրջափակվել**: .... Մեր երկիրն իր անկախության առաջին օրերից **կիսաշրջափակված** իրավիճակում է (*ՀՀ, 05.06.2019*):

ԿԻՍԱՈՐԲ, գ. **Կիսով չափ որբ, ծնողներից միայն մեկը կենդանի երեխա**: Տե՛ս ԿԻՍԱՆՂԿԱԿԱՆ-ի օրինակը:

ԿԻՍԱՍԱՏԿԱԾ, ած. **Ոչ լրիվ սատկած**: .... Սպառնում էր **կիսասատկած** օձաձկով .... (*Գրաս, էջ 167*):

ԿԻՍԱՎԱԶՔ, ած. **Կիսով չափ վազք**: Փոքրիկիս ձեռքը բռնած՝ **կիսավազքով** հասանք ճոճանակներին(*ԻՍՄ, էջ 175*):

ԿԻՍԱՏԽՈՒՐ, ած. **Կիսով չափ՝ մասամբ տխուր**: Շատ շուտով մի **կիսատխուր** լուր կլսես, կտխրես, բայց չհուսահատվես .... (*Մ1, էջ 18*):

ԿԻՍԱՕԼԻԳԱՐԽԻԿ, ած. **Կիսով չափ օլիգարխային**: Հայաստանի **կիսաօլիգարխիկ** տնտեսությունում գումար ծախսելու տեղ չկա (*ՀՆԳ, news.am*):

ԿԼԱՌՆԵՏԱՀԱՐՈՒՇԻ, գ. **Կին կլառնետահար**: Կատարող երաժիշտներից կուզեի առանձնացնել Լիսաբոնում գործող «Դելլայան» տրիոյին, **կլառնետահարուհի** Էսթեր Ջորջիի ներշնչված կատարումները(*ՀՀ, 12.04.2019*):

ԿԼՈՆԱՑՆԵԼ, բ. (փխբ.): **Անհատականությունից զրկել**: ...Երբեմն ընտանիքը երեխայի մեջ ճնշում է անհատին, մի տեսակ **կլոնացնում է** (*ՆՓ, էջ 118*):

ԿԾԿԾԱՆ, ած. **Կծկծացող, կծկծոց հանող**: **Կծկծան** քաղցրահամ մաճառ ես խմել(*Մ2, էջ 389*):

ԿԾՎԱԽԱՌՆ, ած. **Կծվությամբ համեմված, շաղախված, խառնված**: Ջրիմուռներն իրենց հոտով **կծվախառն**, որ.... (*ԻՄ, էջ 43*):

ԿՆԱՏԱՐԱԶ, ած. **Կնոջ հագուստ կրող**:...Պարզապես որպես զավեշտ է հնչում հեղինակի մարգարեացումը, ինչպես ինքն է իր այդ խոսքը բնորոշում. «Օ, **կնատարազ** այրերի ռիսից վախեցեք կյանքում» (*ՁԻ, էջ 235*):

ԿՆՃՌԱԽՈՂ, ած. (բնատ., փխբ.): **Խոհերից կնճռտված**: Իր **կնճռախոհ**, սեպագրված բնից// Վեր է խուժել խնձորենիս.... (*ԼԳ 1, էջ 37*):

ԿՈԴԱԶԵՐԾԵԼ, բ. (փխբ.): **Ծածկագիրը, էությունը գաղտնազերծել**: .... Մի ամբողջ կյանք պահանջվեց **կողազերծելու** համար այն, ինչ իրականում կա մեր հիշողության մեջ (*ՌԲ, էջ 189*):

ԿՈԿՈՍԵ, ան. **Կոկոսյան արմավենուց պատրաստված:**  
Տե՛ս ԿԻՍԱԱՄՈՒՐ-ի օրինակը:

ԿՈԿՈՐԴԱԾԻԾԱՂ, գ. **Կոկորդային ծիծաղ, ծիծաղ կոկորդում:** Քո բարեկամը երեսիդ է նայում ու **կոկորդածիծաղ** տալիս (*Մ2, էջ 228*):

ԿՈԿՈՐԴԻԼՈՍԱԲՈՒԾԱՐԱՆ, գ. **Կոկորդիլոս բուժելու վայր:** Տանգանական **կոկորդիլոսաբուժարան** Արարատի մարզում (*Հնգ, news.am*):

ԿՈՂԱՑՈՒՅՑ, գ. **Դեպի կողքը գնալու պայմանական սլաքաձև նշան:** Օսկարը նստել էր ձախ **կողացույցի** անկյունային գոհասեղանի դիմաց (*Գրաս, էջ 151*):

ԿՈՄԻՏԱՍԱԳԵՏ, գ. **Կոմիտասի կյանքի և ստեղծագործության ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետ:** Կոմիտասյան արխիվը, որը մեծ մասամբ գտնվել է Փարիզում և երևելի **կոմիտասագետ** Ռոբերտ Աթոյանի ջանքերով բերվել է Երևան, նշանակալի նյութերով համալրվել է 1955թ. և այսօր՝ Կոմիտասի թանգարան-ինստիտուտի ջանքերով (*ՀՀ, 11.04.2019*):

ԿՈՄԻՏԱՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Կոմիտասի կյանքը և ստեղծագործությունը հետազոտող գիտաճյուղ:** Խորհրդային տարիներին **կոմիտասագիտություն** ուներ եվրոպական արխիվային նյութերի օգտագործման բացը .... (*ՀՀ, 11.04.2019*):

ԿՈՆՏՐԱԲԱՍԱՀԱՐ, գ. **Կոնտրաբաս նվագող երաժիշտ:** .... Սակայն պիտանի **կոնտրաբասահար** գտնելը նույնիսկ դեռ այն ժամանակ չափից դուրս դժվար էր .... (*Գրաս, էջ 577*):

ԿՈՆՔԱԹԵԼ, գ. **Հագուստի կոնքամասի կապերը:** –Սրանք չհագա, **կոնքաթելերին** նայիր, աստիճանաբար լայնացնելու համար էր.... (*Լիս, էջ 143*):

ԿՈՊՏԱՄԱՇԿ, ան. **Կոպիտ մաշկ ունեցող՝ մաշկով:** .... Ինչոր մեկը լպստում էր իմ դեմքը. ջերմ, **կոպտամաշկ**, հավասարաչափ խոնավ (*Գրաս, էջ 669*):

ԿՈՏՐՈՒՄ, գ. **Կոտրելը՝ ջարդելը**: .... Ավլածը լցրեց թերթի վրա, որն արդեն կիսով չափ լցված էր գավաթների բեկորներով, այնպես որ հերթական ցասման բռնկման հետ կապված հաջորդ **կոտրումի** համար ուղղակի տեղ չէր մնում (*Գրաս, էջ 552*):

ԿՐԱԿԱԿՈՇՈՒԹՅՈՒՆ, գ. **Գնդակոծություն, կրակելով կոծելը՝ հարվածելը**: Երկու դիպուկ **կրակակոծություն** (*Գրաս, էջ 265*):

ԿՐԾՔԱԲԱՆ, գ. **Կրծքի հիվանդությունների մասնագետ-բժիշկ**: Եթե [կուրծքը] արտակարգ է մեծացել ....., հարկավոր է **կրծքաբանի** դիմել (*Մ2, էջ 257*):

ԿՐԿՆԱՊԻՏԱԿ, գ. **Կրկնակի պիտակ**: .... Իրացման ցանցերում հայտնվել է «Իգիթ» ՍՊԸ-ի կողմից արտադրված **կրկնապիտակով** կարագ, որի բնօրինակ պիտակի վրա փակցված է սերուցքաբուսային յուղածո մակնշումը (*ՀՀ, 09.04.2019*):

ԿՐՔԱԽՆԵՆԵՐ, ած., մկբ. (բնատ.): **Խինդ ու կիրք հարուցելով: Կրքախինդ** առինքնեց ու տարավ // Մեր մաշված կարտոփ տեղերով (*ԽՄ1, էջ 47*):

ԿՅԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Կցաշենք**: Կողային **կցաշինության** ձախ կողմի գոհասեղանի մոտ .... (*Գրաս, էջ 150*):

ԿՅՈՐԴԱՅՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Կցորդային լինելը**: Այդ **կցորդայնությունն** է, որ կանխարգելում է Հայաստանում գործնական բարեփոխումներ իրականացնել (*Հւց*):

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆԱՄԵՏ, ած. **Կուսակցական կողմնորոշում ունեցող**: Դպրոցներում **կուսակցականամետ** վարքի դրսևորումները պատժվելու են (*Հւց, news.am*):

ԿՈՒՐՍԸՆԿԵՐՈՒՄ, գ. **Միասին սովորող**: գ. Ես ... երջանիկ էի, գուցե անսահման: Նույն օրը երեքով գնացինք Կեչառիս, ապա՝ ... իր **կուրսընկերուհու**՝ Հասմիկենց տուն (*ԳԼ, էջ 33*):

ՀԱԶԱՐԱԿՈՒՆՔ, ած. **Հազար ակունքից բխող**: Ու մերն է նաև քո **հազարակունք** ջուրն էլ, ջինջ օդն էլ (*ԺՂ, էջ 172*):

ՀԱԶԱՐԱՊԱՏԻՎ, ած. **Շատ պատվավոր, արժանի**: Ամեն օրվա մեջ կա նաև անցյալ՝ **հազարապատիվ** դարերի հեքով (*ԳՄ, Է, էջ 16*):

ՀԱԼԵՊԱՀԱՅ, գ. **Հալեպում բնակվող հայ**: Հատուկենտ **հալեպահայեր** են Հայաստան տեղափոխվելու ցանկություն հայտնել (*ՀՄ, news.am*):

ՀԱԼԵՊԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Հալեպում բնակվող հայություն**: Արամ Ա-ն կոչ է անում զգույշ լինել **հալեպահայության** մասին կարծիքներ հայտնելիս (*ՀՄ, news.am*):

ՀԱԽՃԱՂՅՈՒՄԵ, ած. **Հախճաղյուսով՝ հախճասալով պատրաստված՝ շինված**: **Հախճաղյուսե** վառարանի մոտ դրված էր մանկական աթոռակ (*Գրաս, էջ 167*):

ՀԱԽՃԱՍԱԼԻԿԵ, ած. **Հախճասալիկով երեսապատված**: ...**Հախճասալիկե** վառարանի տաք շնչառության ներքո .... մենք բոլորս երգեցինք (*Գրաս, էջ 289*):

ՀԱԽՈՒՌՆՈՐԵՆ, մկբ. **Հախուռն կերպով**: ....Ուզում էին միավորվել, որ հեշտանքով, **հախուռնորեն** հետո կիսվեն երկու մասի... (*ԻՄ, էջ 20*):

ՀԱԿԱԱԿՑԻԱ, գ. **Տվյալ միջոցառմանը հակառակ ակցիա**: Թբիլիսիում **հակաակցիայի** մասնակիցները ձեռքել են ոստիկանական ջոկատաշղթան (*ՀՄ, news.am*):

ՀԱԿԱԱՄԵՐԻԿՅԱՆ, ած. **Ամերիկային հակառակ**: **Հակաամերիկյան** համագործակցություն՝ Հայաստանի դեմ (*ՀՄ, news.am*):

ՀԱԿԱՅՐՈՒՔԱՅԻՆ, ած. **Այրվելուց պաշտպանող**: **Հակաայրուքային** ծածկույթով սպասքը կարող է առաջացնել քաղցկեղի զարգացում (*ՀՄ, news.am*):

ՀԱԿԱԱՐԲԱՆՅԱԿԱՅԻՆ, ան. **Արբանյակներին դեմ:** Հնդկաստանում **հակաարբանյակային** հրթիռ են փորձարկել (*ՀՄԳ, news.am*):

ՀԱԿԱԱՐԵՎՄՏՅԱՆ, ան. **Արևմուտքին հակադրվող:** Ավստրալիան իր քաղաքացիներին նախազուշացրել է Ռուսաստանում **հակաարևմտյան** տրամադրությունների մասին (*ՀՄԳ, news.am*):

ՀԱԿԱԲՈՐԲՈՔԻՉ, ան. **Բորբոքման դեմ օգտագործվող:** .... Այս խոտարույսի վերգետնյա մասը օգտագործվում է որպես հանգստացնող, **հակաբորբոքիչ** և քնաբեր դեղամիջոց (*ՄՅ, էջ 479*):

ՀԱԿԱԳԱՂՈՒԹԱՏԻՐԱԿԱՆ, ան. **Հակազաղութակալական, հակազաղութային:** Աֆրիկայում ընթանում էր **հակազաղութատիրական** պայքար (*ՀՄԳ*):

ՀԱԿԱԳԼՈՐԱԼԻՍ, գ. **Գլոբալիզմի հակառակորդ:** Լավրովը Թրամփին և Լը Պենին **հակազոբալիստներ** է անվանել (*ՀՄԳ, news.am*):

ՀԱԿԱԳՈՒՐՉԱՁԵՎ, ան. **Գուրզի ձևի հակառակ ձև ունեցող՝ հաստ գլխիկը հիմքի մոտ և ոչ թե ծայրին:** .... Միբեխի պտուղները **հակազուրգաձև** են, փոքր-ինչ կորացած ու երկարավուն (*ՄՅ, էջ 161*):

ՀԱԿԱԳՐԱԿԱՆ, ան. Այստեղ՝ **գրականությանը, արվեստին խորթ:**.... Այստեղ բառն ասես մտածում է ու զգացմունքներ ապրում, **ամենահակագրական** բառերն էլ հնչում են իբրև գրականություն.... (*ՆԱ, էջ 14*):

ՀԱԿԱԳՐՔԱՅԻՆ, ան. **Գրքայինին հակառոդ:** Նախագահը քաղաքական վերնախավի **հակագրքային** մոտեցման մասին (*ՀՄԳ, news.am*):

ՀԱԿԱԵՎՐՈՊԱԿԱՆ, ան. **Եվրոպային հակադրվող:** Թուրքիայի քաղաքականությունը **հակաեվրոպական** բնույթ է կրում (*ՀՄԳ, news.am*):



ՀԱԿԱԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ, ան. **Գոյապահպանությանը, բնապահպանությանը հակադրվող:** Պահանջում են չֆինանսավորել Թեղուտի **հակաէկոլոգիական** և անօրինական ծրագիրը (*Հւց, news.am*):

ՀԱԿԱԹԱՅՖՈՒՆԱՅԻՆ, ան. **Թայֆունից պաշտպանող:** Ճապոնիայում հայտնագործել են **հակաթայֆունային** հովանոց (*Հւց, news.am*):

ՀԱԿԱԹՄՐԱՆՅՈՒԹԱՅԻՆ, ան. **Ընդդեմ թմրամիջոցների:** Թբիլիսիում գիշերային ակումբներում **հակաթմրանյութային** գործողության պատճառով բողոքի ցույցի տասնյակ մասնակիցների են ձերբակալել (*Հւց, news.am*):

ՀԱԿԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ, ան. **Ժողովրդագրական կացությանը վնաս պատճառող:** Հղիների նպաստների նվազեցումը հակասոցիալական է և **հակաժողովրդագրական** (*Հւց, news.am*):

ՀԱԿԱԻՇԽԱՆԱԿԱՆ, ան. **Իշխանության դեմ գործող:** Հակաիշխանական բևեռ է ձևավորվում (*Հւց, news.am*):

ՀԱԿԱԻՍԼԱՄԱԿԱՆ, ան. **Իսլամի դեմ ուղղված:** Պակիստանում կանանց երթն անվանել են անամոթ և **հակաիսլամական** ակտ (*Հւց, news.am*):

ՀԱԿԱԻՐԱՆԱԿԱՆ, ան. **Իրանի դեմ ուղղված:** Կատարը համաձայն չէ **հակաիրանական** հայտարարություններին (*Հւց, news.am*):

ՀԱԿԱԼՆԴԱԽՏԱՅԻՆ, ան. **Լնդախտի բուժման համար օգտագործվող:** ... Չիչխանի պտուղները օգտագործվում են որպես **հակալնդախտային**... ամոքող միջոց(*ՄՅ, էջ 38*):

ՀԱԿԱԾԽԱԽՈՏԱՅԻՆ, ան. **Միսախտի դեմ ուղղված:** Նոր **հակաժխախտային** օրենքը հանդիպում է դիմադրության որոշ պաշտոնյաների կողմից (*Հւց, news.am*):

ՀԱԿԱՀԵՂԱՇՐՋՈՒՄ, գ. **Հեղաշրջման դեմ ուղղված գործողություն:** Սուդանի ընդդիմության առաջնորդը նշել է երկրում

**հակահեղաշրջման** հնարավորության մասին (*ՀՄԳ, news.am*):

ՀԱԿԱՃԱՊՈՆԱԿԱՆ, ան. **Ճապոնիայի դեմ ուղղված:** Պեկինում **հակաճապոնական** ցույցի մասնակիցները հարձակվել են ԱՄՆ-ի դեսպանի մեքենայի վրա (*ՀՄԳ, news.am*):

ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ, ան. **Ճգնաժամի դեմ ուղղված:** Առաջարկվել է ԵՏՄ շրջանակում **հակաճգնաժամային** խորհուրդ ստեղծել (*ՀՄԳ, news.am*):

ՀԱԿԱՉԻՆԱԿԱՆ, ան. **Չինաստանի դեմ ուղղված:** Վիետնամն ու Ֆիլիպինները բանակցություններ են վարում **հակաչինական** դաշինքի շուրջ (*ՀՄԳ, news.am*):

ՀԱԿԱՊԱՏԺԱՄԻՉՈՑ, գ. **Պատժամիջոցների դեմ ուղղված ձեռնարկում:** ՌԴ Պետդուման կքննարկի ԱՄՆ-ի դեմ **հակապատժամիջոցների** մասին օրինագիծը (*ՀՄԳ, news.am*):

ՀԱԿԱՊԱՏԺԱՄԻՉՈՑԱՅԻՆ, ան. (փխբ.): **Պատժամիջոցին հակադրվող:** Պուտինը **հակապատժամիջոցային** ապրանքների ոչնչացման մասին հրաման է ստորագրել (*ՀՄԳ, news.am*):

ՀԱԿԱՊԱՏՎԱՍՏՈՒՄԱՅԻՆ, ան. **Պատվաստումներին հակադրվող:** **Հակապատվաստումային** շարժումը կարող է հարվածի տակ դնել Հայաստանում պատվաստման բոլոր ձեռքբերումները (*ՀՄԳ, news.am*):

ՀԱԿԱՍՈՒՎԵՐԵՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Ինքնիշխանությանը հակառակ լինելը:** Օդանավակայանում օտար սահմանապահի ներկայությունը **հակասուվերենության** խորհրդանիշ է... (*ՀՄԳ*):

ՀԱԿԱՎԱՐԿԱՆԻՇ, գ. **Վարկանիշի նվազում, պակասում:** Քլինթոնի **հակավարկանիշն** ավելի է բարձրացել, քան Թրամփինը (*ՀՄԳ, news.am*):

ՀԱԿԱՎԻՐՈՒՄԱՅԻՆ, ան. **Վիրուսի դեմ գործող:** McAfee **հակավիրուսային** ծրագրի հեղինակը հետախուզվում է սպանության գործով (*ՀՄԳ, news.am*):

ՀԱԿԱՍԱՐԻՔԱՅԻՆ, ան. **Ծերացման դեմ ուղղված:** Նոր **հա-**

**կատարիքային** թերապիան կրթական կրթական պրոգրամայի ախտանշանները (*ՀՆԳ, news.am*):

ՀԱԿԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ, ան. **Անարդյունավետ**: Իսրայելը կարող է Ուկրաինային զենք վաճառել, բայց դա **հակարդյունավետ** է (*ՀՆԳ, news.am*):

ՀԱԿԱՐԵՎՄՏՅԱՆ, ան.**Արևմուտքի դեմ գործող**: Նեմցովի սպանությունը երևան հանեց **հակարևմտյան** տրամադրությունները (*ՀՆԳ, news.am*):

ՀԱԿԱՅԵԼՅՈՒԼԻՏՍՅՈՒՆ, ան. **Ցեյուլիտի զարգացման դեմ գործող**: **Հակացեյուլիտային** սննդակարգ (*ՀՆԳ, news.am*):

ՀԱԿԱՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ, ան. **Ուկրաինայի դեմ ուղղված**: «Թուրքական հոսքը» ժամանակին **հակաուկրաինական** նախաձեռնություն էր (*ՀՆԳ, news.am*):

ՀԱԿԱՔԱՐՈԶ, գ.**Ընդունված կամ տարածված քարոզչության դեմ տարվող քարոզ**: Ուղղորդված **հակաքարոզից** մինչև ինքնագործունեություն. ապօրինի պաստառապատման փաստը մեկնաբանում են ուժերը (*ՀՆԳ, news.am*):

ՀԱԿԱՖԱՆԱՏ, գ. **Ֆանատների՝ երկրպագուների հակառակորդ, հակաերկրպագու**: Ռոնալդուի ֆանատներն ու **հակաֆանատները** վիճաբանեցին Զվարթնոցում (*ՀՆԳ, news.am*):

ՀԱԿԱՖՈՒՏԲՈՒԼ, գ. Այստեղ՝ **անհաջող ֆուտբոլ**: Ռուսների **հակաֆուտբոլն** ավելի հաջողված էր, քան Իսպանիայի ֆուտբոլը (*ՀՆԳ, news.am*):

ՀԱՃԸՆՅԻՆԱԿԱՆ, ան. (դիպվ.): **Հաճընցիներին հատուկ**: .... Նման միջոցառումների նպատակը .... հաճընցի նախնիների կտակը՝ **հաճընցիական** ոգին սերունդներին փոխանցելը և նրանց միջոցով Հաճըն անունն ապրեցնելը [է]՝ մինչև վերջնական հաղթանակ .... (*ՀՀ, 27.04.2019*):

ՀԱՄԱԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ, ան. **Ընդհանուր աշխատանքային**: Երևանում նոր **համաաշխատանքային** տարածք է գործում

(*Հւգ, news.am*):

ՀԱՄԱԱՐԻԱԿԱՆ, ան. **Ընդհանուր արիական:** Սկսվել են **համաարիական** նավասարդյան խաղերը (*Հւգ, news.am*):

ՀԱՄԱԲՈՒՀԱԿԱՆ, ան. **Բոլոր բուհերին վերաբերող:** Արցախում մեկնարկում է առաջին **համաբուհական** բանակումը (*Հւգ, news.am*):

ՀԱՄԱԲՈՒՐԱՎԵՏԻՉ, ան. **Համ և բույր տվող:** Խոսքը ... շաբաթ կամ այլ քաղցրացնող կամ **համաբուրավետիչ** նյութեր պարունակող հանքային և ոչ ոգելից խմիչքների մասին է(*ՀՀ, 15.06.2019*):

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ, ան. **Համագործակցական:** Ուսուցման **համագործակցային** մեթոդը, այս առումով, ներառման սիրտն է հանդիսանում (*Կրթ., 36*):

ՀԱՄԱԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ, ան.**Ընդհանուր դերասանական:** Առհասարակ, եղած **համադերասանական** կերպարի լավագույն դերակատարին ընտրելու դիտանկյունից վարձահրավիրման մոտեցումը շահեկան է(*Իր., 29.03.2019*):

ՀԱՄԱԵՐԵՎԱՆՅԱՆ, ան. **Ամբողջ Երևանին՝ Երևանի բնակչությանը վերաբերող:** Վարչապետը շաբաթ օրը **համաերևանյան** երթ է անցկացնելու (*Հւգ, news.am*):

ՀԱՄԱԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ, ան. **Ամբողջ Իսրայելին վերաբերող:** Ուսանողների **համաիսրայելական** ընկերակցությունը մարդասիրական բեռներ կուղարկի Թուրքիա (*Հւգ, news.am*):

ՀԱՄԱԾԱՌԱՅՈՂ, գ. **Միասին ծառայող, ծառայակից:** Զին-ծառայողի ինքնասպանության գործով մեղադրանք է առաջադրվել **համածառայողին** (*Հւգ, news.am*):

ՀԱՄԱԾԻՐ, գ. **Ոլորտ, ասպարեզ, շրջանակ:** Համացանցային զարգացումների **համաձիրում** ոչ միայն երկիրը, այլև ողջ աշխարհն է փոքրացել՝ դրանում եղած ամեն ինչի արագությունը կրկնապատկելով(*Իր., 29.03.2019*):

ՀԱՄԱԿԻՐԱՌԵԼԻ, ան. **Բոլորի համար կամ բոլոր դեպքերում կիրառելի**: Իսկ գուցե **համակիրառելի** է մեկ այլ սահմանում (*ՁԽ, էջ 167*):

ՀԱՄԱՀԵՂԻՆԱԿԵԼ, բ. **Միասին ստեղծագործել**: Բանաստեղծության կարևորագույն նպատակներից մեկը ընթերցողի հետ մտազգայական պահը **համահեղինակելն** է (*ԳԹ, 06.09.2019*):

ՀԱՄԱՀՅՈՒՄՎԱԾՔ, գ. **Խառնուրդ**: Տաքատով և ճերմակ բլուզով էր ու նման էր փխրուն տղեկի, ընձուղտի և արագիլի տարօրինակ մի **համահյուսվածքի** (*ՄԿ, էջ 244*):

ՀԱՄԱՅՆՔԱՀԵՆՔ, ան. **Համայնքի վրա հիմնված**: Այն կազմակերպվում է «**Համայնքահենք** էկոտուրիզմը որպես կայուն ապրուստի միջոց Թումանյանի տարածաշրջանում» ծրագրի շրջանակներում (*ՀՀ, 30.07.2019*):

ՀԱՄԱՌԻԿՐԱԻՆԱԿԱՆ, ան. **Ամբողջ Ուկրաինային վերաբերող**: Կիևում **համաուկրաինական** վեչե է պլանավորվում (*Հնց, news.am*):

ՀԱՄԱՌԻՂՂԱՓԱՌ, ան. **Ուղղափառ դավանանքն ընդգրկող, ուղղափառ բոլոր եկեղեցիներին վերաբերող**: Կոստանդնուպոլսի պատրիարքը ուղղափառ եկեղեցիներին կոչ է արել մասնակցել **համաուղղափառ** ժողովին (*Հնց, news.am*):

ՀԱՄԱՔԱՂԱՔԱՊԵՏ, գ. **Քաղաքապետի պաշտոնը վարողներից յուրաքանչյուրը**: Թուրքիայում կալանավորվել են Մանազկերտի քուրդ **համաքաղաքապետերը** (*Հնց, news.am*):

ՀԱՄԱՖՂԱՆԱԿԱՆ, ան. **Աֆղանական պետությանը կամ աֆղան ժողովրդին ամբողջությամբ վերաբերող**: Ավագանու **համաֆղանական** խորհուրդը կոչ է արել անհապաղ դադարեցնել կրակը (*Հնց, news.am*):

ՀԱՄՇԵՆԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Համշենում բնակվող հայություն**: Հայկազուն Ալվրցյանի «**Համշենը և համշենահայությունը**. արդի հիմնախնդիրները» գրքի վերաբերյալ (*Հնց, news.am*):

ՀԱՅԱԶԳԿԵԼ, ք. **Հայերից զրկել՝ եղեռնի ենթարկել, արսուրել:** Երագդ հուշում է, որ անօրենները **հայազրկելու** են Գողթան գավառը ... (Մ1, էջ 401):

ՀԱՅԿԱՎՍԵՄ, ան. (բնատ.): **Հայկյան՝ հայկական վեհություն ունեցող:** Նայում եմ ես այսօր որպես // **Հայկավսեմ** Արարատ սար... (ԼԴ 1, էջ 41):

ՀԱՅՏԱԿԵՐՊՈՒՄ, գ. Այստեղ՝ **բացահայտում:** Դավոյանի այս շարքը ...ինքնատիպ բանաստեղծական հղացում է,... մեր ժամանակակցի հոգեկան որոնումների **անկեղծ հայտակերպում** (ԱԱ, էջ 9)

ՀԱՅՐԵՆԱՏԵՐԵՎ, ան.**Հայրենիքում աճող, հայրենիքին պատկանող:** .... Կենտ փետրաձև տերևներով այս գեղեցկուհի ծառը **հայրենատերև** թխկի է(Մ1, էջ 414):

ՀԱՅՕՁԱԽ, գ. **Հայկական գաղթօջախ:** .... Առաջիկայում լույս են տեսնելու նաև Հորդանանի ու Իրաքի **հայօջախներին** նվիրված գիտաժողովների նյութերը(ՊԲՀ, 2, 2018, էջ 314):

ՀԱՆԳՉԵԼԱՏԵՂ, գ. **Թաղման տեղ, հանգստարան:** Թաղման ծխակարգի կարևոր բնութագրիչներից է աճյունի **հանգչելատեղը**(ՊԲՀ, 3, 2017, էջ 166):

ՀԱՆԳՍՍԱՎԱՅՐԱՅԻՆ, ան. **Հանգստավայրերին բնորոշ:** Հունաստանը ցանկանում է նախկին օդանավակայանը վերափոխել **հանգստավայրային** համալիրի (Հւց, news.am):

ՀԱՆԳՈՒՑԱԲԱՅՎԵԼ, չբ.**Հանգույցները բացվել, հետ տալով դրանցից ազատվել:** .... Փաթաթում էին հանգույցի մեջ .... իրենք իրենց **հանգուցաբացվում** .... (Գրաս, էջ 370):

ՀԱՆՃԱՐԱԳՈՐԾ, ան. **Հանճարեղ:** Թող խոհերը **հանճարագործ** խորհեն խորհուրդների մասին տեսիլների (ԿԱ, էջ 64):

ՀԱՍՏԱՊՈՉ, ան.**Հաստ պոչ ունեցող՝ պոչով, պոչը հաստ:** ... **Հաստապոչ** սև կարիճը պոչի վրա ցցված կանգնել ու անթարթ աչքերով քեզ է նայել ....(Մ2, էջ 191):

ՀԱՎԱՍՏԱՐԱՔԱՅԼ, մկբ. **Հավասար քայլերով**: Մորիկը, գյուղացիների առաջն ընկած, քշվելու նման, դարձողարձիկ պոչը բարձր պահած, **հավասարաքայլ** վագում էր (*ԼԽ, էջ 95*):

ՀԱՎԿԻԹԱՁԵՎ, ած. **Հավկիթի ձև ունեցող, հավկիթանման: Հավկիթաձև** տիգն ականջդ էր մտել (*Մ 3, էջ 308*):

ՀԱՏՈՒԿՁՈԿԱՏԱՅԻՆ, գ. **Հատուկ նշանակության ջոկատի անդամ**: Բիշքեկում **հատուկջոկատայինները** սկսել են ցրել ցուցարարներին (*Հնգ, news.am*):

ՀԱՐԱԺԱՅԹՔՈՂ, ած. **Մշտական ժայթքումներ ունեցող**: Խորհրդավոր է խոկումի ակնթարթը ... խառնարաններից անկումի ու մենության **հարածայթքող** (*ԿԱ, էջ 64*):

ՀԱՐԱՀԱՎԵՐԺ, ած. **Հավիտենական, մշտնջենական**: Տիեզերքի նման, որն ամենուր է, **հարահավերժ**, նաև անհատնում (*ՄԳ, էջ 113*):

ՀԱՐԱՄՈԼՈՐ, ած. (բնատ.): **Միշտ մոլորվող**: Երբ կլինեմ արդեն անուժ, հողի գրկում **հարամոլոր** .... (*ՄԳ, էջ 52*):

ՀԱՐԹԱԲՈՒՆ, ած. **Հարթ՝ ողորկ բուն ունեցող**: Լճափին աճեցրել ես **հարթաբուն** և հաստաբուն բոխիներ (*Մ1, էջ 126*):

ՀԱՐԹԱԿՐՈՒՆԿ, ած. **Հարթ կրունկներ ունեցող**: Դանիելը նկատեց, որ քառասուններեք համարից ավելի խոշոր, կապույտ գույնի **հարթակրունկ** կոշիկներ են հագել (*ԼԽ, էջ 49*):

ՀԱՐԿԱԽԵՂԴ ԱՆԵԼ, բ. **Շատ հարկեր սահմանել**: .... Կառավարությունը **հարկախեղդ է անում** բնակչությանը.... (*ՌԲ, էջ 78*):

ՀԱՐՃԱԾԻՆ, ած. **Հարճերից սերված**: Թփուտների տակ՝ **հարճածին** ցեղեր (*ԽՄ1, էջ 35*):

ՀԱՐՍՆԱԲՈՒՅՐ, ած. (բնատ.): **Հարսնության խորհուրդը նշող**: .... **Հարսնաբույր** մի ճերմակ ժապավեն // Խունացած մեր մարմինն է փակում (*ԽՄ1, էջ 44*):

ՀԱՐՑԱԶՆՆՈՒՄ, գ. **Հարցերով զննում՝ զննելը**: Նրա վրա կատարում են զուգորդական .... և այլ **հարցազննումներ** .... (Գրաս, էջ 70):

ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐ, գ. **Հարցազրույց վարողը, հարցազրուցորդ: Հարցազրուցավարի** հարցին նա հակադարձեց և տվեց սպառիչ պատասխան (*ՀՄԳ*):

ՀԵԾԱՆԻՎԱՇՔԵՐԹ, գ. (Ճիշտ է՝ հեծանվաշքերթ): **Շքերթ հեծանիվներով**: Մասիսում անցկացվեց «Tour de Masis» երրորդ **հեծանիվաշքերթը** (*ՀՀ, 30.07.2019*):

ՀԵՆԱՆԻՇ, գ. **Հիմք, հենակետ, հենակայան**: Հստակ պատկերացում ունեմ գիտության զարգացման խնդիրների, հեռանկարների, զարգացման **հենանիշերի** մասին (*ՀՄԳ*):

ՀԵՌԱԲԺՇԿԱԿԱՆ, ած. **Հեռաբժշկությանը վերաբերող**: Ռուսաստանի ԱՆ-ն մշակել է **հեռաբժշկական** օգնությունն ցուցաբերելու կարգը (*ՀՄԳ, news.am*):

ՀԵՌԱԿՈՐՈՒՍՏ, մկբ. (բնստ.): **Հեռուներում կորցրած**: .... Ջահելության հուրս **հեռակորուստ** ցրած // Աստղաշողի հույսին տաքանում եմ քիչ-քիչ (*ԼԴ 1, էջ 17*):

ՀԵՌԱՂՈՂԱՆՁ, ած. (բնստ.): **Հեռվում (հեռվից) դողանջող**: .... Շողք-շողք հառնում է, ծաղկատառ հառնում // Մի **հեռադողանջ** դպրության աշխարհ (*ԼԴ 1, էջ 40*):

ՀԵՌԱՓԱԽՈՒՍՏ, ած. (բնստ.): **Հեռու փախչող**: Ընկավ ցած ու խառնվեց **հեռափախուստ** ջրերին (*ՄԳ, էջ 81*):

ՀԵՌՈՒՍՏԱՍՃՂԱՐԱՐ, գ. **Հեռուստատեսային աճպարար**: Կարո՞ղ եք ավելի բարձր բղավել, քան **հեռուստաաճպարարը** և հեռուստասենյակի «ընտանիքի» անդամները (*ՌԲ, էջ 110*):

ՀԵՌՈՒՍՏԱԴԱՍՏԺԱՄ, գ. **Հեռուստատեսությամբ հեռարձակվող դասաժամ**: Մեկ **հեռուստադասաժամ**, բասկետբոլի ....., պատմության դասաժամ, հետո էլի մարզական դասաժամեր (*ՌԲ, էջ 39*):



ՀԵՌՈՒՍՏԱՊՍ, գ. (դիպվ.): **Հեռուստաէկրան:** Էլ ավելի հետաքրքիր կլինի, եթե մենք կարողանանք չորրորդ **հեռուստապատն** էլ տեղադրել (*ՌԲ, էջ 28*):

ՀԵՌՈՒՍՏԱՍԵՆՅԱԿ, գ. **Մենյակ, որտեղ հեռուստացույց կա:** Կինը, որ **հեռուստասենյակում** էր, ընդհատեց սցենարի իր հատվածի ընթերցումը.... (*ՌԲ, էջ 26*):

ՀԵՏԱԽՈՒԶԱՆԱՎ, գ. **Հետախուզական նավ: Հետախուզական** ռազմանավեր (*Գրաս, էջ 212*):

ՀԵՏԱՊՍՏԱՄԲԱԿԱՆ, ան. **Ապստամբությանը հաջորդող:** Սակայն **հետապստամբական** արձագանքներին արդեն ՀՀԳ-ն անդրադարձել է շատ ավելի հանգամանորեն (*ՊԲՀ, 2, 2018, էջ 49*):

ՀԵՏԳԱՆՁՈՒՄ, գ. **Հետ գանձելը, վերադարձնելը:** Պետք էր թալանած փողերի **հետգանձման** պրոցեսը ձախողել (*Հմց*):

ՀԵՏՆԱՊՍԿԵՐ, գ. **Հենթային՝ հետին պլանի պատկեր (ֆոն):** Հայ աղջկա և թուրք սպայի սիրո պատմություն է, որը ծավալվում է բնակության վայրերից հայերի արտահանման **հետնապատկերին** (*ՄՄ, էջ 258*):

ՀԵՔԻԱԹԱԳԻՏԱԿԱՆ, ան. **Հեքիաթագիտությանը վերաբերող, հեքիաթաբանական:** Հորեյանական տարվա սպասված միջոցառումներից է նաև աշնանը կայանալիք միջազգային **հեքիաթագիտական** գիտաժողովը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո (*ՀՀ, 08.06.2019*):

ՀԵՔԻԱԹԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Հեքիաթը ուսումնասիրող գիտություն, հեքիաթաբանություն:** Հեքիաթները վերլուծության են ենթարկվել **հեքիաթագիտության** տարբեր ուղղությունների ու մոտեցումների համադրմամբ .... (*ՊԲՀ, 2, 2018, էջ 242*):

ՀԵՔԻԱԹԱՆՅՈՒԹ, գ. **Հեքիաթների նյութ:** Դրանք, ի դեպ, Թ. Հայրապետյանի կողմից ամենայն մանրամասնությամբ քննության են ենթարկվել միջազգային **հեքիաթանյութի** ուսումնասիրության շրջանակներում (*ՊԲՀ, 2, 2018, էջ 243*):

ՀԻԴՐՈՎԱՍԿԱԴ, գ. **Հիդրոկայանների շարք, շղթա:** Սևան-  
Հրազդան **հիդրոկասկադի** բաժնետերերը անհիմն հարստացել են  
Սևանից շատ ջուր բաց թողնելու արդյունքում (*ՀՆԳ*):

ՀԻՄՆԱՊԱՀ, գ. Այստեղ՝ **հիմնական պահ:** Տե՛ս ԳԻՇԵՐԱ-  
ՊԱՏՈՒՄ-ի օրինակը:

ՀԻՄՆԱՍԿԻԶԲ, գ. **Ստեղծման, արարման սկիզբ:** ....Հին  
Աստվածաշնչում Հայաստանը ներկայացված էր որպես աշխար-  
հի մարդկության **հիմնասկիզբ** (*ՀՆԳ*):

ՀԻՆԳԲԼԹԱԿԱՆԻ, ած.**Հինգ բլթակ ունեցող՝ բլթակավոր:**  
Ես ժամերով նայում եմ ...**հինգբլթականի** տերևներին(*Մ1, էջ  
413*):

ՀԻՆԳՄԱՏՆԱՆՈՑ, ած.**Հինգմատնանի, հինգմատնյա, հինգ  
մատ ունեցող՝ մատներով:** .... Այն ժամանակ բացեց **հինգմատ-  
նանոց** պատյանը .... (*Գրաս, էջ 280*):

ՀԻՊԵՐԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ, գ. **Գերկենսագոր-  
ծունեություն:** .... Ըստ բժշկի խոսքերի, իրենց .... **Հիպերկենսա-  
գործունեությամբ** փոփոխակի վատթարացնում էին իմ ինքնա-  
զգացողությունը (*Գրաս, էջ 229*):

ՀԴԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Հղկված լինելը:** Գրածներս բանաս-  
տեղծություններ չէին, որոնք ոչ գաղափարական **հղկվածություն**  
ունեին... (*ԼԴ 2, էջ 15*):

ՀՅՈՒԹԱԶՏԻՉ, ած. **Հյութը գտող:** .... Կապված է ստամոքսի  
**հյութազտիչ** գործունեության .... հետ(*Մ2, էջ 306*):

ՀՅՈՒԹԱՎԱՃԱՌ, գ. **Հյութ վաճառող:** .... Պատահական  
**հյութավաճառից** ես գնել(*Մ3, էջ 101*):

ՀՅՈՒՐԱԲԱԿ, ԳԱՍՏՐՈՒԲԱԿ, գ. **Հյուրատուն, կահավորում  
ունեցող բակ:** Արենիում բացվեց **հյուրաբակ-հյուրատունը:**  
Կատարվեց **գաստրոբակի (հյուրաբակ)** հանդիսավոր բացումը:  
Նորաբաց **գաստրոբակը** լիովին արդարացնելու է ծրագրի կազ-  
մակերպիչների հույսերը: **Հյուրաբակը** հիմնել է Ստեփան-

յանների ընտանիքը (ՀՀ, 18.04.2019):

ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒԹՅՈՒՆ, գ. (դիպվ.): **Հյուրանոցների ամբողջություն:** Իհարկե, աշխարհասփյուռ հյուրանոցության մեջ կան նաև բացառություններ.... (ՆՓ, էջ 132):

ՀՆԳԱԹԵՐԹԻԿ, ած. **Հինգ թերթիկ ունեցող՝ թերթանի՝ հնգաթերթ:** .... Այս բույսի **հնգաթերթիկ** ծաղիկները հատկապես գիշերային ժամերին են բուրում .... (ՄՅ, էջ 509):

ՀՆԳԱԿԱՅՄ, ած. **Հինգ կայմ ունեցող՝ կայմով:** Հնգակայմ առագաստանավեր (Գրաս, էջ 212):

ՀՆԳԱՍՏՂԱՆԻ, ած. **Հինգ աստղով նշվող կարգին համապատասխանող:** Չինաստանի լքված քարհանքում **հնգաստղանի** հյուրանոց կկառուցեն (Հնգ, news.am):

ՀՆԴԿԱՃԱՇԱԿ, ած. **Հնդկական ճաշակով:** Դիտվող, **հրնդկաճաշակ**, բայց հրեական հերթական քարոզչություն (ԽՄ, էջ 39):

ՀՆԶԵՐԳ, գ. **Հնչող երգ:** Չեմ լսել նման մի համանվագ, // ... Ու ոչ մի **հնչերգ** այսքան ապրված (ՀրչԹ, էջ 127):

ՀՆՅՈՒՆԱԾՄԱՎԱԼ, գ. **Չայնաձավալ՝ երաժշտական գործիքի հնչական ծավալը՝ ընդգրկումը:** Լայն **հնչյունաձավալ**.... ունեցող, փողային օդահունչ ասեղնավոր այդ բարդ երաժշտական գործիքը .... (Մ1, էջ 285):

ՀՈԳԵԱՎԵՐ, ած. **Հոգին ավերող:** Հոգեավեր ու դյուրալի խենթի նման սիրեի քեզ (ՄԳ, էջ 55):

ՀՈԳԵԲԱՎՈՒԹՅՈՒՆ, գ. **Հոգեկան բավարարվածություն, հոգեպես բավարարված լինելը:** Մեղք կլինեք զարմանալը: Հոգեբավություն իջավ մեր դեմքերին (ԳՆ, էջ 37):

ՀՈԳԵԴԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Հոգեբանական դավադրություն:** Շնորհ արած սերը կփրկի աշխարհը, կգրկի հոգեսովից, **հոգեդավադրությունից** (ԳՄ, է, էջ 13):

ՀՈԳԵԶՆՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Հոգեկան աշխարհի դիտարկում,**

**քննություն:** ....Իր հետ բերում է ուրույն մի աշխարհ, **հոգեզննություն** ու վերագնահատումի նոր որակ.... (ՄՄ, էջ 231):

ՀՈԳԵԶՆՆՈՒՄ, գ. **Հոգեզննություն:** Գեղեցիկը վայելք չի խոստանում, երանություն չի բերում, այլ փոխակերպվում է **հոգեզննման** ցավի (ՄՄ, էջ 5):

ՀՈԳԵԹԱՐԳՄԱՆ, գ. **Հոգեկան ապրումները թարգմանող:** ....Դեռ չես գտել այն **հոգեթարգման** բառն ու պատկերը, որոնք մտքիդ ծալքերում շողարձակում են մեկ-մեկ (Կրթ., 36):

ՀՈԳԵԹՈՒԻՉՔ, գ. **Հոգեկան թռիչք:** Մենք, անշուշտ, մեծագույն ազգ էինք 88-ի վսեմ ու ողբերգական օրերին՝ թե՛ ոգեղեն վերելքի վեհության և թե՛ **հոգեթռիչքի** տևականության առումով (ՀՀ, 12.06.2019):

ՀՈԳԵՀԱՄԱԶՈՒՎԱԾՔ, գ. **Հոգևոր համազգացություն:** Դրանք մահացած մարդկանց լուսավոր **հոգեհամաձուլվածքն** են (Հնգ):

ՀՈԳԵՀՐՃՎԱՆՔ, գ. **Հոգու խնդություն, խանդաղատանք:** **Հոգեհրճվանքն** է հուզում ինձ (ԿՄ, էջ 80):

ՀՈԳԵՍԱՏԱՐ, ած. **Հոգուն սատարող, աջակցող:** Իմ խեղճ մարմին **հոգեսատար**, ոնց ասեմ թե քեզ ոնց տեսա ... (ՄԳ, էջ 115):

ՀՈԳԵՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ, գ. **Հոգեկան վերափոխություն:** Ի՞նչ զարհուրելի է **հոգեփոխակերպման** դավադրությունը (ԳՄ, էջ 13):

ՀՈԳՆԱՀԱՅԱՑ, ած. (բնատ.): **Հոգնած հայացքով:** ....Որպես **հոգնահայաց** աստված հին բազիլիկ // Դառնում եմ հավատի մաքրագտված ավար (ԼԴ 1, էջ 17):

ՀՈԳՆԱՔԱՅԼ, մկբ. **Հոգնած քայլերով:** Ճամփահեռվից **հոգնաքայլ** գալիս է տատս (ԼԴ 2, էջ 11):

ՀՈԳՍԱԹԱՓԵԼ, նբ. **Հոգսերից ազատել:** .... Ինչը էապես **հոգսաթափում** էր մայրիկիս .... (Գրաս, էջ 38):

ՀՈԼԱՆԴԱՀԱՅ, գ. **Հոլանդիայում բնակվող հայ: Հոլանդահայերը** Հայոց ցեղասպանության ճանաչման համար երկրի կառավարությանը հանրագիր կհանձնեն (*Zifg, news.am*):

ՀՈՂԱԲՈՍՈՐ, ած. **Հողագույն-կարմիր: .... Հողաբուսոր** մի աղունիկ ապշած իր իսկ մենությունից, կաղում է լուռ տառապանքը երկարուձիգ... (*ԻՄ, էջ 52*):

ՀՈՂԱՄԵՐՁ, ած. **Հողին՝ երկրին մոտ:** Տե՛ս ԽԵՆԹԱԳԻՆ-ի օրինակը:

ՀՈՎԵԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Ամառանոց՝ հանգստանալու գնալը:** Բնակիչները օրեր առաջ մեկնել էին քաղաքին մերձակա ամառանոցը, թեև ամենևին էլ **հովեկության** ամիսներ չէին (*ՌՂ, էջ 153*):

ՀՈՐԴԱՀՈՍՈՒՆ, ած. Տե՛ս ԳՈՐՇԱՊԱՐԱՐ-ի օրինակը:

ՀՈՐԴԱՆԱՆԱՀԱՅ, գ. **Հորդանանում բնակվող հայ:** Նախագահ Սարգսյանը **հորդանանահայերին** տեղեկացրել է ....(*ՀՀ, 09.04.2019*):

ՀՐԱԴԵՂՁԱՆ, ած. (բնստ.): **Հրանման խարտյաշ:** Քո աչքերը՝ սև թուզ, // Ու վարսերդ՝ շո՛գ, շո՛ գ **հրադեղձան**....(*ԼԴ 1, էջ 64*):

ՀՐԱԿԱՅԱՆ, գ. **Հրշեջ կայան:** Մի փակ խանութի հարևանությամբ գտնվող մեկուսի հեռախոսախցիկից ահազանգեց **հրակայան** (*ՌԲ, էջ 162*):

ՀՐԱՇԱԲՈՒՅՐ, ած. **Հրաշալի բույրով:** Բառն աշխարհի չափ **հրաշաբույր** է, երբ նրան սիրո շունչ են հաղորդում (*ՄԳ, էջ 51*):

ՀՐԱՎԱՅԵԼ, ած. (բնստ.): **Վառ լինելու արժանի:** Ես փառահեղ ամպրոպի մեջ ինձ տեսա, // **Հրավայել** երազներս ծխացին.... (*ԼԴ 1, էջ 62*):

ՀՐԴԵՀԱՇԱՏ, ած. **Որտեղ հրդեհները շատ են:** Այս տարվա **հրդեհաշատ** մարզերն են Երևանը, Արարատը, Արմավիրը ....(*ՀՀ, 30.07.2019*):

ՀՐԴԵՀԱՇԻՋԵԼ, ք. **Հրդեհը մարել՝ հանգցնել:** Հայաստան ժամանած ռուսական **հրդեհաշիջող** օդանավն առաջին թռիչքն է իրականացրել (*ՀՆԳ, news.am*):

ՀՐԿԻԶԱՊԵՏ, գ. **Հրշեջ ծառայության պետ:** Հրկիզապետը խաղաքարտերն էր զննում (*ՌԲ, էջ 35*):

ՀՈՒԶԱԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ, ամ. **Հուզական և գաղափարական:** .... Հետագա տարիներին հայ ժողովրդի ձգտումները **հուզագաղափարական** հարթությունից հետևողականորեն փոխադրվեցին հանապազօրյա հացի հայթայթման դաշտ(*ՀԲ, 3, 2018, էջ 16*):

ՀՈՒԶԱԶԵՂՈՒՄ, գ. **Հույզերի հոսք, արտահայտում:** Բայց հաճախ այդ տեսողության զգացողությունը չքանում է **հուզազեղումից**, տենդահար կրքից, հարածամ տենչանքից .... (*ՀրչԹ, էջ 181*):

ՀՈՒԶԱՎԱՌԵԼ, ք. (բնատ.): **Ոգևորել:** Սակայն ոչինչ էլ չեմ գտնում, որ կարող է **հուզավառել**, ափսոսանքը օտար է ինձ.... (*ԻՄ, էջ 33*):

ՀՈՒԶՈՒՄՆԱՌԱՏ, ամ. **Հույզերով լեցուն՝ առատ:** Նրա համար այրվող տունը **հուզումնառատ** տեսարան է (*ՌՀ, էջ 95*):

ՀՈՒՆԱՍՏԱՆԱԲՆԱԿ, ամ. **Հունաստանում բնակվող:** ....**Հունաստանաբնակ** կամ ֆրանսիաբնակ քո բարեկամից թանկարժեք նվեր ես ստանալու(*ՄՅ, էջ 525*):

ՀՈՒՇԱԹՈՒՄԲ, գ. (փխբ.): **Հուշեր ամփոփող, պարփակող:** Միրածոր գիշերվա տազնապներն էլ երբեք // Մոտ չեն գա **հուշաթումբ** իմ բարձին(*ԽՄՂ, էջ 94*):

## 2

ԶԱՂԿՈՑ, գ. **Չաղկելը:** ....Նա չէր հասցրել զգուշացնել, որ **ձաղկոցները** պետք է բաժին ընկնեն փորին (*ՎՄ, էջ 109*):

ԶԵՂՆԱԲՆԱԿԱՐԱՆ, գ. **Ձեղնահարկի բնակարան:** .... Ես որպես նպատակակետ էի ընտրում մի ինչ-որ **ձեղնաբնակարանի**

վատ մթնեցված պատուհանը .... (Գրաս, էջ 413):

Ձեռնագրագրող Գրող Գրող Գրող Գրող, գ. **Ձեռագրով գուշակելը**: Մի անգամ, երբ Բալզակը բալզակյան տարիքի էր և սկսել էր գրադվել **ձեռագրագուշակությամբ**, նրա մոտ մի կին է գալիս.... (Հսկ):

ՁԿՆԱՇԽԱՐՀ, գ. **Ձկների ամբողջություն**: Սևանա լճի **ձկնաշխարհը** օգնության կարիք ունի: Մենք Սևանի **ձկնաշխարհի** բնական վերարտադրության կողքին անչափ կարևորում ենք արհեստական վերարտադրությունը ....(ՀՀ, 14.03.2019):

ՁԿՆԱՅԱՆԿ, գ. **Վաճառվող ձկների ցուցակ**: ...Ձկան խանութը ոչինչ չունի առաջարկելու աղքատիկ **ձկնացանկից** հոգնած քաղաքացիներին (ՆՓ, էջ 115):

ՁՄԵՌԱՆԿԱՐԻՉ, գ. (փխբ.): **Ձմեռային սառնամանիքը որպես նկարիչ**: Եղյամածածկ լուսամուտի ապակիներին ձմեռային հանճարեղ **ձմեռանկարիչն** անկրկնելի պատկերներ է նկարել (Մ1, էջ 272):

ՁՅՈՒՆԱԾՄԱՂԿԱԾ, ած. (փխբ.): **Ձյունից ձերմակած**: Ընթրելուց հետո ես ու Ռուզանը երկու **ձյունածաղկած** ճյուղերի ելանք վարձով տուն հարցնելու (ԳՆ, էջ 34):

ՁՅՈՒՆԱՊԱՏՄՈՒՃԱՆ, գ. (փխբ.): **Ձյունից կերտված պատմուճան**: Արևի շողերը պսպղացնում էին ձիուն, որն ասես Արարատ սարի հավերժական **ձյունապատմուճան** էր հազել (ՌՂ, էջ 96):

ՁՅՈՒՆԱՍԱՌՆ, ած. **Ձյան պես սառը**: Այնտեղ հսկա ձիվաղներ էին ննջում՝ իրենց ձերմակ երազների և **ձյունասառն** մտքերի մեջ ամփոփված (ՌԲ, էջ 145):

ՁՈՐԱԽՈՒՎ, ած. (բնստ.): **Ձորում հորձանք տվող՝ ալեկոծող**: Սև տիղմ դարձավ սատանայի սև քամին... // Փովեց ձայնը **ձորախոիվ** հեղեղի... (ԼԴ 1, էջ 62):

Ղ

ՂԱՐԱԴԱՂԱՀԱՅ, գ. **Ղարադադում ապրած հայ**: .... Հրատարակվել են բանահավաք Հովհաննես Հովսեփյանի՝ **ղարադադահայերից** գրառած բանահյուսական նյութերը (*ՊԲՀ, 3, 2017, էջ 273*):

Ճ

ՃԱԳԱՐԱԲԱԺԻՆ, գ. **Ճագարի բաժնի չափ**: Գայլի ախորժակ էս ունենալու, բայց **Ճագարաբաժին** էլ ձեռք չի ընկնելու (*Մ1, էջ 350*):

ՃԱՀՃԱՄԵԳ, գ. **Ճահճոտ վայրերի մառախուղ**: Իսկ մարդիկ օրըստօրե անիծում էին **Ճահճամեզն** ու ... սզրուկների ներկայությունը թունավոր (*ԳԹ, 27.09.2019*):

ՃԱՅԱԶԱՅՆ, ած. (բնստ.): **Ճայի ձայնի նման ձայն արձակող**: Ամեն մի ալիք՝ հպանցիկության// Շարժումն է դառնում **Ճայաձայն** քամու.... (*ԼԴ 1, էջ 53*):

ՃԱՅԱՎԱՐԻ, մկբ. **Ճայի նման, ինչպես Ճայր**: Դու **Ճայավարի** սուլեցիր .... (*Մ2, էջ 361*):

ՃԱՆԱՊԱՐՀԱԿԵՆՏՐՈՆ, գ. **Ճանապարհի կենտրոն՝ միջին մասը, մեջտեղը**: Մի օր էլ սոված էշդ կանգնում է **Ճանապարհակենտրոնում** .... (*Մ1, էջ 82*):

ՃԱՆԱՊԱՐՀԱՄՈՏ, ած. **Ճանապարհին մոտիկ, Ճանապարհամերձ**: Գյուղի ծայրին՝ **Ճանապարհամոտ** հատվածում տղամարդիկ էին հավաքված (*ԳՄ, Է, էջ 145*):

ՃԱՆՃԱՏԵՍԱԿ, գ. **Ճանճի տեսակ**: .... Կարևոր նշանակություն ունի **Ճանճատեսակը** (*Մ2, էջ 363*):

ՃԱՌԱՍՄԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Ճառ ասելը, Ճառախոսություն, Ճառասացություն**: .... Ճարպիկ փոկերի մասին **Ճառասանություն** անել ճոճաձողերի վրայի արծաթյա տիկնանց (*Գրասս, էջ 119*):

ՃԱՐՏԱՐԱԳՈՐԾԵԼ, բ. **Ճարտարորեն՝ հմտորեն արարել**,



**ստեղծել:** .... Վիպոդը **ճարտարագործում** է պատմական .... Ժամանակակից կյանքի ուշագրավ երևույթները.... (ՆՍ, էջ 11):

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԱԶԳԱԳՐԱԿԱՆ,** ան. **Ճարտարապետական և ազգագրական:** 1891թ. լեզվաբան, ազգագրագետ Արթուր Հալեյիուսի նախաձեռնությամբ ստեղծվեց առաջին թանգարանը բաց երկնքի տակ՝ հանրահայտ Սկանսենը, որն էլ հետագայում դարձավ **Ճարտարապետաազգագրական** թանգարանների ընդհանրական անվանումը(ՊԲՀ, 1, 2019, էջ 100):

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏՍՏԱՐԱԾԱԿԱՆ,** ան. **Ճարտարապետական և տարածական:** .... Դեռևս հրապարակի վրա չունենք .... Ուսումնասիրություններ, որոնց հիմքում ընկած լինեին .... **Ճարտարապետատարածական** կազմակերպման խնդիրների լուծմանը միտված մշակումներ(ՊԲՀ, 1, 2019, էջ 100):

**ՃԳՆԱԺԱՄԱԾԻՆ,** ան. . **Ճգնաժամ առաջացնող՝ ծնող:** Այս դեպքում ճշմարտությունը իր ձևով և էությամբ **Ճգնաժամածին** է (ՀՆԳ):

**ՃԵՐՄԱԿԱՀՈՒՆ,** ան. (բնստ.): **Սպիտակաթույր: Ճերմակահուն** վերականեր են, որոնց խորքում ճախրող լեռն է (ՎՄ, էջ 7):

**ՃԵՐՄԱԿԱՃՈՒՄ,** ան. (բնստ.): **Ճերմակությամբ փայլող:** Այդ շարժմունքի ժամանակ **Ճերմակաճոխ** գալարուն ազդրերը... փովեցին աջ ու ձախ (ՎՄ, էջ 28):

**ՃԻՎԱՂԱՏԵՄԻԼ,**ան. **Այլանդակ տեսքով, տգեղ:** Վեսմիոր նրան այնպես էր նայում, ինչպես **Ճիվաղատեսիլ** խոզի կղկղանքին (ՎՄ, էջ 147):

**ՃԿԱՍՈՒՍԵՐԱԿՐՈՒԻԶԻ,** գ. **Կին ճկասուերորդ, ճկասուերորդուհի:** Երիտասարդ **ճկասուերակրուհիների** մրցումներում Սեդա Գևորգյանը գրավեց 141-րդ տեղը ....(ՀՀ, 17.04.2019):

**ՃԿՈՒՆԱԾՈՒՓ,** ան. (բնստ.): **Ճկունորեն ծփացող:** ....**Ճկունածուփ** բոցից եղեգ // Ծնվեց հուրիեր պատանեկիկ (ԼԴ 1, էջ 16):

ՃՆՃՂՈՒԿԱՅԻՆ, ած.**Ճնճղուկների, նրանց հատուկ:** ....  
Հարյուրավոր ճնճղուկներ .... բոլոր կողմերից շրջապատեցին  
«Մերսեդեսը», նրանք իրենց խփում էին դիմացի ապակուն .... և  
զուտ միայն **Ճնճղուկային** ուժով առաջ բերեցին դժբախտ պա-  
տահարը .... (*Գրաս, էջ 620*):

ՃՇՄԱՐՏԱԶՈՒԲԿ, ած. **Ճշմարտությունից զրկված:** Ուշա-  
ցած խոստովանությունն այլևս **Ճշմարտագուրկ** է (*Հնգ*):

## Մ

ՄԱԶԱՊՏՈՒՅՏ, գ. **Մանրվածք:** Նայում էինք կարճ խուզած  
զլխի՝ գագաթի երկու **մազապտույտներին**....(*ԼԽ, էջ 200*):

ՄԱԶՄԶՈՒԿԱՊԱՏ, ած.**Մազանման թելիկներով՝ մազ-  
մզուկներով պատված:** ... Վերևի կողմից մերկ, ներքևից՝ ջրերի  
ուղղությամբ **մազմզուկապատ** իգական ծաղիկները գտնվում են  
տերևածոցերում .... (*Մ1, էջ 71*):

ՄԱԶՄԶՈՒԿՈՏ, ած. **Մազմզուկով պատված:** .... Հոնի երի-  
տասարդ ճյուղերը **մազմզուկոտ** են ....(*Մ2, էջ 317*):

ՄԱԼԱՐԻԱԿԻՐ, ած. **Մալարիայի՝ դողերոցքի բացիներ  
կրող:** ... Քեզ կծողը **մալարիակիր** մոծակ է եղել, քանի որ **մալա-  
րիակիր** մոծակները նստում են կծկված՝ իջեցնելով փորիկը (*Մ2,  
էջ 453*):

ՄԱԿՐՈՂԻՏԱՐԿՈՒՄ, գ. **Ծավալուն, խոշոր դիտարկում:**  
Եվրասիայի զարգացման բանկը ներկայացրել է ԱՊՀ երկրների  
**մակրոդիտարկման** առաջին թողարկումը (*Հնգ, news.am*):

ՄԱԿՐՈԾՐԱԳԻՐ, գ. **Խոշոր ծրագիր:** Ռուսական միկրոֆիր-  
մայի **մակրոծրագրերը** Հայաստանում համեստ եկամուտով խո-  
շոր ներդրում են խոստանում (*Հնգ, news.am*):

ՄԱԿՈՒՅԿԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Մակույկ կառուցելու ար-  
հեստը:** Ջահելները ....ջանում էին տիրապետել... **մակույկա-  
շինությանը** (*ՌՂ, էջ 105*):

ՄԱՀԱԴԻՄԱԿ, գ. **Հանգուցյալների դեմքի դիմակ:** Գիպտով

հանել են մեկի **մահադիմակը** (Մ1, էջ 183):

ՄԱՀՃԱԿԱԼԱԳՈՐԳ, գ. **Մահճակալի առջև՝ մոտ՝ երկարությամբ զգված գորգ**: .... Օսկարը կռացավ, երկու ծայրերից բռնեց կոկոսե **մահճակալագորգը** .... (Գրաս, էջ 592):

ՄԱՀՃԱԿԱԼԱՄԵՐԶ, ած.**Մահճակալի մոտ (զգված, ընկած)**: Տե՛ս ԲԱԶՄԱՄԱՆՐԱԹԵԼԱՅԻՆ-ի օրինակը:

ՄԱՄՌԵ, ած.**Մամուռներից առաջացած՝ ստեղծված**: Դիմացի դաշտը **մամուռ** կանաչ զգեստ է հագել (Մ2, էջ 391):

ՄԱՅՐԱՄՈՒՏԵ, ած.**Մայրամուտյան, մայրամուտի ժամանակվա**: Դա քաղաքային թատրոնն էր .... իր **մայրամուտե** ապակիներով .... (Գրաս, էջ 108):

ՄԱՆԴԱՏԱԶՐԿԵԼ, բ. (դիպվ.): **Մանդատից զրկել**: Մեր աղբյուրների փոխանցմամբ, օրվա իշխողը .... **մանդատագրկելու** է Օառուկյանին (Իր., 24.05.2019):

ՄԱՆԿԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Մանկածնություն, երեխա բերելը**: .... **Մանկարտադրության** հարցում առավել զգուշավոր մարդիկ .... (Գրաս, էջ 113):

ՄԱՆԿՈՒՍՈՒՅՑ, գ. **Մանկավարժ**: ...Որպեսզի պատկերավոր լինի դասը...յուրաքանչյուր տառի վերաբերյալ **մանկուսույց** Առաքելը գիշերները, ճրագի լույսի ներքո, իր պատումներն էր հյուսել (ԹՂ, էջ 111):

ՄԱՆՐԱԳԼԽԻԿ, ած.**Մանր գլխիկ ունեցող՝ գլխիկով**: «Մանրագլխիկ գազի բուժիչ հասկությունների մասին» դասախոսություն ես լսել (Մ1, էջ 141):

ՄԱՆՐԱԿՏՐՏՈՒՄ, գ. **Մանր-մանր կտրտելը՝ կտրտելու գործընթացը**: Մեղանների վրայի խոհանոցային դանակները սկսեցին իրենց **մանրակտրտման** գործունեությունը (Գրաս, էջ 614):

ՄԱՆՐԱՃՅՈՒՂ, գ. **Մանր ճյուղ**: Անձանոթ անցորդը չէր կարող խուսափել փշարձակ **մանրաճյուղերի** ծածկող հարձա-

կումներից (ՎՄ, էջ 26):

ՄԱՆՐԱՄԻՏ, ած. **Մանրախնդիր**: Ինքը խենթի պես կնվիրվի անծանոթին, .... կարհամարհի մանրամիտ վեճերը.... (ՄՄ, էջ 138):

ՄԱՆՐԱՎԱԶ, գ. **Մանր ավագ**: .... Թաց մանրավազով շփում էր պղնձե կաթսայի կողերը (Մ2, էջ 218):

ՄԱՆՈՒՇԱԿԱՍԵՎ, ած. **Մանուշակի գույնին տվող սև**: .... Ես արագ խեթկեցի խաղաթղթերի երկար մասի երկարությամբ, **մանուշակասև** կարված սպիի վրա (Գրաս, էջ 197):

ՄԱՇԿԱԹԱՓՎԵԼ, չբ. **Մաշկը թափելով նոր մաշկ աճեցնել**: .... Անթև թրթուրները, .... մի քանի անգամ **մաշկաթափվելով**, դարձել են ծնողների նման թևավոր ծղրիղներ (Մ2, էջ 129):

ՄԱՍՆԱՏԱԲԱՅ, ած. **Մասնատելով՝ մասնատելուց բացված**: Հիսուսի **մասնատաբաց** կրծքի .... (Գրաս, էջ 131):

ՄԱՍՍԱՏԵՆՉ, ած. **Մասիսը Մայր Հայաստանին վերադարձնել տենչացող**: Հեովից լսվում են մի ոտքը Մեծ Մասիսի, մյուսը՝ Փոքր Մասիսի կոնաձև գագաթներին դրած Հովհաննես Շիրազի **մասսատենչ** երգերը (Մ2, էջ 404):

ՄԱՍՐԱՆԵՐԿ, ած. **Մասուրի գույն ունեցող**: Տե՛ս ԲԵՐԴԱՇԱՐ-ի օրինակը:

ՄԱՏՆԱԿԻԹ, գ. **Կաթնասունի ստինքները մատներով սեղմելով կթելը**: Տե՛ս ԲՈՌԻՆՑՔԱԿԻԹ-ի օրինակը:

ՄԱՐԳԱՐՏԱԶՕԾ, ած. (փխբ.): **Մարգարիտով օծված՝ պատված**: Ինչպես երկու փոքրիկ լուսնի **մարգարտագօծ** լույս քղանցքներ .... արորում են բոտրագեղ խոր ակոսներ (ԲՄ, էջ 56):

ՄԱՐԳԱՐՏԱՍՈՒՐԱԳՈՒՅՆ, ած. **Մոխրագույն մարգարտի գույնի՝ գույն ունեցող**: .... Հայտնվեց .... **մարգարտամոխրագույն** կոշիկներով .... (Գրաս, էջ 126):

ՄԱՐԴԱՇՈՒԿԱ, գ. **Շուկա, որտեղ մարդկանց վաճառք է**

**կատարվում:** Այսպես եղավ, որ **մարդաշուկաներում** Սիրակուզայի ստրուկների գները կտրուկ բարձրացան (*ՁԽ, էջ 219*):

ՄԱՐԴԱՐԱՍ, ան. (բնատ., դիպվ.):**Մարդուն վնաս պատճառող, արատավորող:** .... Ոչ որ դեին այդ **մարդարատ**// Մասանել չի փորձում (*ԼԴ 1, էջ 49*):

ՄԱՐԶԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ, ան. **Մարզական և հայրենասիրական:** Հայաստանում առաջին անգամ տեղի է ունեցել «Խաղաղության և բարեկամության մեջ» **մարզահայրենասիրական** խաղը (*ՀՄԳ, news.am*):

ՄԱՐԶԸՆԿԵՐ, գ. **Մարզական զուգրնկեր:** Թինա Կարապետյանը **մարզրնկերոջ** խնդիր ունի (*ՀՀ, 07.05.2019*):

ՄԱՐԻԽՈՒՆԱՍԻՐՈՒՅՐ, ան. **Մարիխուանայի բույր ունեցող՝ տարածող:** .... Կիսաքուն վիճակում կվերադարձնի նույն օֆիումաբույր կամ **մարիխուանաբույր** եկեղեցին .... (*ԽՍ, էջ 61*):

ՄԱՐՄՆԱՀԱՆԴԵՐԶ, ան. (փխբ.): **Մարմին հագած, իրական մարմին ստացած:** Եվ **մարմնահանդերձ** հոգիներ էլան՝ մեղքերով գեղուն (*ԽՍ1, էջ 12*):

ՄԱՐՄՆԱՄԵՐԿ, ան. **Մերկ, անհագուստ:** Եվ **մարմնամերկ** հեքը վարդաբույր, վայելք էր դառնում վայել դրախտին (*ՍԳ, էջ 161*):

ՄԱՐՄՆԱՊԱՏԿԵՐ, գ. **Մարմնի պատկեր:** Արշոն նկատեց Նազիկի.... **մարմնապատկերը**, արու գազանի պես մոնչաց կատաղի... ապա ծնկեց ձյան մեջ.... ու լաց եղավ (*ՆՇ, էջ 33*):

ՄԱՐՍԱԲՆԱԿ, գ. **Մարսում բնակվող:** Եվ գուցե մարդը, **մարսաբնակի** սայլին լծված .... ներողություն կխնդրեր կովից (*ՄԿ, էջ 347*):

ՄԱՐՍԵԼԱՀԱՅ, գ. **Մարսելում բնակվող հայ:** **Մարսելահայերը** բողոքի ցույց կանցկացնեն՝ Օլանդի՝ Թուրքիա այցի կապակցությամբ (*ՀՄԳ, news.am*):

ՄԱՑԱՌԱԽԵՂԴ, ան. **Մացառներով պատված, որտեղ շատ**

**մացառներ կան:** ...Գյուղը չէր երևում, տեսանելի էին միայն ոլոր-մոլոր բարձրացող **մացառախեղդ** արահետն ու ....ռակեշափաղ գմբեթները (*ՎՄ, էջ 301*):

ՄԳՈՏ, ած. **Համեմատաբար, թեթևակիորեն մուգ, մի քիչ ավելի մուգ:** Իսկ խոշորները, առավել **մգոտները**, նա ինքն էր դուրս ճգնում լեշի միջից.... (*Գրաս, էջ 569*):

ՄԵԴԻԱԲԻԶՆԵՍ, գ. **Լրատվական բիզնես:** Սպիտակ տանը հերքել են Օբամայի՝ **մեդիաբիզնես** գնալու մասին լուրերը (*ՀՄԳ, news.am*):

ՄԵԴԻԱԹԻՐԱԽ, գ. **Լրատվամիջոցների քննադատության թիրախ:** Այս մարդիկ ապացուցում են, որ անգամ **մեդիաթիրախ** լինելու դեպքում կարողանում են շատ լավ աշխատել (*ՀՄԳ*):

ՄԵԴԻԱԻՐԱՎՈՒՆՔ, գ. **Լրատվական իրավունք:** Ֆուտբոլային ակումբը **մեդիաիրավունքների** վաճառքից հսկայական եկամուտ է ստացել (*ՀՄԳ, news.am*):

ՄԵԴԻԱԼՈՒԹՅՈՒՆ, գ. **Լրատվական լռություն:** Իրանն ու վեցյակը պայմանավորվել են **մեդիալռություն** պահպանել (*ՀՄԳ, news.am*):

ՄԵԴԻԱԽՈՒՄԲ, գ. **Լրատվություն տարածող խումբ:** Գործարարը կարող է դառնալ ռուսական **մեդիախմբի** գլխավոր տնօրենը (*ՀՄԳ, news.am*):

ՄԵԴԻԱԿԵՆՏՐՈՆ, գ. **Լրատվության կենտրոն:** Բացվել է գլխավոր **մեդիակենտրոնը** (*ՀՄԳ, news.am*):

ՄԵԴԻԱՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Համագործակցություն լրատվության ասպարեզում:** Չինաստանում բացվել է **մեդիահամագործակցության** «Մեկ ճանապարհ, մեկ գոտի» մեդիա ֆորումը (*ՀՄԳ, news.am*):

ՄԵԴԻԱՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Լրատվական հանրություն:** Կրքեր վրացական **մեդիահանրությունում** (*ՀՄԳ, news.am*):

ՄԵԴԻԱՊՂՊՁԱԿ, գ. **Դատարկ, անարժեք, փուչ լրատվու-**

**թյուն:** Նախկին նախագահի շուրջ **մեդիապոլսական** ավելին է, քան նրա իրական դերը (*ՀՄԳ, news.am*):

ՄԵԴԻԱՏԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Լրատվամիջոցների գործունեության ոլորտ:** Հարկավոր է եվրասիական միասնական **մեդիատարածություն** ստեղծել (*ՀՄԳ, news.am*):

ՄԵԴԻԱՕԼԻՄՊԻԱԴԱ, գ. **Լրատվական օլիմպիադա:** **Մեդիաօլիմպիադան** կազմակերպվում է փուլերով՝ որպես ուսումնական, հետազոտական, ստեղծագործական նախագծերի մրցույթ (*ՀՄԳ, mskh.am*):

ՄԵԾԱՀԱՎԱՔ, ած. **Շատ մասնակիցներ ունեցող՝ մասնակիցներով:** Մասնակցում ես մի **մեծահավաք** ժողովի (*ՄԼ, էջ 449*):

ՄԵԿԱՆԱԼ, բ. **Մեկտեղվել, մեկ դառնալ:** ....Մենք գիտենք դիմակայել, գիտենք **մեկանալ**, գիտենք բռունցք դառնալ (*ԱՆ, էջ 30*):

ՄԵԿԽՈՌՈՉԱՆԻ, ած. **Մեկ խոռոչ ունեցող:** Նա իր արտադրած մոմով կառուցում է **մեկխոռոչանի** բնակարաններ (*Նարեկ, թ.6, 2018*):

ՄԵԿՆԱՀԱՐԹԱԿ, գ. **Հենակետ:** Հեղաշրջման կոչը նոր **մեկնահարթակ** էր դառնալու հակասոցիալիստական պայքարի համար (*ՄԿ, էջ 269*):

ՄԵԿՏԵՂԱՆՈՑ, ած. **Մեկ տեղ ունեցող, մեկտեղանի:** **Մեկտեղանոց** հուշարձանների նմուշներ (*Գրաս, էջ 501*):

ՄԵՂՍԱԳՈՐԾՈՒՀԻ, գ. **Մեղսագործ կին՝ աղջիկ:** Տե՛ս ԳՈՏԿԱՊԱՏՎԵԼ-ի օրինակը:

ՄԵՂՎԱԹՈՒՅՆ, գ. **Մեղվի թույն:** Թուլացած ձեռքիդ բուժման նպատակով **մեղվաթույնից** պատրաստված քուրք ես օգտագործել (*ՄԶ, էջ 425*):

ՄԵՂՎԱԿԱԹ, գ. **Մեղվի կաթ:** Նոր ծնված ձագուկները **մեղվակաթով** սնվում են միայն երեք օր (*Նարեկ, թ.6, 2018*):

ՄԵՂՎԱԿԾԻԿ, գ. **Մեղուների կծիկ: Մեղվակծիկի** կենտրոնում տաքացած մեղուները ժամանակ առ ժամանակ իրենց տեղը զիջում են քնած մեղուներին (*Նարեկ, թ.6, 2018*):

ՄԵՂՎԱՄԱՅՐ, գ. **Մայր մեղու: Մեղվամոր** հետ թռիչքի էր դուրս եկել նաև մեղվային շքախումբը նրա կյանքը պաշտպանելու համար (*Մ2, էջ 429*):

ՄԵՂՎԱՄՊ, գ. **Իրար հետ թռչող բազմաթիվ մեղուներից գոյացող ամպանման զանգված:** Հազարավոր բոռեր պտույտներ էին կատարում օդում գեղեցիկ **մեղվամպ** ստեղծելով (*Մ2, էջ 429*):

ՄԵՂՎԱՏՆԱԿ, գ. **Մեղվափեթակ, մեղվանոց:** Եթե **մեղվատնակները** վեցանկյուն չլինեին, ապա իրենց մեջ եղող մեղրի ծանրության տակ փուլ կգային (*Նարեկ, թ.6, 2018*):

ՄԵՂՎԱՔԹՈՅ, ած.**Մեղուների քրոց՝ փեթակ:** Ուռենու մատղաշ ճյուղերից **մեղվաքրոցներ** էիր գործում (*Մ3, էջ 474*):

ՄԵՂՐԱԴԵՂԻՆ, ած.**Մեղրի գույնի դեղին:** .... Գետնի ժամացույցի **մեղրադեղին** թվահարթակը՝ .... կլոր ապակին, կտորկտոր լինելով, թռավ տարբեր կողմեր ու ընկավ .... (*Գրաս, էջ 63*):

ՄԵՂՐԱՀԱՐՈՒՍ, ած. (բնստ., փխբ.): **Մեղրի պես քաղցր:** ....Տխուր կրկնում ես, .... **մեղրահարուստ** այն սուրբ բառը.... (*ԲՄ, էջ 54*):

ՄԵՂՐԱՎՈՒՆ, ած.**Մեղրի գույնի: Մեղրավուն** մազերով, փոքր-ինչ մոխրագույն մաշկով Քիթթին բավականին գրավիչ էր .... (*Գրաս, էջ 368*):

ՄԵՆԱՆԵՐԿԱՅԱԳՈՒՄ **խաղացող:** Չէ՞ որ .... **մենախաղացի** օժտվածությունից զատ կա նաև կնճռոտ թեմայի համամարդկային մեկնաբանման գործոնը .... (*Բր.,29.03.2019*):

ՄԵՏԱՂԱԴՐԱՄԱՏՈՒՓ, գ. **1.Մետաղյա դրամատուփ: 2. Մետաղադրամները մեջը պահելու տուփ:** .... Ես դաշնամուրի վրայից վերցրեցի հանգանակության կիսով չափ լցված **մետաղադրամատուփը**.... (*Գրաս, էջ 230*):



ՄԵՏԱՂԱՄԱԼՈՒԻՄԵ, անՄետաղյա մալուխներից կազմված: Տե՛ս ԹՄԲԿԱԳԼԱՆ-ի օրինակը:

ՄԵՏԱՔՍԱԾՈՐ, ան. (բնատ.): **Նրբորեն՝ մետաքսի պես ծորացող (ձայնի մասին):** Այգիներում դալարագեղ, տերևների **մետաքսածոր** խշշուների տակ սիրենները հևում էին հարթավայրին միաձայնած (*ԻՄ, էջ 8*):

ՄԵՏԱՔՍԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ, գ. **Նկարչություն մետաքսի վրա: Մետաքսանկարչություն.** յուրօրինակ շարժեր և զգեստներ հայ դիզայներներից (*ՀՄԳ*):

ՄԵՐԿԱՊՈՉ, անՄերկ պոչ ունեցող՝ պոչով: .... **Մերկապոչ...** կապիկանման այս գաճաճ կաթնասունը ... (*Մ1, էջ 296*):

ՄԵՐՁԱՐՄԱՏԱՅԻՆ, անՍրմատին մոտ գտնվող: **Մերձարմատային** մորենի (*Մ2, էջ 455*):

ՄԵՐՁԻՆՍՈՒԼՏԱՅԻՆ, ան. **Նախահինսուլտային:** Հիվանդի մոտ **մերձինսուլտային** վիճակ է եղել (*ՀՄԳ, news.am*):

ՄԵՐՉԿԱՍՊՅԱՆ, ան. **Կասալից ծովին մերձակա: Մերձկասալյան** պետությունների ԱԳ նախարարների խորհուրդը կգումարվի առաջիկա շաբաթներին (*ՀՄԳ, news.am*):

ՄԵՐՉՄՈՍԿՎԱ, գ. **Մոսկվայի մերձակայք: Մերձմոսկվայում** հայ գործարարի են սպանել (*ՀՄԳ, news.am*):

ՄԵՐՉՄԵՎԾՈՎՅԱՆ, անՍև ծովին մերձակա: Տեղի կունենա **Մերձսևծովյան** երկրների ներդրվիրաբույժների համաժողովը (*ՀՄԳ, news.am*):

ՄԵՐՉՈՒՂԵԾՐԱՅԻՆ, ան. **Ուղեծրին մոտ գտնվող:** Շուտով կվաճառվեն **մերձուղեծրային** չվերթների տոմսեր (*ՀՄԳ, news.am*):

ՄԹԱԳՆԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. (փխբ.): **Իրականության ոչ ռեալ զգացողություն:** Ու երբ արդեն գիտակցում էի, որ գտել եմ պատասխանը, սրտիս տրոփյունին և ուղեղիս **մթագնածությանն** ավելացավ նաև սրտխառնոցը... (*ՆՓ, էջ 336*):

ՄԹԵՐԱԶՈՒՐԿ, ան. **Մթերքներից զուրկ**: .... ճառ ասելով մթերք չի աճում, **մթերագուրկ** տարի է լինելու (*Մ1, էջ 192*):

ՄԹՆԱԹԲԵՎ, ան. **Մթնում թրև եկող, շրջմովիկ**: Նա անանուն կլինի **մթնաթրև** ճամփեքին (*Մարի, 6, էջ 74*):

ՄԹՆԱՊԱՐԱՐ, ան. **Մթնում պարուրված**: .... Վենետիկը **մթնապարար** կաթկթում է խոր դարերի իր տիղմի մեջ... (*ԲՄ, էջ 40*):

ՄԻԱԲՈՎԱՆԴԱԿ, ան. **Միաբնույթ, միանման**: Բոլորին **միաբովանդակ** սարսուռ պատեց (*ՎՄ, էջ 303*):

ՄԻԱԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Մի կուսակցության իշխանություն**: Բոլոր խնդիրը միայն **միակուսակցության** մեջ չէ (*ԶԽ, էջ 284*):

ՄԻԱՀՈՏ, ան. **Նույն՝ մի հոտ ունեցող՝ արձակող**: .... Բոլոր տղամարդկանցից «Շիպր» օդեկոլոնի հոտ էր գալիս և մարդիկ **միահոտ** էին դարձել (*Մ1, էջ 260*):

ՄԻԱՍԵՌԱՄՈԼ, գ. **Համասեռամուլ**: .... Ինչ-որ մի **միասեռամուլ** կնոջ հետ կարճատև միջադեպից հետո Ուլլան զբաղվեց Քուխենի աշակերտներից մեկով .... (*Գրաս, էջ 561*):

ՄԻԿՐՈԴԻՄԱՆԿԱՐ, գ. **Մանրադիմանկար**: Հոռմի Պապի 1 միլիմետրանոց **միկրոդիմանկարի** հեղինակը հայտնի միկրոքանդակագործի թոռն է (*ՀՄ, news.am*):

ՄԻԿՐՈԼՈՒՍԱՆԿԱՐ, գ. **Մանրալուսանկար**: Աշխարհը՝ մանրադիտակի տակ. 11 շմեցնող **միկրոլուսանկար** (*ՀՄ, news.am*):

ՄԻԿՐՈԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ, գ. **Մանրալուսանկարիչ**: ԱՄԷ-ում **միկրոլուսանկարիչները** միջատների զվարճալի նկարներ են ներկայացրել (*ՀՄ, news.am*):

ՄԻԿՐՈԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Մանր՝ փոքր ծառայություն**: Առցանց գործիքները նպաստում են **միկրոծառայությունների** որակի բարձրացմանը (*ՀՄ, news.am*):

ՄԻԿՐՈՎԿԱԹՎԱԾ, գ. **Գլխուղեղի նյարդաբանական գործառույթների կարճաժամկետ խանգարում:** Ուղեղի միկրոկաթվածից հետո անհրաժեշտ է ասպիրին խմել (*Zug, news.am*):

ՄԻԿՐՈՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ, ամ.Մանր ձեռնարկատիրական: Զգալիորեն բարելավվել են **միկրոձեռնարկատիրական վարկերի պայմանները** (*Zug, news.am*):

ՄԻԿՐՈՄԱԿԱՐԴԱԿ, գ. **Գործունեության նեղ, սահմանափակ շրջանակ ընդգրկող մակարդակ:** «Այսօր ստվերի դեմ պայքարում ենք **միկրոմակարդակում**». ՊԵԿ-ը ստվերը չափելու նոր համակարգ է մշակում (*Zug, news.am*):

ՄԻԿՐՈՄԱՆՐԱԹԵԼ, գ. **Գերնուրբ մանրաթել:** Յուրաքանչյուր լվացք բնություն է նետում հազարավոր **միկրոմանրաթելեր** (*Zug, news.am*):

ՄԻԿՐՈՄԻՋԱՎԱՅՐ, գ. **Փոքր սահմաններ ընդգրկող միջավայր:** Արմավիրում Հայաստանի հավաքականի համար կստեղծվի **միկրոմիջավայր** (*Zug, news.am*):

ՄԻԿՐՈՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ, գ. **Մանր չափերի նվիրատվություն:** Google-ը գործարկել է **միկրոնվիրատվությունների** հավելված (*Zug, lin.am*)

ՄԻԿՐՈՎԻՐԱԲՈՒՅԺ, գ. **Վիրաբուժական նուրբ միջամտությունների գծով մասնագիտացած բժիշկ:** Որպես **միկրովիրաբույժ՝** ապագա բժիշկն ավելի շատ օգուտ կտա բանակին (*Zug, news.am*):

ՄԻԿՐՈՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ, գ. **Փոքր չափսերի ֆինանսավորում:** Ինեկոբանկը վարկային միջոցներ է ներգրավել Symbiotics հիմնադրամից **միկրոֆինանսավորումը** խթանելու նպատակով (*Zug, news.am*):

ՄԻՋԱՎԱՅՐԱՍՏԵՂԾ, ամ. **Միջավայր ստեղծող:** Պատմամշակութային միջավայրի **միջավայրաստեղծ** գործունեներն են պատմական բնակավայրերը և դրանց մասերը, պատմամշակութային լանդշաֆտներն ու ժառանգության առանձին արժեքավոր

օբյեկտները (*ՊԲՀ, 1, 2019, էջ 101*):

ՄԻՋԲԱՆԿ, գ.(հավ.): **Միջազգային բանկ**: Ադրբեջանի կառավարությունը որոշել է հրաժարվել երկրի խոշորագույն **միջբանկից** (*ՀՆԳ, news.am*):

ՄԻՋԲԱՆԿԱՅԻՆ, ած. **Բանկերի համագործակցությունը ապահովող**: Արևելյան Եվրոպայի երկրները **միջբանկային** ասոցիացիա են ստեղծել (*ՀՆԳ, news.am*):

ՄԻՋԴԻՐՔԱՅԻՆ, ած. **Դիրքերի միջև գոյություն ունեցող**: **Միջդիրքային** տարածքում հրդեհ է բռնկվել (*ՀՆԳ, news.am*):

ՄԻՋԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ, ած. **Թանգարանների միջև գործող**: «Արմենպրեսի» հաղորդամամբ՝ **միջթանգարանային** համագործակցության արդյունքում իրականացված ցուցադրության շրջանակում ներկայացված են ... արխիվային բացառիկ նյութեր (*ՀՀ, 04.07.2019*):

ՄԻՋՄՐՑԱՇՐՋԱՆԱՅԻՆ, ած. **Մրցաշրջանների միջև ընկած ժամանակին վերաբերող**: Թիմի համար շատ վատ **միջմրցաշրջանային** հավաք է (*ՀՆԳ, news.am*):

ՄԻՋՌԵԳԻՈՆԱԼ, ած. **Տարածաշրջանների միջև առկա**: Տեղի է ունեցել **միջռեգիոնալ** և մերձասիականային համագործակցության խորհրդի երկրորդ նիստը (*ՀՆԳ, news.am*):

ՄԻՋՍԱԼԻԿԱՅԻՆ, ած. **Սալիկների միջև եղած**: Արդյունքում առաջացած մածուկը սկսեք քսել **միջսալիկային** կարերին (*ՀՆԳ*):

ՄԻՋՈՒԿԱՎՈՐԵԼ, նբ. **Մեջը որպես միջուկ լցնել**: .... Չոր մրգերով **միջուկավորված** բաղը ոչնչացվեց (*Գրաս, էջ 289*):

ՄԿՆԱՄՈՒՐԱԳՈՒՅՆ, ած. **Մկան գույնի նման մոխրագույն**: .... Թանգարանային աշխատողի **մկնամոխրագույն** համազգեստով կաշվե աթոռին զբաղեցրեց իր տեղը .... (*Գրաս, էջ 208*):

ՄՂԱՆԱՎԱՐ, գ. **Բուլղոզերավար**: **Մղանավար** Վալերիկ Ավետիսյանը երկար ժամանակ է շրջանի ճանապարհներն է

բարեկարգում իր հզոր տեխնիկայով(ՀՀ, 16.05.2019):

ՄՇԱԿՎԱԾՔ, գ. **Մշակվածություն, մշակելու աստիճանը:** .... Երկու անկյունաքարերի օգնությամբ ընտրեցի անհրաժեշտ **մշակվածքը** .... (Գրաս, էջ 507):

ՄՇԱԿՈՒԹԱԿԱԶՄԻՉ, ած. **Մշակույթ կազմող:** .... Ուսումնասիրությունը սկսում ենք **մշակութակազմիչ** համալիրների առանձնացումից և հետազոտումից(ՊԲՀ, 3, 2017, էջ 162):

ՄՇԵՑԻՈՒԹՅՈՒՆ, գ. **Մշեցուն հատուկ արդարամտություն:** Իրենից սովորելու շատ բան ունենք, և առաջին հերթին չարիքի հետ չհաշտվելու իր **մշեցիությունը** (ԱԱ, էջ 219):

ՄՇՏԱԲՈՍՈՐ, ած. **Վառվռուն, պայծառ:** Հավատքս, որ **մշտաբոսոր**, ի սկզբանե ինձ շնորհեցիր (ԳՄ, Է, էջ 38):

ՄՇՏԱԳԱՆԳՈՒՐ, ած. **Մշտապես գանգրացված (մազեր):** .... Մարիային դրդեց դեպի **մշտագանգուրը**, որը ծածկում էր նրա ականջները(Գրաս, էջ 292):

ՄՇՏԱՄԵՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Մշտասու մենակություն:** Քայլում եմ ճամփով **մշտամենության`** թափահարելով դրոշն ունայնության (ԳՄ, Թ, էջ 191):

ՄՈՒՐԱԱԼԵՉԵՐ, ած.**Մոխրագույն մազեր ունեցող.ծեր, մոխրահեր:** .... Բարակ **մոխրաալեհեր** մազերը այն աստիճան աղքատիկ էին .... (Գրաս, էջ 191):

ՄՈՒՐԱԵՐԿՆԱԳՈՒՅՆ, ած. **Մոխրագույնին տվող երկնագույն:** .... Փոքր սենյակի պատերը ներկված են **մոխրաերկնագույնով** (TV ալիք, 20.05.2019):

ՄՈՒՐԱԹԱՎՈՏ, ած.**Մոխրագույն նուրբ մազմուկների շերտով պատված:** Տե՛ս ԱԼԻՔԱՏԱՄՆԱԶԵՎ-ի օրինակը:

ՄՈՒՐԱՀԱՄ, գ. **Մոխրի համ:** ....Եվ մղում էր կոկորդն ի վար **մոխրահամը** զարհուրելի ամեն ինչի, նաև մարդկանց (ԲՄ, էջ 12):

ՄՈՒՐԱՇԱԳԱՆԱԿԱԳՈՒՅՆ, ած. **Մոխրի գույնի նման շագանակագույն**: .... Օսկարը ... սկսեց գննել բազմաթիվ տափակ մոխրաշագանակագույն գազանիկներին .... (Գրաս, էջ 451):

ՄՈՒՐԱՍԵՎԱՎՈՒՆ, ած. **Մոխրագույնին տվող սև**: Հաջորդը .... **մոխրասևավուն** ընձյուղներով ... թեղին է (Մ1, էջ 401):

ՄՈՒՐԱՎԱՐԴԱԳՈՒՅՆ, ած. **Մոխրագույնին տվող վարդագույն**: Տունն անթեղի էր վերածվել, միտում էր **մոխրավարդագույն** շեղջի մեջ.... (ՌԲ, էջ 146):

ՄՈՄԱԿԱՐՈՏ, ած. (փխբ.): **Եկեղեցում մում վառողների՝ հավատացյալների կարոտ եղող՝ քիչ ունեցող՝ պակաս զգացող**: Տե՛ս ԱՂՈԹԱԿԱՐՈՏ-ի օրինակը:

ՄՈՄԱՀԱՑ, գ. **Մեղրահաց, մեղրի խորիսի**: ... Մեղվափեթակները վաճառել միայն աշնանը, երբ մեղուներն արդեն կերի պաշար են կուտակել մեղրը լցնելով **մումահացերը**, սերարկել (Մ2, էջ 429):

ՄՈՍԿՎԱՅԱԲՆԱԿ, գ. **Մոսկվայում բնակվող**: Տե՛ս ԳԵՂԱՐՎԵՍՏԱՓԱՍՏԱԳՐԱԿԱՆ-ի օրինակը:

ՄՈՏՈՒՆՈՂԱՆՈՑ, գ. **Մոտորացված խոհանոց**: Ամբողջ բակում գոլորշի էր արձակում դաշտային **մոտոխոհանոցը** (Գրաս, էջ 392):

ՄՈՐԵՈՐԲ, ած. **Մոր կողմից որբ**: Վշտամուկոր հոր ու **մորեորբ** դասեր պատմությունը (ՌՂ, էջ 78):

ՄՍԱՊՈՒԻՏ, գ. **Մսից պատրաստված ապուխտ**: Չամանի սերմերն օգտագործելու ես որպես **մսապուխտների** համեմունք .... (Մ3, էջ 29):

ՄՍԻԻՉ, ած. **Մսխող, վատնող, անօգուտ գործածվող**: Ճիշտ է, նա ձայնից տարբերում էր հազվադեպ, հաստատապես փոստատան ներսից հնչող կրակոցները ռազմամթերքի այն **մսխիչ** կորստից, որին տրվում էին աշխարհագրայինները .... (Գրաս, էջ 245):

ՄՏԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ, գ. Այստեղ՝ **մտային՝ մտացածին կառուցվածք**: Մի օր մի փիլիսոփա գրեց, որ իմ ասած ամեն ինչը **մտակառուցվածքներ** են՝ զուրկ տեսանելի որևէ ապացույցից (ՄԳ, էջ 125):

ՄՏԵՐՄԱՀԱՅՑ, ան. **Մտերիմ և ցանկացող, մտերմություն հայցող**: Մտերմաբար, **մտերմահայց**, աչքերիս մեջ ծանրանում է լուռ, անընդմեջ (ՄԳ, էջ 80):

ՄՐԳԱՔԱՂՅՐԱՎԵՆԻ, գ. **Մրգերից պատրաստված քաղցրավենի**: Մրգաջրեր և այլ **մրգաքաղցրավենիներ** պատրաստելու (Մ1, էջ 491):

ՄՐՁՑՈՒՆԱԽԱՌՆ, ան.(դիպվ.): **Մրջունների հետ միասին**: .... Ընկերների հետ հարևանի այգին եք մտել, թթենին բարձրացել, թափ տվել, ծառի տակ թափված թուրը հավաքել, **մրջուննախառն** կերել (Մ1, էջ 428):

ՄՐՑՈՒԹԱՇՐՁԱՆ, գ. **Մրցույթների անցկացման ժամանակաշրջան**: Ազդարարվել է մշակութային դրամաշնորհային ծրագրերի **մրցութաշրջանի** բացման մասին (*Հնգ, news.am*):

ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱԿԱՆ, գ. **Մուլտիմեդիային վերաբերող**: «Audi» ընկերությունը սպառողական էլեկտրոնիկայի ցուցահանդեսին ներկայացրել է ապագայի **մուլտիմեդիական** համակարգը (*Հնգ, news.am*):

### 3

ՅՈԹԱԲԼԹԱԿ, ան.**Յոթ բլթակ ունեցող**: .... **Յոթաբլթակ** այս բույսը երազում տեսնել նշանակում է մոտ օրերս հանդիպելու ես յոթերեսանի մեկի հետ .... (Մ1, էջ 125):

ՅՈԹԵՐԵՍԱՆԻ, ան.(խսկց.): **Ճարպիկ, արտակարգ խորամանկ, խաբեբա**: Տե՛ս ՅՈԹԱԲԼԹԱԿ-ի օրինակը:

ՆԱԽԱԱՄՊՐՈՂՅԱՆ, ան.**Ամպրոպներին նախորդող: Նախամպրոպյան** ամառային օրով մեղադրյալ Օսկար Մացերատը նստել էր մետաղամալուխե թմբկագլանի վրա (*Գրաս, էջ 654*):

ՆԱԽԱԶԱՏԻԿԱՅԻՆ, ան.**Զատիկի տոնախմբությանը նախորդող: .... Նախագատիկային** երգչախմբի փորձ կկազմակերպեն .... (*Գրաս, էջ 154*):

ՆԱԽԱԿՈՐԻԶՅԱՆ, ան.**Կորիզի ձևավորմանը նախորդող շրջանի: Բջջային նախակորիզյան** ձևեր էին ծովային կապտականաչ ջրիմուռները (*Մ2, էջ 134*):

ՆԱԽԱՀԱՄԱԶԱՅՆԵՑՎԵԼ, ք.**Նախապես համաձայնեցվել:** 5 մլն եվրո դրամաշնորհ է **նախահամաձայնեցվել** ԵՄ կողմից Սևանա լճին վերաբերող բնապահպանական խնդիրների լուծման համար (*ՀՀ, 10.07.2019*):

ՆԱԽԱՍԹՐԵՍԱՅԻՆ, ան.**Սթրեսին նախորդող:** Ես **նախասթրեսային** վիճակում էի.... (*ՆՓ, էջ 228*):

ՆԱԽԱՍՈՒՐԲՇՆՆԴՅԱՆ, ան.**Սուրբ Ծնունդին նախորդող:** Իմ երկրորդ համերգային շրջագայությունը համընկավ **նախասուրբծննդյան** ժամանակահատվածի հետ (*Գրաս, էջ 645*):

ՆԱԽԱՏԱՏԻԿՅԱՆ, ան.**Նախատատիկի ժամանակվա:** ....**Նախատատիկյան** սնդուկից հանված կտորը .... (*Գրաս, էջ 308*):

ՆԱԽԱՅԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ, ան. **Ցեղասպանությանը նախորդող:** .... Օրենքը նախատեսում է՝ աշխարհի որևէ կետում **նախացեղասպանական** կամ ցեղասպանական գործողություններ տեղի ունենալու դեպքում դրանք կանխարգելու, մեղմելու և այդ ճգնաժամերին արձագանքելու համար ընդլայնել ԱՄՆ կառավարության հնարավորությունները .... (*ՀՀ, 15.03.2019*):

ՆԱԽՈՒՏԵՍՏԱՅԻՆ, ան. **Նախուտեստի համար նախատեսված:** Քվենտինենց տանը մենք սկզբում **նախուտեստային** շամ-



պայն խմեցինք. շատ լավ էր(ՆՓ, էջ 172):

ՆԱՆՈԱՇԽԱՐՀ, գ. **Մանր մասնիկների ամբողջություն:** Երևանի համալսարանի ռադիոֆիզիկոսները հետազոտում են **նանոաշխարհը** պլազմոնային ռեզոնատորներով (*ՀՆԳ, news.am*):

ՆԱՆՈԱՐԲԱՆՅԱԿ, գ. **Միջնորակային տարածությունները լուսանկարելու համար ստեղծված փոքր արբանյակ:** Առաջին անգամ **նանոարբանյակ** կուղարկվի Մարս (*ՀՆԳ, news.am*):

ՆԱՆՈԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Նանոտեխնոլոգիաների արտադրությամբ զբաղվող արդյունաբերություն:** ԵՏՄ անդամները քննարկել են **նանոարդյունաբերության** ոլորտում համագործակցությունը (*ՀՆԳ, news.am*):

ՆԱՆՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Փոքր մասնիկների, նանոնյութերի մեխանիկական, էլեկտրական, մագնիսական, օպտիկական հատկությունների ուսումնասիրությամբ զբաղվող գիտություն:** «Նանոգիտություն և տեխնոլոգիաներ» խորագրով հայ-իրանական համաժողովի ավարտին ստորագրվել է երեք հուշագիր (*ՀՆԳ, news.am*):

ՆԱՎԱԿԱՌԱՆՈՒՄ, գ. **Նավերի կառանում՝ կառանելը՝ պարանով ափին կապելը:** Սոպոտի ծովային նավակառանումից ջութակի ձայներ .... (*Գրաս, էջ 510*):

ՆԱՎԱՀԱՎԱՔԱԿԱՅԱՆ, գ. **Նավերի հավաքակայան:** ....Նավահավաքակայաններից ջուրն իջեցնելու .... մասին .... (*Գրաս, էջ 184*):

ՆԱՎԱՄԱՏՈՒՅՑԱՅԻՆ, ած.**Նավամատույցում գտնվող:** **Նավամատույցային** կամրջակներ (*Գրաս, էջ 26*):

ՆԱՎԹԱԽԱՎԻԱՐԱԲԱՐՈՆ, գ. (դիպվ.): Այստեղ՝ **նավթադուրներով և խավիարով կաշառվող պաշտոնյա:** Անշուշտ, եվրոպական բարոյական արժեքների ու ժողովրդի ազատության գաղափարի կրողը կարող էր նման վարքագիծ ունենալ, ոչ թե Կասպյան **նավթախավիարաբարոնը**.... (*ՆԱ, էջ 21*):

ՆԱԲՆՋԱԴԵՂԻՆ, ած.Նարնջի նման դեղին, նարնջագույն դեղին: .... Գացանիայի ծաղիկները խոշոր են, նարնջադեղին պսակաթերթերի վրա սև օղակներով (Մ1, էջ 162):

ՆԱԲՆՋԱԿԱՐՄՐԱՎՈՒՆ, ած. Նարնջագույնին տվող կարմրավուն: Նարնջագույնի և կարմիրի երանգներով: ....Ջոհանը սիրում է փակ տարածքների նարնջակարմրավուն լույսերը (TVայլք, 02.08.2019):

ՆԵԿՏԱՐԱԼԻ, ած. Նեկտարով լի: .... Կակաոյի ծաղիկները .... նեկտարալի են դառնում հատկապես վաղ առավոտյան (Մ2, էջ 160):

ՆԵԿՏԱՐԱԾՈՐ, ած. Նեկտար ծորաց(ն)ող: Ինչ որ քաղել էի ես // Երկնքից հուրիբան՝ նեկտարածոր մեղվի պես // Տվեցի նրան (ԽՄ2, էջ 23):

ՆԵՂԱԴՈՒՆՉ, ած.Նեղ դնչով: ... Նեղադունչ... մի փոքրուկ էիր նկարելի (Մ3, էջ 428):

ՆԵՂՇԵՂԲ, ած.Նեղ շեղբ ունեցող՝ շեղբով: Նեղշեղբ սուր բահով օձի գլուխը տրորել (Մ1, էջ 85):

ՆԵՏԱԳԼԽԻԿ, գ. Նետի փոքրիկ, սուր ծայրը՝ գլխիկը: Պեղել և մ.թ.ա. 6-5 հազարամյակներում պատրաստված պղնձե ...նետագլխիկներն կարթեր էին հայտնաբերել(Մ3, էջ 89):

ՆԵՐԲԱԽՈՒՄ, գ. Ներքին բախում: .... Վեպի հերոսները բացահայտում են մարդկային դրամայի սուր ներբախումները.... (ԱԱ, էջ 257):

ՆԵՐԲԱՆԿԱՅԻՆ, ած. Բանկի ներսում գործող: Արտարժույթի ներբանկային շուկայում բանկերը միլիոնավոր դոլար են գնել (Zuf, news.am):

ՆԵՐԳՈՐԾՈՒՆՈՐԵՆ, մկբ.Ներգործուն կերպով, ներգործունաբար: .... Կարողացա թմրկահարել ոչ պակաս ներգործունորեն .... (Գրաս, էջ 645):

ՆԵՐՊԱՏՎԱՍԵԼ, բ. Ներսում տեղադրել, զետեղել: Ձեռքի

մեջ **ներպատվաստված** չիպով բիռիաքերը փորձում է գերմարդու մարմին ստեղծել (*Հւց, news.am*):

ՆԵՐՏԻԵԶԵՐՔ, գ. (փխբ.): **Ներաշխարհ**: Այդ մեր արյունն է երգում, և նրա ներսույզ զանգերն ու դողանջները տարածվում են **ներտիեզերքում** և արձագանքում նրանից դուրս և նրա խորքում (*ՀրչԹ, էջ 168*):

ՆԻԿՈՏԻՆԱՅԵՂ, ան., գ. **Նիկոտին պարունակող բույսերի ցեղին պատկանող**: Հիշենք, որ **նիկոտինացեղի** միամյա բույս մախորկան օգտագործում են նաև .... բույսերի վնասատուների դեմ պայքարելու նպատակով (*Մ2, էջ 382*):

ՆԿԱՐԱԳՐԵԼԻ, ան. **Որին (որը) կարելի է նկարագրել**: Ամենաշատը յոթ բույսն անց նույնքան հաճելի, իսկ մնացյալում դժվար **նկարագրելի** օրիորդը մեզ մեկնեց երկու ծրարիկ .... (*Գրաս, էջ 45*):

ՆԿՈՒՂԱՏԻՊ, ան. **Նկուղանման**: Սովորություն ունեի՝ դպրոցից հետո մտնում էի խոհանոց, ապա **նկուղատիպ** սենյակ.... (*ՆՓ, էջ 163*):

ՆՅՈՒԹԱԿԱԶՄՎԱԾՔ, գ. **Ինչ նյութերից կազմված լինելը, կառուցվածքը ըստ նյութական բաղադրիչների**: Այժմ նա մեկնաբանություններ էր անում .... լաքապատման և **նյութակազմվածքի** բացառիկության մասին (*Գրաս, էջ 560*):

ՆՇՏԱՐԱՅԻՆ, ան. **Նշտարի նմանվող, նշտարանման, նշտարաձև**: ... Կտավատի նեղ, **նշտարային** տերևները հակադիր են ցողունին (*Մ2, էջ 245*):

ՆՈՐԱԶԵՎԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ, գ. **Մոլի նորաձև («մոդայիկ»)** լինելը: .... Լոկ **նորաձևամոլությունից** դրված է բացարձակապես լեհերեն խոսում (*Գրաս, էջ 116*):

ՆՈՐԱՄՈՒՍՆԱԿԱՆ, ան. **Նոր ամուսնացողներին՝ ամուսնությանը հատուկ**: .... Գեղեցիկ ու **նորամուսնական** տեսք ունեին հաարսանեկան զգեստները (*Գրաս, էջ 49*):

ՆՐԲԱԲՈՂԲՈՋ, ան. **Նորածիլ, նոր աճած**: Իմ նրբաբողբոջ ու թոթով մանկիկ, իմ ադամանդյա շողացող արցունք (*ԳՄ, Ա, էջ 84*):

ՆՐԲԱՓՈՒՇ, գ. **Նուրբ փշեր ունեցող**: Վարդի փայլ ուներ, կանաչ **նրբափուշ** և հասուն կնոջ թեթև երանգներ (*ՄԳ, էջ 79*):

ՆՈՒՅՆԱՍԵՌԱԿԱՆ, գ. **Համասեռամոլ, նույնասեռամոլ**: Իմ ամենամտերիմ ընկերներից մեկը **նույնասեռական** է, աֆրո-ամերիկոսի և մեքսիկ-ամերիկոսի (*ՌՀ, էջ 272*):

## Շ

ՇԱԳԱՆԱԿԱԿԱՐՄՐԱՎՈՒՆ, ան. **Շագանակագույնին տվող կարմրավուն**: [Գորգերը] .... փոված էին մեկը մյուսի վրա ...., ներկայացնելով խայտաբղետ աստիճաններ, որոնց ներքևի աստիճանը **շագանակակարմրավուն** էր .... (*Գրաս, էջ 551*):

ՇԱՀԱԴԴԴՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Շահագրգիռ՝ շահադրդված լինելը**: Արդյունքում բարձրացել են աշխատակիցների **շահադրդվածությունը** ու աշխատանքի արտադրողականությունը (*ՀՄԳ*):

ՇԱՂԱԿՐԱՍԱՄՈՒ, ան. **Շաղակրատելու մոլուցք ունեցող**: Հետո փութաջան հարություն կտա // **Շաղակրատամուլ** էգին անհոգի (*ԽՄՄ, էջ 6*):

ՇԱՐԺԱԽՏ, գ. **Շարունակ տեղաշարժվելով արտահայտվող հիվանդություն**: Իր «**Շարժախտ**» պատմվածքում Լեոնարդո Ալիշանը կերտում է Ամերիկայի գունեղ իրականության դիմանկարը, որտեղ մտավորական օտարականն անկարող է ընտելանալ «**շարժախտ**» կոչվող անհասկանալի հիվանդությանը (*ՊԲՀ, 1, 2019, էջ 127*):

ՇԵՐԱՄԱՊԱՀՈՑ, գ. **Շերամը պահելու վայր, շերամատուն**: **Շերամապահոցը** ցածրիկ և խավար շինություն էր (*ՀՄԳ*):

ՇԻՏԱԿՈՐԵՆ, մկբ. **Ճշտիվ, ճշտորեն**: Ես ձեզ **շիտակորեն**

կասեմ .... (Գրաս, էջ 133):

ՇՂԱՐՇԱՊՈՉ, ան.**Շղարշի նման թափանցիկ**: Քո ակվարիումի թթվածնով հարուստ մաքուր ջրում լողում ու շողում են արծաթափայլ, **շղարշապոչ**... մանրածածաններ (Մ2, էջ 398):

ՇՆՉԱՀԱԼԱԾ, ան. **Շնչակտուր**: Շնչահալած նեղ քարերի մռայլության ժիր ձեռքերից ձողոպրած (ԳԹ, 28.06.2019):

ՇՇԱԿԱՆԱՉԱՎՈՒՆ, ան. **Կանաչ շշի գույնին մոտ**: .... Շրջապատված էր **շշականաչավուն** ծովով (Գրաս, էջ 164):

ՇՈԳԵՊԱՐԱՐ, ան. **Շոգիով պարուրված**: ... Վենետիկը հագեցած է բազմապիսի պայծառությամբ. խոր գիշերը քարշ է տալիս **շոգեպարար** գաղտնախորհուրդ նվաղումներ (ԲՄ, էջ 43):

ՇՈԿՈԼԱԴԱՇԱԳԱՆԱԿԱԳՈՒՅՆ, ան. **Շոկոլադի նման շազանակագույն**: .... Նախնական փայլեցման համար **շոկոլադաշազանակագույն** դոճխեժը .... (Գրաս, էջ 504):

ՇՈՂԱՓԵՏՈՒՐ, ան. (բնատ., փխբ.): **Շողացող փետուրներով**: Ու ես գտա երգն իմ կորած, // Երգն իմ **շողափետուր**, երգ իմ հոգու (ԼԴ 1, էջ 63):

ՇՈՅԱԽՈՍ, մկբ., ան. **Խոսքով հորդորելով, հաճոյանալով**: Նա ինձ **շոյախոս** համոզեց, ու ես դարձա Դուրյան (ԼԴ 2, էջ 16):

ՇՈՐԱԾԱԾԿՈՒՅԹ, գ. **Շորերի ծածկույթ, ծածկույթ շորերով**: Այդ փակ թվացող կառույցը վեր էր ածվում իմ Աննա տատիկի հսկայական **շորածածկույթի** .... (Գրաս, էջ 375):

ՇՎԵԴԱՀԱՅ, գ. **Շվեդիայում բնակվող հայ**: **Շվեդահայր** փորձել է գենքը փոխանակել թմրանյութով, սակայն բռնվել է (Հսգ, news.am):

ՇՏԱՊՈՂԱԲԱՐ, մկբ. **Շտապ կերպով, շատ արագ**: .... Վերքը փնտրելով՝ սկսեց **շտապողաբար** շոշափել նրա մարմինը .... (Գրաս, էջ 253):

ՇՐԹՆԵՐԿՈՏ, ան. **Վրան շրթներկ ունեցող՝ քաված**: .... Ոչ թե

համբուրել են կանանց հոգնած մատիկները, այլ դաշտային հաուրիցի **շրթներկոտ** երախը (*Գրաս, էջ 256*):

ՇՈՒՐՁԼՈՒՄՆԱՅԻՆ, ած. **Լուսնի շրջագիծն ընդգրկող, լուսնաշուրջ**: Սարքը դուրս է եկել **շուրջլուսնային** ուղեծիր (*Հսգ, news.am*):

## Ո

ՈՂԲԵՐԳԱՀՅՈՒՄ, ած. (բնստ.): **Ողբերգությամբ հյուսված**: Վենետիկը գորշաթույր է, ... փոթորկալից մի գորշությամբ, որին ասես պարուրում է **ողբերգահյուս** շղարշի մեջ (*ԲՄ, էջ 42*):

ՈՂԿՈՒԶԱՀԱՏԻԿ, գ. **Ողկույզի հատիկ, խաղողահատիկ**: Քաղցրությունից ճաքած **ողկուզահատիկից** մեղուն խաղողայնություն է վերցնում (*Մ2, էջ 13*):

ՈՂՆԱՇԱՐԱԲԱՆ, գ. **Ողնաշարի հիվանդություններ բուժող բժիշկ, նյարդաբան**: Նա վիրահատություններ է իրականացնելու «Ուիզմոր Քլինիք»-ի **ողնաշարաբանների** հետ համատեղ (*Հսգ*):

ՈՍԿԵԾԱՂԿՈՒՆ, ած. (բնստ.): **Ոսկեգույնով դրվագված**: ... Բեյքոզը լուսաթափանց իր գմբուխտով բոլորվել է խարտիշագեղ վարսերիդ մեջ, անմեղորեն տարածելով պատմուճանի **ոսկեծաղկուն** քղանցքները... (*ԲՄ, էջ 50*):

ՈՍԿԵՄԵՂՈՒ, ած. (բնստ.): **Մեղվին բնորոշ դեղին**: Առվի խոխոջները // Խմբերգում են արծաթ, // Վազի բողբոջները // **Ոսկեմեղու** դարձան (*ԼԴ 1, էջ 61*):

ՈՍԿԵՑՈՂՈՒՆ, ած. (բնստ.): **Դեղին**: Պատկառուկի **ոսկեցողուն** խութերը... (*ԲՄ, էջ 6*):

ՈՍԿԵՑՈՐՅԱՆ, ած. **Ցորնադեղին**: Ծիծաղախինդ լուրթ աչքերով, **ոսկեցորյան** խոպոպներով այդ երեխան կանգ է առնում բնագորրեն (*ԲՄ, էջ 58*):

ՈՍԿՐԱՄՐԱՑՈՒՄ, գ. **Ոսկորների ամրացում**: ... Հորթերիդ **ոսկրամրացումն** ապահովված էր (*Մ3, էջ 18*):

ՈՍԿՐԱՄՆՈՒՅՈՒՄ, գ. **Ոսկորների սնուցում:** .... Ոսկրա-  
**սնուցման** խանգարման հետևանքով .... ոսկրային հյուսվածք-  
ները աստիճանաբար քայքայվելու են (*Մ3, էջ 18*):

ՈՍՊՆՅԱԿԱՅԻՆ, ած. **Կառուցվածքում ոսպնյակ ունեցող:**  
.... Գերժամանակակից հայելու **ոսպնյակային** համակարգ (*Մ2, էջ  
267*):

ՈՏՆԱՄԱՍ, գ. **Ոտնակողմ, մահճակալի այն կողմը, որտեղ  
պառկած ժամանակ ոտքերն են լինում:** .... Նա նայեց Բրունոյին,  
որը հետևում էր իմ փորձին՝ տեղ զբաղեցնելով մահճակալի **ոտ-  
նամասում** (*Գրաս, էջ 318*):

ՈՐՄՆԱԿՈՂՄ, ած. **Պատի կողմ:** .... Ամեն անգամ նեյրոնե  
գլխարկը գցում է մահճակալիս **որմնակողմի** ձախ սյան վրա  
(*Գրաս, էջ 4*):

ՈՐՈՃՈՂԱԿԱՆ, ած. **Որոճելու:** [Անասունները] .... իրենց  
մասնագիտական **որոճողական** պարտականություններն էին  
կատարում ցողից թացացած, փոքր-ինչ մառախլապատ արոտա-  
վայրերում.... (*Գրաս, էջ 377*):

ՈՐՍԱԳՈՂԱԿԱՆ, ած. **Որսագողությամբ զբաղվող:** ....  
Ներկայացվեց ավելի շուտ ոչ թե որպես ծովահենային նավ, այլ  
որպես **որսագողական** (*Գրաս, էջ 117*):

## Չ

ՉԱՐԱՀԱՐԵԼ, բ. **Չար հրահրել:** Բառերն այլևս դատողու-  
թյուններ չեն **չարահարում**, այլ վերածվում են գույն ու բույրի  
(*ՄԱ, էջ 169*):

ՉԱՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Չարահարելը:** Բայց սա առաջին  
հայ վեպն է, որ խոսք է բացում հայոց վերափոխումների դարերի  
կրկնվող **չարահարության** մասին (*ՄԱ, էջ 49*):

ՉԱՐԱՀՅՈՒՍԵԼ, բ. **Չարությամբ հյուսել:** Ես արդի մեր  
պոեզիայում քչերին գիտեմ, որ.... այդքան առեղծվածային տողեր

**չարահյուսեն** (ՄՄ, էջ 168):

ՉԱՐՉԻԱՎԱՐԻ, մկր. **Չարչու նման, ինչպես չարչին, չարչիաբար**: .... Տարատեսակ ապրանքներ եւ բերելու, այստեղ **չարչիավարի** վաճառելու .... (Մ1, էջ 312):

ՉԹԱՎԱՃԱՌ, գ., ած. **Չիթ վաճառող: Չթավաճառ** էիր դարձել (Մ3, էջ 37):

ՉՈՐՄՇԵՐՏԱՆԻ, ած. **Չորս շերտ ունեցող**: .... **Չորսշերտանի** հագուստով «խնձորը» (Գրաս, էջ 481):

ՉՈՐՄՏԵՂԱՆՈՑ, ած. **Չորս տեղ ունեցող, չորստեղանի**: Ես պետք է հորատադուրով հարթեցնեի **չորստեղանոց** գերեզմանի համար ... բելգիական գրանիտի շերտը .... (Գրաս, էջ 506):

ՉՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Չրի արտադրություն**: .... [Դա] ուղղակիորեն կիթանի հայկական **չրարտադրության** ոլորտը (ՀՀ, 12.06.2019):

ՉՈՒԳՈՒՆԱԳԼՈՒԻՍ, ած. (փխբ.): **Հաստագլուխ, բան չհասկացող**: Մի **չուգունագլխի** պատճառով գլխացավեր եւ ունենալու (Մ3, էջ 45):

## Պ

ՊԱԼԱՐԱՆՄԱՆ, ած. **Պալարի նմանություն՝ ձև՝ տեսք ունեցող**: .... Փարթամորեն աճել է **պալարանման** կոճղարմատներով նվիկը (Մ2, էջ 500):

ՊԱՀԱԾՈՑԱՏԵՍԱԿ, գ. **Պահածոյի տեսակ**: Այս երազի ճշգրիտ մեկնման համար բացառիկ նշանակություն ունի **պահածոյատեսակը** (Մ3, էջ 49):

ՊԱՂՇՈՒՆՉ, ած. **Պաղ շունչ ունեցող, սառնաշունչ**: Քամին՝ այս **պաղշունչ** քամին, անխղճության տիպն է կործանումի (ԳԹ, 17.09.2019):

ՊԱՅԾԱՌԱԿԻՐՔ, ած. (բնստ.): **Պայծառ զգացումներ հարուցող**: Նա կապույտն էր իմ թափանցիկ՝ **պայծառակիրք** ու ոգե-



շունչ (ԽՄՁ, էջ 23):

ՊԱՏԳԱՄԱԽՈՒՄԲ, գ. **Պատգամներ ունեցող՝ կատարող՝ իրագործողների խումբ:** .... Պատգամախմբերի օգնությամբ .... ազգային տարազները դարսել են նավթալինի մեջ (Գրաս, էջ 112):

ՊԱՏՄԱԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ, ած. **Պատմական և բանահյուսական:** Պատմաբանահյուսական կերպարների մոդեռնը...ճանրակշիռ ներդրում է նոր շրջանի հայ գրականագիտական մտքի համար (ՄՄ, էջ 2):

ՊԱՏՄԱՓԱՍՏԱԳՐԱԿԱՆ, ած. **Պատմական և փաստագրական:** Պատմափաստագրական բացառիկ արժեք ներկայացնող այդ լուսանկարներն Ա. Վեգները ցուցադրել է Բեռլինում իր հրապարակային ելույթների ընթացքում .... (ՊԲՀ, 2, 2018, էջ 247):

ՊԱՏՐԱՆԱՀԱՐ, ած. **Պատրանքների ենթարկված:** Հուրհրում են պատրանքները պատրանքների պատրանահար (ԿՄ, էջ 36):

ՊԵՄԶԱԿՏՈՐ, գ. **Պեմզայի կտոր՝ բեկոր:** ... Ջուլյալ ջրերը հորդացին և լցվեցին պեմզակտորների դատարկ խոռոչների մեջ (ՄՅ, էջ 88):

ՊԵՏԱԶՈՒԴԿ, ած. **Պետից զուրկ, պետ՝ տնօրեն՝ ղեկավար չունեցող:** Երկար ժամանակ աշխատելու ես մի պետազուրկ, անտեր հիմնարկում (Մ1, էջ 227):

ՊԵՏԱԿԱՆԱԿԵՐՏՈՒՄ, գ. **Պետականության և պետության ստեղծում:** .... Ինչպես ցույց է տալիս մեր 30-ամյա պետականակերտման պատմությունը .... (Հրպ., 15.06.2018):

ՊԵՏՊԱՐՏՔ, (հավ.): **Պետական պարտք:** Հայաստանի եվրապարտատոմսերը պետպարտքի կառավարելիության ապացույց (Հւգ, news.am):

ՊՂՆԶԱԴԵՂՆԱՎՈՒՆ, ած. **Պղնձի գույնի դեղնավուն:** .... Պղնձադեղնավուն շեփորը լուռ պառկած էր զանգակների հավաքածուի կողքին .... (Գրաս, էջ 251):

ՊՂՆՁԱԿԱՐ, անՊղնձե կարեր ունեցող՝ կարերով: ...  
**Պղնձակար** սրածողը մեկ-երկուս և պարզեց ավանդական փա-  
ռով .... (Գրաս, էջ 147):

ՊՃՆԱՏԵՍ, ան. **Հմայիչ**: Սիրամարգի փետուրներով **պճնա-  
տես**՝ փնտրող (ՄԳ, էջ 70):

ՊՈՐՏՈՒԳԱԼԱՀԱՅ, ան. գ.**Պորտուգալիայում բնակվող հայ**:  
.... Թեպետ **պորտուգալահայ** համայնքը փոքրաթիվ է ....(ՀՀ,  
10.04.2019):

ՊՉՐԱՆՔԱՍԵՐ, անՊչրանք սիրող, **պչրասեր**: **Պչրանքա-  
սեր** էիր դարձել(ՄՅ, էջ 99):

ՊՏՈՒՏԱԿԱԽԱՂ, գ. **Պտուտախաղ**: Փորձիր նոր՝ «Ավիա-  
տոր» խաղատան **պտուտակախաղը**.... (Հւգ):

ՊՏՈՒՏԱՐՇԱՎ, ան. **Պտույտներով արշավ կատարող**:  
.....Չեմ սիրում **պտուտարշավ** կարուսելներ նստել (ՌԲ, էջ 14):

ՊՐԱՀԱՅԱԲՆԱԿ, գ., ան. **Պրահայում բնակվող**: Հայեր՝  
**պրահայաբնակ**, պրահայամերձ ու պրահայաճանաչ, տարածեք  
այս տեսահոլովակը.... (Հւգ):

ՊՐԱՀԱՅԱՃԱՆԱՉ, ան. **Պրահան ճանաչող**: Տե՛ս ՊՐԱՀԱ-  
ՅԱԲՆԱԿ-ի օրինակը:

ՊՐԱՀԱՅԱՄԵՐՉ, ան. (դիպվ.): **Պրահային մերձ**: Տե՛ս ՊՐԱ-  
ՀԱՅԱԲՆԱԿ-ի օրինակը:

## Ջ

ՋԱՎԱԽԱՀԱՅ, գ. **Ջավախքում բնակվող հայ**: **Ջավախա-  
հայերի** պատվիրակությունն այցելել է սփյուռքի նախարա-  
րություն (Հւգ, news.am):

ՋՂԱՍՊԱՌ ԱՆԵԼ, բ. **Նյարդերը, ջղերը սպառել**: Նրան  
**ջղասպառ անողը** վերջին դեպքերն էին (ՁԽ, էջ 95):

ՋՈՐԵԲՈՒԾԱԿԱՆ, անՋորեբուծությամբ զբաղվող, **ջորի-  
ներ բուծող**: **Ջորեբուծական** ֆերմա էիր կառուցում(ՄՅ, էջ 111):

ՋՐԱԲԱՑԹՈՂՈՒՄ, գ. **Ջրառ, ջուրը բաց թողնելը**: Սևանի ջրաբացթողումն ավելացնելու օրինագիծը մտել է խորհրդարան (ՀՆԳ, news.am):

ՋՐԱԳՈԼՈՐՇԱՅԻՆ, ան. **Ջրագուրջիների սառեցմամբ իրականացվող**: Խնկի եթերայուղը ստացվում է ծառի խեժից ջրագուրջային թորման միջոցով (ՀՆԳ):

ՋՐԱԼՑՎԵԼ, բ. **Ջրով ցվել, հեղեղվել**: Երևանում ջրալցվել են Կասյան փողոցի ատամնաբուժական կլինիկան և գրավատունը (ՀՆԳ, news.am):

ՋՐԱԽՆԱՅՈՂ, ան. **Ջուր խնայող**: Հայաստանում ջրախնայող տեխնոլոգիաներ են ներդրվում (ՀՀ, 13.06.2019):

ՋՐԱԾՈՐ, ան. (բնատ.): **Ջուր ծորացող**: Տե՛ս ԳՈՐՇԱՊԱՐԱՐ-ի օրինակը:

ՋՐԱԾՈՐՈՒՆ, ան. (փխբ.): **Ջուր ծորացող .... Բոսֆորի ջրածորուն** սրտի միջից աղջնակը պահանջում էր խառնիճաղանջ հեքիաթներ.... (ԲՄ, էջ 62):

ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ, ան. **Ջրավազանների վերաբերող**: Մինչև աշուն կներկայացվի Արարատյան դաշտի ջրավազանային կառավարման պլանը (ՀՆԳ, news.am):

ՋՐԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ, ան. **Լողափում մարդկանց անվտանգությունն ապահովող**: Հանրային լողափերում և հանգստյան գոտիներում ջրափրկարարական հենակետեր կստեղծվեն (ՀՆԳ, news.am):

ՋՐԱՔԻՍԱՅԻՆ, ան. **Ջրաքիսին վերաբերող**: Այստեղ՝ ջրաքիսի բուժմամբ զբաղվող: Գերմանիայում փակվել է վերջին ջրաքիսային ֆերման (ՀՆԳ, news.am):

ՋՐԱՔԼՈՐԱՅՈՒՄ, գ. **Ջուրը քլորացնելը**: Մեքենան բախվել է ջրաքլորացման կայանի պարսպին (ՀՆԳ, news.am):

ՋՐՎԵԺԱԾԻՆ, ան. **Ջրվեժից ծնված**: Ջրվեժածին երկու բացված ծաղիկներ իրար հետ զրուցում, գիշերային երազներ էին

պատմում (*Մ2, էջ 9*):

## Ռ

ՌԱԴԻՈՒՅԵՑԻ, գ. **Խեցու ձև ունեցող ականջակալ**: Նրա **ռադիոխեցին**, ինչպես միշտ, ամուր մխրճված էր ականջի մեջ (*ՌԲ, էջ 54*):

ՌԱԶՄԱՍՈՒԵՎՏՐԱԿԱՆ, ած.**Ռազմական և առևտրական նպատակների ծառայող**: **Ռազմաառևտրական** նավեր(*Գրաս, էջ 212*):

ՌԱԶՄԱՀԱԳՈՒՍՏ, գ. **Ռազմահանդերձանք**: .... Երգիչը պնդում էր, որ իրեն միշտ դուր է եկել Գերմանիայի **ռազմահագուստը** (*TVալիք, 19.08. 2019*):

ՌԱԶՄԱՎԱՐԱԳԵՏ, գ. **Ռազմավարության մասնագետ**: .... Դարդանելյան ռազմագործողությունը, ինչպես բնորոշում է բրիտանացի **ռազմավարագետ** Լիդլ Հարտը .... (*ՊԲՀ, 1, 2018, էջ 166*):

ՌԵԼՍՈՒՂԻ, գ. **Ռելսերի ուղի**: Քայլում էր **ռելսուղով** (*ՌԲ, էջ 181*):

ՌԵՏՈՒՇԱՎՈՐԵԼ, նբ.**Ռետուշավոր դարձնել, ռետուշել**: .... Մազերի միջից դուրս քաշած շյուղով ցույց էր տալիս ապակու տակի **ռետուշավորված** լուսանկարը .... (*Գրաս, էջ 193*):

ՌՈՒՍԱՍՏԱՆԱՀԱՅ, գ. **Ռուսաստանաբնակ հայ**: Ներիշխանական նոր սկանդալ. ազատվում են նաև **ռուսաստանահայ** մեծահարուստ եղբայրներից (*Հնգ, news.am*):

## Ս

ՍԱԼԱԹԱԶԵՎ, ած., մկբ. **Որպես սալաթ կամ սալաթի մաս**: Եփելուց հետո կեղևազրկում ես և **սալաթածն** .... հաճույքով խժռում (*Մ1, էջ 80*):

ՄԱԼԵ, ած.Սալահատակված, սալերով ծածկված՝ պատված, սալարկված: .... Մայր տաճարի սալե հատակին ծնրադիր՝ Աստվածաբանություն ես սերտում(*Մ1, էջ 347*):

ՄԱԿԱՎԱՔՆՈՒԹՅՈՒՆ, գ. Քիչ քնելը: Եվ այս ամենը՝ իմ հոգեմաշուկ սակավաքնության հետ (*ՌՀ, էջ 126*):

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԽԱՄՍ, գ. Սահմանադրություն խախտած անձ: Կեղծիքներով, ահաբեկումներով և կաշառքով իշխանությունը բռնազավթած սահմանադրախախտը խոսում է Ազատության գաղափարի մասին (*Հնգ*):

ՄԱՂԱՐԹԱՇՈՒԲՁ, մկբ., ած. (բնստ.): Սաղարթների շուրջ: .... Վեր է խուժել խնձորենիս՝ // Մի վիթխարի սաղարթ, // Ու վառվում է սաղարթաշուրջ // Մի աստղային աշխարհ (*ԼԴ 1, էջ 67*):

ՄԱՂԱՐԹԱՊՍԱԿ, գ. Սաղարթների պսակ, պսականման մաս, ճյուղավորումների պսակաձև ամբողջություն: .... Սլացիկ բրգաձև կամ տանձաձև սաղարթապսակով նոճին երիտասարդ հասակում արագ է աճում ....(*Մ2, էջ 497*):

ՄԱՌՑԱԽՅԻԿ, գ. Նույնն է՝ սառնախցիկ: Թուրմը լցնել սառույցի ամանի մեջ, դնել սառցախցիկում (*TV ալիք, 08.06. 2019*):

ՄԱՐՔԱՀԱՆՈՒՄ, գ. Մարքերը՝ գործիքները՝ հարմարանքները հանելը՝ քանդելը: .... Օսկարը շարունակում էր .... հետևել սարքահանման գործընթացին (*Գրաս, էջ 431*):

ՄԳԱԶԱՅՆ, ած. Ողբաձայն: ....Գետը ցնցվեց, ջրի հսկայական շիթեր վեր ելան, .... և սգաձայն խշռոցով ուղեկցեցին դեպի հարավ փչող քամուն (*ՌԲ, էջ 200*):

ՄԳԱՇՈՒՆԶ, մկբ.,ած. (բնստ.): Տխրություն՝ սուգ գուժող: Ցամաքած կողերով մի ծեր շուն // Ճաքճքած իր կոկորդն է զգում, // Որ երկար շեփորի սգաշունչ(*ԽՄ1, էջ 46*):

ՄԵԶԱՅԻՆ, ած. Որտեղ սեզ է աճում: Քո սեզային խոտհարքներում մի գեղեցիկ եղնիկ էր արածում(*Մ3, էջ 150*):

ՄԵԽԱԳԼՈՒԽ, ած. Մեխի ձև ունեցող, սեխանման գլուխ

**ունեցող:** .... Չի բացառվում, որ **սեխագլուխ** մի տականք քեզ վրա լուսնահաչ տա (*Մ1, էջ 254*):

ՍԵՌԱՓՈԽ, ած. **Մեռը փոխած:** Նա տարակուսանք է հայտնել, որ հանրապետականները աղմուկ են բարձրացրել **սեռափոխ** այս անձի վերաբերյալ (*ՀՀ, 1.04.2019*):

ՍԵՎԱԲՈՂԲՈԶ, ած. **Սև բողբոջներով, բողբոջները սև:** Տե՛ս ԳՈՐՇԱՄՈԽԲԱՎՈՒՆ-ի օրինակը:

ՍԵՎԱԴԱՐՉՆԱԳՈՒՅՆ ած. **Սևին տվող դարչնագույն:** Մարմնի վերին մասը՝ **սևադարչնագույն** (*Մ2, էջ 247*):

ՍԵՎԱԹԵՐԹԵՐՈՒՆՔ, ած. **Սև թերթերունքներով, թերթերունքները սև:** Ինձ, իմ ողջ **սևաթերթերունք** երկնագույն աչքունքով հանդերձ, բնորոշ էր նաև ....հրաձիգային ոգին .... (*Գրաս, էջ 238*):

ՍԵՎԱՇԱԳԱՆԱԿԱԳՈՒՅՆ, ած. **Սևին տվող՝ մուգ շագանակագույն:** .... Տեսա մոտավորապես նույն չափսերի **սևաշագանակագույն** գունավորում ունեցող ու դեղինին խփող երկու կոշտուկները (*Գրաս, էջ 512*):

ՍԵՐԱՐԿԵԼ, նբ. **Մեղրահացի բջիջների բերանները փակել:** Տե՛ս ՄՈՄԱՀԱՅ-ի օրինակը:

ՍԵՐԲԱՀԱՅ, գ. **Մերբիայում բնակվող հայ: Մերբահայ** գրող. «Մենք պատրաստ ենք երկար սպասել» (*Հմց, news.am*):

ՍԹԲԵՍԱՇԱՏ, ած. **Շատ սթրեսներ ունեցող:** Կյանքը **սթրեսաշատ** է, ու երբեմն այն ավելի վատանում է (*ՌՀ, էջ 167*):

ՍԻՐԱՀԱՅԵԼ, բ. **Սիրով՝ հաճույքով նայել:** .... Ուզում էր մի քիչ էլ **սիրահայել** Օտոմինյան լճից բերված խեցգետիններին .... (*Գրաս, էջ 286*):

ՍԻՐԱՄՈՒՂ, ած. (բնաս.): **Մեր մղող: Սիրամուղ** գիշերով, թոնն ի վեր՝ ելա, որ գտնեմ իմ սիրածին (*ԽՄ2, էջ 82*):

ՍԻՐԱՄՐՄՈՒՌ, ած. (բնաս.): **Սիրուց մրմռացող:** Ես

երկնքից ընկած սիրամբնու կուտ եմ (*ԽՄ1, էջ 70*):

ՄԻՐԱՇՂԱՐՇ, ան. **Սիրո շղարշով պատած**: Կինն այդ ժպտար սիրաշղարշ քնքշանքով և կարոտի իր թևերով (*ՄԳ, էջ 65*):

ՄԿՈՒՏԵՂԱՆՄԱՆ, ան. **Սկուտեղի նմանություն՝ ձև՝ կերպ ունեցող**: .... Միայն բնի սկուտեղանման ներսն է պատած նյութով (*ՄՅ, էջ 199*):

ՄՂՈՅԱԵՐԻԶ, ան. **Սղոցի աստամների նման՝ կտրտված երիզ ունեցող՝ երիզով**: .... Նշտարանման մանր սղոցաերիզ տերևներն ես ցած թափում ... (*Մ1, էջ 323*):

ՄՄԲԱԿԵԼ, բ. (փխբ.): **Կոխկոտելով անցնել**: Եվ ժամանակն է անփույթ սմբակել (*ԽՄ2, էջ 5*):

ՄՈՂՈՒՆԱՅԻՆ, ան. (փխբ.): **Ստորաքարշ, սողալով ուրիշների առաջ**: Քծնող, շողոքորթ շրջապատում ինքդ էլ սողունային կյանք ես վարելու (*Մ1, էջ 371*):

ՄՈՃԵՀԱՍԱԿ, ան. (փխբ.): **Սոճու նման՝ բարձր հասակ ունեցող**: Հայացքդ մի սոճեհասակ աղջկա հայացքից շամփըրվեց (*ՄՅ, էջ 191*):

ՄՈՎԵՏԱԽՏ, գ. **Սովետական անցյալի նկատմամբ տածվող կարոտախտ**: Ասում են .... սովետախտով հիվանդ հայերի «բարեկամ» Ստալին հայրիկը ցանկացել է հայերին հիանալի պայմաններով տեղափոխել Սիբիր .... (*ԽՄ, էջ 116*):

ՄՈՎՈՐՈՂԱԿԵՆՏՐՈՆ, ան. **Սովորողների շահերին միտված**: .... **Սովորողակենտրոն** միջավայրի ստեղծում (*ՀՀ, 20.06.2019*):

ՄՈՅԱՊԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. (հպվ.): **Սոցիալական ապահովագրության ծառայություն**: **Սոցապծառայությունը** հայտարարում է աշխատանքային գրքույկների թվայնացման գործընթացի վերսկսման մասին (*Հնգ, news.am*):

ՍՈՑԱՊԵՏԱԿԱՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, գ. (հավ.): **Սոցիալական ապահովագրության նախարարություն:** Սոցապնախարարությունը կառաջնորդվի կառավարության ծրագրով (*Հւց, news.am*):

ՍՈՑԲԱՂԱԴՐԻՉ, գ. (հավ.): **Սոցիալական բաղադրիչ:** Բացի **սոցբաղադրիչից**, եկամտահարկով բնակարանի ձեռքբերումն ունի նաև տնտեսական բաղադրիչ(*ՀՀ, 31.05.2019*):

ՍՈՑԻԱԼԱՄԵՏ, ած. **Հանրության շահերին միտված:** Բյուջեի այս նախագիծը **սոցիալամետ** է(*Հւց, news.am*):

ՍՈՑՄԱՌԱՅՈՂ, գ. (հավ.): **Սոցիալական ծառայող:** Հայաստանում կներդրվի **սոցծառայողի** ինստիտուտը (*Հւց, news.am*):

ՍՈՑՄԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. (հավ.): **Սոցիալական ծառայություն:** Առերևույթ չարաշահումների դեպքեր **սոցծառայության** տարածքային բաժիններում(*Հւց, news.am*):

ՍՈՑՀԱՐՑ, գ. (հավ.): **Սոցիալական հարց:** Աշխատանքի և **սոցհարցերի** նախարարությունը հետ չի ստանա սահմանվածից շատ վճարված կենսաթոշակի գումարները (*Հւց, news.am*):

ՍՈՑՄԵԴԻԱ, գ. (հավ.): **Հանրային տեղեկատվական միջոց:** ԵԽԽՎ-ում քննարկվում է **սոցմեդիայում** առկա ապատեղեկատվության համար պատասխանատվության հարցը (*Հւց, news.am*):

ՍՈՑՆԵՐԴՐՈՒՄ, գ. (հավ.): **Սոցիալական ներդրում:** **Սոց-ներդրումների** հիմնադրամի կողմից կշարունակվեն համայնքներում ենթակառուցվածքների բարելավումը (*Հւց, news.am*):

ՍՈՑՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. (հավ.): **Հանրային նշանակություն ունեցող:** Շահագործման հանձնված **սոցնշանակության** բնակարանների թիվը կավելանա (*Հւց, news.am*):

ՍՈՑՆՊԱՍՏ, գ. (հավ.): **Սոցիալական նպաստ:** Փարիզի ահաբեկիչները **սոցնպաստ** են ստացել (*Հւց, news.am*):

ՍՈՑՇԱՀԱՌՈՒ, գ. (հավ.): **Սոցիալական շահառու:** ԱՆ–ն



հրապարակել է ապահովագրական ընկերությունների հեռախոսահամարները **սոցալանտուների** համար (*ՀՆԳ, news.am*):

ՍՈՑՎՃԱՐ, գ. (հպվ.): **Սոցիալական վճար:** Ընդունում են **սոցվճարից** հրաժարվելու դիմումները (*ՀՆԳ, news.am*):

ՍՈՑՎՃԱՐՈՒՄ, գ. (հպվ.): **Սոցիալական վճարում:** Դասախոսները պարտավոր չեն մասնավոր եկամտից **սոցվճարում** կատարել (*ՀՆԳ, news.am*):

ՍՈՑՏՈՒՆ, գ. (հպվ.): **Սոցիալական տուն:** Սոցտան բնակիչը տարեկան 144 հազար այլևս չի մուծի (*ՀՀ, 13.09.2019*):

ՍՈՑՔԱՐՏ, գ. (հպվ.): **Սոցիալական ապահովության քարտ:** Տղամարդը գողացել է **սոցքարտ** և այլ փաստաթղթեր (*ՀՆԳ, news.am*):

ՍՈՑՕԳՆՈՒԹՅՈՒՆ, գ. (հպվ.): **Սոցիալական օգնություն:** Հայաստանում մեկանգամյա և կանոնավոր **սոցօգնությունը** կվճարեն բանկային տարբեր հաշիվներով (*ՀՆԳ, news.am*):

ՍՊԻՏԱԿԱԵՐԿՆԱԳՈՒՅՆ, ած.Սպիտակին տվող երկնագույն: .... Մատի ծայրին ինչ-որ **սպիտակաերկնագույն** բան երևաց՝ փրփրուն ըմպելիքի փոշին (*Գրաս, էջ 304*):

ՍՊԻՏԱԿԱԿԱՆԱԶ, ած.Սպիտակին տվող կանաչ, ճերմակականաչ: .... Այնտեղ դեռ կա օձաձկան մի կտոր, օձաձկան մսից մի քանի **սպիտակականաչ** հյուսվածք (*Գրաս, էջ 177*):

ՍՊԻՏԱԿԱԿԱՐՄՐԱՎՈՒՆ, ած.Սպիտակակարմրին տվող: .... Ընդհարվել էր վարպետի հետ .... ցանկապատի **սպիտակակարմրավուն** գույնի համար (*Գրաս, էջ 17*):

ՍՊԻՏԱԿԱՄՈՒՐԱԳՈՒՅՆ, ած.Սպիտակին տվող մոխրագույն: .... Միսեռի սպիտակ ու **սպիտակամոխրագույն** ծաղիկները նման են սպիտակ թիթեռների (*ՄՅ, էջ 164*):

ՍՊԻՏԱԿԱՎԻԶ, ած.Սպիտակ վիզ ունեցող՝ վզով: «Սպիտակավիզ կտցար» (*ՄՅ, էջ 246*):

ՄՊԻՏԱԿԱՏԵՐԵՎ, ած.Սպիտակ տերևներ ունեցող, տերևները սպիտակ: .... Սպիտակատերև բարդին նրանց հանձնեց բարդու նամակը (Մ1, էջ 99):

ՄՏԵՂԾՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. Ստեղծելու՝ ստեղծագործելու կարողություն: Արվեստն ու ստեղծունակությունը շատ սուբյեկտիվ են, ու շատ դժվար է ներշնչում գտնելն ու սկսածդ ավարտին հասցնելը (ՌՀ, էջ 206):

ՄՏԵՂՆԱԳՈՐԾԻՔ, գ. Ստեղներով գործիք: Ինձ համար որպես ստեղնագործիք էր ծառայում Քաուեր մորաքրոջ սև մետաքսյա շրջագգեստը .... (Գրաս, էջ 72):

ՄՐԱԹԵՓՈՒԿ, ած.Սուր թեփուկներ ունեցող, սուր թեփուկավոր: Սրաթեփուկ գիհի (Մ1, էջ 178):

ՄՐՃԱԲԱԺԱԿ, գ.Սուրճի բաժակ: .... Հսկայամարմին այս գիշատիչ սողունը,սրճաբաժակը թաթին առած, քո բախտն է գուշակում(Մ1, էջ 243):

ՄՐՃԱՄՈԼ, գ. Սուրճի մոլի սիրահար: Օնորե դե Բալզակը ամենահայտնի սրճամոլն է (ՀՄԳ):

ՄՐՏԱՍՓՈՓԻՉ, ած.Սիրտը սփռվող՝ հանգստացնող: Սրտի ծակոցներ են ունենալու և լեզվիդ տակ սրտասփռվիչ հաբը դրած՝ աշխատավայր են հասնելու(Մ2, էջ 437):

ՄՐՏԱՏԵՐԵՎ, ած. Սրտածև տերևներ ունեցող՝ տերևներով: Տե՛ս ԽՈՐԱՃԱՔ-ի օրինակը:

ՄՐՈՒՆՔԱՄԱՍ,գ. Սրունքի հատված: Հայ դերձակները միտումնավոր կերպով հույն սաների շավարների սրունքամասերի վերջավորությունները լայն էին թողնում (ՎՄ, էջ 9):

## Վ

ՎԱԳՐՈՒՀԻ, գ. Էգ վագր: Դու ճագարիկ, կատվիկ կամ վագրուհի չես (ԲՇ, էջ 65):

ՎԱԹՍՈՒՆՎԱՏԱՆՈՑ, ՎԱԹՍՈՒՆՄՈՄԱՆՈՑ ած.Վաթսուն վատ՝ մում հզորություն ունեցող՝ հզորությամբ: .... Ես առաջին անգամ տեսա լույսը երկու վաթսունվատանոց լամպերի կերպով: Նա պտտվում էր զույգ վաթսունմումանոց լամպերի շուրջ .... (Գրաս, էջ 40, 41):

ՎԱԽԱՀԱՅԱՑ, մկբ. Վախով լի հայացքով: Նա մի պահ զարմացական ու վախահայաց նայեց ինձ (ԼԴ 2, էջ 15):

ՎԱՀԱԳՆԱԶԱՅՆ, ած. (բնատ., փխբ.): Վահագնի ձայն ունեցող, հզոր, հաղթական: Տե՛ս ՎԱՐՈՏԱԺԱՅԹ-ի օրինակը:

ՎԱՅՐԻՈՒԹՅՈՒՆ, գ. Վայրի լինելը: Մինչ մենք մոռանում ենք, թե որքան մոտ է մեզ այդ վայրիությունը գիշերվա մեջ, այն մի օր կգա ու կառերեավի մեզ հետ.... (ՌԲ, էջ 197):

ՎԱՆԻԼԱՅԻՆ, ած.Վանիլ պարունակող: Մատուցում էին քաղցրակուտապ՝ վանիլային կերակրահյութով(Գրաս, էջ 131):

ՎԱՌԵԼԻՔԱԶՈՒԻՐԿ, ած.Վառելիքից զուրկ, վառելիք չեղող: Խստաշունչ և վառելիքազուրկ ձմեռ է լինելու .... (Մ1, էջ 208-209):

ՎԱՎԵՐԱԳՐԱՖԻԼՄ, գ. Վավերագրական ֆիլմ: Դեռևս 80-ականներին, երբ ցուցադրվեց «Իմ բարի մայրիկը» վավերագրաֆիլմը, շատերը անհանդուրժելի համարեցին Արա Վահունու հանդգնությունը(ՀՀ, 11.06.2019):

ՎԱՆՈՂԱԲԱՐ, մկբ.Վատնելով, աննպատակ փչացնելով: .... Ուրիշները վատնողաբար իրենց շուրջ դես ու դեն էին նետում թանկարժեք մետաղը .... (Գրաս, էջ 286):

ՎԱՐԳԱՆ, ած.Վարգով ընթացող՝ վազող: Վարգան նժույզը, լայն տարածելով ուժեղ ոտքերը, սլացել է դաշտերով ....(Մ2, էջ 339):

ՎԱՐԴԱԶՕԾԵԼ, բ. Վարդերով օձել: ....Չխորհեցի մի պահ անգամ քեզ էլ // Ամուր դիցի նման վարդագոծել.... (ԻՄ, էջ 21):

ՎԱՐԴԱԶՕԾՈՒՆ, ած. Վարդերով օծված: .... Արևելքի խարտյաշ ափը իր հմայքից խոովահույզ, վարդագոծուն ու մեր-

կաբաց մկրտվում է հրի, ջրի ավազանում (ԻՄ, էջ 50):

ՎԱՐԴԱԿԱՆԱԶԱՎՈՒՆ, ան.Վարդագույնին տվող կանաչ: ... Վարդականաչավուն մանր մեկական ծաղիկներով մշտադալար այս թփի տակ գանձ ես թաղել(Մ2, էջ 280):

ՎԱՐԴԱՅՈՒՂԵ, ան.Վարդայուղից պատրաստված: Վարդայուղե օձանելիք էիր գնել(Մ3, էջ 223):

ՎԱՐԺԱԽՈՍՈՒՆ, ան. Վարժ խոսող: Սարսափազդու ձայնով վարժախոսուն// Սլանում է հորդան մուտանտների (ՄՄ, էջ 98):

ՎԱՐԺԵՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. Վարժեցված լինելը՝ լինելու հատկանիշը: Դա վկայում էր վարժեցվածության բարձր մակարդակի մասին ... (Գրաս, էջ 253):

ՎԱՐՁԱՀՐԱՎԻՐՈՒՄ, գ. Վարձավճարով հրավիրելը: Տե՛ս շԱՄԱԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ-ի օրինակը:

ՎԱՐՈՒՆԳԱՆՄԱՆ, ան.Վարունգի ձև՝ տեսք ունեցող: ... Կակաոյի ծառից քաղել ես վարունգանման պտուղները ... (Մ2, էջ 159):

ՎԵԹԻՆԳԵԼ, բ. (դիպվ.): Վեթինգի ենթարկել: ... Մարդկային որակներից բացի վեթինգված դատավորներն ունենան մասնագիտական որակներ ու ունակություններ: Ո՞վ և է՞րբ է մոնիտորինգելու ու վեթինգելու այդ արժեքները: Իրավական ու օրինական համարվելու՞ են չվեթինգված դատավորների վճիռները (Իր., 24.05.2019):

ՎԵԼՎԵՏԵ, ան.Վելվետից կարված՝ պատրաստված: Վելվետե հագուստդ կեղտոտվել էր(Մ3, էջ 251):

ՎԵՀԱԿԱՐՈՏ, ան. Վեհ կարոտով լցված: Ծուռ ծառերի վեհակարոտ նուրբ կոնքերի նմանակեր (ԳԹ, 28.06.2019):

ՎԵՀԱՄԵԾՈՒԹՅՈՒՆ, գ. Վեհամեծ լինելը: Չկա վեհամեծությունն այնտեղ, ուր չկա պարզություն, բարություն և ճշմարտություն (ՁԽ, էջ 311):

ՎԵՀԱՊԱՐԾ, ան. (դիպվ.): **Պարծենկոտ:** Զգվում եմ այս քարեկեցիկ, քաղաքակիրթ աշխարհից, որովհետև այն պոռնկուհու նման գայթակղում է մեզ և մեզ խլում մեր թշվառ, մեր անտեր հայրենիքից, մեզ դարձնում **վեհապարծ** (*ՆՓ, էջ 62*):

ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ, ան. **Ապահովագրական պարտականությունները մեկ ապահովագրողից մյուսին փոխանցելուն վերաբերող:** Միջազգային վերաապահովագրական ընկերություններից շատերի համար հայկական շուկան կարևոր է (*ՀՆԳ, news.am*):

ՎԵՐԱԲԱՆԱԶԵՎՈՒՄ, գ. **Վերստին բանաձևեր:** .... Տեսնում է արդյոք օրվա խորհրդի վերաբանաձևման անհրաժեշտություն (*ՀՀ, 24.04.2019*):

ՎԵՐԱԹՈՂԱՐԿՈՒՄ, գ. **Նորից, վերստին թողարկվել:** «Աստղային պատերազմների» երկու էպիզոդների **վերաթողարկումը** հետաձգված է (*ՀՆԳ, news.am*):

ՎԵՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ, գ. **Վերստին ինտեգրում:** **Վերաինտեգրման** մասին օրենքը ուժի մեջ է մտել (*ՀՆԳ, news.am*):

ՎԵՐԱՀԱՅԱՆԱԼ, ք. **Այստեղ՝ կրկին հայաբնակ դառնալ:** 1995 թվականից գյուղը **վերահայացել** է, գործում է դպրոցը .... (*ՀՀ, 25.06.2019*):

ՎԵՐԱՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒՄ, գ. **Վերահուղարկավորելը, թաղվածին հանելով նորից թաղել:** .... Հնարավոր ամենատարբեր **վերահուղարկավորումները** վերցրեցին իրենց վրա .... (*Գրաս, էջ 275*):

ՎԵՐԱԶԵՎԱՓՈԽՎԵԼ, ք. **Վերստին ձևափոխվել:** .... Հետագայում .... պետք է նախաձեռներ Հայաստանի առաջին հանրապետության զինանշանի **վերաձևափոխված** իր տարբերակը (*ՀՀ, 13.06.2019*):

ՎԵՐԱՄԱԿԱԳՐԵԼ, ք. **Վերստին մակագրել:** Հետախուզվողի գործը **վերամակագրվել** է նոր դատավորի (*ՀՆԳ, news.am*):

ՎԵՐԱՇԱՀԱԳՈՐԾԱՐԿԵԼ, ք. Վերստին շահագործարկել: Մոտ ապագայում հանքավայրը դժվար թե վերաշահագործարկվի (*Zuf, news.am*):

ՎԵՐԱՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ, գ. Վերստին շահագործում: «Այսօրվա լեռնահարստացման կոմբինատի» վերաշահագործումն անօրինական (*Zuf, news.am*):

ՎԵՐԱՈՐԱԿՈՒՄ, գ. Նոր որակում տայր, որակումը վերանայել: Փաստաբանը մեղադրանքի վերադրակում է պահանջում (*Zuf, news.am*):

ՎԵՐԱՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. Հասարակությանը վերստին ինտեգրվել: Մեկնարկել է «Անչափահաս դատապարտյալների վերաօգիալականացման» զարգացում» ծրագիրը (*Zuf, news.am*):

ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԲԱՆ, ք. Վերարտադրողականության հարցերով զբաղվող: Իսրայելցի վերարտադրողաբանը կրկին կայցելի Հայաստան (*Zuf, news.am*):

ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. Մերունդ տալու հասկություն: Քաղցկեղը բուժելիս վերարտադրողականության պահպանման տեխնոլոգիաները Հայաստանի բնակիչներին դեռևս հասանելի չեն (*Zuf, news.am*):

ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. Վերարտադրություն, սերունդների հաջորդական բազմացում: Քլիվլենդի վերարտադրողության կլինիկայում խափանման պատճառով կարող էր ոչնչացվել ավելի քան 2000 ձվաբջիջ և սաղմ (*Zuf, news.am*):

ՎԵՐԱՈՒՂԱՐԿԵԼ, ք. Վերստին ուղարկել: Մեքսիկայի իշխանությունները խնդրել են միգրանտների հոսքը վերաուղարկել (*Zuf, news.am*):

ՎԵՐԱՕԾՎԵԼ, ք. Վերստին օծվել: Վերաօծվել է 17-րդ դարի եկեղեցի (*Zuf, news.am*):

ՎԵՐԱՕԾՈՒՄ, գ. Վերստին օծելը: Նախագահը ներկա է

գտնվել Թբիլիսիի Սուրբ Գևորգ եկեղեցու **վերածման** արարողությանը (*Հւց, news.am*):

ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼ, բ. **Վերստին ֆինանսավորել:** Միջազգային կազմակերպություններից ներգրավվել է միլիոնավոր դոլարների **վերաֆինանսավորվող** փաթեթներ (*Հւց, news.am*):

ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ, գ. **Վերստին ֆինանսավորելը:** ԿԲ-ն **վերաֆինանսավորման** տոկոսադրույքն անփոփոխ է թողել (*Հւց, news.am*):

ՎԵՐԱՖՈՐՄԱՏԱՎՈՐԵԼ, բ. **Վերաձևաչափել, վերակառուցել, բաժանումը վերափոխել:** Հայաստանը **վերաֆորմատավորում** է իր անվտանգության ռազմավարությունը (*Հւց, news.am*):

ՎԵՐԺԱՄԱՆԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Ժամանակից վեր լինելը:** COS. որակյալ գործվածք, լավ ձևվածք և **վերժամանակայնություն** (*Հւց, news.am*):

ՎԵՐՁՆԱՐԱՐ, գ. **Վերջաբան:** ....Դա մի ողջ ժամանակաշրջանի **վերջնաբարն** էր, վերջին մի մեղեդի՝ ի հիշատակ իրենց համատեղ անցյալի.... (*ՄԿ, էջ 105*):

ՎԵՑԹԵՎԱՆԻ, ած. **Վեց թև ունեցող, վեցթևյան:** .... Ծաղկել է սպիտակ **վեցթևանի** ծաղիկներով գինարբը (*Մ1, էջ 179*):

ՎԻԹԻՆԱՐԱԿԵՐՏ, ած. **Վիթխարի՝ չափազանց մեծ: Վիթխարակերտ,** հսկաների համար պատրաստված աստիճաններով ... մայրիկս ինձ վեր տարավ .... (*Գրաս, էջ 76*):

ՎԻԹԻՆԱՐԱՍԱՂԱՐԹ, գ. **Վիթխարի սաղարթներ ունեցող:** Շահաբը հրապուրիչ էր **վիթխարասաղարթ** ընկուզենիներով, կապտագուլալ գետակով (*ԼԴ 2, էջ 3*):

ՎԻՊԱՇԻՆԱՐՀ, գ. **Վեպի աշխարհը:** .... Անտարբեր արձանագրող է, ներընկալող ու վիպող, թե՞ արարող տարերք, որ ղեկավարում ու առաջ է մղում ներքին ընթացքը, հղանում **վիպ-**

**աշխարհի** այն հոգևոր մարմինը, որ կոչվում է ֆարուլա .... (*ՀրշԹ, էջ 287*):

ՎԻՔԻՀԱՆԴԻՊՈՒՄ, գ. **Վիքիպեդիայի մասնակիցների հանդիպում**: Առաջարկվում է **վիքիհանդիպում** կազմակերպել (*Հսգ, <https://www.wikipedia.org>*):

ՎԻՔԻՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Վիքիպեդիա նախագիծն իրականացնող մարդիկ**: Մասնակիցները շատ արագ ինտեգրվեցին **վիքիհանրությանը** և մեծ ներդրում ունեցան հայերեն Վիքիպեդիայի զարգացման գործում (*Հսգ, <https://www.wikipedia.org>*):

ՎԻՔԻՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Վիքիպեդիայի միջոցներով կատարվող հետազոտություն**: Ամփոփվեցին **վիքիհետազոտության** արդյունքները (*Հսգ, <https://www.wikipedia.org>*):

ՎԻՔԻՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ, ած. **Վիքիպեդիան գովազդող: Վիքիմարքեթինգային** հետազոտություններ (*Հսգ, <https://www.wikipedia.org>*):

ՎԻՔԻՄՐՑԱՆԱԿ, գ. **Վիքիպեդիայի կողմից տրվող մրցանակ**: Առաջարկվում է մշակել կոնկրետ մրցանակների ցանկ, յուրաքանչյուր ամիս առաջադրել թեկնածուներ և քվեարկելով տալ **վիքիմրցանակներ** (*Հսգ, <https://www.wikipedia.org>*):

ՎՆԱՍՎԱԾՔԱՎՏԱՆԳ, գ. **Վնասվածքի վտանգ պարունակող**: Վազելն ավելի **վնասվածքավտանգ** է, քան բոնգքամարտով և ռեգբիով զբաղվելը (*Հսգ, [news.am](https://news.am)*):

ՎՐԱՑԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Վրաստանում բնակվող հայություն**: **Վրացահայությունը** հայկական նոր դասագրքեր կունենա միայն հաջորդ ուստարում. դրանք կտպագրվեն Վրաստանում (*Հսգ, [news.am](https://news.am)*):

## S

ՏԱԲԱՏԱԾԱԼ, գ. **Տաբատի ծայք**: Այդ **տաբատածալերն** արդեն անհնար էր արդուկով շտկել (*Հսգ*):

ՏԱԳՆԱՊԱԹԲԻՌ, ած. **Տագնապալից և թրթռուն**: ....



**Տազնապարթթիո** իր թաղանթի տակ տևում է փոքրիկ մի հավերժությունն ու մարդեղացած մի ներտիեզերք .... (ՀրչԹ, էջ 170):

ՏԱՇՏԱԿԱՆՄԱՆ, ան. **Տաշտակի նմանվող, տաշտակաձև:** Թոնրի մեջ շիկացնում էր տաշտականման աղյուսը....(ԼԽ, էջ 278):

ՏԱՊԱՐԱՆՄԱՆ, ան. **Տապարի նմանվող, տապարաձև:** Նա .... սողետող պիտի գնար **տապարանման** սուր խճաքարերի միջով ու ձյուն պիտի բերեր (ԼԽ, էջ 224):

ՏԱՊԿԻՉ, գ. **Հարվածելու միջոցով փոշին թափ տվող երկարավուն, ձողաձև հարմարանք:** Գորգերը գցում էին ձողի վրայով, բռնում էին գործած **տապկիչները** և չոր հարվածներով պայթեցնում էին բակերի նեղվածքը (Գրաս, էջ 99):

ՏԱՐԱԶԱՆՄՈՒՇ, գ. **Տարազի նմուշ:** Ա. Պատրիկը իր «Հայկական տարազ» գրքում տվել է հայկական տարազի բազմադարյան պատմության ուրվագիծը ...., ուր ներառված են .... ինչպես նաև՝ օտար փոխառված **տարազանմուշները** (ՊԲՀ, 3, 2017, էջ 127):

ՏԱՐԱԾԱԳՆԱՀԱՏՈՒՄ, գ. (շին.): **Տարածքի գնահատում:** Դրան հաջորդելու է դրույքաչափերի, նվազագույն հարկման շեմի սահմանումը, հարկման նպատակով իրականացված նոր **տարածագնահատման** գոտիավորումը (ՀՀ, 21.06.2019):

ՏԱՐԱՍՓՌՈՒՄ, գ. **Տարածելը, տարածելով սփռելը:** .... Այն [ստեղծագործությունը] արարողակարգ է, որ դիմակավորում ու դերաբաշխում է ենթադրում իր բոլոր դրսևորություններում, անգամ ներանձնական խորունկ ներսուզումների ու **տարասփռումների** մեջ (ՀրչԹ, էջ 173):

ՏԱՐԵՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Տարեց լինելը:** Անջատվել եմ արդեն հախուռն հրաշքներից, // Հաղթող **տարեցությամբ** հանդարտվել եմ արդեն.... (ԼԴ 1, էջ 17):

ՏԱՐՏԱՐՈՍԱԲՆԱԿ, գ.,ան. **Տարտարոսում՝ դժոխքում**

**բնակվող: Տարտարոսաբնակների** համար հանրագիտարան էին հրատարակել (*ՄՅ, էջ 288*):

ՏԵԽՆՈԼԱԲ, գ. (հպվ.): **Տեխնոլոգիական լաբորատորիա:** Նորաբաց **տեխնոլաբը** հազեցած է կողավորման ու ռոբոտիկայի գործիքակազմով (*ՀՀ, 09.04.2019*):

ՏԵՂԱԿԱՅՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Տեղակայված լինելը:** .... Անհրաժեշտություն չէր զգացվի նման հաջող **տեղակայվածություն** ունեցող կրպակը .... վերածել ոսկե հատակի (*Գրաս, էջ 332*):

ՏԵՂԱՎՃԱՐ, գ. **Զբաղեցրած տարածքի համար գանձվող վճար:** Ըստ կրպակատերերի իրենք **տեղավճարներն** արել են մինչև տարվա վերջ (*Հւց*):

ՏԵՂԵԿԱՏՎԱԶԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ, ած. **Տեղեկատվական և հաղորդակցական:** Օգտվելով դրանից՝ հատկապես նորաստեղծ կուսակցական գործիչներն իրականացնում են **տեղեկատվահաղորդակցական** մանիպուլյատիվ գործառույթներ՝ շահարկելով սոցիալական և ազգային ինքնության արդիականացման հրամայականները (*ՀՀ, 20.06.2019*):

ՏԵՂՈՒՄՆԱԲԵՐ, ած. **Տեղումներ բերող:** Սպասվում է ակտիվ **տեղումնաբեր** ցիկլն Պարսից ծոցից (*Հւց*):

ՏԵՍԱՆՈՆՍ, գ. **Տեսամիջոցներով տարածվող անոնս:** Հրապարակվել է «Գահերի խաղերի» 6-րդ սեզոնի նոր **տեսաանոնսը** (*Հւց, news.am*):

ՏԵՍԱՍՈՒԼԻՍ, գ. **Ասուլիս տեսակապով:** Ռուսաստանի նախագահը **տեսասուլիս** է կազմակերպելու երկրի քաղաքացիների հետ (*Հւց, news.am*):

ՏԵՍԱԳՈՐԾՆԱԿԱՆ, ած. **Տեսական և գործնական:** .... [Շրջափուլը] բնորոշվում է մի շարք **տեսագործնական** խնդիրների առաջադրմամբ .... (*ՊԲՀ, 2, 2018, էջ 152*):

ՏԵՍԱԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, գ. **Դասախոսություն տեսա-**

**կապի միջոցով:** Եվս մեկ ակնարկային **տեսադասախոսություն**, որը նպատակ ունի աջակցելու պետական ավարտական քննություններին պատրաստվելուն (*Հնգ*):

ՏԵՍԱԿՈՆՖԵՐԱՆՍ, գ. **Կոնֆերանս՝ տեսակապով:** Հայտնի բրիտանացի բժիշկը մաշկաբանական խնդիրների վերաբերյալ **տեսակոնֆերանս** կվարի (*Հնգ, news.am*):

ՏԵՍԱՀԱՅՏ, գ. **Հայտ տեսանյութով:** (*Հ1, 23.09.2019, «Մայասիր ինձ» հաղորդում*):

ՏԵՍԱԶԱՅՆԱՐԿԻՉ, գ. **Տեսանկարահանող և ձայնագրող սարք:** Կնոջ տնից **տեսաձայնարկիչ** են հափշտակել (*Հնգ, news.am*):

ՏԵՍԱՕՊԵՐԱՏՈՐ, գ. **Տեսանկարահանող օպերատոր:** Գիրքը կոչվում է «**Տեսաօպերատորի** համառոտ տեղեկատու» (*Իր., 03.05.2019*):

ՏԵՍԱՕՐԱԳԻՐ, գ. **Տեսանկարահանման միջոցով՝ տեսանյութերով կազմվող օրագիր:** (*Հ1, 10.08.2019, «Մինչև ես կգնամ քնելու» գեղարվեստական ֆիլմ*):

ՏԵՍԱՖԱՅԼ, գ. **Տեսանիշք:** ....Դիսկի մեջ ոչ մի **տեսաֆայլ** չկա....(*ՆՓ, էջ 335*):

ՏԵՍԼԱՇԽԱՐՀ, գ. **Տեսիլների աշխարհ:** Ի՛ր կյանքը, ի՛ր **տեսլաշխարհը**, ի՛ր սրբության աղբյուրը, որն արտահեղվում է՝ իբրև վերջին սեր(*ՀրչԹ, էջ 294*):

ՏԵՐԵՎԱԳՈՐԳ, գ. **Տերներից պատրաստված գորգ:** Պուրակի բազմերանգ **տերևագորգի** նախշերում քողարկված հին նստարանն է մտքերիս ընկերը ... (*ԳՄ, Թ, էջ 185*):

ՏԵՐԵՎԱԹԵՐԹ, գ. **Տերև:** Մի քանիսը տեղ չհասցրած **տերևաթերթերն** են դեռ բռնած բնագործ իրենց հետ դեսուդեն փախցնում (*ԼԽ, էջ 61*):

ՏԵՐԵՎԱԾԱՅՐ, գ. **Տերևների ծայր՝ ծայրի մաս**: Սրտաձև **տերևածայրերից** ժպտում էին վարդագույն ծաղիկները(*Մ1, էջ 433*):

ՏԵՐԵՎԱՀԱՆԳՈՒՅՑ, գ. **Բույսի ծունկի շուրջ աճած տերևների ամբողջությունը**: .... Կոկոռշենին **տերևահանգույցներում** ունի 2-4 առանձին փշեր ....(*Մ2, էջ 229*):

ՏԵՐՄԻՏԱԲՈՒՆ, գ. **Տերմիտների բուն, տերմիտանոց**: .... Անկանոն ձևով վեր էին խոյանում գլանաձև, բրգաձև, սնկաձև տարատեսակ և տարագույն **տերմիտաբները** (*Մ3, էջ 306*):

ՏԻՐԱԹԱԽԾՈՏ, ած. **Տխուր և թախճոտ**: Ու դրել եմ ձեռքիդ մեջ, .... հեգ սիրտը **տխրաթախճոտ** այն գաղտնիքով, որ չգիտի գույգ սրտերից որն է ինքը... (*ԲՄ, էջ 35*):

ՏՈՂԱԳԾԵԼ, նբ. **Տող գծել՝ քաշել**: .... Հակառակ կողմը **տողագծված** է հասցեի համար .... (*Գրաս, էջ 54*):

ՏՈՂԱՐԱՆՔ, գ. (դիպվ.): **Տողերի արանք: Տողարանքներում**, իհարկե, կարելի է հասկանալ մտահոգությունները (*Հմց*):

ՏՈՆՈՒՍԱՎՈՐԵԼ, նբ. **Տոնուսը՝ լարվածությունը կարգավորել**: Օշինդրը համարվում է ստամոքսը կազդուրող և **տոնուսավորող** միջոց(*Մ3, էջ 511*):

ՏՈՐՖԱԿՈՒՅՑ, գ. **Տորֆի կույտ, կույտաձև կուտակված տորֆ**: Այգին փորելիս **տորֆակույտ** էի գտել (*Մ3, էջ 324*):

ՏՐԱՄԱԲԱՆԱԶԵՐԾ, ած. **Տրամաբանությունից դուրս, հեռու**: Դա անգամ հանրապետականներից համար ծիծաղելի կինչի, քանզի իսպառ **տրամաբանագերծ** և անբովանդակ միտք կլինի (*Հմց*):

ՏՐԱՄԱՊԱՏԿԵՐ, գ. **Տրամանկար**: Հետաքրքիր է հատկապես հերոսամարտերի **տրամապատկերը**. չորս խորանների կենտրոնում հերոսամարտերի **տրամապատկերն** է: Դիարամայի հեղինակը դիզայներ Կարսյանն է(*ՀՀ, 28.05.2019*):

ՏՈՒՐԳՈՏԻ, գ. **Զբոսաշրջային տարածք**: Թախլանդի Փա-

բուկ փոթորիկը շրջանցել է երկրի **տուրգոտին** (*ՀՄԳ, news.am*):

ՏՈՒՐԳՈՐԾԱԿԱԼ, գ. **Զբոսաշրջային գործակալ**: Թուրքիայում մի զբոսաշրջիկի համար **տուրգործակալները** ծեծել են իրար (*ՀՄԳ, news.am*):

ՏՈՒՐԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, գ. **Զբոսաշրջային գործակալություն**: **Տուրգործակալությունները** շարունակում են տուրիստներին տանել Եգիպտոս (*ՀՄԳ, news.am*):

ՏՈՒՐՀԱՄԱԿԱՐԳՈՂ, գ. **Զբոսաշրջային գործը կազմակերպող**: Երևանի քաղաքապետարանը **տուրհամակարգող** աղջիկների և վարորդների է փնտրում (*ՀՄԳ, news.am*):

ՏՈՒՐՀՈՍՔ, գ. **Զբոսաշրջիկների հոսք**: Փորձելով ամբողջ աշխարհին վախեցնել՝ գաճաճ Ադրբեջանը նպաստել է Արցախի **տուրհոսքի** աճին (*ՀՄԳ, news.am*):

ՏՈՒՐՓԱԹԵԹ, գ. **Զբոսաշրջային փաթեթ**: Չեղարկվել է դեպի Թուրքիա **տուրփաթեթների** վաճառքի արգելքը (*ՀՄԳ, news.am*):

ՏՈՒՐՕՊԵՐՍՈՐ, գ. **Զբոսաշրջային գործակալ**: Ռուսաստանի **տուրօպերատորները** սկսել են դադարեցնել դեպի Թուրքիա տուրփաթեթների վաճառքը (*ՀՄԳ, news.am*):

ՏՈՒՓԻԿԱԶԵՎ, ած. **Տուփիկի ձև՝ նմանություն ունեցող**: .... Սպանդի գնդաձև, եռափեղկ **տուփիկաձև** պտուղն ունի սև դարչնագույն կամ գորշամոխրագույն գույն (*ՄՅ, էջ 182*):

ՏՐԱՄԱԲԱՆԱԶԵՐԾ, ած. **Տրամաբանությունից դուրս, հեռու**: Դա անգամ հանրապետականներիդ համար ծիծաղելի կինչի, քանզի իսպառ **տրամաբանազերծ** և անբովանդակ միտք կլինի (*ՀՄԳ*):

ՏՐԱՄԱՊԱՏԿԵՐ, գ. **Տրամանկար**: Հետաքրքիր է հատկապես հերոսամարտերի **տրամապատկերը**. չորս խորանների կենտրոնում հերոսամարտերի **տրամապատկերն** է: Դիարամայի հեղինակը դիզայներ Կարսյանն է (*ՀՀ, 28.05.2019*):

ՅԱՆՑԱՈՒՌԻԿԱՆ, գ. **Ցանցաձև գործվածքով ուռկան:** Թանկարժեք **ցանցաուռկան** էիր պատռել (*ՄՅ, էջ 381*):

ՅԱՎԱԳԻՐ, գ. **Ցավի մասին գրող:** Անցած կորուստների ցավի ու վերածնունդի այս օրերին ես հպարտ եմ, ....որ եղել եմ Գյումրի քաղաքի **ցավագիրը** (*ԳԹ, 07.11.2018*):

ՅԱՎԱԿՑԱՆՔ, գ. **Ցավակցության, ցավակցելու արտահայտություն:** .... Գոնե մեկ ակնարկ, **ցավակցանքի** մեկ խոսք .... (*Գրաս, էջ 277*):

ՅԵԽԱՀՈՍՔ, գ. **Ցեխի հոսք:** Ջրհեղեղից տուժել են քաղաքացիներ, և գրանցվել են **ցեխահոսքեր** (*Հւց*):

ՅԼԱՅԻՆ, ած.**Ցլին հատուկ:** Նշանակում է գրգռված նյարդերդ **ցլային** բնագոյներ են բորբոքել մեջդ (*ՄԼ, էջ 207*):

ՅՆՈՐՔԱՅԻՆ, ած.**Երազային, անիրական:** .... Նավավարի տարուբերվող ուրվականը ցռուկի մոտ խավարին է ավելացնում հնչյուններն իր **ցնորքային**... (*ԻՄ, էջ 33*):

ՅՈԼՔԱԾՈՒՓ, ած. (բնատ.): **Ծփացող և ցուցուն:** Ցուքածուփ ջրերի վրա // Պալատի ստվերն է խայտում. (*ԼԴ 1, էջ 54*):

## Ու

ՈՒԼԱՊԱՀ, գ. **Ուլ պահող, ուլապահությամբ զբաղվող:** Ուլդ **ուլապահին** էիր հանձնել (*ՄՅ, էջ 362*):

ՈՒԼՏՐԱՄՇԱԿԵԼ, բ. **Գերմշակվել:** Ուլտրամշակված մթերքները բարձրացնում են վաղաժամ մահվան ռիսկը (*Հւց, news.am*):

ՈՒՂԵՎՈՐԱԲԵՌՆԱՏԱՐ, ած. **Ուղևորների և բեռների տեղափոխման համար նախատեսված:** Երեկոյան մեր **ուղևորաբեռնատար** լաստանավը դուրս եկավ ճապոնական նավահանգստից....(*ՆՓ, էջ 270*):

ՈՒՂՂԱԿԱՆԳՈՒՆ, ած.**Ուղղիկ կանգնած, ուղղաձիգ:** Ուղ-

**ղականգուն** ցողուններ(*Մ3, էջ 15*):

ՈՒՍՈՒՑԱՌԵԼ, նբ.**Սովորել, յուրացնել, ուսումնասիրել**: Գուդրոնը՝ բարձրահասակ, ուժեղ, ձեռքի գնդակով էր զբաղվում և քիմիա **ուսուցառում**(*Գրաս, էջ 609*):

ՈՒՐԱԽԱՃԻՉ, ած., մկբ. **Ուրախ ճիչերով՝ ճչալով**: Ես սովորում էի լավ...սիրում էի նաև **ուրախաճիչ** խաղալ (*ԼԴ 2, էջ 6*):

ՈՒՐՈՒԳՎԱԶԱՅ, գ. **Ուրուգվայում բնակվող հայ**: Պաշտոնական պատվիրակությունը հանդիպել է **ուրուգվահայերի** հետ (*Հնգ, news.am*):

ՈՒՐՎԱԿԱՆԱԲՆՈՒՅԹ, ած.(դիպվ.): **Ուրվականի բնույթ ունեցող**: .... Ոչ թե **ուրվականաբնույթ** «հայությամբ» է որոշվում նրա հայ լինելը(*ՀՀ, 12.06.2019*):

## Փ

ՓԱԹԻԼԱՊԱՐ, գ. (բնստ.):**Փաթիլների շարժում**: Ձյան փաթիլապարը/վերնագիր(*ՄՂ, էջ 44*):

ՓԱՅԼԱԶՂԿՎԱԾ, ած.**Փայլելու աստիճան հղկված, հղկելով փայլեցված**: Տե՛ս ԽԵՑԱՔԱՐԵ-ի օրինակը:

ՓԱՇԻՆՅԱՆԱՄԵՏ, ած. (դիպվ.): **Փաշինյանին համակրող, սատարող**: Դեռևս 2018թ. տարբեր փորձաքննական շրջանակներում լուրեր տարածվեցին, թե նման հորդորով դիմել են **փաշինյանամետ** ուժեր .... (*Իր., 24.05.2019*):

ՓԱՌԱՀԱՄԱՐ, գ. **Փառք՝ համբավ բերող համար**: .... Դիմում էր իր փորձարկված **փառահամարի** օգնությանը .... (*Գրաս, էջ 370*):

ՓԱՍՏԱՀԵՆՔ, գ. **Փաստերի վրա հենված**: Կենտրոնը մի շարք պիլոտային փորձարկումների օգնությամբ **փաստահենք** առաջարկներ է ներկայացրել կառավարությանը (*Հնգ, sdglab.am*):

ՓԱՐԻԶԱՄԵՏ, ած. **Փարիզին՝ եվրոպական արժեքներին**

**հակված:**....Դրանով ցույց էիր տալիս, որ առաջադիմական ես, շփվող և **փարիզամետ** (*ՄԿ, էջ 129*):

ՓԵՏՐԱԲԼԹԱԿԱՎՈՐ, ած. **Փետրաձև և բլթակավոր:** ....Մեկ մետր լայնությամբ տերևին բազմած՝ **փետրաբլթակավոր** տերևների ուղեկցությամբ շրջում էիր տերևագարդ անտառում (*Մ 3, էջ 303*):

ՓՂԱՄԱՐՏ, գ. **Փղերի մարտ՝ կռիվ:** .... Թագավորները տեսան, որ **փղամարտն** էլ է վերջացել երկու կողմերի լրիվ ջախջախումով(*Մ2, էջ 507*):

ՓՆՋԱԿԱԼԵԼ, չբ.**Փունջ կազմել, փնջի վերածվել:** Երկու կողմից ճարպի մեջ խեղդվող ողնաշարի վրա թիակներից ներքև **փնջակալել** էին շիկահեր մազերը(*Գրաս, էջ 194*):

ՓՇԱԼԱՐԱԾԱԾԿ, ած. **Փշալարերով պատված, ծածկված:** Ամեն քայլափոխի ինչ-որ խոչընդոտի էր բախվում. **Փշալարածածկ** բետոնե երկու պատ ու պատերի արանքում՝ նեղ մի անցում (*ՄԿ, էջ 320*):

ՓՇԱԾԱՂԻԿ,գ. **Փշոտ ծաղիկ:** Առվակների հուններում **փշածաղիկներ** էին աճում (*ՌՂ, էջ 90*):

ՓՇԱԿԻՏՈՒԿ, գ. **Փշերի կույտ:** ... Սյունների գագաթնամասերում սևին էին տալիս մետաղալարից պատրաստված **փշակիտուկներ** (*ԳԹ, 27.09.2019*):

ՓՇԱՃՅՈՒՂ, գ. **Փշոտ ճյուղ:** Չոր ու ցամաք **փշաճյուղեր**՝ այրված, այրող, ծակծկող (*ՌՂ, էջ 224*):

ՓՇԱՔԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Փշաքաղված լինելը, փշաքաղված վիճակը:** Գրեֆի վրա նայելուց հետո զարմանալիորեն արագ անհետացան ծակծկոցներն ու **փշաքաղվածությունը** (*Գրաս, էջ 356*):

ՓՈԹՈՐԿԱԶԱՐԿ, ած. **Փոթորկալից:** Ներիր, որ **ամենափոթորկազարկ** ժամին թողեցի օդանավակայանում, փախա(*ԼԽ, էջ 31*):



ՓՈՒԱԴԱՐՁԱԲԱՎ, մկբ.Փոխադարձաբար բավարարություն ստանալով: .... Երագդ հուշում է, որ մինչև կյանքիդ վերջը **փոխադարձաբար** սիրելու ես «Մ» տառով անուն ունեցող մեկին(Մ2, էջ 376):

ՓՈՒԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ, գ. Փոխօգնություն, միմյանց սատարելը: ....**Փոխաջակցության**, ... համաժողովրդականության վրա հիմնված կենսունակ արժեհամակարգ (Կրթ., 36):

ՓՈՒԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ, գ. Փոխադարձ գործակցություն: .... **Փոխգործակցությունը** կլինի շարունակական(ՀՀ, 01.06.2019):

ՓՈՒԸՆԴՆԱՏԵԼ, բ. Փոխադարձաբար ընդհատել: Դեպքերը **փոխընդհատելով** ու իրար մեջ ներթափանցելով՝ Շեքսպիրը ստեղծում է իրադարձությունների հորձանուտ.... (ՁԽ, էջ 345):

ՓՈՒԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, գ. Փոխադարձ ընկերություն: Մեզ հավանաբար հարմար կգար ժողովուրդների ազատ **փոխընկերությունը**, նման մեծբրիտանականին (ՁԽ, էջ 286):

ՓՈՒԻՆՏԵԳՐՈՒՄ, գ. Փոխադարձ ինտեգրում: Ամենը, ինչ կատարվել է առայսօր, կարելի է անվանել՝ դեպի համաշխարհային **փոխինտեգրման** մարդկության անցած ճանապարհ (ՁԽ, էջ 339):

ՓՈՒՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ, գ. Փոխադարձ համաձայնագիր: Դուրչեկն այդ **փոխհամաձայնագրով** վերադարձավ Պրահա.... (ՄԿ, էջ 33):

ՓՈՒՂԵԿԱՎԱՐ, գ. Ղեկավարի տեղակալ: Մինչ այդ Սթրայդը 2017 թվականից աշխատում էր ֆինանսների նախարարության **փոխղեկավարի** պաշտոնում(ՀՀ, 24.05.2019):

ՓՈՒՆԵՐԴԱՇՆԱԿՈՒՄ, գ. Փոխադարձ ներդաշնակում: .... Անտեսված է ազատական և ավանդական մշակութային արժեքների **փոխներդաշնակման** անհրաժեշտությունը(ՀՀ, 20.06.2019):

ՓՈՒՎԱՐՉԱՊԵՏ, գ. Վարչապետի տեղակալ: ...**Փոխվար-**

**չապետ** Միեր Գրիգորյանը հանդիպում է ունեցել Իրանի նախագահ Հասան Ռոհանիի հետ (ՀՀ, 04.07.2019):

ՓՈԽՎՍՍԱՀԵԼԻ, ան. **Փոխադարձ վստահություն ներշնչող:** Հայաստանը պատրաստ է **փոխվստահելի** հարաբերությունների բոլոր երկրների հետ (ՀՀ, 25.09.2019):

ՓՈՂԿԱՊԱՆՄԱՆ, ան. **Փողկապի նման, փողկապի տեսք ունեցող:** Քո ցորենի արտում բնադրել է .... պարանոցից դեպի կուրծքը տարածվող շագանակագույն **փողկապանման** շերտով, կտուցը սև, ոտքերը կարմրավուն գեղեցկուհի թուրաջը (Մ1, էջ 433):

ՓՈՇԵԼՈՒՅՍ, գ. **Փռչու մեջ կորած լուսավոր մի տեղ:** Մռուշն է նրան վարագուրում, ու ցողվում է օդը **փռչելույսի** .... (ՄԳ, էջ 14):

ՓՈՇԵՊԱՏՏԱՆՔ, ան. **Փռչու մռուչ:** Շամանդաղի գրկում **փռչելատրանք**, հարսը գետն է վազում (ՄԳ, էջ 14):

ՓՈՇԵՓՈՒՏ, ան. **Փտած և փռչեծածկ:** **Փռչեփուտ** փայտե խաչ (Գրաս, էջ 465):

ՓՈՍԱԵԶԸ, գ. **Փոսի եզր:** - Այո փորձել եմ, - **փոսաեզրից** անտարբեր նետում է աղվեսը (Մ1, էջ 31):

ՓՈՐԱՔԱՆԴԱԿ, ան. **Փորելով քանդակած:** .... Նրանք Հերբերթին պոկեցին այդ սիրուց անտեղյակ **փորաքանդակ** փայտից .... (Գրաս, էջ 216):

ՓՈՐՁԱԿՈՆՍՏՏՈՒԿՏՈՐԱԿԱՆ, ան. **Փորձարարական և կոնստրուկտորական:** Գիտահետազոտական և **փորձակոնստրուկտորական** մշակումներ. գիտությունը միանում է արտադրությանը՝ դրանով ապահովելով այդ նախագծերի ինչպես գիտական, այնպես էլ տեխնիկական և ինժեներական մշակումները (Հւց, yerkir.am):

ՓՈԻԼԱԲԱԺԱՆՈՒՄ, գ. **Փուլերի բաժանելը:** .... Հայ հնագիտության մեջ անհրաժեշտություն էր առաջացել վերանայել

Ժամանակագրության և **փուլաբաժանման** ավանդական սանդղակները(*ՊԲՀ, 3, 2017, էջ 280*):

**Ք**

ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒՀԻ, գ. **Կին քաղաքապետ**: Ամենայն հայոց կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Շվեդիայի Ադերթեյլիե քաղաքի **քաղաքապետուհի** տիկին Բուել Գոդներին(*ՀՀ, 25.04.2019*):

ՔԱՂԱՔԱՅԻԱԻՐԱՎԱԿԱՆ, ած. **Քաղաքացիական և իրավական**: Անհրաժեշտ է նախօրոք իմանալ **քաղաքացիաիրավական** և աշխատանքային պայմանագրերի միջև եղած տարբերությունները (*Հսգ, artlar.am*):

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԵՆՏՐՈՆ, ած. **Քաղաքացիների շահերին միտված**: Հայաստանի կառավարությունն ունի այժմ յուրահատուկ հնարավորություն ՄԻԳՄԱ-ի գնահատման արդյունքում արված առաջարկները դիտարկելու **քաղաքացիակենտրոն** հանրային կառավարման համակարգի ձևավորման շրջանակներում (*ՀՀ, 24.05.2019*):

ՔԱՂԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, (հպվ.): **Քաղաքացիական ծառայություն**: Ժողովրդավարության և խաղաղության անցնող երկրները հաճախ օգտագործում են վերինգը, որ չարաշահող կամ անգործունակ պետական պաշտոնյաներին հեռացնեն **քաղծառայությունից**(*Իր.,24.05.2019*):

ՔԱՄԱՊԱՇՏՊԱՆ, ած.**Քամուց պաշտպանող**: .... Ցանկապատի մյուս կողմում ինձ արդեն սպասում էին **քամապաշտպան** հագուստներով չորս տղաներ .... (*Գրաս, էջ 415*):

ՔԱՅԼԱՍԱՅԼԱԿ, գ. **Անիվավոր սայլականման հարմարանք, որի օգնությամբ մանկահասակ երեխաները քայլել են սովորում**: Ես երկար կանգնեցի իմ որդի Կուրտի **քայլասայլակի** կողքին .... (*Գրաս, էջ 364*):

ՔԱՅԼՈՒՂԻ, գ. **Քայլելու, անցնելու համար նախատեսված ուղի**: Միանման, փոքր տապանաքարեր, նախագծված շարքեր,

**քայլուղիներ**, կանաչ ու ծաղիկ. ահա և ամենը (*ՆՓ, էջ 121*):

ՔԱՆԴԱԿԱՔԱՐ, գ. **Քանդակված՝ մշակված՝ որոշակի ձև ստացած քար**: Մատանին .... իր վրա էր կրում այն աստիճան նրբաճաշակ **քանդակաքարը** .... (*Գրաս, էջ 141*):

ՔԱՋՎԱՐԴԱՁԵՎ, ած.**Քաջվարդի ձև ունեցող, քաջվարդանման**: Տե՛ս ԿԱԿՏՈՒՍԱՁԵՎ-ի օրինակը:

ՔԱՌԱԲԻԾ, ած.**Չորս բիծ ունեցող՝ բծավոր**: Գիշերային մեծ սիրամարգակը **քառաբիծ** արջաթիթեռի համար երգեր է երգում ....(*Մ1, էջ 411*):

ՔԱՌԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, գ. (դիպվ.): **Չորս կողմերի միջև խոսքային հաղորդակցում՝ քննարկում**: Կոչ եմ անում արձագանքել դատական իշխանության ներսում այս հարցով անկեղծ **քառախոսության** (իշխանության երեք ճյուղերի և քաղաքացիական հասարակության նախաձեռնությամբ) (*Հմց*):

ՔԱՌԱՍՈՒՆՆԱԶԱՐԱՆՈՑ, ած.**Քառասուն հազար միավոր պարունակող՝ ունեցող**: Տե՛ս ՀՈՍԸՆԹԱՅ-ի օրինակը:

ՔԱՐԱԼՅՈՒՐ, գ. **Քարից ստացված, քարի այլուր**: **Քարայուրից** հաց չեն թխում, քարե հացը մարդու ստամոքսը չի մարսի (*Մ1, էջ 111*):

ՔԱՐԱՀԱՐՈՒՍ, ած.**Քարերով հարուստ**: .... Երազ ես տեսել, ....**քարահարուստ** Հայաստանում արարչագործ հայի ձեռքում քարը պաշտամունք է, խաչքար, տաճար .... (*Մ1, էջ 111*):

ՔԱՐԱՀԴՎՈՒՄ, գ. **Քարերի հղկում, քարերը հղկելը**: .... Միջին չափսերի **քարահղկման** արտադրամաս կունենայի .... (*Գրաս, էջ 526*):

ՔԱՑԱԽԱԴԵՄ, ած. (փխբ.): **Ոչ բարեհաճ, մոայլ, անախորժ դեմք ունեցող՝ դեմքով**: .... Օրերս կարևոր գործով հանդիպելու ես **քացախադեմ** մի պաշտոնյայի (*Մ1, էջ 88*):

ՔԱՑԱԽԱՉՈՒՐ, գ. **Ջրի քացախային խառնուրդ**: Փափուկ կահույքը մաքրելու համար կտորը թրջիր **քացախաջրի** մեջ (*Մ2*,

էջ 162):

ՔԵՍԱԲԱՀԱՅ, գ. **Քեսարում բնակվող հայ: Քեսաբահայերի** 90 տոկոսից ավելին վերադարձել են իրենց բնակավայր (Հնց, news.am):

ՔԵՍԱԲԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Քեսարում բնակվող հայություն:** Մարդասիրական օգնություն **քեսաբահայությանը** (Հնց, news.am):

ՔՕՆԱՄԻՏ, ան. **Քծնող միտք ունեցող:** Բանաստեղծն իր աստվածային բարձունքից էր նայում...**քծնամիտ** մարդկանց ու ներողամտաբար ժպտում (*Նարեկ, թ. 6, 2018*):

ՔՆԱԽՈՒՅ, գ. **Քնելու համար փոքրիկ սենյակ:**.... Կառամատույցին հանդիպած գեղեցիկ անձանորթուհին բարձրանում էր ճեպընթացի **քնախուցը**.... (*ՄԿ, էջ 282*):

ՔՆԱՀՈԺԱՐ, ան. **Քնի տրամադրող:** Առաջին արլորականջին դեռ **քնահոժար** ժամանակ կար (*ՎՄ, էջ 7*):

ՔՆԱՐԺԱՆԵԼ, բ. **Քննել և արժևորել:** .... Հրապարակագրությունը զարկերակային նշանակություն կունենա նրա գեղարվեստական արձակը **քննարժանելու** համար .... (*ՀՀ, 15.06.2019*):

ՔՐԴԱՄԵՏ, ան. **Քրդերին՝ քրդությանը միտված:** **Քրդամետ** ժողովուրդների դեմոկրատական կուսակցության անդամ, մեջլիսի հայ պատգամավոր Գարո Փայլանը նշել է ....(*ՀՀ, 25.04.2019*):

ՔՐԻԶԱՆԹԵՄԱԶԵՎ, ան.**Քրիզանթեմի ձև ունեցող, քրիզանթեմանման:** Տե՛ս ԿԱԿՏՈՒՄԱԶԵՎ –ի օրինակը:

ՔՈՒՂԱՊՆԴԵԼ, չբ.**Քուղով ամուր կապել, քուղակապել:** .... Տարօրինակ ձևով կարճացած սև **քուղապնդված** կոշիկների միջի բրդե գուլպաները .... (*Գրաս, էջ 355*):

ՔՈՒՎԵՅԹԱՀԱՅ, գ. **Քուվեյթում բնակվող հայ: Քուվեյթահայերը** բանիմաց ու օրինապաշտ քաղաքացիներ են (*Հնց, news.am*):

## Օ

ՕԴԱՀՈՒՆՉ, ան.**Օդի արտամղումով հնչող**: Տե՛ս ՀՆՉՅՈՒՆԱԾԱՎԱԼ-ի օրինակը:

ՕՂԱԿԵՏԱԳԻՐ, ան.**Օղակաձև կետերով գրված**: Օդից որսացել և գրառել ես **օղակետագիր** տրված մի հեռագրի գաղտնագիր տեքստը (*Մ1, էջ 141*):

ՕՍԼԱՅԱԶՈՒՐ, գ. **Օսլայի ջրային լուծույթ**: Սպիտակեղենը **օսլայաջրում** լվանալով՝ կախել էիր պարանին (*Մ3, էջ 513*):

ՕՐԱՇԱՐ, գ. **Օրերի շարք, օրերի հաջորդում**: Միրո ամեն ակնթարթը, օ, անհատնում բերկրանք է – կյանքը անգույն ու անիմաստ **օրաշար** է, երբ սեր չկա (*ՄԳ, էջ 119*):

ՕՓԻՈՒՄԱԲՈՒՅՐ, ան. **Օփիումի բույր ունեցող՝ տարածող**: Տե՛ս ՄԱՐԻԽՈՒԱՆԱԲՈՒՅՐ-ի օրինակը:

## Ֆ

ՖԻՆԱԽԱՐԱՐ, գ. (հպվ): **Ֆինանսների նախարար**: Նախկին **ֆինանսարարն** առաջարկել է սահմանել պրոգրեսիվ գույքահարկ (*Հնգ, news.am*):

ՖՈՏՈԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Լուսանկարչական ծառայություն**: Google-ը մտադիր է ստեղծել սեփական **ֆոտոծառայություն** (*Հնգ, news.am*):

ՖՈՏՈՓԱՌԱՏՈՆ գ. **Լուսանկարների փառատուն**: Հանրապետության նախագահի նստավայրում երեկ առաջին հայկական միջազգային **ֆոտոփառատունի** շրջանակներում բացվել է «Հայ լուսանկարչության պատմական ժառանգությունը» խորագիրը կրող բացօթյա ցուցահանդեսը (*ՀՀ, 13.09.2019*):

ՖՈՒՏԲՈՒԼԱՄԵՐՉ, ան. **Ֆուտբոլին մոտ գտնվող**: Հայաստանի ֆուտբոլային և **ֆուտբոլամերձ** շրջանակներում վերստին սուր բանավեճ է ծավալվել հայրենի ակումբներում արտասահմանցի խաղացողների ներգրավման սահմանափակում կիրառելու նպատակահարմարության շուրջ (*ՀՀ, 01.02.2019*):

ՖՈՒՏՉԱԼԻՍ, գ. Ֆուտպարվ գրադվող մարզիկ: Ֆուգա-  
լիստները չհաջողեցին(ՀՀ, 01.02.2019):

**ՀԱՎԵԼՎԱԾ**  
**Տառային հապավումներ**

**ԱԱԾ** – **Ազգային անվտանգության ծառայություն:** ԱԱԾ մամուլի կենտրոնը տեղեկացրել էր, որ ՔԿՀ-ում անսպասելի խուզարկություններով որոշ կալանավորների խցերում ... հայտնաբերվել են .... (ՀՀ, 26.04.2019):

**ԱԱՏՄ** – **Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին:** ԱԱՏՄ-ն բժշկական կազմակերպություններին հորդորում է զերծ մնալ աշխատողի հետ ծառայությունների մատուցման պայմանագրեր կնքելու «արատավոր» պրակտիկայից: (ՀՄԳ, tert.am):

**ԱԶԲ** – **Ասիական զարգացման բանկ:** Փոխվարչապետն ընդունել է ԱԶԲ պատվիրակությանը (ՀՀ, 05.06.2019):

**ԱԶԿ** – **«Արդարություն և զարգացում» կուսակցություն:** Ըստ հրապարակված տվյալների՝ ԱԶԿ և ԱՇԿ («Ազգայնական շարժում» կուսակցություն) դաշինքին աջակցում է ընտրողների 43-45 տոկոսը (ՀՀ, 11.09.2019):

**ԱԷՄԳ** – **Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն:** Նախարարը հանդիպել է նաև Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) impact առաքելությունների պատասխանատուներ Բեատրիս Լահուպի և Արսեն Յուրիչի հետ (ՀՀ, 15.03.2019):

**ԱԼԳ** – **Արևելյան գործընկերություն:** Երեկ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը մասնակցեց ԱԼԳ տասնամյակին նվիրված ԱԳ նախարարների հանդիպմանը (ՀՀ, 14.05.2019):

**ԱՀ** – **Արցախի Հանրապետություն:** ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարար Սամվել



Ավանեսյանը .... ընդգծեց .... (ՀՀ, 05.02.2019):

**ԱՀ ԿԳՄ – Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն:** Կարևորելով հուշագիրը՝ **ԱՀ ԿԳՄ** նախարար Նարինե Աղաբալյանը նշել է .... (ՀՀ, 30.05.2019):

**ԱՄՎ – Աշխատած միջուկային վառելիք:** .... Ինչ է ենթադրում ՌԹ-ների ու **ԱՄՎ**-ի կառավարման համակարգի արդիականացումը (ՀՀ, 05.02.2019):

**ԱՇԿ – «Ազգայնական շարժում» կուսակցություն:** Տե՛ս ԱՉԿ-ի օրինակը:

**ԱՎԾ – Ազգային վիճակագրական ծառայություն:** Ըստ **ԱՎԾ**-ի այս տարվա առաջին եռամսյակում Հայաստան է ժամանել 364.489 զբոսաշրջիկ (ՀՀ, 26.07.2019):

**ԱՏՁՄ – Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն:** Այն ստորագրել են Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (**ԱՏՁՄ**) նախագահ Ալեքսանդր Եսայանը և ԳԴՀ տնտեսության Արևելյան հանձնաժողով-Արևելյան Եվրոպա միության գործադիր տնօրեն Միխայել Հարմար (ՀՀ, 05.02.2019):

**ԲԴԽ – Բարձրագույն դատական խորհուրդ:** .... Հայտնում են **ԲԴԽ** աշխատակազմի մամուլի և հասարակայնության հետ կապերի ծառայությունից (ՀՀ, 05.02.2019):

**ԲԸՏՄ – Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին:** .... 2019 թվականի հոկտեմբերի 24-ին ՀՀ **ԲԸՏՄ** Արարատի տարածքային բաժնի պետ Արմեն Բավոյանի և նույն բաժնի ավագ պետական տեսուչ Արթուր Բաղալյանի ներկայացրած զեկուցագրերի հիման վրա .... (ՀՆԳ, facebook.com):

**ԲՀԿ** – «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն: Ի պատասխան՝ վարչապետն առաջարկեց **ԲՀԿ** և **ԼՀԶ** խմբակցություններին **ՏՄՊՊՀ** և հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում ընդգրկվելու համար թեկնածուներ առաջադրել .... (ՀՀ, 18.04.2019):

**ԲՄՊԽ** – **ԵԱՀԿ Բարձր մակարդակի պլանավորման խումբ:** Մահմանի հակառակ կողմից դիտարկումն իրականացրել են .... **ԵԱՀԿ ԲՄՊԽ** ներկայացուցիչ փոխգնդապետ Ռալֆ Բոսհարդը (Շվեյցարիա) (ՀՀ, 11.04.2019):

**ԲՈԿ** – **Բարձրագույն որակավորման կոմիտե:** [Վարչապետը] .... Բարձրագույն որակավորման կոմիտեին (**ԲՈԿ**) հանձնարարել էր ուսումնասիրել Հայրապետյանի ատենախոսությունը (ՀՍԳ, azatutyun.am):

**ԲՏԳ** – **Բացառիկ տնտեսական գոտի:** .... Կոչ ենք անում Թուրքիային դադարեցնել Կիպրոսի բացառիկ տնտեսական գոտում (**ԲՏԳ**) բոլոր գործողությունները (ՀՀ, 11.07.2019):

**ԳԷՀ** – **Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ:** Այն կազմակերպվում է .... **Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի (ԳԷՀ)**.... ֆինանսավորմամբ (ՀՀ, 30.07.2019):

**ԳԿՄԿ** – **Գիտակրթական միջազգային կենտրոն:** .... Դրամաշնորհային ծրագիրը մեկնարկել է 2016 թվականին, որի շնորհիվ ՀՀ պետական կառավարման ակադեմիան և ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը (**ԳԿՄԿ**) դարձել են առաջին բուհերը Հայաստանում, որոնց ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից շնորհվել է հեռավար մագիստրոսական կրթության իրականացման իրավունք՝ երեք տարի ժամկետով (ՀՀ, 24.04.2019):

**ԳՆԱՆ – ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ:**  
Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի  
դիրքերից դիտարկումն իրականացրել են ԵԱՀԿ գործող  
նախագահի անձնական ներկայացուցիչ (**ԳՆԱՆ**) դեսպան  
Անջել Կասպրճիկը .... (ՀՀ, 11.04.2019):

**ԳՏԶ ՆՏՀ – Գյուղական տնտեսական զարգացում – նոր տնտե-  
սական հնարավորություններ:** Մեկնարկեց «Գյուղական  
տնտեսական զարգացում – նոր տնտեսական հնարա-  
վորություններ» ծրագիրը (ՀՀ, 23.04.2019): **ԳՏԶ  
ՆՏՀ** ծրագրի գործողություններն ուղղված են խթանելու  
կայուն տնտեսական ապահովությունն ու տնտեսական  
աճը (ՀՄԳ, card.am):

**ԳՐԵԿՈ, GRECO – Կոռուպցիայի դեմ պայքարող պետություն-  
ների խումբ (Group of States against Corruption):** ԵԽ  
պատվիրակության կազմում են Եվրոպայի խորհրդի  
առանցքային կառույցների ղեկավարները՝ **ԳՐԵԿՈ**-ի գոր-  
ծադիր քարտուղար Ջանկուլա Էսպոզիտոն .... (ՀՀ, 01.06.  
2019):

**ԳՖԿ – Գյուղական ֆինանսավորման կառույց:** Ծրագրի  
մասնակից է նաև նախարարության «Գյուղական տա-  
րածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրակա-  
նացման գրասենյակ» գյուղական ֆինանսավորման կա-  
ռույցը (**ԳՖԿ**) (ՀՀ, 17.04.2019):

**ԵԳԱԾ – Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիր:**  
Հայաստանում գիտության առաջընթացին և կադրային  
ներուժով համալրմանն ուղղված Երիտասարդ գիտնա-  
կանների աջակցության ծրագիրը (**ԵԳԱԾ**) ամփոփել է իր  
2017 թ.-ի գործունեությունը (ՀՄԳ, ysu.am):

**ԵԹԿՊԻ – Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ:**

**ԵԹԿՊԻ** ուսանողները փակել էին բուհի դռները: Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում ռեկտորի պաշտոնում երեկ ընտրվել էր միակ թեկնածու, ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Արզումանյանը (ՀՀ, 23.05.2019):

**ԵԼ** – **Եվրոպայի լիգա:** «Արսենալը» քննադատել է Ուեֆա-ին **ԵԼ** եզրափակիչը Բաքվում անցկացնելու համար (ՀՀ, 17.05.2019):

**ԵԿԶՀ** – **Եվրասիական կայունացման և զարգացման հիմնադրամ:** Նախօրեին փոխվարչապետ Տիգրան Ավինյանն ընդունել է Եվրասիական կայունացման և զարգացման հիմնադրամի (**ԵԿԶՀ**) պատվիրակությանը՝ գործադիր տնօրենի պաշտոնակատար Անդրեյ Շիրոկակի գլխավորությամբ (ՀՀ, 15.03.2019):

**ԵՆԲ** – **Եվրասիական ներդրումային բանկ:** Փոխվարչապետը բարձր է գնահատել Եվրոպական ներդրումային բանկի հետ օրեցօր ակտիվացող համագործակցությունը և կարևորել նաև **ԵՆԲ**-ից ստացված խորհրդակցական աջակցությունը (ՀՀ, 13.04.2019):

**ԶԱԿ** – **Զարգացման ազգային կենտրոն:** Կենտրոնը հիմնադրվել է Կալավան Թայմ Լենդ հիմնադրամի, ՌԴ կառավարության կողմից ֆինանսավորող ՄԱԶԾ Ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացում ծրագրի և ՓՄՁ **ԶԱԿ ԱՄՆ ՄՁԳ**-ի կողմից ֆինանսավորվող Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման ծրագրի համագործակցությամբ (ՀՀ, 06.09.2019):

**ԶՖԳ** – **Զարգացման ֆրանսիական գործակալություն:** Երեկ փոխվարչապետ Տիգրան Ավինյանն ընդունել է Զարգացման ֆրանսիական գործակալության (**ԶՖԳ**) Հարավային Կով-

կասի գրասենյակի ղեկավար .... (ՀՀ, 20.09.2019):

**ԷԷՀՕ** – **Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր:** Ծրագիրն իրականացնող՝ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ (**ԷԷՀՕ**) (ՀՀ, 20.09.2019):

**ԷՆ** – **Էկոնոմիկայի նախարարություն:** ՀՀ Էկոնոմիկայի նախարար Տիգրան Խաչատրյանը և **ԷՆ** գրասաշրջության կոմիտեի նախագահ Սուսաննա Սաֆարյանը հանդիպել են Համաշխարհային բանկի թիմի հետ (ՀՀ, 05.07.2019):

**ԸԻԿ** – **Ընդդեմ իրավական կամայականության:** Ձեկույցներով հանդես եկան նաև **ԸԻԿ** հասարակական կազմակերպության, ՀԿՏԿ ՊՈԱԿ-ի ներկայացուցիչներ և այլ փորձագետներ (ՀՀ, 11.04.2019):

**ԺԴԿ** – .... Փայլանը նոր «Tweet» է արել, «Մի լսեք նրանց, ովքեր ուզում են **ԺԴԿ**-ն որպես մակարոյծ ներկայացնել: **ԺԴԿ**-ն և **ԺԴԿ**-ականները մինչև վերջին պահը շարունակելու են պայքարել ֆաշիստների դեմ՝ իրենց համերաշխությունը հայտնելով ժողովրդավարներին» (ՀՀ, 08.05.2019):

**ԻԿՐԱՆԵՏ** – **Ռելատիվիստական աստղաֆիզիկայի կենտրոնների միջազգային ցանց (International Center for Relativistic Astrophysics Network):** Ռելատիվիստական աստղաֆիզիկայի կենտրոնների միջազգային ցանցը՝ **Իկրանետ**-ը, միջազգային կազմակերպություն է .... (ՀՀ, 16.04.2019):

**ԻԿՕՄՕՄ** – **Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհուրդ (International Council on Monuments and Sites):** Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհրդի (**ԻԿՕՄՕՄ**) առաջարկությամբ 1983 թվականից ՅՈՒՆԵՍԿՕ-ն ապրիլի 18-ը նշում է որպես հուշարձանների և տեսարժան վայրերի օր (ՀՀ, 16.04.2019):

**ԻՀՊԳ** – **Իսլամական հեղափոխություն պահապան գվարդիա:** **ԻՀՊԳ**-ն ձևավորվել է հեղափոխության հաղթանակի առաջին օրերին .... (ՀՀ, 11.04.2019):

**ԻՊ** – **«Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորում:** .... **ԻՊ**-ի դեմ պայքարում տարածաշրջանային համագործակցությունն անհրաժեշտ է (ՀՀ, 31.05.2019):

**ԻՏՁՄ** – **Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն:** «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ներդրման ծրագրի շրջանակներում **ԻՏՁՄ**-ն կազմակերպում է խրախուսական միջոցառումներ, մրցույթներ, ճամբարներ (ՀՀ, 08.04.2019): Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության գործադիր տնօրեն Կարեն Վարդանյանը ինտերնետ գրագիտության մասին հարցը հին է որակում (ՀՀ, 08.05.2019):

**ԼՀ** – **«Լուսավոր Հայաստան» խմբակցություն:** «Լուսավոր Հայաստան» խմբակցության ղեկավար Էդմոն Մարուքյանը .... (ՀՀ, 18.04.2019):

**ԽԵԿ** – **Խոշոր եղջերավոր կենդանի:** Յուրաքանչյուր շահառու տարեկան կարող է ձեռք բերել առավելագույնը 300 գլուխ տոհմային **խեկ** (ՀՀ, 17.04.2019):

**ԿԳՄՍ** – **Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:** **ԿԳՄՍ** նախարարի տեղակալները .... մանրամասն պատասխանել են .... հարցերին (ՀՀ, 20.06.2019):

**ԿԴՄՍ** – **Կենտրոնամետ դեմոկրատների միջազգային միության (CDI):** **ԿԴՄՍ**-ն միջազգային կազմակերպություն է, որը միավորում է շուրջ 100 քաղաքական կուսակցությունների աշխարհի 74 երկրներից (ՀՀ, 11.04.2019):

**ԿՈՆԻՖԱ, CONIFA – Չճանաչված երկրների ֆուտբոլի ասոցիացիաների կոնֆեդերացիա (Confederation of Independent Football Associations):** Անկախ ֆուտբոլային ասոցիացիաների կոնֆեդերացիա: Հունիսի 1-16-ը Չճանաչված երկրների ֆուտբոլի ասոցիացիաների կոնֆեդերացիայի (CONIFA) հովանու ներքո Արցախում անցկացվելու է Եվրոպայի առաջնություն (ՀՀ, 20.04.2019): .... «Կոնիֆա»-ի կոնֆեդերացիան «Ֆիֆա»-ից հետո ամենաբազմամարդ ֆուտբոլային կառույցն է, որը միավորում է շուրջ 200 թիմերի .... (ՀՀ, 30.05.2019):

**ԿՏՍ – Կրթության տեսչական մարմին:** ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավար Ալեքսանդր Շագաֆյանը և **ԿՏՍ** հանրակրթության վարչության պետ Սուրեն Ավետիսյանը շրջայց կատարեցին .... (Հսկ, facebook.com):

**ԿՓ – Կրոնական փոքրամասնություն:** [Իրանում] **ԿՓ**-ի ծրագրերն անցյալ տարիների համեմատությամբ 50 տոկոսով աճել են (ՀՀ, 01.02.2019):

**ԿՕՍ – Կայուն օրգանական աղտոտիչներ:** Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի աշխատակիցները նոյեմբերի 6-7-ը մասնակցել են Շրջակա միջավայրի նախարարության և ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության (ԱԶԿ) կողմից համատեղ կազմակերպված օգոնային շերտը քայքայող նյութերի (**ՕՇՔՆ**) և կայուն օրգանական աղտոտիչների (**ԿՕՍ**) հեռացման համակարգված կառավարման տարածաշրջանային ցուցադրական ծրագրին (Հսկ, facebook.com):

**ՀԱԱՀ – Հայաստանի ազգային ագրարային համալսարան:** Շուտով կսկսվի **ՀԱԱՀ**-ի նոր, ադիական ջերմատան շինարարությունը .... (ՀՀ, 16.04.2019):

- ՀԱԸ** – **Հայ ավետարանչական ընկերակցություն:** Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է Ամերիկայի **Հայ ավետարանչական ընկերակցության** գործադիր տնօրեն Ջավեն Խանջյանին (*ՀՀ, 15.06.2019*): Աշխատանքային այցով Ավստրալիայում գտնվող Արցախի Հանրապետության պետական նախարար Արայիկ Հարությունյանը .... Մարտի 18-ին մասնակցել է Սիդնեյի Հայ ավետարանչական ընկերակցության (**ՀԱԸ**) արարողությանը (*Հսգ, aravot.am*):
- ՀԱՀ** – **Համաշխարհային առաջնորդության հիմնադրամ (Global Leadership Foundation):** Արմեն Սարգսյանը հյուրընկալել է **ՀԱՀ** պատվիրակությանը (*ՀՀ, 14.05.2019*):
- ՀԱՊԿ** – **Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն:** Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (**ՀԱՊԿ**) երկրների ռազմական գերատեսչությունների ղեկավարները քննարկել են Կենտրոնական Ասիայի իրադրությունը (*ՀՀ, 01.05.2019*):
- ՀԱՊՀ** – **Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան:** Վարչապետը ծանոթացել է **ՀԱՊՀ**-ի ուսումնական գործընթացին (*ՀՀ, 07.05.2019*): Վարչապետ Նիկոլ Փաշինյանն այցելել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան (*ՀՀ, 07.05.2019*):
- ՀԵՀԵՄ** – **Հայ եկեղեցու համաշխարհային երիտասարդական միավորում:** **ՀԵՀԵՄ**-ը համախմբում է աշխարհասփյուռ հայկական եկեղեցիներին ու համայնքային երիտասարդական կառույցներին .... (*ՀՀ, 05.07.2019*):
- ՀԸԳՀ** – **ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր:** Հայաստանը և Եվրամիությունն անդրադարձել են «ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» (**ՀԸԳՀ**) իրականացման շա-



րունակականությունն ապահովելու պատրաստակամու-  
թյունը (ՀՀ, 10.04.2019):

ՀԹՖ – **Հայաստանի թաեքվոնդոյի ֆեդերացիա:** ՀԹՖ նախագահի  
ընտրություններն անվավեր կճանաչվեն (ՀՀ, 25.05.2019):

ՀԺԱՄ – **Հայաստանի ժողովրդավարական ազատական միու-  
թյուն:** ՀԺԱՄ վարչության անդամ Գևորգ Սանդայանը ....  
(Իր., 24.05.2019):

ՀԻԵԿ – **Հանրային իրավունքի եվրոպական կազմակերպություն:**  
Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵԱՏՀ) կոլե-  
գիայի նախագահ Տիգրան Սարգսյանը և Հանրային իրա-  
վունքի եվրոպական կազմակերպության (ՀԻԵԿ) տնօրեն-  
ների խորհրդի նախագահ Սպիրիդոն Ֆլոգախտեսը ԵԱՏՀ-  
ում կայացած հանդիպմանը քննարկել են համագործակ-  
ցության հեռանկարները .... (ՀՀ, 17.04.2019):

ՀԽ<sup>1</sup> – **Հանրային խորհուրդ:** Վարչապետ Նիկոլ Փաշինյանը  
հանդիպում է ունեցել **Հանրային խորհրդի** անդամների  
հետ: Վազգեն Մանուկյանը նշել է, որ **ՀԽ**-ն իր գործու-  
նեությանը պետք է հեղինակություն և վստահություն ձեռք  
բերի հասարակության շրջանում .... (ՀՀ, 20.04.2019):

ՀԽ<sup>2</sup> – **Հասարակական խորհուրդ:** Նախօրեին կայացել է ՀՀ  
պաշտպանության նախարարին կից **հասարակական  
խորհրդի** հերթական նիստը (ՀՀ, 22.06.2019): Նա հավաս-  
տիացրեց, որ ՀՀ ոստիկանապետին կից **ՀԽ**-ն պահանջ-  
ված է և ստեղծվել է ժամանակին (ՀՍԳ, haydzayn.com):

ՀԽ<sup>3</sup> – **Հիմնադիր խորհրդարան:** .... Երևանում հակաիշխանական  
բողոքի ակցիա անցկացնելու մտադրություն ունեցող Հիմ-  
նադիր խորհրդարանի (**ՀԽ**) ներկայացուցիչների նկատ-  
մամբ քրեական գործ է հարուցվել .... (ՀՍԳ, archive.hcav.am):

- ՀԾԿՀ** – **Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով**: Գարեգին Բաղրամյանը ՀՀ **ՀԾԿՀ** նախագահ: Երեկ Ազգային ժողովում քննարկվել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահի նշանակման հարցը (*ՀՀ, 19.04.2019*):
- ՀԿԾ** – **Հարկադիր կատարման ծառայություն**: Ամենամյա խորհրդակցություն **ՀԿԾ**-ում: Մայիսի 3-ին **Հարկադիր կատարման ծառայությունը** նշել է Հարկադիր կատարողի օրը և կազմավորման 21-ամյակը (*ՀՀ, 07.05.2019*):
- ՀԿՏԿ** – **Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն**: ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի (**ՀԿՏԿ**) և «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ (ԸԻԿ) նախաձեռնությամբ երեկ տեղի ունեցան լսումներ (*ՀՀ, 11.04.2019*):
- ՀՀՌԸ** – **Հանրային հեռուստատադիորնկերություն**: **ՀՀՌԸ** խորհրդի նախագահ է ընտրվել Արա Շիրինյանը (*Հւց, armeniatv.am*): Երեկ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից ձևավորված մրցութային հանձնաժողովը ամփոփեց ՀՀ **հանրային հեռուստատադիորնկերության** խորհրդի նախագահի թափուր տեղի համայրման համար հայտարարված մրցույթի արդյունքները (*ՀՀ, 02.04.2019*):
- ՀՌԱԿ** – **Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն**: Երևանի թիվ 88 մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (**ՀՌԱԿ**) (*Հւց, spyur.am*):
- ՀՊՏՀ** – **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան**: **ՀՊՏՀ** դասախոսներից շատերը կարող են դուրս մնալ համալսարանից (*Հւց, hrparak.am*): «**Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան**» պետական

ոչ առևտրային կազմակերպությունը .... հայտարարում է մրցույթ .... (ՀՀ, 22.05.2019):

**ՃԿՊԱ – Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա:**  
Միջոցառման վերջում **ՃԿՊԱ** շրջանավարտները ցուցադրեցին իրենց մասնագիտական հմտությունները (ՀՀ, 09.07.2019):

**ՃՈ – Ճանապարհային ոստիկանություն: Ճանապարհային ոստիկանության** կողմից օգտագործվող ամբողջ գույքը .... պետության սեփականությունն է: Այս մասին լրագրողների հետ զրույցում ասաց ՀՀ **ՃՈ** պետի տեղակալ Արմեն Զիլինգարյանը .... (ՀՀ, 01.05.2019):

**ՄԱԱԶԿ – Միավորված ազգերի [կազմակերպության] արդյունաբերության զարգացման կազմակերպություն:** ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպությունը (ՄԱԱԶԿ) ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալություն է .... (*Zúg, un.am*): ՀՀ էկոնոմիկայի նախարար Տիգրան Խաչատրյանը երեկ հանդիպել է **Միավորված ազգերի կազմակերպության արդյունաբերության զարգացման կազմակերպության** առևտրի, ներդրումների և նորարարությունների բաժնի ղեկավար Օլգա Մեմեդովիչի հետ (ՀՀ, 08.10.2019):

**ՄԱՀՀԻ – Միջազգային և անվտանգության հարցերի հայկական ինստիտուտ:** .... Ըստ թուրքագետ ու միջազգային և անվտանգության հարցերի հայկական ինստիտուտի (ՄԱՀՀԻ) ասոցացված փորձագետ Հայկ Գաբրիելյանի .... (ՀՀ, 12.11.2019):

(Ա.Հ) ՄԵՀԶ – Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարար-

**րություն:** ԱՀ ՄԵՀԶ նախարար Լեոնիկ Հովհաննիսյանը ասաց .... (ՀՀ, 20.09.2019):

**ՄԹ – Միացյալ Թագավորություն:** Արդարադատության նախարարն ընդունել է ՀՀ-ում ՄԹ դեսպանին: ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը երեկ ընդունել է Հայաստանում Մեծ Բրիտանիայի և Հայաստանում Իսլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Ջուդիթ Մարգարեթ Ֆարնուորտին .... (ՀՀ, 19.04.2019):

**ՄԻԵԴ – Մարդու իրավունքների եվրոպական դատարան:** Մարդու իրավունքների եվրոպական դատարանում (ՄԻԵԴ) Հայաստանի ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանն «Ազատության» հետ զրույցում ասաց .... (Հնգ, *azatutyun.am*): .... Սահմանադրական դատարանի կողմից Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված դիմումը 2019 հոկտեմբերի 2-ին ընդունվել է վարույթ (ՀՀ, 04.10.2019):

**ՄԻՊ – Մարդու իրավունքների պաշտպան:** Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը երեկ ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության փաստաբանների պալատի պատվիրակությանը .... (ՀՀ, 20.06.2019): ՄԻՊ-ն առանձնազրույց է ունեցել Արսեն Բաբայանի հետ (*Հնգ, armtimes.com*):

**ՄԾ – Միգրացիոն ծառայություն:** Նախարարության միգրացիոն ծառայություն. ՄԾ պետ Արմեն Ղազարյանը .... ներկայացրեց .... (ՀՀ, 04.04.2019):

**ՄՀԻ – Միջազգային հանրապետական ինստիտուտ:** Միջազգային հանրապետական ինստիտուտի ՄՀԻ հասարակական հարցումների կենտրոնի Հայաստանի բնակ-

չության շրջանում անցկացվող նոր ներկայացուցչական հարցումը ցույց է տալիս, որ .... (ՀՀ, 10.07.2019):

**ՄՈԳ – Միջին որակավորման գնահատական:** .... Արտոնությունից կոգտվեն միայն **ՄՈԳ**-ի շեմը հաղթահարած, բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողները (ՀՀ, 30.04.2019):

**ՆՄՄԿ – Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն:** **ՆՄՄԿ** համակարգում նախատեսվում է .... (ՀՀ, 20.06.2019):

**ՇՄԱԳ – Շրջակա միջավայրի ադտոտվածության գնահատում:** Այս պահին **ՇՄԱԳ**-ի կարիք եթե չկա էլ, հողատարման մասին մոռանալ պետք չէ (ՀՀ, 25.09.2019):

**ՇՎՏՄ – Շուկայի վերահսկողության տեսչական մարմին:** Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (**ՇՎՏՄ**) իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժինը հանդիպում էր կազմակերպել .... (Հնգ, facebook.com):

**ՊԵԿ – Պետական եկամուտների կոմիտե:** Այս օրերի ընթացքում ՀՀ պետական եկամուտների կոմիտեն հանդես է եկել հրապարակային հայտարարություններով .... ՀՀ **ՊԵԿ** տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին (ՀՀ, 09.04.2019):

**ՊՄՏՀ – Պետերբուրգի միջազգային տնտեսական համաժողով:** Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ինչպես սպասվում է, կմասնակցի Պետերբուրգի միջազգային տնտեսական համաժողովին (**ՊՄՏՀ**) (ՀՀ, 30.05.2019):

- ՊՎԾ – Պետական վերահսկողական ծառայություն:** Պետական վերահսկողական ծառայության ղեկավարի տեղակալ Արգիշտի Քյարամյանը երեկ կառավարության նիստից հետո լրագրողների հետ զրույցում չբացատրեց, որ հենց ինքը կարող է նշանակվել **ՊՎԾ** ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար (*ՀՀ, 26.04.2019*):
- ՋԱՀ<sup>1</sup> – Զերմանջատիչ հավաքվածքներ:** ... Յուրաքանչյուր երկու տարվա ընթացքում չոր պահեստարան կտեղափոխվեն շուրջ 168 աշխատած **ՋԱՀ** (ջերմանջատիչ հավաքվածքներ) ... (*ՀՀ, 05.02.2019*):
- ՋԱՀ<sup>2</sup> – «Ջավախքին աջակցություն» հիմնադրամ:** Բացման արարողությանը ներկա են լինելու Վրաստանում Հայաստանի դեսպան Ռուբեն Սադոյանը, «Ջավախքին աջակցություն» հիմնադրամի (**ՋԱՀ**) պատվիրակությանը ... (*ՀՀ, 17.04.2019*):
- ԶՌՀԿ – Զրային ռեսուրսների համալիր կառավարում:** Գործադիրը հավանություն է տվել ՀՀ և Վերականգնման վարկերի բանկի միջև «Զրային ռեսուրսների համալիր կառավարում (**ԶՌՀԿ**) Ախուրյան գետ, փուլ 2» ծրագրի ուղեկցող միջոցառումներն իրականացնելու նպատակով ... համաձայնագրի արտացոլման առաջարկությունը (*ՀՀ, 21.06.2019*):
- ՌԹ – Ռադիոակտիվ թափոն:** ՌԹ-ների և ԱՄՎ-ի կառավարման համակարգի արդիականացումը ենթադրում է նաև շատ ցածր ակտիվությամբ **ՌԹ**-ների պահեստարանի կառուցում ... (*ՀՀ, 05.02.2019*):
- ՌՄՄԽ – Ռազմական սպորտի միջազգային խորհուրդ:** ... Պաշտպանության նախարարությունում կայացած մամուլի ասուլիսում ... ներկայացրին **ՌՄՄԽ**-ի գործունեու-

թյունն ու նպատակները (ՀՀ, 11.09.2019): Ռազմական սպորտի միջազգային խորհուրդը ստեղծվել է 1948 թ. փետրվարի 18-ին (ՀՀ, 11.09.2019):

**ՍԱՊԾ – Սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն:** ՀՀ գյուղատնտեսության նախարարության **սննդամթերքի անվտանգության պետական ծառայության** աշխատակազմի անասնաբուժության տեսչության պետը .... որպես կաշառք ստացել է խոշոր չափերով գումար .... (ՀՀ, 11.05.2019): Ձերբակալվել է **ՍԱՊԾ** բարձրաստիճան պաշտոնյան (*Հսկ, sns.am*):

**ՍՍՍՄ – Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին:** .... **ՍՍՍՄ** մասնագետների կողմից ձեռնարկվել են համապատասխան վերահսկողական գործողություններ .... (ՀՀ, 09.04.2019):

**ՄԻԳՄԱ – Փորձագիտական կառույց (Support for Improvement in Governance and Management):** Փոխվարչապետ Միեր Գրիգորյանի և Եվրոպական հանձնաժողովի հարևանության հարցերով գլխավոր տնօրինության Հայաստանի, Ադրբեյջանի, Բելառուսի և Արևելյան գործընկերության հարցերով բաժնի ղեկավար Վասիլիս Մարագոսի նախագահությամբ կառավարությունում տեղի է ունեցել Հայաստանի հանրային կառավարման ոլորտի վերաբերյալ **ՄԻԳՄԱ**-ի կողմից մշակված ելակետային գնահատման զեկույցի ներկայացումը (ՀՀ, 24.05.2019):

**ՎՊՀ – Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարան:** Փաստաթղթերը ներկայացվում են **ՎՊՀ** ընդհանուր բաժին (ՀՀ, 10.07.2019):

**ՏԿԵՆ – Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:** Պարզաբանում է **ՏԿԵՆ** ջրային կոմի-

տեն (ՀՀ, 04.09.2019):

- ՏԿԶ – Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:** Արարատում անցկացվող բիզնես համաժողովը ՀՀ ՏԿԶ նախարարության և մարզպետարանների նախաձեռնությամբ, ՓՄՁ ԶԱԿ հիմնադրի աջակցությամբ իրականացվող այս տարվա հաջորդ մարզային բիզնես ֆորումն է (ՀՀ, 07.05.2019):
- ՏՄՊՊՀ – Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով:** Գեղամ Գևորգյանը՝ ՏՄՊՊՀ նախագահ: ՀՀ Ազգային ժողովը գաղտնի քվեարկությամբ Գեղամ Գևորգյանին ընտրել է տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահի պաշտոնում (ՀՀ, 23.04.2019):
- ՏՏ – Տեղեկատվական տեխնոլոգիաներ:** Նիկոլ Փաշինյանը հեռանկարային է համարել ՏՏ ոլորտում կապերի խորացումը .... (ՀՀ, 01.02.2019):
- ՏՏԶԵԶԾ – Տեղական տնտեսության և զբոսաշրջության ենթակառուցվածքի զարգացման ծրագիր:** ՏՏԶԵԶԾ շրջանակներում Համաշխարհային բանկի հետ համագործակցությամբ իրականացվող Հարավային միջանցք ծրագրում ընդգրկված է «Արտաշատ մայրաքաղաք» հնավայրը (ՊԲՀ, 1, 2019, էջ 104):
- ՓԾ – Փրկարար ծառայություն:** ՀՀ ԱԻՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնում ապրիլի 1-ից 7-ն ընկած ժամանակահատվածում գրանցվել է 295 դեպք, որից 137-ը՝ արտակարգ (ՀՀ, 10.04.2019):
- ՓՈԻՎ – Փրկարարական ուժերի վարչություն:** Երեկ .... Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծա-



ռայության փրկարարական ուժերի վարչությունը (**ՓՈՒՎ**)  
և աղետների բժշկության կենտրոնը համատեղ անցկաց-  
րին տեսագործնական դասընթացը (*ՀՀ, 26.06.2019*):

**ՔԿԾ** – **Քրեակատարողական ծառայություն:** Նախարարը  
ողջունել է **ՔԿԾ** աշխատակազմին (*ՀՀ, 13.07.2019*):

**ՔԿՀ** – **Քրեակատարողական հիմնարկ:** **ՔԿՀ**-ներում գերծան-  
րաբեռնվածության խնդիր չկա (*ՀՀ, 30.04.2019*):

**ՔՊ** – **Քաղաքացիական պայմանագիր:** ՀՀ վարչապետ Նիկոլ  
Փաշինյանը հույս ունի, որ չի առաջադրվի «**Քաղաքա-  
ցիական պայմանագիր**» կուսակցության վարչության  
նախագահի պաշտոնում: Չի հավակնում **ՔՊ**-ի վարչու-  
թյան նախագահի պաշտոնին (*ՀՀ, 16.04.2019*):

**ՔՏՀԱՏՄ** – **Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային  
անվտանգության տեսչական մարմին:** ՀՀ **ՔՏՀԱՏՄ**  
Էներգետիկայի և Էներգասպառման վարչության մասնա-  
գետների կողմից ներկայացվեց .... (*Հնգ., facebook.com*):

**ՕՇՔՆ** – **Օգոնային շերտը քայքայող նյութեր:** Տե՛ս ԿՕՍ-ի օրի-  
նակը:

**ՖՀՄՍ** – **Ֆինանսական հաշվետվությունների միջազգային  
ստանդարտ:** Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները  
չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք  
պահանջվում են **ֆինանսական հաշվետվությունների  
միջազգային ստանդարտներում** (*ՀՀ, 30.04.2019*): **Բանկա-  
յին, ապահովագրական եւ վարկային կազմակերպու-  
թյունների ավելի քան 25 ներկայացուցիչ նոյեմբերի 30-ին  
մասնակցել է «Գրանթ Թորնթոն Հայաստան»-ի կազմա-  
կերպած՝ ՖՀՄՍ 16-ի կիրառման վերաբերյալ դասըն-  
թացին** (*Հնգ, banks.am*):

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ

### Ա. Գրքեր

- ԱԱ Աբգար Ափինյան, Արդի գրականություն, Եր., Նոր-Դար, 2010:
- ԱՆ Արմեն Նիազյան, Բռնիք ձեռքս, Եր., Երևան, 2009:
- ԳՄԷ Գրական մեղեդիներ, Է գիրք, Եր., 2018:
- ԳՄԹ Գրական մեղեդիներ, Ա գիրք, Եր., 2019:
- ԳՆ Գոհար Նիկողոսյան, Լրջացող խաղ (պատմվածքներ), Եր., ՀԳՄ, 2002:
- Գրաս Գյունթեր Գրաս, Թիթեղյա թմբուկը, թարգմ. Կառլեն Մատինյան, Եր., Նաիրի, 2007:
- ԶԽ Զորայր Խալափյան, Այսբան բան, Եր., Դարակ, 2017:
- ԻՄ Իսկուհի Մինաս, Աստվածային խաբկանք, ֆրանս. թարգմ. Նվարդ Վարդանյան, Եր., Փյունիկ, 1995:
- ԺՂ Ժաննա Ղոչիկյան, Խռովքի պահին, Եր., Արմավ, 2019:
- ԼԴ 1 Լյուդվիգ Դուրյան, Այսբանը իմ կյանքից, Եր., Հայաստան, 2012:
- ԼԴ 2 Լյուդվիգ Դուրյան, Կյանք իմացյալ, Եր., Ոսկան Երևանցի, 2008:
- ԼԽ Լևոն Խեչոյան, Փուշը, հայր, փուշը, Եր., Նահապետ, 2011:
- ԽԱ Խորեն Արամունի Քեշիշյան, Գլենդեյլ խաշաթաղ, Եր., Աղբյուր, 2012:
- ԽՄ1 Խաչիկ Մանուկյան, Գոյահանդես, Եր., Եր.համ.հրատ. Համագալին, 1996:
- ԽՄ2 Խաչիկ Մանուկյան, Ոսկեփետուր մուժ, Եր., ՀԳՄ, 2009:
- ԿԱ Կամո Արիացի, Աստղամրրիկ, Եր., Գիտություն, 2019:

- ՀրչԹ Հրայյա Թամրազյան, Բանաստեղծություններ, Էսսեներ, գրական դիմանկարներ, հոդվածներ, Եր., Նաիրի, 2010:
- Մ1 Ռուբեն Մարտիրոսյան, Երագահան, գիրք առաջին, Ա-Լ, Եր., Ոսկան Երևանցի, 1993:
- Մ2 Ռուբեն Մարտիրոսյան, Երագահան, հատոր երկրորդ, Խ-Շ, Եր., Ոսկան Երևանցի, 1997:
- Մ3 Ռուբեն Մարտիրոսյան, Երագահան, հատոր երրորդ, Ռ-Ֆ, Եր., Ոսկան Երևանցի, 1998:
- ՄԿ Միլան Կունդերա, Կեցության անտանելի թեթևությունը, ֆրանս. թարգմ. Շուշանիկ Թամրազյան, Եր., Անտարես, 2015:
- ՄՍ Մելս Սանթրոյան, Գրական հայրենիք, գրական առեղծվածներ, Եր., Հայաստան, 2006:
- ՆԱ Նորայր Ադայան, Վիպասանք ազատության հրապարակի, Եր., Վան Արյան, 2019:
- ՆՇ Նելլի Շահնազարյան, Ընտրանի, Եր., Վան Արյան, 2012:
- ՆՓ Նիկոլ Փաշինյան, Երկրի հակառակ կողմը, Եր., Անտարես, 2018:
- ՌԲ Ռեյ Բրեդբրի, Ֆարենհայթ 451, անգլ. թարգմ. Լուսինե Հարոյան, Եր., Զանգակ, 2016:
- ՌԳ Ռազմիկ Գալստյան, Արևի հնձան, Եր., Մունետիկ, 2012:
- ՌՀ Ռեյչլ Հոլիս, Աղջիկ ջան ուշքի արի, անգլ. թարգմ. Լիլիթ Գրիգորյան, Եր., Նյու Մեգ, 2019:
- ՌՂ Ռաֆայել Ղազանջյան, Հայրական ձեռագիր, Եր., Գրաբեր, 2003:
- ՄԳ Սեմ Գորյան, Սիրո Նաիրի, Եր., 2018:
- ՄՂ Սևակ Ղուկասյան, Երկնքից լսված ձայներ, Եր., Լուսակն, 2019:

### **Բ. Ամսագրեր և հանդեսներ**

ՀԲ - Հայկական բանակ  
Նարեկ - Նարեկ  
ՊԲՀ – Պատմաբանասիրական հանդես

### **Գ. Լրագրեր**

ԳԹ – Գրական թերթ  
Գրեթերթ - Գրեթերթ  
Իր. – Իրատես  
Կրթ. - Կրթություն  
ՀՀ – Հայաստանի Հանրապետություն  
Հրապ. - Հրապարակ  
TV ալիք - TV ալիք

### **Դ. Այլ աղբյուրներ**

Գովազդ, Հեռ. (հեռուստատեսություն), Հմց (համացանց), ռադիո:

### **Օգտագործված բառարաններ**

1. Աղայան Էդ. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., Հայաստան, 1976:
2. Բարսեղյան Հ. Խ., Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան, Եր., Լույս, 1973:
3. Էլոյան Ս.Ա., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., Նաիրի, 2002:
4. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969-1980:
5. Խլղաթյան Ֆ.Խ., Բառարան-տեղեկատու: Նոր բառեր և իմաստներ, Եր., Հայաստան, 1982:

6. Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, Եր., ՀՍՍՌ պետ.հրատ.,հհ. 1-3, 1944, հ.4, 1945:
7. Մեյթիխանյան Փ.Գ., Նոր բառերի բացատրական բառարան, Եր., Փյունիկ, 1996:
8. Մեսրոպեան Հ., Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոսի երկերի բառարան, Մոնրէալ, 2000:
9. Նոր բառեր. Ա պրակ (Ա.Ս.Գալստյան, Գ.Կ.Հովսեփյան, Ա.Գ.Սահակյան, Լ.Ե.Սահինյան),Եր., 2015:
10. Նոր բառեր. Բ պրակ (Ա.Ս. Գալստյան, Ս.Ա. Գալստյան, Գ.Կ.Հովսեփյան, Ա.Գ.Սահակյան, Լ.Ե.Սահինյան),Եր., 2016:
11. Նոր բառեր. Գ պրակ (Ա.Ս.Գալստյան, Ս.Ա. Գալստյան, Գ.Կ.Հովսեփյան, Ա.Գ.Սահակյան),Եր., 2017:
12. Նոր բառեր. Դ պրակ (Ա.Ս. Գալստյան, Ս.Ա. Գալստյան, Ֆ.Ա.Հակոբյան, Գ.Կ.Հովսեփյան, Ա.Գ.Սահակյան, Լ.Ե.Սահինյան),Եր., 2018:
13. Չիլինգարյան Դ.Ս., Երզնկյան Լ.Ե., Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն- հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան, Եր., 2015:
14. Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան (Հացագործյան Զ.Ա., Դարբինյան Ա.Հ., Հովումյան Հ.Գ., Սրվանձտյան Գ.Հ.), Եր., ՀՍՀ գլխ. խմբ., 1988:
15. Սաքապետոյան Ռ.Կ., Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարան, Եր., ԵՊՀ հրատ., 2000:

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Երկու խոսք .....	5
Համառոտագրություններ .....	6
Բառացանկ .....	7
Հավելված .....	152
Օգտագործված աղբյուրներ .....	170
Օգտագործված բառարաններ .....	172

Գալստյան Անահիտ Սերգեյի, Գալստյան Սերգեյ Աշոտի,  
Հակոբյան Ֆրիդա Արտաշեսի, Հովսեփյան Գայանե Կառլենի,  
Մուշեղյան Արմեն Հենրիկի, Սահակյան Ալա Գրիգորի

## ՆՈՐ ԲԱՌԵՐ

Ե պրակ

Համակարգչային էջադրումը՝ Վ. Պապյանի

Հրատ. պատվեր № 996  
Ստորագրված է տպագրության՝ 24.02.2020թ.:  
Չափսը՝ 60 x 84 <sup>1</sup>/<sub>16</sub>, 11 տպագր. մամուլ:  
Տպաքանակը՝ 200 օրինակ:  
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,  
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: